



Հիմնադիր և հրատարակիչ՝
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՊՐՈՍԵԿՅՈՒՐԱԿՐԱԿԱՆ
ԳԻՏԱԿՈՐՇՆԱԿԱՆ
ՊԱՐԲԵՐԱԿԱՆ

ՕՐԻՆԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

№ 135 2024

ՀՀ ՊՐՈՍԵԿՅՈՒՐԱԿՐԱԿԱՆ ԳԻՏԱԿՈՐՇՆԱԿԱՆ
ՊԱՐԲԵՐԱԿԱՆ

Տպագրվում է 1997 թվականից ՀՀ գլխավոր դատախազ Հենրիկ Խաչատրյանի նախաձեռնությամբ

LEGALITY

SCIENTIFIC-PRACTICAL JOURNAL OF THE PROSECUTOR'S OFFICE
OF THE REPUBLIC OF ARMENIA

Published since 1997 at the initiative of RA Prosecutor General Henrik Khachatryan

ЗАКОННОСТЬ

НАУЧНО-ПРАКТИЧЕСКИЙ ЖУРНАЛ ПРОКУРАТУРЫ
РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ

Публикуется с 1997 года по инициативе Генерального прокурора РА Генрика Хачатряна

Պարբերականն ընդգրկված է Հայաստանի Հանրապետության Բարձրագույն որակավորման կոմիտեի սահմանած դոկտորական (2002 թ.) և թեկնածուական (1999 թ.) ատենախոսությունների արդյունքների ու դրույթների հրատարակման համար ընդունելի գիտական պարբերականների ցանկում:

The Journal is included in the list of scientific periodicals acceptable for publication of the results and provisions of doctoral dissertation (since 2002) and candidate dissertation (since 1999) established by the Supreme Certifying Committee of the Republic of Armenia.

Журнал включен в список научных периодических изданий, принятых для публикации результатов и положений докторских (с 2002) и кандидатских (с 1999) диссертаций, установленных Высшим аттестационным комитетом Республики Армения.

**ԲԱՐՁՐԱՍՏԻՃԱՆ ԽՈՐՀՐԴԱԺՈՂՈՎ՝
«ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ
ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅԱՆ ԱՄՐԱՊՆԴՈՒՄԸ՝
ԱՆԴՐԱԶԳԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՎԱԾ
ՀԱՆՑԱՎՈՐՈՒԹՅԱՆ ԴԵՄ ՊԱՅՔԱՐՈՒՄ» ԹԵՄԱՅՈՎ**

Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազությունը 2024 թվականի ապրիլի 26-27-ին Եվրոպայի խորհրդի հետ համատեղ անցկացրել է «Միջազգային համագործակցության արդյունավետության ամրապնդումը՝ անդրազգային կազմակերպված հանցավորության դեմ պայքարում» թեմայով բարձրաստիճան խորհրդաժողով:



Խորհրդաժողովի նպատակն էր քննարկել կոռուպցիոն, տնտեսական ու ֆինանսական հանցագործությունների դեմ պայքարում դատախազների գործառնությունների եվրոպական չափանիշները՝ խթանելով անդրազգային կազմակերպված հանցավորության դեմ պայքարում միջազգային համագործակցությունը:

Բարձրաստիճան խորհրդաժողովը կազմակերպվել էր Եվրոպական միության և Եվրոպայի խորհրդի՝ «Գործընկերություն հանուն լավ կառավարման» ծրագրով համաֆինանսավորվող և Եվրոպայի խորհրդի կողմից իրականացվող՝ «Աջակցություն դատախազական բարեփոխումների իրականացմանը Հայաստանում» և «Հայաստանում տնտեսական հանցագործությունների արդյունավետ կանխարգելման և դրանց դեմ պայքարի ազգային կարողությունների հզորացում» ծրագրերի շրջանակներում:



Խորհրդատուդրվին մասնակցել են ՀՀ գլխավոր դատախազ Աննա Վարդապետյանը, ԵԽ համագործակցության ծրագրերի բաժնի փոխտնօրեն Լիլիթ Դանեդյանը, Հայաստանում Եվրոպական միության պատվիրակության ղեկավար, դեսպան Վասիլիս Մարագոսը, Երևանում ԵԽ գրասենյակի ղեկավար Մաքսիմ Լոնգանգեն, ՀՀ Ազգային ժողովի պետական-իրավական հարցերի մշտական հանձնաժողովի նախագահ Վլադիմիր Վարդանյանը, ՀՀ վճռաբեկ դատարանի հակակոռուպցիոն պալատի նախագահ Արթուր



Դավթյանը, ՀՀ մարդու իրավունքների պաշտպան Անահիտ Մանասյանը, ՀՀ քննչական կոմիտեի նախագահ Արգիշտի Քյարամյանը, Հակակոռուպցիոն կոմիտեի նախագահ Սասուն Խաչատրյանը, Պետական եկամուտների կոմիտեի նախագահ Ռուստամ Բադապյանը, ՀՀ արդարադատության նախարարի տեղակալ Լևոն Բայանը, Լիտվայի Հանրապետության գլխավոր դատախազ Նիդա Գրունսկիենեն, Եվրոպայի դատախազների խորհրդատվական խորհրդի նախագահ Յանա Չեզուլովան, դատախազության պատվիրակություններ՝ Ռումինիայից, Լյուքսեմբուրգից, Նիդերլանդներից, Ավստրիայից, Իտալիայից, Վրաստանից, Շվեյցարիայից, Հունաստանից, Եվրոպայի խորհրդի և Մարդու իրավունքների եվրոպական դատարանի ներկայացուցիչներ, ինչպես նաև Հայաստանի Հանրապետությունում հավատարմագրված դիվանագիտական առաքելությունների ղեկավարներ, ՀՀ այլ պետական մարմինների ներկայացուցիչներ:



ՀՀ գլխավոր դատախազ Աննա Վարդապետյանը ողջունի խոսքում, մասնավորապես, նշել էր. «Ուղիղ տասն ամիս առաջ՝ 2023 թվականի հուլիսի 1-ին, Դատախազության 105-ամյակի և Դատախազության աշխատակցի օրվա կապակցությամբ, Եվրոպական միության և Եվրոպայի խորհրդի հետ համատեղ կազմակերպեցինք **«Դատախազության անկախությունը՝ որպես իրավունքի գերակայության երաշխավոր»** թեմայով բարձրաստիճան երկօրյա խորհրդաժողով: Արդյունքներն ամփոփելիս՝ հստակ ցանկություն կար՝ եվրոպացի գործընկերների հետ նման ձևաչափով

համագործակցությունը զարգացնել, կազմակերպել նոր բարձրաստիճանան խորհրդաժողով՝ ավելի ընդգրկուն աշխարհագրությամբ: Այսօր մեկնարկում ենք «Միջազգային համագործակցության արդյունավետության ամրապնդումը՝ անդրազգային կազմակերպված հանցավորության դեմ պայքարում» թեմայով երկօրյա միջազգային խորհրդաժողովը: Այս նախաձեռնությունը կրկին իրականացվել է Եվրոպական միության և Եվրոպայի խորհրդի գործընկերների հետ սերտ համագործակցության արդյունքում: Այս կապակցությամբ, երախտագիտությունս հայտնելով Եվրոպական միության և Եվրոպայի խորհրդի կառույցներին ու պաշտոնատար անձանց, ցանկանում եմ ընդգծել, որ Հայաստանի Հանրապետության դատախազության համագործակցությունը Եվրոպական միության և Եվրոպայի խորհրդի հետ ունի լավ ավանդույթներ և հասկապես վերջին



տարիներին թեևակոխել է զարգացման որակապես նոր փուլ: Վստահ եմ այսօր մեկնարկող միջոցառումը մասնագիտական երկխոսության նոր՝ ավելի բարձր նշանոդ կսահմանի և արդյունավետ հարթակ կդառնա ինչպես անդրազգային կազմակերպված հանցավորության դեմ պայքարում միջազգային համագործակցության, այնպես էլ ապօրինի կերպով ձեռք բերված գույքի բռնագանձման ոլորտներում մեր երկրների փորձառության ու մարտահրավերների վերաբերյալ գիտելիքներով կիսվելու համար»:

ԵՄ համագործակցության ծրագրերի բաժնի փոխանօրեն Լիլիթ Դանեդյանը ողջունել էր Խորհրդաժողովի մասնակիցներին՝ նախորդ տարի մեկնարկած ավանդույթն այս տարի Խորհրդաժողովի շրջանակում

շարունակելու համատեքստում և շնորհակալություն է հայտնել ՀՀ գլխավոր դատախազությանը՝ մասնավորապես ՀՀ գլխավոր դատախազ Աննա Վարդապետյանին, արդյունավետ փոխգործակցության, այն զարգացնելու գործում ակտիվ ներգրավվածության ու ներդրման համար:



Հայաստանում ԵՄ պատվիրակության ղեկավար, դեսպան Վասիլիս Մարագոսը կարևորել էր անդրազգային հանցավորության դեմ պայքարում միջազգային համագործակցության վերաբերյալ բարձրաստիճան խորհրդատվորական անցկացումը և ընդգծել, որ եվրոպական չափանիշների հիման վրա համագործակցությունը անդրազգային հանցավորության դեմ պայքարի, օրենքի գերակայության և արդարադատության բարեփոխումների արդյունավետության ամրապնդման տեսանկյունից առանցքային է Հայաստանի ինստիտուցիոնալ բարեփոխումների ամրապնդման համատեքստում: «Օրենքի գերակայությունը և արդարադատության բարեփոխումները կարևոր են ժողովրդավարության ամրապնդման համար», - նշել էր Հայաստանում ԵՄ պատվիրակության ղեկավար, դեսպան Վասիլիս Մարագոսը»:

Երևանում ԵԽ գրասենյակի ղեկավար Մաքսիմ Լոնգանգեն կարևորել էր համագործակցությունն ու անդրադարձել արդեն իսկ ձեռք բերված հաջողություններին՝ ընդգծելով դրանց կարևորությունը ապագա նախաձեռնությունների համար հիմք ստեղծելու գործում:

Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազ Աննա Վարդապետյանի հրավերով՝ եվրոպական շուրջ տասը պետություններից և



միջազգային կազմակերպություններից Հայաստան ժամանած պատվիրակներն այցելել են Մեսրոպ Մաշտոցի անվան հին ձեռագրերի գիտահետազոտական ինստիտուտ-Մատենադարանի թանգարանային համալիր:



Հայաստան ժամանած եվրոպացի դատախազներն ու միջազգային կառույցների ներկայացուցիչները Մատենադարանի տնօրեն Արա Խզմալյանի ուղեկցությամբ շրջայց են կատարել թանգարանի ցուցասրահներում, ծանոթացել հայկական ձեռագրական ժառանգությանը: Ծրջայցին հաջորդել է ՀՀ վաստակավոր արտիստ Հայկ Մելիքյանի մենահամերգը:

ՀՀ դատախազության «Օրինականություն» գիտագործնական պարբերականի խմբագրական խորհուրդ

Եղիազար Ավագյան (խմբագրական խորհրդի նախագահ) - ՀՀ գլխավոր դատախազի տեղակալ

Անահիտ Մանասյան - իրավաբանական գիտությունների թեկնածու, ԵՊՀ սահմանադրական իրավունքի ամբիոնի դոցենտ, ՀՀ մարդու իրավունքների պաշտպան

Արթուր Ղամբարյան - իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, Հայաստանի համալսարանի իրավունքի և քաղաքականության ինստիտուտի իրավունքի տեսության և սահմանադրական իրավունքի ամբիոնի վարիչ

Հաննա Մուխոցկա - իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, Եվրոպայի խորհրդի «Ժողովրդավարություն՝ իրավունքի միջոցով» եվրոպական հանձնաժողովի (Վենետիկի հանձնաժողով) պատվավոր նախագահ, Պոզնանի Ադամ Միցկևիչի անվան համալսարանի սահմանադրական իրավունքի ամբիոնի վարիչ, Լեհաստանի նախկին վարչապետ

Յանիս Պլեպս - իրավաբանական գիտությունների դոկտոր, Լատվիայի համալսարանի իրավագիտության ֆակուլտետի իրավունքի տեսության և պատմության ամբիոնի դոցենտ, Լատվիայի Գերագույն դատարանի դատավոր

Ռոման Մելնիկ - իրավաբանական գիտությունների դոկտոր, Մ.Ս. Նարիկբանի անվան KAZGUU համալսարանի իրավունքի բարձրագույն դպրոցի պրոֆեսոր

Լեոնիդ Գոլովկո - իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, Մ.Վ. Լոմոնոսովի անվան Մոսկվայի պետական համալսարանի իրավագիտության ֆակուլտետի քրեական դատավարության, արդարադատության և դատախազական վերահսկողության ամբիոնի վարիչ

Իգոր Կրավեց - իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, Նովոսիբիրսկի պետական համալսարանի պետության և իրավունքի տեսության ու պատմության և սահմանադրական իրավունքի ամբիոնի վարիչ

Նորբերթ Բերնսդորֆ - իրավաբանական գիտությունների դոկտոր, Մարբուրգի Ֆիլիպսի անվան համալսարանի պատվավոր պրոֆեսոր, Հիմնարար իրավունքների Եվրոպական միության խարտիայի ազգային փորձագետ (Վիեննա), Գերմանիայի դաշնային սոցիալական դատարանի նախկին դատավոր

Անդրես Պարմաս - Էստոնիայի Հանրապետության գլխավոր դատախազ, քրեական իրավունքի դասախոս Տարտուի համալսարանի իրավունքի դպրոցում, Էստոնիայի «Դատական իշխանություն» պարբերականի նախկին գլխավոր խմբագիր

Մաուրիցիո Բոլկ - Իտալիայի Հանրապետության զինվորական գլխավոր դատախազ, «Չինվորական արդարադատություն» պարբերականի խմբագիր

Կոնտակտային տվյալներ

Հասցե՝ ՀՀ, ք. Երևան, 0010, Վազգեն Սարգսյան 5

Էլ. հասցե՝ orinakanutyun@prosecutor.am

Հեռ.՝ 010-511-506

www.prosecutor.am

**Editorial Board of the Scientific-Practical Journal “Legality” of the
Prosecutor’s Office of the Republic of Armenia**

Yeghiazar Avagyan (Chair of the Editorial Board) - Deputy Prosecutor General of the Republic of Armenia

Anahit Manasyan - PhD in Law, Associate Professor of the Department of Constitutional Law at Yerevan State University, Human Rights Defender of the Republic of Armenia

Artur Ghambaryan - Doctor of Law, Professor, Head of the Chair of Theory of Law and Constitutional Law at the Russian-Armenian University

Hanna Suchocka - Doctor of Law, Professor, Head of the Department of Constitutional Law at Adam Mickiewicz University in Poznań, Honorary President of the European Commission for Democracy through Law (the Venice Commission of the Council of Europe), Former Prime Minister of Poland

Janis Pleps - Doctor of Law, Associate Professor of the Department of Legal Theory and History, Faculty of Law, University of Latvia, Judge of the Supreme Court of Latvia

Roman Melnyk - Doctor of Law, Professor at M. Narikbayev KAZGUU University Law School

Leonid Golovko - Doctor of Law, Professor, Head of the Chair of Criminal Procedure, Justice and Supervision by Public Prosecutor at Lomonosov Moscow State University

Igor Kravets - Doctor of Law, Professor, Head of the Chair of Theory and History of State and Law and Constitutional Law at Novosibirsk State University

Norbert Bernsdorff - Doctor of Law, Honorary Professor at Philipps-Universität Marburg/Hessen, National Key Expert on the European Charter of Fundamental Rights (Vienna), Retired Judge of the Third Instance Court on Social Affairs of Germany

Andres Parmas - Prosecutor General of the Republic of Estonia, Lecturer of criminal law of the School of Law at the University of Tartu, Former Editor-in-Chief of the yearbook of Estonian judiciary

Maurizio Block - Military General Prosecutor of the Republic of Italy, editor of the legal journal “Military Justice”

Contacts

Address- Vazgen Sargsyan Street 5, Yerevan, 0010, Armenia

E-mail- orinakanutyun@prosecutor.am

Tel.- 010-511-506

www.prosecutor.am

**Редакционная коллегия научно-практического журнала «Законность»
Прокуратуры Республики Армения**

Егиазар Авагян (Председатель редакционной коллегии) - заместитель Генерального прокурора Республики Армения

Анаит Манасян - кандидат юридических наук, доцент кафедры конституционного права Ереванского государственного университета, Защитник прав человека Республики Армения

Артур Гамбарян - доктор юридических наук, профессор, заведующий кафедрой теории права и конституционного права Института права и политики Российско-Армянского университета

Ханна Сухоцка - доктор юридических наук, профессор, заведующая кафедрой конституционного права Университета им. Адама Мицкевича в Познани и почетный председатель Европейской комиссии Совета Европы «Демократия посредством права» (Венецианская комиссия), бывший премьер-министр Польши

Янис Плепс - доктор юридических наук, доцент кафедры теории и истории права юридического факультета Латвийского университета, судья Верховного суда Латвии

Роман Мельник - доктор юридических наук, профессор Высшей школы права университета КАЗГЮУ имени М.С. Нарикбаева

Леонид Головкин - доктор юридических наук, профессор, заведующий кафедрой уголовного процесса, правосудия и прокурорского надзора юридического факультета Московского государственного университета имени М.В. Ломоносова

Игорь Кравец - доктор юридических наук, профессор, заведующий кафедрой теории и истории государства и права и конституционного права Новосибирского государственного университета

Норберт Бернсдорф - доктор юридических наук, почетный профессор Марбургского университета им. Филиппа, национальный ключевой эксперт Хартии Европейского Союза об основных правах (Вена), судья в отставке федерального суда по социальным делам Германии

Андрес Пармас - Генеральный прокурор Республики Эстония, преподаватель уголовного права в Школе права Тартуского университета, бывший главный редактор ежегодника судебной власти Эстонии

Маурицио Блок - Генеральный военный прокурор Республики Италия, редактор журнала «Военное правосудие»

Контактные данные

Адрес: Республика Армения, г. Ереван, 0010, улица Вазгена Саргсяна 5

Эл. почта: orinakanutyun@prosecutor.am

Тел.: 010-511-506

www.prosecutor.am

Ծանոթագրություն

ՀՀ դատախազության «Օրինականություն» գիտագործնական պարբերականում տպագրված հոդվածները հանդիսանում են հեղինակների մասնագիտական հետազոտության արդյունքը և արտացոլում են վերջիններիս մասնագիտական կարծիքը ակադեմիական ազատության շրջանակում:

Հոդվածներում տեղ գտած վերլուծությունները, դատողություններն ու եզրահանգումները չեն արտահայտում և չեն կարող արտահայտել ՀՀ դատախազության դիրքորոշումը որևէ իրավական հարցի և (կամ) փաստական հանգամանքի վերաբերյալ:

Disclaimer

The articles published in the scientific-practical journal “Legality” of the RA Prosecutor’s Office are the result of the authors’ professional research and reflect their professional opinion within the framework of academic freedom.

The analyses, judgments and conclusions contained in the articles do not and cannot express the position of the Prosecutor’s Office of the Republic of Armenia in regard to any legal issue and (or) factual circumstances.

Примечание

Статьи, опубликованные в научно-практическом журнале «Законность» прокуратуры РА, являются результатом профессиональных исследований авторов и отражают их профессиональное мнение в рамках академической свободы.

Содержащиеся в статьях анализы, постановления и выводы не выражают и не могут выражать позицию прокуратуры Республики Армения в отношении каких-либо правовых вопросов и (или) фактических обстоятельств.

Բովանդակություն
Content
Содержание

Արթուր Ղամբարյան

Քննչական գործողության կատարումը տեսակապի միջոցով
(հայերեն)17

Artur Ghambaryan

The Performance of Investigative Action through Videocommunication
(in Armenian).....35

Артур Гамбарян

Применение видеоконференции при производстве следственного
действия (на армянском)36

Norbert Bernsdorff, Carla Pilar Arzabe

Environmental Protection in National Constitutions-Article 20a of the
German Grundgesetz (Constitution) as an Example (in English)37

Նորբերթ Բերնսդորֆ, Կարլա Պիլար Արզաբե

Շրջակա միջավայրի պաշտպանությունը ներպետական
սահմանադրություններում. Գերմանիայի սահմանադրության
(Grundgesetz) 20ա հոդվածը որպես օրինակ (անգլերեն).....57

Норберт Бернсдорф, Карла Пилар Арзабе

Защита окружающей среды в национальных
конституциях–статья 20а конституции (Grundgesetz) Германии как
пример (на английском).....58

Татьяна Чехович

Институт конституционной жалобы в Республике Казахстан:
отдельные вопросы теории и практики (на русском)59

Տատյանա Չեխովիչ

Սահմանադրական բողոքի ինստիտուտը Ղազախստանի
Հանրապետությունում. տեսական և գործնական որոշ
հիմնահարցեր (ռուսերեն).....73

Tatiana Chekhovich

Institute of Constitutional Complaint in the Republic of Kazakhstan:
some issues of theory and practice (in Russian)75

Վիգեն Հարությունյան, Սվետլանա Մկրտչյան

ՀՀ քրեական օրենսգրքի 527-րդ և 528-րդ հոդվածների
համեմատական վերլուծություն, դրանց կիրառելիությանը
վերաբերող տեսական և գործնական որոշ խնդիրներ (հայերեն)77

Vigen Harutyunyan, Svetlana Mkrtchyan

Comparative analysis of the Articles 527 and 528 of the Criminal Code of RA,
Some Theoretical And Practical Issues on their Applicability
(in Armenian).....98

Виген Арутюнян, Светлана Мкртчян

Сравнительный анализ статей 527 и 528 Уголовного кодекса РА,
некоторые теоретические и практические вопросы их
применимости (на армянском)99

Եվա Սաղոյան

Զրոսաշրջային փաթեթում ներառվող զրոսաշրջային
ծառայությունների համար քաղաքացիական
պատասխանատվության սուբյեկտը (հայերեն).....100

Eva Saghoyan

Subject of Civil Liability for Tourist Services Containing Package Tour
(in Armenian)119

Ева Сагоян

Субъект гражданско-правовой ответственности за туристические
услуги, составляющие туристический пакет (на армянском)120

Վահան Հարությունյան

Պայմանական վաղաժամկետ ազատման ինստիտուտը
Հայաստանի Հանրապետությունում (հայերեն).....121

Vahan Harutyunyan

Institute of Conditional Early Release in the Republic of Armenia
(in Armenian).....142

Ваан Арутюнян

Институт условно-досрочного освобождения в
Республике Армения (на армянском).....143

Ռոբերտ Միերյան

Նկատառումներ համագործակցության վարույթի էության և
վերաբերելի առանձին հարցերի օրենսդրական կարգավորման
վերաբերյալ (հայերեն).....144

Robert Mheryan

Considerations on the Nature of the Co-Operation Proceedings and the
Legislative Regulation of Separate Related Issues (in Armenian)158

Роберт Мгерян

Соображения о сущности процедур сотрудничества и
законодательного регулирования касательно отдельных
вопросов (на армянском).....159

Հայկ Ավետյան

Խրախուսական նորմերի հասկացությունը, կառուցվածքն ու ժամանակի ընթացքում դրանց փոփոխության հետեվանքները (հայերեն)161

Hayk Avetyan

The Concept, and the Structure of the Incentive Norms, and the Consequences of their Changes over Time (in Armenian)185

Айк Аветян

Понятие, структура поощрительных норм и последствия их изменения во времени (на армянском)186

Վիրաբ Համբարձումյան

Գործուն զղջալու հիմքով քրեական պատասխանատվությունից ազատելու լիազորություն ունեցող մարմինները (հայերեն)187

Virab Hambardzumyan

Bodies Authorized to be Released from Criminal Liability on the Basis of Effective Repentance (in Armenian).....202

Вираб Амбарцумян

Органы уполномоченные освобождать от уголовной ответственности на основании деятельного раскаяния (на армянском).....203

Անահիտ Ավդալյան

Մեղադրանքը քրեական դատավարությունում (հայերեն)204

Anahit Avdalyan

Accusation in the Criminal Procedure (in Armenian)223

Анаит Авдалян

Обвинение в уголовном процессе (на армянском)224

Շարեն Ամիրյան

Մեփականության իրավունքի սահմանափակման քրեադատավարական կարգավորումների ընկալման և մեկնաբանման որոշ հիմնահարցեր (հայերեն).....225

Karen Amiryan

Some Key Issues for Understanding and Interpreting Criminal Procedure Regulations Limiting the Property Rights (in Armenian).....237

Карен Амирян

Некоторые основные вопросы для понимания и толкования уголовно-процессуальных норм, ограничивающих права собственности (на армянском).....238

Դավիթ Թումասյան

Բռնությունը Հայաստանի Հանրապետության քրեական նոր օրենսգրքի կարգավորումների լույսի ներքո (հայերեն).....239

Davit Tumasyan

Violence under the Regulation of the New Criminal Code of the Republic of Armenia (in Armenian)261

Давид Тумасян

Насилие в свете положений нового Уголовного кодекса Республики Армения (на армянском)262

Վևորգ Բարսեղյան

Քրեաիրավական նորմերի ժամանակային (տեմպորալ) և տարածական մրցակցությունը հանցագործությունների որակման համատեքստում (հայերեն)263

Gevorg Barseghyan

Temporal and Spatial Competition of Criminal Law Norms in the Crime Classification Process (in Armenian).....294

Геворг Барсегян

Темпоральная и пространственная конкуренции уголовно-правовых норм при квалификации преступлений (на армянском)295

Արթուր Դամբարյան

*Հայ-ուռուսական համալսարանի իրավունքի տեսության և սահմանադրական իրավունքի ամբիոնի վարիչ,
իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր,
ՀՀ վաստակավոր իրավաբան,
ՀՀ դատախազության «Օրինականություն» գիտագործնական պարբերականի խմբագրական խորհրդի անդամ*

**ՔՆՆՉԱԿԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ԿԱՏԱՐՈՒՄԸ
ՏԵՍԱԿԱԿԻ ՄԻՋՈՑՈՎ¹**

Համառոտագիր

Հոդվածում ուսումնասիրվել են Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքով նախատեսված տեսակապի միջոցով քննչական գործողություն կատարելու էությունը՝ որպես բացառիկ միջոց, տեսակապի միջոցով քննչական գործողություն կատարելու հիմքերը և տեսակապի միջոցով քննչական գործողության կատարման դատավարական կարգը: Ընտրված թեման ուսումնասիրելիս վերլուծվել են տեսակապի միջոցով քննչական գործողություն կատարելու օրենսդրական առանձնահատկությունները և դրա կատարման գործնական նշանակությունը: Ընտրված թեմայի արդիականությունը պայմանավորված է տեսակապի միջոցով քննչական գործողությունների վերաբերյալ օրենսդրական դրույթների տարաբնույթ մեկնաբանմամբ: Այս թեմայի հետազոտության նպատակն է ուսումնասիրել քրեական դատավարությունում տեսակապի միջոցով քննչական գործողություն կատարելու առանձնահատկությունները և հիմքերը, մասնավորապես՝ բացահայտել քրեական դատավարությունում տեսակապի միջոցով քննչական գործողություն կատարելու էությունը, տեսակապի միջոցով քննչական գործողություն կատարելու հիմքերի մասին իրավական կարգավորումների տրամաբանությունը և օրենսդրի ենթադրյալ կամքը, ինչպես նաև բացահայտել տեսակապի միջոցով քննչական գործողության կատարման դատավարական կարգի առանձնահատկությունները և խնդիրները: Հոդվածում ընտրված թեման ուսումնասիրելիս կիրառվել են իրավահամեմատական մեթոդը, դեդուկտիվ և ինդուկտիվ, ինչպես նաև վերլուծության ու վերացականության մեթոդները:

Հիմնաբառեր - քննչական գործողություն, տեսակապ, բացառիկ միջոց, այլ վայր, անձի անվտանգություն:

¹ Հոդվածը ներկայացվել է 02.04.2024 թ., գրախոսվել է 03.05.2024 թ.:

1. Ներածություն

1.1. Տերմինների մասին: Ներկայումս եվրոպական երկրների շարքում դժվար է գտնել այնպիսի իրավակարգ, որն արգելում է տեսակոնֆերանսի (տեսակապի) կիրառումը, քանի որ այն պարզեցնում է քրեական գործերով արդարադատության իրականացումը (հատկապես խոշոր տարածք ունեցող պետություններում), նպաստում է դատավարական տնտեսմանը և դատավարության ողջամիտ ժամկետների պահպանմանը²:

Տարբեր դատավարական համակարգերում տեխնիկական այս միջոցն անվանվում է տարբեր կերպ՝ հեռակոնֆերանս (телеконференция), վիդեոկոնֆերանս (видеоконференция): ՀՀ օրենսդիրն օգտագործել է «տեսահաղորդակցության տեխնիկական միջոց» և «տեսակապ» ձևակերպում ներքը (ՀՀ քր. դատ. օր.-ի 214-րդ հոդվածի 6-րդ մաս), ինչը նշանակում է, որ անկախ գործողության մասնակիցների քանակից՝ պետք է առկա լինի ինչպես ձայնը, այնպես էլ պատկերը: Դոկրտինում, օրինակ, նշվում է, որ տեսակապի միջոցով հարցաքննության (հեռահարցաքննության) էությունն այն է, որ հարցաքննողը գտնվում է առանձին դատական նիստի դահլիճում կամ քննիչի սենյակում, իսկ հարցաքննվողը (օրինակ՝ վկան, տուժողը, մեղադրյալը)՝ մեկ այլ սենյակում, օրինակ՝ քրեակատարողական հիմնարկում, առանձին դեպքերում՝ նույնիսկ այլ պետությունում, և հարցաքննությունն իրականացվում է տեսակապի օգնությամբ³:

ՀՀ քրեական դատավարությունում տեսահաղորդակցության տեխնիկական միջոցը (տեսակապը) կարող է օգտագործվել ոչ միայն հարցաքննության, այլև մյուս քննչական գործողությունների պարագայում, եթե դրանց բնույթը թույլ տալիս է այն կատարել տեսակապի միջոցով:

1.2. Տեսակապի միջոցով քննչական գործողություն կատարելու էությունը: Տեսակապի միջոցով քննչական գործողությունը պետք է տարբերակել քննիչի կողմից հեռախոսով տեղեկություններ հավաքելու՝ օրենքով չնախատեսված եղանակից: Օրինակ՝ տեսակապի միջոցով քննչական գործողություն կատարելու հետ որևէ առնչություն չունի այն իրավիճակը, երբ քննիչը հեռախոսազանգի միջոցով վկայից ստանում է տեղեկություններ և այն ներկայացնում է որպես տեսակապի միջոցով ձեռք բերված «ցուցմունք»: Այսպես, թիվ ՄԴ-1/0040/01/22 գործով 31.01.2023թ. դատական ակտով Դատարանն անդրադարձել է վկայի հարցաքննությունը, այսպես կոչված, «տեսակապով» իրականացնելու և դրա արդյունքները որպես ապացույց օգտագործելու թույլատրելիությանը: Նշված գործով Դատարանը նշել է.

² St'u Трефилов А. А., «Уголовный процесс Швейцарии: Уголовный процесс зарубежных стран». Том 1 (15). М.: «НИПКЦ Восход-А». 2016, էջ 223-224

³ Այս մասին տե՛ս Шерба С. П., Архипова Е. А. «Применение видеоконференцсвязи в уголовном судопроизводстве России и зарубежных стран: опыт, проблемы, перспективы». М.: Юрлитинформ, 2016 г.

«Վկայի հարցաքննությունն իրականացվել է «Տեսակապով» մասնավորապես վարույթն իրականացնող քննիչն իր հեռախոսահամարով զանգահարել և գրուցել է Բարկեն Ղազարյան ներկայացած անձի հետ, խոսակցության բովանդակությունը փաստաթղթավորվել է և ներկայացվել է որպես ապացույց: (...) սույն իրավիճակում վարույթն իրականացնող քննիչը ՀՀ քր. դատ. օր.-ով չնախատեսված կարգով է փորձել ապացույց ձեռք բերել՝ մասնավորապես որպես ապացույց մեղադրանքի հիմքում դրել է իր կողմից հեռախոսագրույց ունենալու արձանագրությունը, որն ապացույցների շարքում ներառված թույլատրելի կարգով ձեռքբերված ապացույց չէ: Հետևաբար ՀՀ չսահմանված կարգով, դեռ ավելին՝ տվյալ քննչական գործողության կատարման կարգի էական խախտմամբ ձեռքբերված ապացույցը չի կարող օգտագործվել և վկայակոչվել անձի մեղքը հիմնավորող ապացույցների զանգվածում, ուստի ամբաստանյալի մեղքի հիմնավորման հիմքում դրված վկայի հետ հեռախոսագրույց ունենալու, այնուհետև այդ հեռախոսագրույցի ձայնագրությունը գննելու արձանագրությունն անթույլատրելի ապացույցներ են և չեն կարող դրվել ապացույցների ծավալի մեջ»:

Ինչպես նկատում ենք, Դատարանը հեռախոսագանգով անձից տեղեկություններ հավաքելը իրավացիորեն չի համարել տեսակապի միջոցով հարցաքննություն:

1.3. Տեսակապը՝ որպես բացառիկ միջոց: ՀՀ քր. դատ. օր.-ի 214-րդ հոդվածի 6-րդ մասում սահմանված են տեսակապի միջոցով քննչական գործողություն կատարելու դեպքերը (հիմքերը): Օրենսդիրը նշված հոդվածում ընդգծել է, որ տեսակապի միջոցով քննչական գործողություն կատարելը ոչ թե սովորական (շարքային), այլ բացառիկ իրավիճակ է. տեսակապի միջոցով քննչական գործողություն կարելի է կատարել միայն բացառիկ դեպքերում, երբ այլ եղանակով քննչական գործողություն կատարելը ֆիզիկական, գործնական կամ իրավաբանական առումով անհնարին է⁴: Սա նշանակում է, որ եթե գործնականում, առանց էական բարդությունների, հնարավոր է քննչական գործողությունը կատարել (օրինակ՝ քննչական փոխօգնության խնդրանքի միջոցով), ապա քննիչը պետք է ընտրի այս հնարավորությունը:

⁴ Ֆիզիկական, գործնական և իրավաբանական անհնարինության տեսակների մասին տե՛ս Ղամբարյան Ա., Հանրային իրավունքի զարգացումը օրենքին հակառակ (contra legem) «օրենքը չի պահանջում անհնարինը» իրավական մաքսիմի հիման վրա // Բանբեր արդարադատության ակադեմիայի, 2023, № 1 (9), էջեր 47-67, Ղամբարյան Ա., Սիմոնյան Ս. Ցուցմունքի դատական դեպոնացումը (գիտագործնական մեկնաբանություններ): Եր.: Տիգրան Մեծ, 2023, էջեր 86-92:

2. Տեսակապի միջոցով քննչական գործողություն կատարելու հիմքերը.

2.1. Ընդհանուր դրույթներ: Տեսակապը՝ որպես բացառիկ միջոց, կարող է օգտագործվել օրենքով նախատեսված հիմքերի առկայության պարագայում: Այդ հիմքերն են՝

1) առողջական վիճակի պատճառով անձի ներկայությունը քննչական գործողության կատարմանն անհնար է,

2) այլ վայրում գտնվելու պատճառով անձի ներկայությունը քննչական գործողության կատարմանն անհնար է,

3) առկա է անձի անվտանգությունն ապահովելու անհրաժեշտություն,

4) առկա է անչափահաս տուժողի կամ վկայի իրավաչափ շահերի պաշտպանության անհրաժեշտություն, և դա է պահանջում արդարադատության շահը:

2.2. Առողջական վիճակը: Առողջական վիճակի պատճառով անձի ներկայությունը քննչական գործողությանը կարող է անհնար լինել ֆիզիկական, գործնական և իրավաբանական առումներով:

Ֆիզիկական անհնարինությունն առկա է, երբ հիվանդության բնույթով պայմանավորված՝ անձին տեղաշարժելը (տեղափոխելը) վտանգավոր է նրա կյանքի կամ առողջության համար:

Գործնական անհնարինությունն առկա է, եթե հիվանդին տեղաշարժելը թեև կյանքի կամ առողջության համար ինքնին վտանգավոր չէ, սակայն այդ գործընթացը կապված է ծայրահեղ անհամաչափ կամ անխոհեմ ծախսերի կամ բարդությունների հետ:

Իրավաբանական անհնարինությունն առկա է, երբ հիվանդությունը թեև ինքնին չի գրկում անձին տեղաշարժվելու հնարավորությունից, սակայն հիվանդության բնույթով պայմանավորված (օրինակ՝ հանրության համար վտանգավոր վարակիչ հիվանդությունը)՝ տվյալ անձը պետք է գտնվի մեկուսացման վիճակում և օրենքով նրան արգելվում է դուրս գալ հասարակական վայրեր և շփվել այլ անձանց հետ: Նման վիճակում գտնվող անձին հարցաքննելու սուր անհրաժեշտության դեպքում հարցաքննությունը կարող է կատարվել տեսակապի միջոցով, իսկ հարցաքննվողի ինքնությունը ստուգելու իրավասու (օժանդակող) անձը կհամարվի նրան հսկող (բուժող) բժիշկը:

Առողջության վիճակի պատճառով ներկայանալու անհնարինության հիմքով տեսակապի միջոցով հարցաքննությունը նման է մասնակցության անհնարինության հիմքով ցուցմունքի դեպոնացմանը, ուստի անհրաժեշտ է քննարկել տեսակապի միջոցով հարցաքննության և ցուցմունքի դեպոնացման փոխհարաբերակցությունը:

Ցուցմունքի դեպոնացման հիմքերը կանխատեսողական են և վերաբերում են այնպիսի հնարավոր իրադարձություններին, որոնք կարող են տեղի ունենալ ապագայում, մինչդեռ տեսակապի միջոցով հարցաքննության վերաբերելի հիմքը փաստական է, այսինքն՝ այն պետք է գոյություն ունենա: Ցուցմունքը կարելի

է դեպոնացնել, եթե հիմքեր կան ենթադրելու, որ անձն ապագայում հնարավորություն չի ունենա ներկայանալու դատական հարցաքննությանը, իսկ տեսակապի միջոցով հարցաքննության պարագայում, որպես փաստ, անձի ներկայությունը հարցաքննության կատարմանն անհնար է⁵:

2.3. Այլ վայրում գտնվելը

2.3.1. ՀՀ վարչատարածքային այլ միավորում գտնվելը: Ի տարբերություն հիմնական դատախոսների ընթացքում հարցաքննության հատուկ կարգի, որով թույլատրվում է տեսակապի միջոցով անձին հարցաքննել միայն Հայաստանի Հանրապետության սահմաններից դուրս գտնվելու հիմքով (ՀՀ քր. դատ. օր.-ի 327-րդ հոդվածի 1-ին մաս)՝ մինչդեռ տեսակապի վարույթի ընթացքում Օրենսդիրը տեսակապի օգտագործումը կապել է առավել ընդհանուր հասկացության՝ «այլ վայրում գտնվելու պատճառով» ձևակերպման հետ: Այլ վայրում գտնվելու պատճառով քննչական գործողությունը տեսակապի միջոցով կատարելու կարգ սահմանելիս Օրենսդիրը չի կոնկրետացրել, թե այս համատեքստում «այլ վայր» ասելով՝ հասկացել է միայն այլ պետության տարածքը, թե՛ նաև նախաքննության կատարման վայրից դուրս գտնվող ՀՀ վարչատարածքային միավորները (մարզերը և համայնքները):

Հիմք ընդունելով օրենսդրական գործընթացի երկրորդային աղբյուրները (travaux préparatoires⁶)՝ կարելի է եզրակացնել, որ տեսակապի միջոցով քննչական գործողություն կատարելու ինստիտուտի տեսանկյունից «այլ վայր» ասելով՝ պետք է հասկանալ ինչպես այլ պետության տարածքը, այնպես էլ՝ ՀՀ վարչատարածքային միավորները: Օրենսդրի ենթադրյալ կամքը բացահայտելու նպատակով ուսումնասիրվել է ՀՀ ազգային ժողովի 05.03.2020 թ. նիստի սղագրությունը: Այդ նիստում առաջին անգամ համակողմանի քննարկվել է տեսակապի միջոցով վկայի և տուժողի հարցաքննության ինստիտուտը ներդնելու հարցը (1998 թ. ՀՀ քր. դատ. օր.-ում այս ինստիտուտն առաջին անգամ ներդրվեց 03.06.2020 թ.-ին, որի կարգավորումներն, ըստ էության, արտացոլվեցին նաև 2021 թ. ՀՀ քր. դատ. օր.-ում):

Նախագծի քննարկման ժամանակ Չեկուցողը մի քանի անգամ շեշտել է, որ տեսակապի միջոցով հարցաքննությունը կարող է կատարվել նաև այն դեպքերում, երբ հարցաքննվողը գտնվում է ՀՀ տարածքի դժվարամատչելի

⁵ Տե՛ս Ղամբարյան Ա., Ցուցմունքի դատական դեպոնացումը և տեսակապի միջոցով անձին դատարանում հարցաքննելը, Օրինականություն, 2022, № 132, էջեր 3-6:

⁶ Travaux préparatoires կանոնի էությունն այն է, որ օրենսդրական գործընթացում, քննարկվող նախագծից բացի, ստեղծվում են նաև դրա վերաբերյալ եզրակացություններ, կարծիքներ, որոնք իրենց հերթին քննարկվում են հանձնաժողովներում, և վերջնական տարբերակը դրվում է քվեարկության: Արդյունքում՝ ընդունված օրենքի իրական իմաստը լիարժեք կարող է արտացոլված լինել այս տեսակի փաստաթղթերում: Ի վերջո, հենց այս փաստաթղթերն են նաև ուսումնասիրում պատգամավորները մինչ քվեարկելը: Տե՛ս Չարիկյան Կ., Իրավական նորմերի մեկնաբանում. տեքստ vs. իրավունք, Բանբեր Երևանի համալսարանի, Իրավագիտություն, 2020, № 1 (31), էջ 21:

վարչատարածքային միավորներում: Ավելին՝ այս հարցը հանդիսացել է պատգամավորների հատուկ քննարկման առարկան, որի ընթացքում Ձեկուցողը վերահաստատել է, որ տեսակապի միջոցը կարող է կիրառվել նաև նախաքննության կատարման վայրից դուրս՝ ՀՀ վարչատարածքային միավորների տարածքում գտնվող անձանց հարցաքննելու նպատակով: Այսպես՝

«Ձեկուցող.

- Որոշ դեպքերում, երբ անձը գտնվում է այլ վայրում, օրինակ՝ անձը գտնվում է Կապան քաղաքում, վարույթ իրականացնող մարմինը գտնվում է Երևան քաղաքում, և Կապան քաղաքում գտնվող վկայի կամ տուժողի հարցաքննության անհրաժեշտություն է առաջանում, գործող օրենսդրությամբ նախատեսված է, որ քննիչը պիտի տվյալ անձին հրավիրի Երևան քաղաք՝ հարցաքննության համար: (...) Նախագիծը ներկայացնում ենք այն տրամաբանությամբ, որ հեռավար կարգով հնարավորություն ընձեռենք հարցաքննել, ո՛չ քննիչն անհրաժեշտություն ունենա գնալ Կապան քաղաք՝ հարցաքննելու, ո՛չ էլ այդ վկան Կապան քաղաքից գալ Երևան քաղաք՝ հարցաքննվելու համար:

Պատգամավոր.

- Այսինքն՝ դուք գտնում եք, որ հիմնականում դա Հայաստանից դուրս գտնվող վկաների կամ տուժողների համար է նախատեսված, այլ ոչ թե Հայաստանում:

Ձեկուցող.

- Ենթադրենք անձը գտնվում է Մեղրի քաղաքում, ընդունենք՝ ձմեռային պայմաններում չի կարող հասնել Երևան, դա հնարավոր է այդ դեպքում իրականացնել: Ես գտնում եմ՝ այդ բացառիկ դեպքերում հնարավոր է կատարել»⁷:

Ասվածից պարզ է դառնում, որ տեսակապի միջոցով քննչական գործողություն կատարելու ինստիտուտը ներդնելիս Օրենսդիրը հստակ կամք է արտահայտել, որ տեսակապի միջոցով անձին կարելի է հարցաքննել, եթե նա գտնվում է ՀՀ տարածքում, սակայն հեռավոր կամ դժվարամատչելի վարչատարածքային միավորներում:

2.3.2. Այլ պետության տարածքում գտնվելը: Այլ պետության տարածքում գտնվող անձի մասնակցությամբ քննչական գործողությունը տեսակապի միջոցով կատարելու իրավական հիմքեր նախատեսված են ոչ միայն ներպետական իրավունքով, այլ նաև միջազգային պայմանագրերով: Այսպես՝ ՄԱԿ-ի 15.11.2000 թ. «Անդրազգային կազմակերպված հանցավորության դեմ» Կոնվենցիայի⁸ 18-րդ հոդվածի 18-րդ կետում սահմանված է.

⁷ ՀՀ ազգային ժողովի 05.03.2020 թ. նիստի տղագրություն № 13: http://www.parliament.am/transcript.php?AgendaID=3859&day=05&month=03&year=2020&lang=arm&fbclid=IwAR13HXL-d9KNpasTAOmO-esdswTSq8fvi-Pecb44X1GDDj0B0eYAIH_k0oE#05.03.2020

⁸ Կոնվենցիան Հայաստանի Հանրապետության համար ուժի մեջ է մտել 29.09.2003 թ. -ից:

«Այն չափով, որքանով դա հնարավոր է և համապատասխանում է ներքին օրենսդրության հիմնարար սկզբունքներին, եթե որևէ անձ գտնվում է Մասնակից պետության տարածքում և որպես վկա կամ փորձագետ պետք է լսվի մյուս Մասնակից պետության դատական մարմինների կողմից, առաջին Մասնակից պետությունը, մյուս Մասնակից պետության խնդրանքով, կարող է թույլ տալ լսումն իրականացնել տեսակապի օգնությամբ, եթե համապատասխան անձի ներկայությունը հայցող Մասնակից պետության տարածքում հնարավոր կամ ցանկալի չի համարվում:»:

Քիչնևու՜մ 07.10.2002 թ. ընդունված «Քաղաքացիական, ընտանեկան և քրեական գործերով իրավական օգնության և իրավական հարաբերությունների մասին» կոնվենցիայի⁹ 6-րդ հոդվածի համաձայն՝

«Պայմանավորվող կողմերը փոխադարձ իրավական օգնություն են ցույց տալիս հայցվող Պայմանավորվող կողմի օրենսդրության նախատեսված դատավարական և այլ գործողություններ կատարելու միջոցով, որը, մասնավորապես, ներառում է (...) մեղադրյալների, տուժողների, վկաների, (...) փորձագետների հարցաքննություն անցկացնելը, ճանաչման համար ներկայացնելը, այդ թվում՝ տեսակապի, տեսագրության և այլ տեխնիկական միջոցների օգտագործմամբ (...):»:

Նույն կոնվենցիայի 105-րդ հոդվածում սահմանված է, որ իրավական օգնություն ցույց տալու Պայմանավորվող կողմի իրավասու արդարադատության հիմնարկները, փոխադարձ համաձայնությամբ, իրավունք ունեն օգտագործելու տեսակապի միջոցներ: Տեսակապի միջոցների օգտագործումն իրականացվում է Պայմանավորվող կողմերի ներքին օրենսդրության համապատասխան: Համանման դրույթներ նախատեսված են նաև 31.10.2003 թ. «Կոռուպցիայի դեմ» կոնվենցիայում¹⁰:

Տեսակապի միջոցով քննչական գործողություններ կատարելու վերաբերյալ ներպետական և միջազգային իրավական նորմերի առկայության պարագայում պետք է պարզել, թե այլ պետության տարածքում գտնվող անձի մասնակցությամբ տեսակապի միջոցով քննչական գործողությունները կատարվում են բացառապես միջազգային իրավական օգնության շրջանակում, թե՞ նաև միջազգային իրավական օգնության ռեժիմից ինքնավար՝ միայն ներպետական իրավունքի հիման վրա:

Միջազգային իրավական օգնության ռեժիմով տեսակապի միջոցով քննչական գործողություն կատարելն անկասկած օրինաչափություն է, սակայն ոչ միշտ է, որ այն արդյունավետ միջոց է, քանի որ միջազգային իրավական օգնության ռեժիմով գործողություններ կատարելը ժամանակատար գործընթաց է: Հետևաբար ՀՀ իրավական համակարգում քրեական արդարադատության արդյունավետությունն ապահովելու նպատակով նախատեսված են նաև տեսակապի միջոցով

⁹ Կոնվենցիան Հայաստանի Հանրապետության համար ուժի մեջ է մտել 19.02.2005 թ. -ից:

¹⁰ Կոնվենցիան Հայաստանի Հանրապետության համար ուժի մեջ է մտել 07.04.2007 թ. -ից:

քննչական գործողություններ կատարելու այլ ռեժիմներ, որոնք թեև ինքնավար են միջազգային իրավական օգնության ռեժիմից, սակայն չեն վնասում այլ պետության ինքնիշխանությունը: Այսպես՝ այլ պետության տարածքում գտնվող անձի մասնակցությամբ տեսակապի միջոցով քննչական գործողություն կատարելը հնարավոր է երեք իրավական ռեժիմի շրջանակներում.

1) միջազգային իրավական օգնություն ուղարկելու ռեժիմով,

2) այլ պետության տարածքում գտնվող ՀՀ հյուպատոսական հիմնարկի ղեկավարին հանձնարարություն տալու ռեժիմով («Հյուպատոսական ծառայության մասին» ՀՀ օրենքի 29-րդ հոդված),

3) քննչական գործողության կատարման բնականոն ընթացքն ապահովելու համար ՀՀ հետաքննության մարմնի աշխատակցին ներգրավելու (ՀՀ քր. դատ. օր.-ի 210-րդ հոդվածի 4-րդ մաս) և այլ պետություն գործուղելու ռեժիմով:

ՀՀ հյուպատոսական հիմնարկի ղեկավարին հանձնարարություն տալու ռեժիմով տեսակապի միջոցով քննչական գործողություն (հարցաքննություն) կատարելն ունի ինչպես միջազգային իրավական, այնպես էլ ներպետական իրավական հիմքեր:

Միջազգային իրավական հիմքերը նախատեսված են Քիշնևում 07.10.2002 թ. ընդունված «Քաղաքացիական, ընտանեկան և քրեական գործերով իրավական օգնության և իրավական հարաբերությունների մասին» կոնվենցիայի 14-րդ հոդվածում, որի համաձայն՝

«Պայմանավորվող կողմերի դիվանագիտական ներկայացուցչությունները և հյուպատոսական հիմնարկներն իրավունք ունեն իրականացնելու դատական և ոչ դատական փաստաթղթերի փոխանցում կամ ներկայացվող Պայմանավորվող կողմի դատարանների համար կատարելու ցուցմունքներ վերցնելու վերաբերյալ դատական հանձնարարություններ՝ գործող միջազգային համաձայնագրերին համապատասխան կամ, այդպիսի համաձայնագրերի բացակայության դեպքում, ցանկացած այլ կարգով, որը չի հակասում այն Պայմանավորվող կողմի օրենսդրությանը, որի տարածքում նրանք գտնվում են»:

Ներպետական իրավական հիմքերը նախատեսված են «Հյուպատոսական ծառայության մասին» ՀՀ օրենքի 29-րդ հոդվածում, որի համաձայն՝

«Հյուպատոսական հիմնարկի ղեկավարը կատարում է ՀՀ արտաքին գործերի նախարարության միջոցով իրեն փոխանցված ՀՀ դատարանների, դատախազության և քննչական մարմինների՝ իր հյուպատոսական տարածաշրջանում գտնվող ՀՀ քաղաքացիներին վերաբերող հանձնարարությունները: Նշված հանձնարարությունները կատարվում են ՀՀ օրենսդրության և միջազգային իրավունքի նորմերի համաձայն»:

Այս ռեժիմով այլ պետության տարածքում գտնվող անձի մասնակցությամբ տեսակապի միջոցով քննչական գործողություն կատարելու իրավաչափության պայմաններն են.

1) հյուպատոսական հիմնարկի ղեկավարին հասցեագրված՝ ՀՀ քննչական մարմնի հանձնարարությունն ուղարկվում է ՀՀ արտաքին գործերի նախարարության միջոցով,

2) այդ հանձնարարությունը կատարում է հյուպատոսական հիմնարկի ղեկավարը և միայն հյուպատոսական տարածաշրջանում, այսինքն՝ այն տարածքում, որը հատկացված է հյուպատոսական հիմնարկին՝ հյուպատոսական պարտականությունների կատարման համար,

3) այս ռեժիմով տեսակապի միջոցով քննչական գործողություն կատարվում է միայն ՀՀ քաղաքացիների մասնակցությամբ:

Այս ռեժիմի պարագայում ՀՀ քր. դատ. օր.-ի 214-րդ հոդվածի տեսանկյունից ՀՀ հյուպատոսական հիմնարկի ղեկավարը համարվում է քննչական գործողության կատարմանն օժանդակող անձ, որն ապահովում է քննչական գործողության մասնակիցների ինքնության ստուգումը:

Ընդհանուր կանոնի համաձայն՝ քննչական գործողության կատարման բնականոն ընթացքն ապահովելու համար քննիչը կարող է ներգրավել ՀՀ հետաքննության մարմնի աշխատակցին (ՀՀ քր. դատ. օր.-ի 210-րդ հոդվածի 4-րդ մաս): Եթե քննչական գործողությունը պետք է կատարվի տեսակապի միջոցով, ապա հետաքննիչն այլ պետության տարածքում գտնվող անձի ինքնությունը պարզելու և քննչական գործողության բնականոն ընթացքն ապահովելուն ուղղված կազմակերպական գործողություններ կատարելու նպատակով կարող է գործուղվել այլ պետություն:

Հետաքննության մարմնի աշխատակցին այլ պետություն գործուղելու ռեժիմով տեսակապի միջոցով քննչական գործողություն կատարելն ինքնին չի հակասում այլ պետության ինքնիշխանության սկզբունքին: Այս տեսանկյունից կարևոր են հետևյալ հանգամանքները՝

1) քննչական գործողություն կատարող անձի և այլ պետության տարածքում գտնվող անձի (օժանդակող անձի) կարգավիճակները,

2) քննչական գործողության կատարման վայրը և այդ ընթացքում հարկադրանք կիրառելու հնարավորությունը:

ՀՀ քր. դատ. օր.-ի և վերը նշված Կոնվենցիաների տրամաբանությունից հստակ է, որ տեսակապի միջոցով քննչական գործողություն կատարող անձ է համարվում ոչ թե այլ պետության իրավասու մարմնի աշխատակիցը, այլ ՀՀ քննչական մարմնի՝ նախաքննություն կատարող քննիչը: ՄԱԿ-ի 15.11.2000 թ. «Անդրազգային կազմակերպված հանցավորության դեմ» Կոնվենցիայի 18-րդ հոդվածի 18-րդ կետում նշված է.

«Մասնակից պետությունները կարող են պայմանավորվել, որ հայցող Մասնակից պետության դատական մարմնի կողմից լուսնն իրականացվի հայցվող Մասնակից պետության դատական մարմնի ներկայացուցիչների ներկայությամբ»:

Սա նշանակում է, որ այլ պետության տարածքի դատական մարմնի

ներկայացուցիչը ոչ թե քննչական գործողություն է կատարում, այլ ներկա է գտնվում ՀՀ քննիչի կողմից տեսակապի միջոցով կատարվող քննչական գործողությանը: Այլ կերպ ասած՝ միջազգային իրավունքի տեսանկյունից նույնպես հստակ է, որ քննչական գործողությունը կատարում է ՀՀ քննիչը, իսկ Հայցվող պետության իրավասու մարմնի ներկայացուցիչը, ՀՀ քր. դատ. օր.-ի 214-րդ հոդվածի տեսանկյունից, կարող է համարվել այլ վայրում գտնվող և քննչական գործողության կատարմանն օժանդակող անձ, որն ապահովում է քննչական գործողության մասնակիցների ինքնության ստուգումը:

Նկատի ունենալով, որ տեսակապի միջոցով քննչական գործողությունը կատարում է ՀՀ քննիչը ՀՀ օրենսդրության հիման վրա՝ պետք է կատարել պայմանական եզրահանգում այն մասին, որ տեսակապի միջոցով քննչական գործողությունը համարվում է կատարված ՀՀ տարածքում, թեև իրականում այդ գործողության բովանդակության մի մասը փաստացի կատարվում է ՀՀ տարածքում, մյուս մասը՝ այլ պետության տարածքում (օրինակ՝ տեսակապի միջոցով հարցաքննություն ժամանակ հարցերը տալիս է քննիչը ՀՀ տարածքից, իսկ անձը հարցերին պատասխանում է այլ պետության տարածքից, տեսակապի միջոցով զննության դեպքում քննիչը դիտարկում է ՀՀ տարածքից, իսկ դիտարկվող օբյեկտը գտնվում է այլ պետության տարածքում):

Այսպիսով, ազգային քրեական դատավարության նվազագույն ինքնավարությունը պահանջում է ճանաչել հետաքննության մարմնի աշխատակցին այլ պետություն գործուղելու ռեժիմով տեսակապի միջոցով քննչական գործողություն կատարելու և հետաքննության մարմնի աշխատակցի կողմից այլ պետության տարածքում գտնվող անձի ինքնությունը պարզելու և քննչական գործողության բնականոն ընթացքն ապահովելուն ուղղված կազմակերպական գործողությունների հնարավորությունը:

Այնուամենայնիվ, այլ պետության ինքնիշխանությունը հարգելու սկզբունքն արգելում է միջազգային իրավական օգնության շրջանակներից դուրս՝ ՀՀ հետաքննության մարմնի աշխատակցին գործուղելու ռեժիմով տեսակապի միջոցով այնպիսի գործողություն կատարելը, որը ենթադրում է այլ պետության տարածքում հարկադրանքի կիրառում (օրինակ՝ այլ պետության ինքնիշխանությունը հարգելու սկզբունքը կիսաթարվի, եթե ՀՀ հետաքննության մարմնի աշխատակիցն այլ պետության տարածքում անձին հարկադրաբար բերման ենթարկի՝ տեսակապի միջոցով նրան հարցաքննելու նպատակով):

2.3.3. Ներկայանալու ֆիզիկական, իրավաբանական և գործնական անհնարինությունը: Այլ վայրում գտնվելու պատճառով անձի ներկայությունը քննչական գործողությանը կարող է անհնար լինել ֆիզիկական, գործնական և իրավաբանական առումներով:

Ֆիզիկական անհնարինությունն առկա է, երբ անձը գտնվում է այնպիսի պե-

տուրությունում կամ ՀՀ տարածքի այնպիսի վարչատարածքային միավորումում, որոնց հետ ցամաքային, օդային կամ ջրային տրանսպորտային հաղորդակցությունը դադարեցվել է (օրինակ՝ տարերային աղետների կամ ռազմական շրջափակման մեջ գտնվելու պատճառով՝ այդ պետություն (վարչատարածքային միավոր) մեքենաների, ուղղաթիռների կամ տրանսպորտային այլ միջոցների մուտքը և ելքը ֆիզիկապես (օբյեկտիվորեն) հնարավոր չէ): Ֆիզիկական անհնարինության վիճակ է նաև այն, երբ անձն այլ պետության տարածքում գտնվում է անազատության մեջ:

Իրավաբանական անհնարինություն առկա է, երբ այլ պետությունում կամ ՀՀ տարածքում գտնվող անձին իրավաբանորեն արգելվում է լքել այդ պետության տարածքը կամ հատել ՀՀ վարչատարածքային կոնկրետ միավորի (կոնկրետ մարզի) սահմանները: Օրինակ՝ այլ պետության տարածքում ազատության մեջ գտնվող անձի նկատմամբ կիրառվել է այնպիսի խափանման միջոց, որով արգելվում է լքել այդ պետության տարածքը: Թեև այդ անձը ֆիզիկապես կարող է գալ ՀՀ տարածք և ներկա գտնվել քննչական գործողության կատարմանը, սակայն նրա նկատմամբ այլ պետության տարածքում կիրառված իրավական սահմանափակումը զրկում է նրան այդ հնարավորությունից:

Գործնական անհնարինությունն առկա է, երբ այլ վայրում գտնվող անձի ներկայանալը քննչական գործողությանը թեև ֆիզիկական կամ իրավաբանական առումով հնարավոր է, սակայն ներկայանալու գործընթացը կապված է ծայրահեղ անհամաչափ կամ անխոհեմ ծախսերի կամ բարդությունների հետ: Օրինակ՝ վկան զորակոչվել է խիստ դժվարամատչելի վայրում տեղակայված գորամաս կամ վկան գտնվում է հեռավոր մարզերում (օրինակ՝ ձմռանը Մեդրի քաղաքում գտնվող վկայի համար Երևան գալը կապված է անհամաչափ բարդությունների հետ):

2.3.4. Տեսակապի միջոցի և քննչական փոխօգնության մրցակցությունը:

Այլ պետության տարածքը կամ ՀՀ տարածքում գտնվող վարչատարածքային միավորները տեսակապի օգտագործման նպատակով «այլ վայր» դիտելը մրցակցություն է ստեղծում երկու լիազորությունների միջև՝ տեսակապի միջոցով քննչական գործողություն կատարելու և միջազգային հարցումներ կամ քննչական փոխօգնության խնդրանք ներկայացնելու (հանձնարարություն տալու) լիազորությունների միջև: Այսպես՝ ՀՀ քր. դատ. օր.-ի 182-րդ հոդվածի 2-րդ մասում նշված է.

«Այլ վայրում առանձին ապացուցողական կամ վարության այլ գործողություններ կատարելու անհրաժեշտության դեպքում քննիչն իրավասու է այդ գործողությունները կատարելու անձամբ կամ միջնորդելու իր անմիջական վերադասը հանդիսացող քննչական մարմնի ղեկավարին՝ իր իրավասության սահմաններում ապահովելու դրանց կատարումը՝ հանձնարարություն տալու կամ քննչական փոխօգնության խնդրանք ներկայացնելու եղանակով»:

Ինչպես նկատում ենք, և՛ տեսակապի միջոցով քննչական գործողություն կատարելու մասին նորմում, և՛ վերը նշված նորմում օգտագործվել է «այլ վայր» հասկացությունը, իսկ դա նշանակում է, որ այս նորմերի հիպոթեզները կապվում են քննչական գործողության մասնակցի՝ այլ վայրում գտնվելու հանգամանքի հետ: Այլ կերպ ասած՝ այլ վայրում գործողություն կատարելու անհրաժեշտության դեպքում քննիչը (քննչական մարմնի ղեկավարը) օժտված է այլընտրանքային լիազորություններով՝

- 1) մեկնել նախաքննության կատարման վայրից դուրս գտնվող այլ վայր (մարզ) և այնտեղ քննչական գործողությունը կատարել անձամբ,
- 2) դիմել քննչական փոխօգնության ինստիտուտին,
- 3) քննչական գործողությունը կատարել տեսակապի միջոցով:

Օրինակ՝ Մեղրի քաղաքում գտնվող անձին հարցաքննելու նպատակով քննիչը կարող է կա՛մ գնալ Մեղրի և այնտեղ հարցաքննել անձին, կա՛մ կարող է դիմել քննչական փոխօգնությանը, կա՛մ կարող է անձին հարցաքննել տեսակապի միջոցով: Մրցակցող այս լիազորությունների միջև ընտրություն կատարելիս քննիչը պետք է նկատի ունենա, որ տեսակապի միջոցով քննչական գործողություն կատարելը բացառիկ միջոց է: Այսինքն՝ տեսակապի միջոցով քննչական գործողություն կատարելու լիազորություն պետք է ընտրվի, եթե մյուս երկու լիազորությունների գործադրմամբ նախաքննության խնդիրները հնարավոր չէ արդյունավետ կերպով լուծել: Վերը նշված օրինակով՝ քննիչը կարող է տեսակապի միջոցով հարցաքննել Մեղրի քաղաքում գտնվող անձին, եթե՝

- 1) Մեղրի քաղաքից Երևան գալը կամ Մեղրի գնալը կապված է գործնական անհնարինության հետ,
- 2) քննչական փոխօգնության դիմելը նպատակահարմար չէ, քանի որ վկան տիրապետում է վարույթի համար խիստ կարևոր տվյալների, ուստի նրան պետք է հարցաքննի անձամբ վարույթն իրականացնող քննիչը և ոչ թե վարույթի նյութերին չտիրապետող մեկ այլ քննիչ:

2.4. Անձի անվտանգությունն ապահովելը: ՀՀ քր. դատ. օր.-ի 9-րդ գլխում (վարույթին ներգրավված անձանց հատուկ պաշտպանությունը) ամրագրված են վարույթին ներգրավված անձանց հատուկ պաշտպանության միջոցները և դրանց կիրառման դատավարական կարգը: ՀՀ քր. դատ. օր.-ի 74-րդ հոդվածի 1-ին մասում թվարկված են հատուկ պաշտպանության միջոցները, որոնց ցանկում մինչդատական վարույթի ընթացքում տեսակապի միջոցով քննչական գործողություն կատարելը, որպես հատուկ պաշտպանության միջոց, նախատեսված չէ: Ի դեպ, ի տարբերություն մինչդատական վարույթի՝ ՀՀ քր. դատ. օր.-ի 9-րդ գլխում տեսակապի միջոցով անձին դատարանում հարցաքննելը համարվում է որպես հատուկ պաշտպանության միջոց (ՀՀ քր. դատ. օր.-ի 83-րդ հոդվածի 1-ին մաս): Դժվար է հասկանալ, թե Օրենսդիրն, ի տարբերություն դատական վարույթի, ինչո՞ւ մինչդատական վարույթի ընթացքում տեսակապի

միջոցով գործողություն կատարելը չի դիտել որպես հատուկ պաշտպանության միջոց: Բոլոր դեպքերում, ՀՀ քր. դատ. օր.-ի 74-րդ հոդվածի 1-ին մասում թվարկված հատուկ պաշտպանության միջոցներից բացի, ՀՀ քր. դատ. օր.-ում նախատեսված են մի շարք դատավարական ինստիտուտներ¹¹, որոնք գործառույթային տեսանկյունից նույնպես կոչված են ապահովելու քրեական վարույթին ներգրավված անձի անվտանգությունը: Տեսակապի միջոցով քննչական գործողություն կատարելը թեև ՀՀ քր. դատ. օր.-ի 9-րդ գլխում նախատեսված չէ, սակայն իրականացնում է վարույթին ներգրավված անձանց պաշտպանության (անվտանգության ապահովման) գործառույթ:

Անվտանգության ապահովման նպատակով քննչական գործողությունը տեսակապի միջոցով կարող է կատարվել հատկապես այն ժամանակ, երբ քննչական գործողության անձի ֆիզիկական ներկայությունը (նախաքննության կատարման վայր ներկայանալը, մեղադրյալի հետ նույն տարածքում գտնվելը և այլն) իրական վտանգ է սպառնում նրա կյանքին և առողջությանը:

Անվտանգության ապահովման նպատակով տեսակապի միջոցով քննչական գործողությունը կատարելիս քննիչն, արդյո՞ք, կարող է կիրառել ևս մեկ պաշտպանության միջոց՝ գաղտնիացնել պաշտպանվող անձի ինքնությունը հաստատող տվյալները (ՀՀ քր. դատ. օր.-ի 76-րդ հոդված):

14. Раисова Б. Конституционная жалоба как инструмент защиты прав граждан в Казахстане // https://online.zakon.kz/Document/?doc_id=32811818&pos=4;-109#pos=4;-109; // <https://xn---8sbauh0beb7ai9bh.xn--p1ai/%D0%BB%D0%B8%D0%B1%D0%BE>
Raisova B. Constitutional complaint as a tool for protecting the rights of citizens in Kazakhstan// https://online.zakon.kz/Document/?doc_id=32811818&pos=4;-109#pos=4;-109; // <https://xn---8sbauh0beb7ai9bh.xn--p1ai/%D0%BB%D0%B8%D0%B1%D0%BE>
15. Стрибко Т.І. Нормативно-правовий договір та договірний процес у суверенній Україні : дис. ... канд. юрид. наук, Одеса, 2016.
Stribko T.I. Normative-legal contract and contract process in sovereign Ukraine: dissertation. ... candidate law of Sciences, Odesa, 2016.
16. Хасенов М.Х. Правовой механизм социального партнерства в сфере труда: Диссертация на соискание степени доктора философии (PhD). Астана: 2016.
Khasenov M.Kh. Legal mechanism of social partnership in the sphere of labor: Dissertation for the degree of Doctor of Philosophy (PhD). Astana: 2016.
17. Швабе Ю., Гайслер Т. Избранные решения Федерального Конституционного суда Германии. М. : Инфотропик-медиа, 2018.
Schwabe Y., Geisler T. Selected decisions of the Federal Constitutional Court of Germany. M.: Infotropic-media, 2018.
18. Щербанюк О. Конституційна скарга як гарантія захисту прав та інтересів особи // Матеріали Міжнародної науково-практичної конференції з питань запровадження конституційної скарги в Україні: збірка тез, м. Київ, 18 груд. 2015 р. Конституц. Суд України; за заг.ред. Ю.В. Бауліна. – К.: ВАІТЕ, 2016.
Shcherbanyuk O. A constitutional complaint as a guarantee of protection of the rights and interests of an individual // Materials of the International Scientific and

Practical Conference on the Implementation of a Constitutional Complaint in Ukraine: collection of theses, Kyiv, December 18. 2015 Constitution. Court of Ukraine; according to general ed. Yu.V. Baulina. - K.: VAITE, 2016.

19. Grundgesetz Kommentar. Herausgegeben von Volker Epping und Christian Hillgruber. 3. Auflage, 2020, S. 1777.
Basic Law (Constitution) Comments. Edited by Volker Epping and Christian Hillgruber. 3rd edition, 2020, p. 1777.
20. Study on individual access to constitutional justice, 2011, No. 538/2009 // URL: [http:// www.venice.coe.int/webforms/documents/default.aspx?pdffile=CDL-AD\(2010\)039rev-e](http://www.venice.coe.int/webforms/documents/default.aspx?pdffile=CDL-AD(2010)039rev-e)

Տատյանա Չեխովիչ

*Իրավաբանական գիտությունների դոկտոր, դոցենտ,
Մ. Ս. Նարիկյանի անվան (KAZGUU) համալսարանի իրավունքի
բարձրագույն դպրոցի դասախոս*

**ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԲՈՂՈՔԻ ԻՆՍՏԻՏՈՒՏԸ
ՂԱԶՊԵՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ.
ՏԵՍԱԿԱՆ ԵՎ ԳՈՐԾՆԱԿԱՆ ՈՐՈՇ ՀԻՄՆԱՀԱՐՑԵՐ¹**

Համառոտագիր

Ղազախստանի Հանրապետությունում Սահմանադրական դատարանի գործունեության մեկնարկը նշանավորվեց մեծ թվով խնդրահարույց հարցերի բարձրացմամբ, որոնք լուծումներ են պահանջում ինչպես տեսական մակարդակում, այնպես էլ գործնականում: Հոդվածը նվիրված է սահմանադրական բողոքի ինստիտուտի վերլուծությանը և «Ղազախստանի Հանրապետության սահմանադրական դատարանի մասին» Ղազախստանի Հանրապետության օրենքում (այսուհետ՝ Օրենք) փոփոխություններ կատարելու առաջարկությունների առաջադրմանը:

Նախ քննարկվում է սահմանադրական բողոք ներկայացնելու իրավունք ունեցող սուբյեկտների հարցը: Հեղինակը գտնում է, որ Օրենքի 45-րդ հոդվածում առկա ձևակերպումն անհիմն կերպով նեղացնում է սուբյեկտների շրջանակը: Ներկայումս սահմանադրական բողոքը ներկայացնելու իրավունք չունեն օտարերկրյա քաղաքացիները, քաղաքացիություն չունեցող անձինք, ինչպես նաև իրավաբանական անձինք, ինչը, ըստ հեղինակի, խտրականության դրսևորում է:

Բացի այդ, ուսումնասիրվում է սահմանադրական բողոքի առարկան՝ կարգավորող իրավական ակտերի հարցը: Հեղինակը եզրահանգում է, որ «նորմատիվ իրավական ակտեր» հասկացության սահմանումը փոխառված է «Իրավական ակտերի մասին» Ղազախստանի Հանրապետության օրենքից, որն, իր հերթին, խնդրահարույց ձևակերպումներ ունի: Մասնավորապես, սահմանումը չի ընդգրկում իրավունքի նորմեր պարունակող բոլոր տեսակի իրավական ակտերը, ինչը վերջիններիս «դուրս է թողնում» սահմանադրական բողոքի առարկայի շրջանակից: Առաջարկվում է «Իրավական ակտերի մասին» Ղազախստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարել և իրավական ակտերի համակարգում ընդգրկել նորմատիվ իրավական պայմանագրերը՝ որպես իրավական ակտի ինքնուրույն տեսակ:

¹ Հոդվածը ներկայացվել է 02.03.2024 թ., գրախոսվել է 03.05.2024 թ.:

Հողվածի եզրափակիչ մասում հեղինակն ուշադրություն է հրավիրում Օրենքի 45-րդ հոդվածի առանձին դրույթների՝ միմյանց հետ համապատասխանության աստիճանի բարձրացման անհրաժեշտության վրա: Առաջարկվում է Օրենքի 45-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝ «Վիճարկվող օրենքը կամ այլ նորմատիվ իրավական ակտը կիրառվել է դատարանի կողմից, ուղղակիորեն շոշափում է քաղաքացու կոնկրետ գործով իրավունքներն ու ազատությունները, և գործով կայացվել է օրինական ուժի մեջ մտած դատական ակտ»: Բացի այդ, առանձին առաջարկություններ են արվել Օրենքի 45-րդ հոդվածի 4-րդ մասի վերաբերյալ:

Որպես եզրակացություն՝ նշվում է օրենքի դրույթների հստակեցման, համապատասխան ընթացակարգերի սահմանման, քաղաքացիներին դատարանի իրավասության սահմանների մասին լայնորեն իրազեկելու, ինչպես նաև ուսանողների կողմից «Սահմանադրական դատավարական իրավունք» («Սահմանադրական դատավարություն») առարկայի ուսումնասիրության ապահովմանն ուղղված համակարգված քայլերի ձեռնարկման անհրաժեշտությունը:

Հիմնաբառեր - սահմանադրական դատարան, սահմանադրական բողոք, սահմանադրական վերահսկողություն, նորմատիվ իրավական ակտեր, վարչական մարմին, սոցիալական գործընկերության իրավական ակտ, իրավական որոշակիություն:

Tatiana Chekhovich

Doctor of Law, Associate Professor, lecturer at the Higher School of Law M. Narikbayev KAZGUU University

INSTITUTE OF CONSTITUTIONAL COMPLAINT IN THE REPUBLIC OF KAZAKHSTAN: SOME ISSUES OF THEORY AND PRACTICE¹

Abstract

The beginning of the Constitutional Court's operation in the Republic of Kazakhstan marked the posing of a large number of problematic issues that require their solution both at the level of legal theory and practice. The presented article is focused on the analysis of the constitutional complaint's institution and the formation of suggestions aimed at improving the relevant provisions of the Law of the Republic of Kazakhstan «On the Constitutional Court of the Republic of Kazakhstan» (hereinafter referred to as the Law).

The author, first of all, studies the issue on the system of entities having the right to file a constitutional complaint. The author states that the current wording of the Art. 45 of the Law unjustifiably narrows the range of such entities. A constitutional complaint is currently not available to foreign citizens and stateless persons, as well as to legal entities, which, according to the author, is a manifestation of discrimination.

Besides, the author studies the issue on the subject matter of a constitutional complaint – regulatory legal acts of the Republic of Kazakhstan. It is concluded that the definition of the category of «regulatory legal acts» is borrowed from the Law of the Republic of Kazakhstan «On Legal Acts», which, in turn, is improperly formulated. In particular, it does not absolutely cover all types of legal acts containing the norms of law, which, therefore, «takes» them out of the scope of the subject matter of a constitutional complaint. It is offered that the Law of the Republic of Kazakhstan «On Legal Acts» should provide an independent type of regulatory legal act – a legal act of social partnership within the system of legal acts.

The author pays attention at the end of the article to the need to increase the level of consistency of certain provisions of the Art. 45 of the Law with each other. As a result of the conducted research, the author offers the paragraph 1 of Part 2 of the Art. 45 of the Law in the following wording: «the disputed law or another regulatory legal act applied by the court, directly affects the rights and freedoms in a specific case with the participation of a citizen, and a judicial act was issued in the case, which entered

¹ The article was presented on 02.03.2024 and was reviewed on 03.05.2024.

into legal force». In addition, some recommendations were made in regard to Part 4 of the Art. 45 of the Law.

As a conclusion, the author indicates the need to take systematic steps aimed at clarifying the provisions of the Law, to establish appropriate procedures, wide informing campaign for citizens about the limits of the competence of the Court, as well as to ensure studying the discipline of «Constitutional Procedural Law» by the students.

Keywords: constitutional court; constitutional complaint; constitutional review; regulatory legal acts; administrative agency; legal act of social partnership; legal certainty.

Վիզեն Հարությունյան

*ՀՀ զինվորական կենտրոնական դատախազության կայազորների
զինվորական դատախազությունների գործունեության նկատմամբ
վերահսկողության բաժնի պետ,
արդարադատության առաջին դասի խորհրդական*

Սվետլանա Մկրտչյան

ՀՀ փաստաբանական ակադեմիայի ունկնդիր

**ՀՀ ՔՐԵԱԿԱՆ ՕՐԵՆՍԳՐՔԻ 527-ՐԴ ԵՎ
528-ՐԴ ՀՈԳՎԱԾՆԵՐԻ ՀԱՄԵՄԱՏԱԿԱՆ
ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ, ԴՐԱՆՑ ԿԻՐԱՌԵԼԻՈՒԹՅԱՆԸ
ՎԵՐԱԲԵՐՈՂ ՏԵՍԱԿԱՆ ԵՎ ԳՈՐԾՆԱԿԱՆ
ՈՐՈՇ ԽՆԴԻՐՆԵՐ¹**

Համառոտագիր

Սույն հոդվածի ուսումնասիրության առարկան ՀՀ քրեական օրենսգրքի 527-րդ և 528-րդ հոդվածներն են, դրանց նմանություններն ու տարբերությունները, որակման խնդիրները: Ուսումնասիրվող խնդիրն արդիական է՝ հաշվի առնելով քրեական նոր օրենսգրքի ընդունումն ու դրանում սույն հոդվածի ուսումնասիրության համար հետաքրքրություն ներկայացնող նոր հանցակազմի ներառումը:

Միաժամանակ, խնդրի արդիականությունը հիմնավորվում է նաև այն հանգամանքով, որ քննարկվող հանցակազմերի միաժամանակյա գոյության պայմաններում գործնականում դրանց տրվում են մեկնաբանություններ, որոնց տեսական հիմնավորումները հաճախ բացակայում են: Սույն հոդվածի նպատակը ՀՀ քրեական օրենսգրքի 527-րդ և 528-րդ հոդվածների, դրանց նմանությունների և տարբերությունների հետազոտումը, իրավունքի նորմերի գործնական կիրառությանն առնչվող որոշ հարցերի քննարկումն ու հեղինակային լուծումների տրամադրումն է:

Հոդվածում բացահայտվում են զինձառայողի կողմից իր առողջությանը վնաս պատճառելու (անդամախեղելու) եղանակով զինվորական ծառայության կամ դրա առանձին պարտականությունները դադարեցնելու, ինչպես նաև զինվորական ծառայությունից խուսափելու դեպքերը ՀՀ քրեական օրենսգրքի 527-րդ և 528-րդ հոդվածներով որակելու հիմնախնդիրները: Հոդվածում հիմնավորվում է ՀՀ քրեական օրենսգրքում 528-րդ հոդվածի նախատեսման անհրա-

¹ Հոդվածը ներկայացվել է 22.02.2024 թ., գրախոսվել է 20.03.2024 թ.:

Ժեշտությունը՝ որպես զինվորական ծառայության պարտականությունների հետ չկապված ինքնավաստումների դեմ պայքարի օրենսդրական կարգավորման ինքնուրույն մեխանիզմ, ներկայացվում են դրա հիմնավորված կիրառման վերաբերյալ տեսական և գործնական առաջարկություններ:

Հոդվածի ուսումնասիրության արդյունքում կատարված վերլուծություններն ու եզրահանգումները հնարավորություն են տալիս ուսումնասիրության առարկան դիտարկելու տեսական որոշ տեսանկյուններից և լուծել գործնական կիրառության ընթացքում առաջացող որոշ խնդիրներ:

Հիմնաբառեր - անդամախեղում, հիվանդության սիմուլյացիա, կեղծ փաստաթուղթ օգտագործել, զինվորական ծառայությունից խուսափել, զինվորական ծառայության առանձին պարտականությունների կատարման դադարեցում:

Ներածություն

Հոդվածի ուսումնասիրության առարկան վերաբերում է ՀՀ քրեական օրենսգրքի 527-րդ և 528-րդ հոդվածներով նախատեսված հանցակազմերին, դրանց համեմատական վերլուծությանը, դրանց կիրառելիությանը վերաբերող տեսական և գործնական խնդիրներին:

Հետազոտության հիպոթեզը հետևյալն է. ի՞նչ նմանություններ և տարբերություններ ունեն ՀՀ քրեական օրենսգրքի 527-րդ և 528-րդ հոդվածները, ի՞նչ առանձնահատկություններ ունեն դրանցից յուրաքանչյուրով որակվող դեպքերը, ինչով է պայմանավորված 528-րդ հոդվածի հանցակազմի նախատեսումը ՀՀ նոր քրեական օրենսգրքում և ի՞նչ խնդիրներ կարող են առաջանալ հոդվածի գործնական կիրառման կապակցությամբ:

Ընտրված թեման արդիական է՝ հաշվի առնելով զինծառայողի կողմից իր առողջությանը վնաս պատճառելու (անդամախեղելու) եղանակով զինվորական ծառայության կամ դրա առանձին պարտականությունները դադարեցնելու, ինչպես նաև այդ եղանակով զինվորական ծառայությունից խուսափելու դեպքերը որակելու կապակցությամբ առաջ եկող գործնական խնդիրները, ինչպես նաև հանրորեն վտանգավոր տվյալ արարքի դեմ պայքարի շրջանակներում ՀՀ քրեական նոր օրենսգրքի ընդունմամբ օրենսդրի մոտեցումները, այդ թվում՝ նոր՝ 528-րդ հոդվածով նախատեսված հանցակազմի ներառումը զինվորական ծառայության սահմանված կարգի դեմ ուղղված հանցագործությունների շարքում:

Հոդվածում ներկայացվել է արարքի համար պատասխանատվություն նախատեսող հանցակազմի զարգացման պատմությունը, կատարվել են տարբեր ժամանակներում հայրենական օրենսդրությունում խնդրո առարկա հարցը կանոնակարգող դրույթների համեմատական վերլուծություններ, ինչպես նաև փորձ է արվել տեսական գրականության հիման վրա և իրավահամեմատական մեթոդի օգնությամբ բացահայտել օրենսգրքում ներդրված նոր հանցակազմի առանձնահատկությունները, կիրառելիությունը, դրան առնչվող այլ խնդիրներ:

Կատարված հետազոտության հիմնական նպատակը ՀՀ քրեական օրենսգրքի 527-րդ և 528-րդ հոդվածներով նախատեսված հանցակազմերի տարբերությունների ու դրանց կիրառման առանձնահատկությունների բացահայտումն է՝ առանձնապես ուշադրություն դարձնելով ինքնավնասման եղանակով զինվորական ծառայության կամ դրա առանձին պարտականությունների կատարումը ժամանակավորապես դադարեցնելու այն դեպքերի որակմանը, որոնք չեն կատարվում զինվորական ծառայության պարտականությունների կատարումից ազատվելու նպատակով:

Գլուխ 1. Հանցակազմերի էվոլյուցիան ժամանակի ընթացքում

Առողջությանը վնաս պատճառելու (անդամախեղելու), հիվանդության սիմուլյացիայի կամ ապօրինի այլ եղանակով զինվորական ծառայությունից խուսափելու կամ դրա առանձին պարտականությունների կատարումը դադարեցնելու հանցակազմը հայկական քրեաիրավական օրենսդրությանը ծանոթ է դեռևս խորհրդային ժամանակաշրջանից: Այնուամենայնիվ, հանցակազմը ժամանակի ընթացքում կրել է որոշակի փոփոխություններ՝ ելնելով դատական պրակտիկայում առաջացող խնդիրներից և օրենսդրական տեխնիկայի զարգացումներից:

Այսպես, դեռևս Հայկական ԽՍՀ քրեական օրենսգրքում (ընդունվել է 07.03.1961 թ.) քրեական պատասխանատվություն էր նախատեսված անդամախեղման միջոցով կամ այլ եղանակով զինվորական ծառայությունից խուսափելու համար, որը կարող էր դրսևորվել իրեն որևէ վնասվածք (անդամախեղում) պատճառելու կամ հիվանդության սիմուլյացիայի, փաստաթղթեր կեղծելու կամ այլ խաբեության միջոցով զինծառայողի կողմից զինվորական ծառայության պարտականություններ կրելուց խուսափելու, ինչպես նաև՝ զինվորական ծառայության պարտականություններ կրելուց հրաժարվելու եղանակներով:

2003 թվականի ապրիլի 18-ին ընդունված Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքի 363-րդ հոդվածը պատասխանատվություն էր նախատեսում իրեն որևէ վնասվածք պատճառելու (անդամախեղելու), հիվանդության սիմուլյացիայի, կեղծ փաստաթղթեր օգտագործելու կամ խաբեության այլ միջոցով կամ ապօրինի այլ եղանակով զինծառայողի կողմից զինվորական ծառայության պարտականությունները կատարելուց ժամանակավորապես խուսափելու համար: Որպես ծանրացնող հանգամանք էր նախատեսված նույն արարքը զինվորական ծառայության պարտականությունները կրելուց վերջնականապես ազատվելու նպատակով կատարելը, իսկ առավել ծանրացնող հանգամանք՝ արարքը ռազմական դրության, պատերազմի ժամանակ կամ մարտի պարագաներում կատարելը: 28.11.2007 թ. ՀՀ քրեական օրենսգրքում կատարված փոփոխություններով փոփոխության են ենթարկվել միայն 363-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերի սանկցիաները՝ պատժաչափի առումով խստացնելով դրանցով նախատեսված հանցանքների համար պատասխանատվությունը: 30.04.2013 թ. կա-

տարված փոփոխությունների արդյունքում ՀՀ քրեական օրենսգրքի 363-րդ հոդվածը ստացավ հետևյալ տեսքը.

1. *Չինժառայողի կողմից իր առողջությանը վնաս պատճառելը (անդամախեղելը), որը հանգեցրել է կամ կարող էր հանգեցնել զինվորական ծառայության կամ դրա առանձին պարտականությունների կատարումը ժամանակավորապես դադարեցնելուն, պատժվում է կալանքով՝ առավելագույնը երեք ամիս ժամկետով, կամ կարգապահական գումարտակում պահելով՝ առավելագույնը երեք տարի ժամկետով, կամ ազատագրկմամբ՝ առավելագույնը չորս տարի ժամկետով:*

2. *Նույն արարքը, որը կատարվել է շատերի կյանքի համար վտանգավոր եղանակով, պատժվում է կարգապահական գումարտակում պահելով՝ մեկից երեք տարի ժամկետով, կամ ազատագրկմամբ՝ մեկից հինգ տարի ժամկետով:*

3. *Չինժառայողի կողմից հիվանդության սիմուլյացիան կամ կեղծ փաստաթղթեր օգտագործելը կամ խաբեությունը, որը հանգեցրել է կամ կարող էր հանգեցնել զինվորական ծառայության կամ դրա առանձին պարտականությունների կատարումը ժամանակավորապես դադարեցնելուն, պատժվում է կալանքով՝ առավելագույնը երեք ամիս ժամկետով, կամ կարգապահական գումարտակում պահելով՝ առավելագույնը երկու տարի ժամկետով, կամ ազատագրկմամբ՝ առավելագույնը երեք տարի ժամկետով:*

4. *Սույն հոդվածի առաջին կամ երկրորդ կամ երրորդ մասով նախատեսված արարքները, որոնք կատարվել են զինվորական ծառայությունից վերջնականապես ազատվելու նպատակով, պատժվում են ազատագրկմամբ՝ երեքից վեց տարի ժամկետով:*

5. *Սույն հոդվածով նախատեսված արարքները, որոնք կատարվել են ռազմական դրության, պատերազմի ժամանակ կամ մարտի պարագաներում, պատժվում են ազատագրկմամբ՝ հինգից տասը տարի ժամկետով:*

Ինչպես երևում է, փոփոխությունների արդյունքում հանցակազմի օբյեկտիվ կողմը կազմող եղանակներն առանձնացվել և տեղ են գտել հոդվածի առաջին և երրորդ մասերում, մասնավորապես՝ զինժառայողի կողմից իր առողջությանը վնաս պատճառելը (անդամախեղելը) նախատեսվել է որպես ինքնուրույն մաս, իսկ հիվանդության սիմուլյացիան կամ կեղծ փաստաթղթեր օգտագործելը կամ խաբեությունը՝ որպես մեկ այլ մաս: Որպես օբյեկտիվ կողմը բնութագրող երկրորդի հատկանիշ՝ ավելացել է նաև «կամ կարող էր հանգեցնել» ձևակերպումը, որով առավել ընդլայնվել է քննարկվող հոդվածի կիրառելիության շրջանակը՝ քրեորեն պատժելի արարքների թվին դասելով նաև այն դեպքերը, որոնց ժամանակ վտանգավոր հետևանքը փաստացի վրա չի հասել, սակայն ստեղծվել է վրա հասնելու իրական հնարավորություն: Էական փոփոխություններից էր նաև «շատերի կյանքի համար վտանգավոր եղանակով» արարքը կատարելու ծանրացնող հանգամանքի նախատեսումը (ծանրացնող հանգամանքի նախատեսման անհրաժեշտությանը և նոր քրեական օրենսգրքով այդ գաղափարից հրաժարվելուն անդրադարձ կկատարվի ավելի ուշ): Վերջին փոփոխության արդյունքում

քննարկվող հոդվածում փոփոխության ենթարկվեց նաև նախկինում նախատեսված ծանրացնող հանգամանքի ձևակերպումը, մասնավորապես՝ «կատարվել է զինվորական ծառայության պարտականությունները կրելուց վերջնականապես ազատվելու նպատակով» ձևակերպումը փոխարինվեց «կատարվել են զինվորական ծառայությունից վերջնականապես ազատվելու նպատակով» ձևակերպումը: Կարծում ենք, որ վերջին փոփոխությունը կատարվել է առավելապես օրենսդրական տեխնիկայի կանոններից ելնելով և կարգավորման բովանդակային փոփոխության չի հանգեցրել: Պարզապես օրենսդիրը, այդ կերպ առավել ընդգծելով ժամանակավորապես և վերջնականապես ազատվելու նպատակների միջև դրված տարանջատումը, միաժամանակ վերջնականապես ազատվելու նպատակը կապել է զինվորական ծառայության, այլ ոչ թե դրա բովանդակությունը կազմող պարտականությունների հետ, ինչը տրամաբանական է ու առավել որոշակի:

Հայաստանի Հանրապետության գործող քրեական օրենսգիրքը (այսուհետ նաև՝ Օրենսգիրք, ընդունվել է 05.05.2021 թ., ուժի մեջ է մտել՝ 01.07.2022 թ.) ևս վերոնշյալ արարքների համար նախատեսել է քրեական պատասխանատվություն, մասնավորապես Օրենսգրքի 527-րդ հոդվածը նախատեսում է քրեական պատասխանատվություն զինծառայողի կողմից իր առողջությանը վնաս պատճառելու (անդամախեղելու), հիվանդության սիմուլյացիայի, կեղծ փաստաթուղթ օգտագործելու, խաբեության կամ ապօրինի այլ եղանակով զինվորական ծառայությունից խուսափելու կամ դրա առանձին պարտականությունների կատարումը ժամանակավորապես դադարեցնելու համար: Որպես ծանրացնող հանգամանք է նախատեսված արարքի կատարումը զինվորական ծառայությունից վերջնականապես ազատվելու նպատակով, իսկ առավել ծանրացնող հանգամանք՝ արարքը ռազմական դրության, պատերազմի ժամանակ կամ մարտի պարագաներում կատարելը:

ՀՀ գործող քրեական օրենսգրքի 527-րդ հոդվածի ուսումնասիրությունը թույլ է տալիս փաստելու, որ հանցակազմի նկարագրությունը կառուցվածքային առումով նման է ՀՀ նախկին քրեական օրենսգրքի սկզբնական տարբերակում տրված նկարագրությանը, մասնավորապես՝ զինվորական ծառայության պարտականությունները կատարելուց ժամանակավորապես խուսափելու արարքը՝ կատարման բոլոր եղանակներով, նախատեսված է հոդվածի 1-ին մասով, իսկ արարքը զինվորական ծառայությունից վերջնականապես ազատվելու նպատակով կատարելը՝ 2-րդ մասով: Որպես առավել ծանրացնող հանգամանք է նախատեսված արարքը ռազմական դրության, պատերազմի ժամանակ կամ մարտի պարագաներում կատարելը: ՀՀ գործող քրեական օրենսգրքում, ինչպես ՀՀ նախկին քրեական օրենսգրքի սկզբնական տարբերակում, բացակայում է «արարքը շատերի կյանքի համար վտանգավոր եղանակով» կատարելու ծանրացնող հանգամանքը: Նոր քրեական օրենսգրքում այդ ծանրացնող հանգամանքի բացակայությունը, թերևս, պայմանավորված էր գործնականում նման դեպքերի բացակայությամբ:

«Հ գործող քրեական օրենսգրքում նորամուծությունը 528-րդ հոդվածն էր, որը, պատասխանատվություն նախատեսելով զինծառայողի կողմից իր առողջությանը վնաս պատճառելու (անդամախեղելու) համար, միաժամանակ ամրագրեց «եթե դա կապված չէ զինվորական ծառայության պարտականությունները կատարելու հետ» պայմանը: Նշված կարգավորումը առիթ հանդիսացավ ու արդիական դարձրեց այս հանցակազմին համապատասխանող հանցավոր արարքների շրջանակը որոշելու, ինչպես նաև 527-րդ հոդվածի՝ հանցակազմի հետ սահմանագիծը տանելու անհրաժեշտությունը: Սակայն մինչ այդ հատկանիշների վերլուծությանն անդրադառնալը, կարծում ենք, որ տեղին կլինի անդրադառնալ քննարկվող հանցանքի (հանցանքների) համար պատասխանատվություն նախատեսող հանցակազմերի էվոյուցիան պայմանավորող գործոններին:

2003 թվականի ապրիլի 18-ին ընդունված ՀՀ քրեական օրենսգրքի՝ մինչև 2013 թվականի ապրիլի 30-ի եղած կարգավորումների պայմաններում դատական պրակտիկայում խնդիրներ էին առաջանում այն իրավիճակների կապակցությամբ, երբ զինծառայողի կողմից կատարված ինքնավնասումն ուղղակիորեն հանգեցնում էր զինվորական ծառայության պարտականությունները կատարելու անհնարինության, սակայն պարզվում էր, որ զինծառայողի վարքագիծը կապված չէ զինվորական ծառայության պարտականությունների հետ կամ, համենայն դեպս, վարույթի ընթացքում հնարավոր չէր լինում բավարար ապացույցներով հակառակը հիմնավորել: Դատական պրակտիկայում գերիշխող դարձավ այն տեսակետը, որ նման իրավիճակներում անձը չի կարող քրեական պատասխանատվության ենթարկվել զինվորական ծառայության կարգի դեմ ուղղված հանցագործություն կատարելու համար: Այս առնչությամբ էական նշանակություն ունեցավ ՀՀ վճռաբեկ դատարանի ձևավորած նախադեպային իրավունքը, համաձայն որի՝ զինվորական ծառայության մեջ ընդգրկված լինելու փաստն ինքնին հիմք չէ արձանագրելու, որ զինծառայողը յուրաքանչյուր պահի զինվորական ծառայության կոնկրետ պարտականություններ է կատարում: Ծառայության մեջ գտնվելու ժամանակաշրջանում զինծառայողները գտնվում են ոչ միայն զինվորական ծառայական հարաբերությունների, այլ զինվորական օրենսդրության նորմերով չկարգավորվող այլ (անձնական, քաղաքացիաիրավական, ընտանեկան և այլն) իրավահարաբերությունների մեջ: (...) Չորամասի տարածքում կատարված ոչ բոլոր արարքներն են համարվում զինվորական հանցագործություն, հետևաբար յուրաքանչյուր գործով անհրաժեշտ է զինվորական հանցագործությունը հստակ սահմանազատել ՀՀ քրեական օրենսգրքով արգելված այլ արարքներից, ինչպես նաև կարգապահական պատասխանատվության հիմք հանդիսացող զանցանքներից²»: Փաստորեն, ՀՀ վճռաբեկ դատարանի նախադեպային որոշումն անհնարին դարձրեց ՀՀ քրեական օրենսգրքի 363-րդ հոդվածով

² Սրապիոն Ազատի Հովհաննիսյանի գործով վճռաբեկ դատարանի 2012 թվականի հունիսի 8-ի թիվ ՄԴ/0204/01/11 որոշման 19-րդ և 21-րդ կետերը:

զինծառայողին քրեական պատասխանատվության ենթարկելն այն դեպքերում, երբ զինվորական ծառայության պարտականությունների կատարման դադարեցման հանգեցրած ինքնավնասումը տեղի էր ունեցել ծառայության հետ չկապված պատճառով:

«ՀՀ քրեական օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» 2013 թվականի ապրիլի 30-ի ՀՕ-34-Ն օրենքի ընդունմամբ կատարված փոփոխությունների արդյունքում ՀՀ քրեական օրենսգրքի 363-րդ հոդվածի 1-ին մասի դիսպոզիցիայում տեղ գտավ «որը հանգեցրել է կամ կարող էր հանգեցնել զինվորական ծառայության կամ դրա առանձին պարտականությունների կատարումը ժամանակավորապես դադարեցնելուն» ձևակերպումը:

Չնայած Օրենսգրքում փոփոխություններ կատարելու վերաբերյալ ՀՕ-34-Ն օրենքի հիմնավորումներում քննարկվող հոդվածում համապատասխան բովանդակությամբ փոփոխություններ կատարելու ուղղակի հիմնավորումների բացակայությամբ³, կարելի է կռահել, որ այդ փոփոխությունները, թերևս, միտված էին առաջացած խնդրի լուծմանը և դատական պրակտիկայի փոփոխմանը: Կարծում ենք, որ «որը հանգեցրել է կամ կարող էր հանգեցնել զինվորական ծառայության կամ դրա առանձին պարտականությունների կատարումը ժամանակավորապես դադարեցնելուն» ձևակերպումը հնարավորություն կտար համապատասխան տեսակետի կողմնակիցներին պնդելու, որ անդամախեղման բոլոր դեպքերը քրեորեն պատժելի են՝ անկախ նրանից զինծառայողի կողմից դրսևորած դիտավորությունն ուղղված եղել է զինվորական ծառայության կամ դրա առանձին պարտականությունների կատարումից ժամանակավորապես խուսափելուն, թե ոչ:

Սակայն դատական պրակտիկայի զարգացումը ցույց տվեց, որ խնդիրը մնաց չլուծված. խնդրո առարկա նորմը պրակտիկայում շարունակեց մեկնաբանվել ու կիրառվել տարատեսակ մեկնաբանությամբ, ինչն էլ պատճառ հանդիսացավ, որ բարձրագույն դատական աստիճանի իր սահմանադրական լիազորությունների շրջանակներում կոնկրետ գործով մեկնաբանության ենթարկեց ՀՀ քրեական օրենսգրքի 363-րդ հոդվածի 1-ին մասի հանցակազմը և արտահայտեց իրավական դիրքորոշում, որն ուղղորդող նշանակություն ունեցավ նման գործերով դատական պրակտիկան ճիշտ ձևավորելու համար: Խոսքը, մասնավորապես, Եղիշե Ալոյանի վերաբերյալ գործով որոշման մասին է, որով ՀՀ վճռաբեկ դատարանը, այլ գործերով որոշումներում արտահայտած իր դիրքորոշումների համատեքստում վերլուծելով քննարկման առարկա իրավական նորմը, արձանագրեց, որ քանի որ ՀՀ քրեական օրենսգրքի 363-րդ հոդվածի 1-ին մասի դիսպոզիցիայում բացակայում է հատակ նշում այն մասին, որ արարքը ենթակա է որակման նաև որպես զինվորական հանցագործություն նաև այն դեպքում, երբ կապված չէ զին-

³ Նախագիծ Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին, <http://parliament.am/drafts.php?sel=showdraft&DraftID=5934&Reading=0>, (մուտք՝ 19.02.2024 թ.)

վորական ծառայության պարտականությունները կատարելու հետ, հետևաբար հանցակազմը բնութագրվում է ուղղակի դիտավորությամբ և առկա է միայն այն ժամանակ, երբ իր առողջությանը վնաս պատճառող զինծառայողի դիտավորությունն ուղղված է զինվորական ծառայության կամ դրա առանձին պարտականությունների կատարումը ժամանակավորապես դադարեցնելուն:

ՀՀ վճռաբեկ դատարանի իրավական դիրքորոշումը վերջնականապես լուծեց քննարկվող դեպքերի առնչությամբ իրավական նորմի տարատեսակ կիրառությամբ պայմանավորված խնդիրը:

Այսպիսով ամփոփելով հանցակազմի վերջին տարիների գարգացման պատմությունը, կարող ենք ասել, որ զինծառայողի՝ զինվորական ծառայության պարտականությունները կատարելու հետ կապված ինքնավնասման դեպքերը, մշտապես համարվել են հանրորեն վտանգավոր և քրեորեն պատժելի: Հանցանքի համար պատասխանատվություն է նախատեսված եղել ինչպես ՀԽՍՀ քրեական օրենսգրքով, այնպես էլ՝ ՀՀ նախկին և գործող քրեական օրենսգրքերով: Տարբեր ժամանակներում գործող խմբագրությամբ օրենսգրքերում օգտագործվել են տարբեր եզրույթներ՝ «զինվորական ծառայության պարտականություններ կրելուց խուսափել», «զինվորական ծառայության պարտականություններ կրելուց հրաժարվել», «զինվորական ծառայության պարտականությունները կատարելուց ժամանակավորապես խուսափել», «զինվորական ծառայությունից խուսափել», «առանձին պարտականությունների կատարումը ժամանակավորապես դադարեցնել», սակայն գտնում ենք, որ այդ ձևակերպումները, ըստ էության, հանցակազմի բովանդակային փոփոխության չեն հանգեցրել և հանցավոր համարվող արարքների շրջանակը նույնն է մնացել:

Քննարկվող արարքները հանցագործություն են համարվում նաև մի շարք այլ երկրներում, մասնավորապես տարբեր ձևակերպումներով այն նախատեսված է ՌԴ (հոդված 339), Վրաստանի (հոդված 390), Ղազախստանի (հոդված 443), Բելառուսի (հոդված 447), Շվեդիայի (գլուխ 18, բաժին 6), Գերմանիայի (§109, §109a), Դանիայի (§ 25) քրեական օրենսգրքերում⁴: Այսինքն՝ այն երկրներում, որտեղ զինվորական ծառայությունն օրենքով սահմանված պարտականություն է, քրեորեն պատժելի է առողջությանը որևէ վնաս պատճառելու (անդամախեղելու), հիվանդության սիմուլյացիայի, կեղծ փաստաթուղթ օգտագործելու, խաբեության կամ ապօրինի այլ եղանակով զինվորական ծառայությունից խուսափելը կամ որոշակի պարտականությունների կատարումը

⁴ Ռուսաստանի Դաշնության քրեական օրենսգիրք, Վրաստանի Հանրապետության քրեական օրենսգիրք, Ղազախստանի Հանրապետության քրեական օրենսգիրք, Բելառուսի Հանրապետության քրեական օրենսգիրք, Շվեդիայի Թագավորության քրեական օրենսգիրք, Գերմանիայի Դաշնային Հանրապետության քրեական օրենսգիրք, Դանիայի Թագավորության քրեական օրենսգիրք:

Ժամանակավորապես դադարեցնելը: Արարքը հանրորեն վտանգավոր և քրեորեն պատժելի համարելու հիմքում ընկած է այն գաղափարը, որ այն ուղղված է զինվորական ծառայության կարգի դեմ և որպես զինվորական ծառայությունից խուսափելու դրսևորում՝ թուլացնում է գորամասերի ու զինված ուժերի այլ ստորաբաժանումների մարտական կարողությունները, կարգապահությունը և անձնակազմի կազմակերպումը, դժվարացնում հրամանատարների աշխատանքը ենթակաների ուսուցման և կրթման, կանոնադրական կարգի պահպանման գործում և բացասաբար անդրադառնում զինվորական անձնակազմի վրա:

Ինչ վերաբերում է ՀՀ քրեական օրենսգրքին, ապա այն, ինչպես արդեն նշվեց, զինվորական ծառայության կարգի դեմ ուղղված հանցագործությունների շարքը համարել է նոր հանցակազմով, այն է՝ առողջությանը վնաս պատճառելը (անդամախեղելը), որը հանգեցրել է կամ կարող էր հանգեցնել զինվորական ծառայության կամ դրա առանձին պարտականությունների կատարումը ժամանակավորապես դադարեցնելուն (հոդված 528): Նշված հանցակազմի հատկանիշ է հանցանքի՝ զինվորական ծառայության պարտականությունների կատարման հետ կապված չլինելը: Նման կարգավորումը ոչ միայն նորություն է ՀՀ քրեական օրենսդրությունում, այլև անձանոթ է վերը նշված երկրների օրենսդրություններին: Այս կարգավորմամբ օրենսդիրը, փաստորեն, հանրորեն վտանգավոր և պատժելի է համարել զինծառայողների անդամախեղումների բոլոր դեպքերը, որոնք հանգեցրել կամ կարող էին հանգեցնել զինվորական ծառայության կամ դրա առանձին պարտականությունների կատարումը ժամանակավորապես դադարեցնելուն:

Երկու առանձին հանցակազմերի միջոցով ՀՀ քրեական նոր օրենսգիրքը նաև լուծեց դատական պրակտիկայում առաջացած խնդիրը՝ նախատեսելով երկու տարբեր հանցակազմեր, որոնք մեծ հաշվով միմյանցից տարբերվում են սուբյեկտիվ կողմով: Ընդ որում՝ 528-րդ հոդվածի առաջին մասում շեշտված է «եթե դա կապված չէ զինվորական ծառայության պարտականությունները կատարելու հետ» եզրույթը, ինչը կարելի է կապել նախկին օրենսգրքով նախատեսված հանցակազմի մեկնաբանման շրջանակներում ՀՀ վճարելի դատարանի արտահայտած դիրքորոշման հետ, համաձայն որի՝ զինվորական ծառայության պարտականությունների հետ չկապված հանցանքը կարող է դիտվել որպես զինվորական ծառայության կարգի դեմ ուղղված հանցագործություն, եթե դիսպոզիցիայում այդ մասին առկա է հատուկ նշում:

Այնուհանդերձ, պետք է նշել, որ նոր օրենսգրքի գործողության պայմաններում ևս հանցակազմերի մեկնաբանման ու կիրառման հետ կապված առաջանում են որոշակի խնդիրներ, որոնց անդրադարձ կկատարվի հոդվածի հաջորդ մասերում:

Գլուխ 2. Օրենսգրքի 527-րդ և 528-րդ հոդվածներով նախատեսված հանցակազմերի համեմատական վերլուծությունը դրանց տարրերի համեմատությամբ

§1. Հանցակազմերի սուբյեկտը

Քննարկվող հանցակազմերի սուբյեկտը հատուկ է: Այդպիսիք են համարվում << քրեական օրենսգրքի 516-րդ հոդվածի 4-րդ մասով սահմանված անձինք: Օրենսգրքի 516-րդ հոդվածի 4-րդ մասը սահմանում է, որ զինվորական ծառայության սահմանված կարգի դեմ ուղղված հանցագործության սուբյեկտը, «Չինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» օրենքի իմաստով, զինծառայող համարվող անձն է (այսուհետ՝ զինծառայող): «Չինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» << օրենքի 3-րդ հոդվածի 1-ին մասը սահմանում է, որ Չինվորական ծառայությունը Հայաստանի Հանրապետության պաշտպանության և ներքին գործերի նախարարությունների ու ազգային անվտանգության համակարգերում օրենքով սահմանված պետական ծառայության տեսակ է: Սույն օրենքով և այլ օրենքներով սահմանված կարգով զինվորական ծառայություն անցնող անձինք համարվում են զինծառայող: Չինվորական ծառայության բաղկացուցիչ տարրերը ներկայացված են նույն հոդվածի 2-րդ մասում, համաձայն որի՝

Չինվորական ծառայությունը ներառում է՝

- 1) *գորակոչի՝ պարտադիր կամ զորահավաքային կամ պայմանագրի կնքման կամ վարժական հավաքի կանչվելու միջոցով զինվորական ծառայությանը ներգրավումը,*
- 2) *զինվորական պաշտոնի նշանակումը և զինվորական կոչման շնորհումը,*
- 3) *զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակից բխող պարտականությունների իրականացումը,*
- 4) *զինվորական ծառայությունից արձակումը:*

Պարզելու համար, թե որքան ժամանակ է անձը գտնվում զինվորական ծառայության մեջ, հետևաբար որքան ժամանակ է նա համարվում Օրենսգրքի 15-րդ բաժնով նախատեսված հանցանքների սուբյեկտ, անհրաժեշտ է դիտարկել «Չինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» << օրենքի 6-րդ հոդվածը, համաձայն որի՝ պարտադիր զինվորական ծառայության գորակոչված կամ զորահավաքային գորակոչի կամ պահեստազորային զինվորական ծառայության կանչված քաղաքացիների համար զինվորական ծառայության սկիզբ է համարվում ծառայության վայր մեկնելու նպատակով զինվորական կոմիսարիատ ներկայանալու օրը, պայմանագրային զինվորական ծառայության ընդունվող քաղաքացիների համար՝ պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրը, իսկ ռազմաուսումնական հաստատություններ ընդունված քաղաքացիների համար՝ տվյալ ռազմաուսումնական հաստատությունում որպես կուրսանտ գրանցվելու օրը: Ինչ վերաբերում է զինվորական ծառայության ավարտի պահին, սպա ծառայությունն ավարտված է համարվում զինծառայողին զինվորական ծառայությունից ար-

ձակելու կապակցությամբ զորամասի (զինվորական կառավարման մարմնի) անձնակազմի և բավարարման (ապահովման) ցուցակներից հանելու օրը:

Ստացվում է, որ անձը համարվելու է Օրենսգրքի 15-րդ բաժնով նախատեսված հանցակազմերի սուբյեկտ, «Չինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» ՀՀ օրենքի իմաստով զինվորական ծառայության սկզբի պահից մինչև դրա ավարտի պահը: Ընդ որում, Օրենսգիրքը էքսպլիցիտ ամրագրման միջոցով լուծել է տեսության մեջ և պրակտիկայում հաճախ բարձրացվող այն հարցը, թե արդյո՞ք անձը ենթակա է քրեական պատասխանատվության զինվորական ծառայության սահմանված կարգի դեմ ուղղված հանցագործությունների կատարման համար, եթե այլ անձի ապօրինի գործողությունների (կամ անգործության) հետևանքով է ձեռք բերել զինծառայողի կարգավիճակ: Հարցն իր լուծումը ստացել է Օրենսգրքի 516-րդ հոդվածի 6-րդ մասում, որով ամրագրված է, որ եթե զինծառայողն այլ անձի ապօրինի արարքի հետևանքով է ոչ իրավաչափորեն ձեռք բերել զինծառայողի կարգավիճակ, ապա նա ենթակա չէ քրեական պատասխանատվության սույն բաժնով նախատեսված հանցանքների կատարման համար: Այս դրույթը ակնհայտորեն չի կիրառվի այն դեպքում, երբ անձի արարքում կան այլ հանցակազմեր: Նման դեպքերում անձինք ենթակա կլինեն քրեական պատասխանատվության ընդհանուր հիմունքներով:

§2. Հանցակազմերի օբյեկտը

Քննարկվող հանցակազմերը, որպես ընդհանուր առմամբ զինվորական հանցագործություններ, ունեն ընդհանրական օբյեկտ՝ զինվորական ծառայության սահմանված կարգի պահպանմանն ուղղված հասարակական հարաբերությունները, որոնք կարող են սահմանվել օրենքներով, զինվորական կանոնադրություններով, կանոնակարգերով, պետերի հրամաններով և այլն:

Այս տեսանկյունից, ուսումնասիրելով Օրենսգրքի 528-րդ հոդվածի բովանդակությունը, առաջանում է իրավաչափ հարց՝ այն է՝ եթե արարքը Օրենսգրքի 528-րդ հոդվածով որակելու համար անհրաժեշտ է, որ արարքը կապված չլինի զինվորական ծառայության պարտականությունները կատարելու հետ, ապա արդյո՞ք այդ հանցանքի օբյեկտը զինվորական ծառայության սահմանված կարգի պահպանմանն ուղղված հասարակական հարաբերություններն են: Այս հարցի պատասխանը երկակի է, քանի որ մի կողմից, զինվորական ծառայության պարտականությունները կատարելու հետ կապված չլինելը խզում է առաջացնում Օրենսգրքի 15-րդ բաժնով նախատեսված հանցակազմերի ընդհանուր սեռային օբյեկտի և Օրենսգրքի 528-րդ հոդվածի օբյեկտի միջև՝ սույն օբյեկտին վերագրելիությունը պայմանավորելով բացառապես հանցակազմի հատուկ սուբյեկտով, մյուս կողմից պարզ է, որ այս արարքի հանրային վտանգավորությունն ու պատժելիությունը պայմանավորված է բացառապես նրանով, որ դրա կատարմամբ վնասվում են զինվորական ծառայության սահմանված կարգի պահպանմանն

ուղղված հարաբերությունները: Ճիշտ է՝ ինքնավնասման դեպքում վնասվում է ընդհանուր առմամբ քրեաիրավական պաշտպանության տակ գտնվող մեկ այլ օբյեկտ ևս՝ մարդու առողջության պաշտպանությանն ուղղված հասարակական հարաբերությունները, սակայն դրանք պատժի սպառնալիքով պաշտպանվում են միայն այլ անձանց, այլ ոչ ինքն իրեն վնաս պատճառողի ոտնձգություններից: Հետևաբար այս հանցատեսակը երկօբյեկտ կարող է համարվել այն տեսանկյունից դիտարկելիս, որ դրա կատարմամբ վնասվում են ընդհանուր առմամբ քրեաիրավական պաշտպանության տակ գտնվող մեկից ավելի խումբ հասարակական հարաբերություններ:

Ասվածը հաշվի առնելով հանդերձ՝ գտնում ենք, որ ՀՀ քրեական օրենսգրքի 528-րդ հոդվածով սահմանված հանցակազմի գոյությունն արդարացված ու իրավաբանորեն հիմնավորված է, քանի որ այն համապատասխանում է ՀՀ վճռաբեկ դատարանի որոշմամբ արտահայտված դիրքորոշմանը, բացի այդ՝ այն ՀՀ քրեական օրենսգրքի՝ զինվորական ծառայության սահմանված կարգի դեմ ուղղված հանցագործությունների բաժնով նախատեսված միակ հանցակազմը չէ, որը պատասխանատվություն է նախատեսում զինվորական ծառայության պարտականությունները կատարելու հետ չկապված հանրորեն վտանգավոր արարքի համար: Նման հանցակազմեր նախատեսված են զինծառայողների կողմից միմյանց նկատմամբ բռնություն կամ սպառնալիք գործադրելու համար պատասխանատվություն նախատեսող հոդվածներով (ՀՀ քրեական օրենսգրքի 519-րդ և 520-րդ հոդվածների 1-ին մասեր):

Ակնհայտ է, որ հոդվածի ներդրմամբ օրենսդիրն ունեցել է նպատակ՝ քրեաիրավական պայքարի միջոցով զինծառայողների շրջանում քանակապես նվազեցնելու ինքնավնասման դեպքերը: Հաշվի առնելով այդ դեպքերի տարածվածությունն ու հանրային վտանգավորությունը՝ օրենսդրի մոտեցումը պետք է համարել լեգիտիմ նպատակին հասնելու արդյունավետ միջոց:

Ուշագրավ է, որ նմանատիպ քաղաքականություն է որդեգրել նաև Ամերիկայի Միացյալ Նահանգները, այն բանից հետո, երբ վիճակագրական տվյալները ցույց տվեցին, որ խաղաղ պայմաններում զինվորական ծառայության ժամանակ ավելի շատ զինվորներ են կատարել ինքնասպանության փորձ, քան Աֆղանստանի պատերազմի տարիներին⁵: ԱՄՆ-ի Ռ-ազմական արդարադատության միասնական օրենսգրքի (UCMJ)⁶ 115-րդ և 134-րդ հոդվածները քրեական պատասխանատվություն են նախատեսում ինքնասպանության և ինքնավնասման փորձերի համար: Ամերիկյան տեսական գրականությունում ամկա են կարծիքներ, որ նման արարքների քրեականացումն ինքնին չի պայքարում զինվորական ծառայության սահմանված կարգի պաշտպանության դեմ, քանի որ

⁵ Տե՛ս Iraq coalition casualty count, <http://icasualties.org/> (last visited Feb. 11, 2024).

⁶ Art. 115, 134 Uniform Code of Military Justice, 10 U.S.C. § 915 (2012) <https://ucmj.us/> (last visited Feb. 11, 2024).

ինքնավնասումներն ու ինքնասպանության փորձերը հիմնականում հոգեբանական խնդիրների արդյունք են և ոչ միշտ են կապված զինվորական պարտականությունները կատարելուց խուսափելու հետ⁷: Ընդհակառակը, դրանք կատարողները կարիք ունեն մշտական բժշկական հսկողության և բուժման, սակայն, այնուամենայնիվ, ամերիկյան դատական պրակտիկան ևս ձևավորվել է այնպես, որ նման արարքների համար անձը ենթակա է քրեական պատասխանատվության, քանի որ նրանց դիտարկմամբ՝ զինծառայողի ինքնավնասման և ինքնասպանության (կամ դրա փորձի) ցանկացած դեպք ազդում է բանակի մարտական պատրաստվածության և բարոյահոգեբանական վիճակի վրա:

ՀՀ քրեական օրենսգրքում 528-րդ հոդվածի ներդրմամբ ևս օրենսդիրը առաջնորդվել է այն սկզբունքով, որ զինվորական ծառայության պարտականությունների կատարմանը հանգեցնող կամ այդպիսի հնարավորություն ստեղծող ինքնավնասման ցանկացած դեպք վտանգավոր է և ենթակա է քրեական պատասխանատվության՝ նպատակ հետապնդելով պատժի սպառնալիքով նվազեցնել նման երևույթների քանակական ցուցանիշները:

Այսպիսով՝ ՀՀ քրեական օրենսգրքի 527-րդ և 528-րդ հոդվածների օբյեկտը նույնն է՝ զինվորական ծառայության սահմանված կարգի պահպանմանն ուղղված հարաբերությունները, սակայն եթե 527-րդ հոդվածի դեպքում դա ուղղակիորեն բխում է արարքի բնույթից, ապա 528-րդ հոդվածի դեպքում այն օրենսդրի կողմից այդպիսին դիտարկելու արդյունք է:

§3. Հանցակազմերի օբյեկտիվ կողմը

ՀՀ քրեական օրենսգրքի 527-րդ հոդվածը պատասխանատվություն է նախատեսում զինծառայողի կողմից իր առողջությանը վնաս պատճառելու (անդամախեղելու), հիվանդության սիմուլյացիայի, կեղծ փաստաթուղթ օգտագործելու, խաբեության կամ ապօրինի այլ եղանակով զինվորական ծառայությունից խուսափելու կամ դրա առանձին պարտականությունների կատարումը ժամանակավորապես դադարեցնելու համար: Սույն հանցանքը կարող է կատարվել մի քանի գործողության միջոցով՝ իր առողջությանը վնաս պատճառելու (անդամախեղելու), հիվանդության սիմուլյացիայի, կեղծ փաստաթուղթ օգտագործելու, խաբեության կամ ապօրինի այլ եղանակով: Արարքի վերջնական հետևանքը պետք է լինի խուսափելը կամ պարտականությունների ժամանակավոր դադարեցումը, որը կարող է կատարվել վերը հատուկ նշված կամ ապօրինի այլ եղանակով:

Այսպես, Օրենսգիրքը նույնացնում է «իր առողջությանը վնաս պատճառել» և «անդամախեղում» հասկացությունները: Անդամախեղել նշանակում է որևէ անդամը խեղել՝ վնասել, հաշմացնել (մարմնի որևէ անդամի վնասվածք կամ արատ ունեցող, վնասված, խեղված): Օրենսգիրքը չի հստակեցնում վնասի աս-

⁷ Ari Freilich, “Fallen Soldier: Military (In)justice and the Criminalization of Attempted Suicide After U.S. v. Caldwell”, p. 8

տիճանը, սակայն քանի որ առկա է օբյեկտիվ կողմի պարտադիր հատկանիշ համարվող հետևանքի նկարագրությունը, այն է՝ զինվորական ծառայությունից խուսափելու կամ դրա առանձին պարտականությունների կատարումը ժամանակավորապես դադարեցնելու հատկանիշը, պարզ է, որ վնասը պետք է լինի այն աստիճանի, որ հանգեցնի այդ հետևանքներից որևէ մեկին:

«Հիվանդության սիմուլյացիա» նշանակում է զինծառայողի կողմից իրեն որևէ հիվանդագին վիճակի կամ ֆիզիկական արատի վերագրում կամ իրականում իր մոտ առկա հիվանդության հատկանիշների գիտակցաբար չսպազանցում⁸:

«Կեղծ փաստաթուղթ օգտագործել» ձևակերպումն ընդգրկում է հասկացություն է, քանի որ այն իր մեջ ներառում է ինչպես հանցագործի կողմից փաստաթուղթ կեղծելը, այնպես էլ այլոց կողմից կեղծված փաստաթղթերի օգտագործումը: Փաստաթղթերի կեղծմամբ զինվորական ծառայության պարտականությունները կատարելուց խուսափելի օբյեկտիվ կողմից կարող է դրսևորվել համապատասխան լիազորություններն ունեցող ղեկավարին կեղծ փաստաթուղթ ներկայացնելու և այդ հիմքով զինվորական ծառայության՝ իրեն վերապահված պարտականությունները կատարելուց ազատվելով:

ՀՀ քրեական օրենսգրքի 3-րդ հոդվածի 1-ին մասի 27-րդ կետը սահմանում է «փաստաթուղթ» հասկացության քրեաիրավական նշանակությունը, համաձայն որի՝ քրեական օրենսգրքի իմաստով փաստաթուղթ են համարվում իրավաբանական նշանակություն ունեցող տեղեկություն պարունակող նյութական կամ էլեկտրոնային կրիչները: Նույն հոդվածի 11-րդ կետի համաձայն՝ խաբեություն է դիտարկությամբ իրականությունը խեղաթյուրելը՝ կոնկրետ փաստերը ձևախեղելով, իրականում գոյություն չունեցող կեղծ տվյալներ հաղորդելով, իրական մտադրության մասին լռելով կամ այնպիսի տեղեկություն չհաղորդելով, որն անձը պարտավոր էր հաղորդել:

Խաբեության եղանակը որպես զինվորական ծառայությունից խուսափելու եղանակ սահմանված է Գերմանիայի Դաշնության քրեական օրենսգրքի §109a-ում՝ որպես զինվորական ծառայությունից խուսափելու ինքնուրույն եղանակ: Գերմանական իրավական գրականության և իրավակիրառ պրակտիկայում գերակշռող կարծիքի համաձայն՝ պարզ սուտը բավարար չէ այս նախապայմանը կատարելու համար: Անհրաժեշտ է «մեթոդաբանորեն խելամիտ» ընդհանուր վարքագիծ, ինչպիսին է (նույնիսկ իրական, բայց բովանդակությամբ կեղծ) բժշկական հավաստագրերի, տեղեկանքների և այլնի ներկայացումը կամ ստի մի ամբողջ համակարգ, օրինակ՝ նմանակել լուրջ հիվանդություն, ծանր ընտանեկան դրություն, բնակության վայրի փոփոխություն և այլն⁹: Այսինքն՝ գերմանա-

⁸ «Российское уголовное право: в 2 т. Т. 2. Особенная часть». // под ред. Иногамова-Хегай Л. В., Комиссарова В. С., Раога А. И. // М., 2012, стр. 389.

⁹ П. В. Головненков, Уголовное Уложение Федеративной Республики Германия – Strafgesetzbuch (StGB) – Научно-практический комментарий и перевод текста закона, Universitätsverlag Potsdam 2021, pp. 219-220.

կան քրեական օրենսդրությունը խաբեություն հասկացության տակ հասկանում է և՛ փաստաթղթերի կեղծիքի, և՛ հիվանդության սիմուլյացիայի եղանակները: Ի տարբերություն դրա՝ հայկական օրենսդրությունն առանձնացրել (տարանջատել) է քննարկվող հանցակազմի կատարման մի քանի եղանակներ, որոնք, մեծ հաշվով, իրենցից ներկայացնում են խաբեության որոշակի տարատեսակներ, դրանց շարքում առանձին թվարկել խաբեությունը որպես արարքի կատարման եղանակ, այնուհետև թվարկումների շարքը եզրափակել «ապօրինի այլ եղանակով» եզրույթով, ինչը նշանակում է, որ թվարկված ցանկը սպառիչ չէ և այն իր մեջ ներառում է նաև համանման այլ եղանակներ:

Անդրադառնալով Օրենսգրքի 528-րդ հոդվածի օբյեկտիվ կողմին՝ հարկ է նշել, որ այն արտահայտվում է զինծառայողի կողմից իր առողջությանը վնաս պատճառելու (անդամախեղելու) միջոցով, որը հանգեցրել է կամ կարող էր հանգեցնել զինվորական ծառայության կամ դրա առանձին պարտականությունների կատարումը ժամանակավորապես դադարեցնելուն, և եթե դա կապված չէ զինվորական ծառայության պարտականությունները կատարելու հետ: Ստացվում է, որ ի տարբերություն 527-րդ հոդվածի օբյեկտիվ կողմի՝ 528-րդ հոդվածի օբյեկտիվ կողմը բաղկացած է միայն մեկ հնարավոր գործողության կատարումից՝ զինծառայողի կողմից իր առողջությանը վնաս պատճառելուց (անդամախեղումից): Ընդ որում՝ անկախ նրանից, այդ վնասը հասցնելը հանգեցրել է զինվորական ծառայության կամ դրա առանձին պարտականությունների կատարման ժամանակավոր դադարեցմանը, թե ուղղակի այդպիսի հնարավորություն է ստեղծել, արարքի կատարումը հանգեցնելու է քրեական պատասխանատվության:

Ամփոփելով կարող ենք եզրակացնել, որ ՀՀ քրեական գործող օրենսգրքի 528-րդ և 527-րդ հոդվածները հարաբերակցվում են ինչպես ամբողջը և դրա մասը: Այլ կերպ՝ Օրենսգրքի 527-րդ հոդվածով քրեական պատասխանատվության ենթարկելու հնարավորության բացակայության դեպքում անհրաժեշտ է քննարկել նաև զինծառայողի արարքում 528-րդ հոդվածով նախատեսված հանցակազմի առկայության հարցը:

§4. Հանցակազմի սուբյեկտիվ կողմը

Քննարկվող հանցակազմերի սուբյեկտիվ կողմը դրսևորվում է դիտավորությամբ, սակայն մի դեպքում (527-րդ հոդված)՝ հանցավորը թե՛ իր գործողությունների և թե՛ դրանց հետևանքների նկատմամբ դրսևորում է ուղղակի դիտավորություն, իսկ մյուս դեպքում (528-րդ հոդված)՝ զինծառայողն իր առողջությանը վնաս է պատճառում ուղղակի դիտավորությամբ, սակայն պարտադիր չէ, որ օրենքով նախատեսված վտանգավոր հետևանքի նկատմամբ ևս հանցավորն ունենա ուղղակի դիտավորություն: Հետևանքի նկատմամբ հանցավորը կարող է ունենալ նաև անուղղակի դիտավորություն: Ընդ որում՝ հետևանքը կարող է նույնիսկ վրա չհասնել (բավարար է նման հետևանքի վրա հասնելու օբյեկտիվ

հնարավորությունը), հետևաբար նման դեպքերում հետևանքի նկատմամբ հանցավորի սուբյեկտիվ ընկալումն այս հանցակազմի առկայության գնահատման համար էական նշանակություն չունի:

Գլուխ 3. Տեսական և գործնական որոշ խնդիրներ

Հետազոտության առաջին գլխում հանգամանալից ներկայացվեց քննարկվող հանրորեն վտանգավոր արարքի համար պատասխանատվություն նախատեսող հոդվածի զարգացման պատմությունը, որից պարզ դարձավ, որ վերջին տարիներին նյութական իրավունքի նորմի կիրառման հիմնական դժվարությունները կապված են եղել հանցակազմի սուբյեկտիվ կողմին տրված տարբեր մեկնաբանությունների հետ: Մասնավորապես՝ վեճերի տեղիք է տվել այն հարցը, թե արդյո՞ք տվյալ արարքի համար զինձառայողին պատասխանատվության ենթարկելու համար բավարար է զինձառայողի կողմից իր առողջությանը վնաս պատճառելու և դրա արդյունքում զինվորական ծառայությունից կամ դրա առանձին պարտականությունների կատարումից խուսափելու փաստը, թե՞ լրացուցիչ պետք է հավաստել, որ նրա արարքը կապված է եղել հատկապես զինվորական ծառայության հետ և հետապնդել այդ եղանակով զինվորական ծառայության պարտականությունների կատարումը ժամանակավորապես կամ վերջնականապես դադարեցնելու նպատակ: Դատելով հոդվածի զարգացման պատմությունից՝ կարելի է պնդել, որ չի եղել որևէ տևական ժամանակահատված, որի ընթացքում որևէ մեկնաբանություն իրավակիրառ պրակտիկայում միանշանակ ընդունվի:

Օրենքի միատեսակ կիրառության ապահովման հարցը թերևս լուծվեց ՀՀ վճռաբեկ դատարանի համապատասխան որոշմամբ, որով մեկնաբանություն տրվեց 2003 թվականի ապրիլի 18-ին ընդունված ՀՀ քրեական օրենսգրքի 363-րդ հոդվածով (2013 թվականի ապրիլի 30-ի փոփոխություններով գործող խմբագրությամբ) արգելված արարքը նկարագրող նորմին: Զննարկման առարկա հանցակազմի մեկնաբանության շրջանակներում ՀՀ վճռաբեկ դատարանը, իրականացնելով համեմատական վերլուծություն ՀՀ քրեական օրենսգրքի՝ զինվորական ծառայության անցնելու կարգի դեմ ուղղված հանցագործությունների համար պատասխանատվություն նախատեսող հոդվածների միջև, կատարեց ուղղորդող նշանակություն ունեցող շատ կարևոր արձանագրում այն մասին, որ զինվորական ծառայության պարտականությունները կատարելու հետ չկապված արարքները որպես զինվորական հանցագործություն որակելու համար անհրաժեշտ է, որպեսզի համապատասխան հոդվածի դիսպոզիցիայում հստակ նշում արված լինի այն մասին, որ արարքը ենթակա է որակման որպես զինվորական հանցագործություն նաև այն դեպքում, երբ կապված չէ զինվորական ծառայության պարտականությունները կատարելու հետ:

ՀՀ քրեական օրենսգրքի 528-րդ հոդվածի 1-ին մասով նկարագրված հանցա-

կազմում այդ նշումը տեղ է գտել բառացիորեն նույն ձևակերպմամբ, ինչպես նշված է ՀՀ վճռաբեկ դատարանի որոշման մեջ, որի պայմաններում թվում էր, թե խնդիրը կարելի էր համարել լուծված, իսկ տվյալ հոդվածում նկարագրված նորմի գործողության առնչությամբ միասնական պրակտիկան՝ ապահովված: Այդուհանդերձ, դատական պրակտիկայի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ նույնիսկ այս պայմաններում, որոշակի իրավիճակներում, իրավակիրառողը հրաժարվում է զինվորական ծառայության պարտականությունների կատարման հետ չկապված պատճառներով զինծառայողի կողմից իր առողջությանը վնաս պատճառելու դեպքը համարել որպես զինվորական ծառայության սահմանված կարգի դեմ ուղղված հանցագործություն: Այդ տեսակետի հիմքում ընդհանուր առմամբ ընկած են այն նույն պատճառաբանությունները, որոնցով ժամանակին կիսվել էր դատական պրակտիկան: Տեսակետի կողմնակիցները շարունակում են պնդել, որ քննարկվող հանցագործությունը զինվորական ծառայության կարգի դեմ ուղղված հանցագործություն է, հետևաբար զինծառայողի կողմից այդ արարքը կատարելու դեպքում հանցակազմը ձևավորված կհամարվի բացառապես այն դեպքում, երբ անձն արարքը կատարում է զինվորական ծառայության կամ դրա առանձին պարտականությունների հետ կապված կամ, այլ կերպ ասած, դրանց կատարումից ազատվելու նպատակով:

Սույն աշխատանքում կատարված վերլուծությունների հիման վրա, առկա օրենսդրական կարգավորումների հաշվառմամբ, ինչպես նաև հիմք ընդունելով ՀՀ վճռաբեկ դատարանի մեկնաբանությունները, գտնում ենք, որ վերջին տեսակետը կենսունակ չէ և դատական պրակտիկայում չի կարող ամրապնդվել:

Ասվածի ամենախոստուն ապացույցն այն է, որ զինծառայողի կողմից իր առողջությանը վնաս պատճառելու (անդամախեղելու) համար քրեական պատասխանատվություն նախատեսված է գործող ՀՀ քրեական օրենսգրքի տարբեր հոդվածներով, որոնք միմյանցից տարբերվում են հենց սուբյեկտիվ կողմով: Եթե Օրենսգրքի 527-րդ հոդվածի դեպքում սեփական առողջությանը վնաս պատճառելու միջոցով զինվորական ծառայության կամ դրա առանձին պարտականությունների կատարումը դադարեցնելը հանցավորի նպատակն է կամ նպատակին հասնելու միջոց, ապա 528-րդ հոդվածի դեպքում թեև զինվորական ծառայության կամ դրա առանձին պարտականությունների կատարումը դադարեցնելն անձի նպատակը չէ, այնուամենայնիվ անձը կատարում է դա:

ՀՀ քրեական օրենսգրքի 528-րդ հոդվածի գործողության առնչությամբ դատական պրակտիկայում որոշակի դժվարություններ կարող են առաջանալ օբյեկտիվ կողմը բնութագրող մեկ այլ հանգամանքի կապակցությամբ, որը կապված է արարքի հետևանքների նկարագրության հետ: Խոսքը մասնավորապես «որը հանգեցրել է կամ կարող էր հանգեցնել զինվորական ծառայության կամ դրա առանձին պարտականությունները ժամանակավորապես դադարեցնելուն» ձևակերպման մասին է, և, էթե ծառայությունը կամ դրա առանձին պարտականու-

թյունների կատարումը փաստացի դադարեցված լինելու դեպքերում հարցի պարզումն ու իրավիճակի գնահատումը իրենից որևէ բարդություն չեն ներկայացնում, ապա պատկերը բոլորովին այլ է պարտականությունների դադարեցման հնարավորություն ստեղծված լինելու իրավիճակը գնահատելու առումով: Այս հարցը, թերևս, ավելի խոր և ծավալուն վերլուծության առարկա է, քան կարելի է անել սույն աշխատանքի շրջանակներում, մանավանդ, որ նման ձևակերպում օրենսդիրն օգտագործել է զինվորական ծառայության սահմանված կարգի դեմ ուղղված ևս մեկ հանցագործության՝ մարտական հերթապահություն կամ մարտական ծառայություն կրելու կանոնները խախտելու համար պատասխանատվություն նախատեսող հոդվածի նկարագրության մեջ (հոդված 540): Հակիրճ անդրադարձ կատարելով խնդրո առարկա հարցին՝ կարելի է ասել, որ զինվորական ծառայության պարտականությունները դադարեցնելու հնարավորություն ստեղծող իրավիճակներ պետք է համարել այն բոլոր դեպքերը, երբ զինծառայողը ֆիզիկապես փաստացի չի գրկվում իր ծառայողական պարտականությունները կատարելու հնարավորությունից, սակայն նրա արարքն առաջ է բերում սահմանված ընթացակարգերին համապատասխան նրա առողջական վիճակը (ինչպես ֆիզիկական, այնպես էլ հոգեկան) պարզելու, անհրաժեշտ բուժական և կանխարգելիչ միջոցառումներ ձեռնարկելու անհրաժեշտություն, որն էլ անուղղակիորեն զինծառայողին կտրում է առօրյա պարտականությունների կատարումից:

Եզրակացություն

Հոդվածի ներածական հատվածում բարձրացված հարցի վերաբերյալ կատարված ուսումնասիրության արդյունքում հանգում ենք այն եզրահանգման, որ ՀՀ քրեական օրենսգրքի 527-րդ և 528-րդ հոդվածները միմյանցից տարբերվում են հիմնականում օբյեկտիվ կողմի արտահայտման եղանակներով, ինչպես նաև սուբյեկտիվ կողմի հատկանիշներով: Եթե 527-րդ հոդվածով արարքի որակման համար անհրաժեշտ է, որ զինծառայողը ցուցաբերի ուղղակի դիտավորություն թե՛ կատարվող արարքի, թե՛ դրա առաջացրած հանրորեն վտանգավոր հետևանքի նկատմամբ, և միաժամանակ այդ արարքը կապված լինի զինվորական ծառայության պարտականությունների կատարման հետ, ապա 528-րդ հոդվածով արարքը որակելու համար անհրաժեշտ է, որ հանցակազմի օբյեկտը՝ զինվորական ծառայության սահմանված կարգի պահպանմանն ուղղված հասարակական հարաբերությունները վնասվեն կամ ստեղծվի դրանց վնասման իրական հնարավորություն, և միաժամանակ այդ արարքի կատարումը կապված չլինի զինվորական ծառայության պարտականությունների կատարման հետ:

Սույն հոդվածում հիմնավորվում է նաև ՀՀ քրեական օրենսգրքում 528-րդ հոդվածի ներդրումը՝ ելնելով զինծառայողների շրջանում տարածում գտած ինքնավնասումների դեպքերի քանակական ցուցանիշը նվազեցնելու միտումից:

Գրականության ցանկ (reference list, список литературы)

1. Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգիրք (ընդունված՝ 05.05.2021),
Criminal Code of RA (adopted on: 05.05.2021),
2. Չինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին ՀՀ օրենք,
Law of the Republic of Armenia on military service and the status of servicemen,
3. Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգիրք (ընդունված՝ 18.04.2003),
Criminal Code of RA (adopted on: 18.04.2003),
4. Նախագիծ Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին
<http://parliament.am/drafts.php?sel=showdraft&DraftID=5934&Reading=0>
(մուտք՝ 19.02.2024 թ.),
Project on amendments and additions to the Criminal Code of the Republic of Armenia,
<http://parliament.am/drafts.php?sel=showdraft&DraftID=5934&Reading=0> (access: 19.02.2024),
5. ՀԽՍՀ քրեական օրենսգիրք,
Criminal Code of the ASSR,
6. Բելառուսի Հանրապետության քրեական օրենսգիրք,
<https://pravo.by/document/?guid=3871&p0=hk9900275>, (մուտք 12.02.2024 թ.),
Criminal Code of the Republic of Belarus,
<https://pravo.by/document/?guid=3871&p0=hk9900275>, (access: 12.02.2024),
7. Գերմանիայի Դաշնային Հանրապետության քրեական օրենսգիրք,
<https://www.gesetze-im-internet.de/stgb/index.html>, (մուտք 12.02.2024 թ.),
Criminal Code of the Federal Republic of Germany,
<https://www.gesetze-im-internet.de/stgb/index.html>, (access: 12.02.2024),
8. Դանիայի Թագավորության քրեական օրենսգիրք,
<https://antislaverylaw.ac.uk/wp-content/uploads/2019/08/Denmark-Criminal-Code.pdf>, (մուտք 12.02.2024 թ.),
Criminal Code of the Kingdom of Denmark,
<https://antislaverylaw.ac.uk/wp-content/uploads/2019/08/Denmark-Criminal-Code.pdf>, (access: 12.02.2024),
9. Ղազախստանի Հանրապետության քրեական օրենսգիրք,
<https://adilet.zan.kz/rus/docs/K1400000226>, (մուտք 12.02.2024 թ.),
Criminal Code of the Republic of Kazakhstan,
<https://adilet.zan.kz/rus/docs/K1400000226>, (access: 12.02.2024),

10. Շվեդիայի Թագավորության քրեական օրենսգիրք,
<https://www.government.se/contentassets/7a2dcae0787e465e9a2431554b5eab03/the-swedish-criminal-code.pdf>, (մուտք 12.02.2024 թ.),
Criminal Code of the Kingdom of Sweden,
<https://www.government.se/contentassets/7a2dcae0787e465e9a2431554b5eab03/the-swedish-criminal-code.pdf>, (access: 12.02.2024),
11. Ռուսաստանի Դաշնության քրեական օրենսգիրք,
https://www.consultant.ru/document/cons_doc_LAW_10699/4e880ce31d8d3237ff4482417be9509a32058904/, (մուտք 12.02.2024 թ.),
Criminal Code of Russian Federation, https://www.consultant.ru/document/cons_doc_LAW_10699/4e880ce31d8d3237ff4482417be9509a32058904/, (access: 12.02.2024),
12. Վրաստանի Հանրապետության քրեական օրենսգիրք,
<https://matsne.gov.ge/en/document/view/16426?publication=252>, (մուտք 12.02.2024 թ.),
Criminal Code of the Republic of Georgia,
<https://matsne.gov.ge/en/document/view/16426?publication=252>, (access: 12.02.2024),
13. Մխիթար Ալիկի Սարուխանյանի գործով Վճռաբեկ դատարանի 2014 թվականի մայիսի 31-ի թիվ ՍԴ/0185/01/13 որոշում,
Decision No. SD/0185/01/13 of the Court of Cassation of May 31, 2014 in the case of Mkhitar Sarukhanyan (father's name: Alik),
14. Սրապիոն Ազատի Հովհաննիսյանի գործով Վճռաբեկ դատարանի 2012 թվականի հունիսի 8-ի թիվ ՍԴ/0204/01/11 որոշում,
Decision No. SD/0204/01/11 of the Court of Cassation of June 8, 2012 in the case of Srapion Hovhannisyanyan (father's name: Azat),
15. Հայաստանի Հանրապետության քրեական իրավունք: Հատուկ մաս (վեցերորդ հրատարակություն՝ փոփոխություններով և լրացումներով), Երևանի պետ. համալս. – Եր., ԵՊՀ հրատ., 2012,
Criminal law of the Republic of Armenia. Special part (sixth edition with changes and additions):/ Yerevan State University – Yerevan: YSU ed., 2012,
16. Л.В. Иногамова-Хегай, В.С. Комиссарова, А.И. Парога, “Российское уголовное право: в 2т. Т.2. Особенная часть”. // М., 2012,
L.V. Inogamova-Khegai, V.S. Komissarova, A.I. Raroga, “Russian criminal law: in 2 volumes. Vol.2. Special part.” // М., 2012,
17. П. С. Данилов, “Субъект преступлений против военной службы”, Вестник Омского университета. Серия «Право». 2017. № 2 (51),
P. S. Danilov, “Subject of crimes against military service”, Bulletin of Omsk University. Series “Law”. 2017. No. 2 (51),

18. П.В. Головненков, “Уголовное Уложение Федеративной Республики Германия – Strafgesetzbuch (StGB) – Научно-практический комментарий и перевод текста закона”, Universitätsverlag Potsdam, 2021,
P.V. Golovnenkov, “Criminal Code of the Federal Republic of Germany – Strafgesetzbuch (StGB) – Scientific and practical commentary and translation of the text of the law”, Universitätsverlag Potsdam, 2021,
19. Ari Freilich, “Fallen Soldier: Military (In)justice and the Criminalization of Attempted Suicide After U.S. v. Caldwell”.
Uniform Code of Military Justice, 10 U.S.C. § 915 (2012).

Vigen Harutyunyan

*Head of the Division for Supervision of the Activities of the
Prosecutor's Offices of Military Garrisons of the Central Military
Prosecutor's Office of the Republic of Armenia, First Rank Counsellor of Justice*

Svetlana Mkrtychyan

Attendee of the Academy of Advocates of the Republic of Armenia

COMPARATIVE ANALYSIS OF THE ARTICLES 527 AND 528 OF THE CRIMINAL CODE OF RA, SOME THEORETICAL AND PRACTICAL ISSUES ON THEIR APPLICABILITY¹

Abstract

The subject of this article's study is Articles 527 and 528 of the RA Criminal Code, their similarities and differences, and the qualification issues. The problem under study is topical, taking into account the adoption of the new criminal code and the introduction of a new crime in it, which is of interest for the study of this article.

At the same time, the topicality of the problem is also justified by the fact that, in the conditions of the simultaneous existence of the discussed crimes, there are no clear distinctions regarding theoretical problems and their application in practice. The purpose of this article is to research articles 527 and 528 of the RA Criminal Code, their similarities and differences, discuss some issues related to their practical application and provide author's solutions.

The given article reveals the problems of qualifying the acts committed by servicemen as evasion of military service or temporarily suspending its individual duties. The article justifies the necessity of introducing Article 528 into the RA Criminal Code and its practical applicability as an independent mechanism for the legislative regulation of self-harms unrelated to military service duties.

The conclusions resulted from the study of the article have the significance of observing the study from some theoretical perspectives and showing a systematic approach to the problems arising during practical application.

Keywords: malingering; simulation of the disease; use a fake document; evading military service; termination of the performance of separate duties of military service.

¹ The article was presented on 22.02.2024 and was reviewed on 20.03.2024.

Виген Арутюнян

*Начальник отдела контроля за деятельностью прокуратур
военных гарнизонов Центральной военной прокуратуры Республики Армения,
советник юстиции первого класса*

Светлана Мкртчян

Студент Академии адвокатов Республики Армения

СРАВНИТЕЛЬНЫЙ АНАЛИЗ СТАТЬЕЙ 527 И 528 УГОЛОВНОГО КОДЕКСА РА, НЕКОТОРЫЕ ТЕОРЕТИЧЕСКИЕ И ПРАКТИЧЕСКИЕ ВОПРОСЫ ИХ ПРИМЕНИМОСТИ¹

Абстракт

Предметом исследования данной статьи являются статьи 527 и 528 УК РА, их сходства и различия, вопросы квалификации. Исследуемая проблема является актуальной, учитывая принятие нового Уголовного кодекса и введение в него нового преступления, представляющего интерес для исследования данной статьи.

При этом актуальность проблемы обосновывается и тем, что в условиях одновременного существования обсуждаемых преступлений не существует четких разграничений относительно теоретических проблем и их применения на практике. Цель данной статьи - исследовать статьи 527 и 528 УК РА, их сходства и различия, обсудить некоторые вопросы, связанные с их практическим применением, и предложить авторские решения.

В статье раскрываются проблемы квалификации деяний, совершенных военнослужащими, как уклонение от военной службы или временное приостановление несения отдельных обязанностей. В статье обосновывается необходимость введения статьи 528 в Уголовный кодекс РА и ее практическое применение как самостоятельного механизма законодательного регулирования членовредительства, не связанного с воинской службой.

Выводы, сделанные в результате изучения статьи, имеют значение рассмотрения объекта исследования с некоторых теоретических позиций и показа системного подхода к проблемам, возникающим в ходе практического применения.

Ключевые слова: членовредительство; симуляция заболеваний; использовать поддельный документ; уклоняться от военной службы; прекращение исполнения отдельных обязанностей военной службы.

¹ Статья была представлена 22.02.2024 и прошла рецензирование 20.03.2024.

Եվա Սադոյան

*ՀՀ գլխավոր դատասիսագի խորհրդական,
Երևանի պետական համալսարանի իրավագիտության ֆակուլտետի
քաղաքացիական իրավունքի ամբիոնի ասպիրանտ*

ՉԲՈՍԱՇՐՋԱՅԻՆ ՓԱԹԵԹՈՒՄ ՆԵՐԱՌՎՈՂ ՉԲՈՍԱՇՐՋԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՔԱՂԱՔԱԳԻԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ՍՈՒԲՅԵԿՏԸ²

Համառոտագիր

Հոդվածը նվիրված է սպառողների ճանապարհորդությունները կազմակերպելու պարտավորության շրջանակներում զբոսաշրջային փաթեթներում ներառված զբոսաշրջային ծառայությունների մատուցման համար քաղաքացիական պատասխանատվության պատշաճ սուբյեկտի որոշման հիմնախնդրին: Հոդվածը նպատակ ունի համաշխարհային պրակտիկայում գոյություն ունեցող զբոսաշրջային ծառայությունների համար պատասխանատվության սուբյեկտի հիմնական մոդելների, ինչպես նաև զբոսաշրջային փաթեթներ ձևավորելու նպատակով զբոսաշրջային գործունեության սուբյեկտների և զբոսաշրջային ծառայություններ մատուցողների միջև ծագող պայմանագրային հարաբերությունների առանձնահատկությունների վերլուծության հիման վրա առաջարկելու պատասխանատվության սուբյեկտի նախընտրելի մոդել:

Չբոսաշրջային գործունեության սուբյեկտների և զբոսաշրջային ծառայություններ մատուցողների համագործակցության տարատեսակ եղանակների պայմաններում պատասխանատվության սուբյեկտի հարցում առկա հակասական պրակտիկան բացառելու նպատակով հոդվածում առաջարկվում է օրենսդրորեն ամրագրել զբոսաշրջային փաթեթում ընդգրկված ծառայությունների համար պատասխանատվության հստակ մոդել, ինչը թույլ կտա զբոսաշրջության ոլորտում պայմանագրային հարաբերությունները հետայսու ձևակերպել այդ մոդելը հիմք ընդունելով:

Մասնավորապես՝ նկատի ունենալով զբոսաշրջային օպերատորի կողմից զբոսաշրջային փաթեթ ձևավորելու և դրա շրջանակներում անձամբ կամ զբոսաշրջային գործակալի միջոցով կամ նրա հետ համատեղ սպառողի ճանապարհորդությունը կազմակերպելու պարտականություն ստանձնելու հանգամանքները՝ առաջարկվում է նախատեսել այդ փաթեթներում ներառված զբոսաշրջային ծառայությունների համար զբոսաշրջային գործունեության սուբյեկտների պատաս-

² Հոդվածը ներկայացվել է 13.05.2024 թ., գրախոսվել է 20.05.2024 թ.:

խանատվության մեխանիզմը՝ որպես սպառողների իրավունքների առավել արդյունավետ պաշտպանություն ապահովող և կողմերի պայմանագրային հարաբերությունների էությանն առավել համապատասխանող պատասխանատվության մոդել՝ բացառությամբ այն զբոսաշրջային ծառայությունների, որոնց համար օրենքով նախատեսված է ծառայությունը մատուցողի պատասխանատվությունը:

Հիմնաբառեր - զբոսաշրջային գործունեության սուբյեկտ, զբոսաշրջային ծառայություն մատուցող անձ, պատասխանատվության պատշաճ սուբյեկտ, հոգուտ երրորդ անձի կնքված պայմանագիր, ԵՄ դիրեկտիվ, զբոսաշրջային փաթեթ, սպառող, զբոսաշրջային փաթեթի ձևավորում:

Ներածություն

Գույքային պատասխանատվությունն ուղղված է քաղաքացիական բնականոն շրջանառությունն ապահովելուն³: Զբոսաշրջային ծառայությունների մատուցումը կազմակերպելու պարտավորությունը խախտելու դեպքում վրա հասնող քաղաքացիական պատասխանատվությունն այս առումով բացառություն չէ:

Թեև «Զբոսաշրջության մասին» ՀՀ նոր օրենքը⁴, հայրենական զբոսաշրջային օրենսդրությունը «Փաթեթային ճանապարհորդությունների և առնչվող ճանապարհորդական համաձայնությունների մասին» Եվրոպական խորհրդի և Խորհրդարանի 2015 թվականի նոյեմբերի 25-ի դիրեկտիվին⁵ մոտարկելու պարտավորության⁶ շրջանակներում նախատեսել է ԵՄ զբոսաշրջային օրենսդրությունից «փոխառնված» մի շարք կարգավորումներ, սակայն զբոսաշրջության ոլորտի պայմանագրային հարաբերություններում թերևս ամենակարևոր՝ զբոսաշրջային ծառայությունների մատուցումը կազմակերպելու պարտավորությունը խախտելու համար պատասխանատվության հարցը դարձյալ դուրս է մնացել օրենսդրական կարգավորման դաշտից, ինչն էական բացթողում է:

Զբոսաշրջային գործունեության սուբյեկտ(ներ)ի պատասխանատվության մասին կարելի է միայն ենթադրել Օրենքի 15-րդ հոդվածի 8-րդ մասից, ըստ որի՝

³ St'u Zavyaylova C., Проблемы гражданско-правового регулирования туристской деятельности в Российской Федерации, Монография, М., Проспект, 2016, էջ 38:

⁴ «Զբոսաշրջության մասին» ՀՀ օրենք, ՀՕ-4-Ն, ընդունվել է 22.12.2023 թ., ուժի մեջ է մտնելու՝ 01.09.2024 թ., սկզբնաղբյուրը՝ միասնական կայք 2024.01.9-2024.01.21, այսուհետ նաև՝ Օրենք:

⁵ Directive (EU) 2015/2302 of the European Parliament and of the Council of 25 November 2015 “On package travel and linked travel arrangements”, amending Regulation (EC) No 2006/2004 and Directive 2011/83/EU of the European Parliament and of the Council and repealing Council Directive 90/314/EEC, (այսուհետ նաև՝ Դիրեկտիվ կամ ԵՄ դիրեկտիվ):

⁶ Հայաստանի Հանրապետության և Եվրոպական Միության և Ատոմային էներգիայի եվրոպական համայնքի ու դրանց անդամ պետությունների միջև կնքված «Համապարփակ և ընդլայնված գործընկերության» համաձայնագրով Հայաստանի Հանրապետությունը ստանձնեց իր օրենսդրությունը, ի թիվս այլնի նաև եվրոպական երկրների զբոսաշրջային օրենսդրության իրավական հիմք հանդիսացող «Փաթեթային ճանապարհորդությունների և առնչվող ճանապարհորդական համաձայնությունների մասին» Եվրոպական խորհրդի և Խորհրդարանի 2015 թվականի նոյեմբերի 25-ի դիրեկտիվին մոտարկելու հանձնառություն:

երաշխիքով ապահովվում են սպառողների նկատմամբ զբոսաշրջային օպերատորի կամ արտագնա զբոսաշրջային գործակալի ստանձնած պարտավորությունները:

Մինչդեռ, ինչպես ԵՄ դիրեկտիվի, այնպես էլ արդի զբոսաշրջային պրակտիկայի պահանջն է ներպետական օրենսդրությամբ նախատեսել զբոսաշրջային ծառայությունների մատուցման համար պատասխանատվության հստակ մեխանիզմ:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի⁷ 778-րդ հոդվածի համաձայն՝ ծառայությունների վճարովի մատուցման պարտավորությունում պատվիրատուի հետ պայմանագրային հարաբերությունների մեջ է մտնում կատարողը, որը, որպես կանոն, մատուցում է ծառայությունը: Չբոսաշրջային ծառայությունների մատուցումը կազմակերպելու պարտավորությունում թեև որպես կատարող հանդես է գալիս զբոսաշրջային գործունեության սուբյեկտը, որը և պատվիրատուի հետ մտնում է պայմանագրային հարաբերությունների մեջ, սակայն զբոսաշրջային ծառայությունները, որպես կանոն, վերջինիս կողմից անձամբ չեն մատուցվում և չեն էլ կարող մատուցվել, քանի որ դրա համար պահանջվում է գործունեության տվյալ տեսակով զբաղվելու թույլտվություն (լիցենզիա):

Միևնույն ժամանակ, պարտավորությունը խախտելու դեպքում ողջամտորեն առաջ է գալիս զբոսաշրջային գործունեության սուբյեկտ(ներ)ի՝ որպես պայմանագրի կողմի պատասխանատվության հարցը: Դա պայմանավորված է ոչ միայն նրանով, որ զբոսաշրջային գործունեության սուբյեկտները գործարարներ են, որոնք շուկայում հանդես են գալիս որպես պրոֆեսիոնալներ, այլև զբոսաշրջային ծառայությունների մատուցումը կազմակերպելու պարտավորության առանձնահատկություններով, մասնավորապես՝ նրանով, որ այդ ծառայությունն ունի համալիր բնույթ. թեև դրա շրջանակներում մատուցվում են տարատեսակ և տարբեր սուբյեկտների կողմից առաջարկվող ծառայություններ, բայց դրանք ի վերջո սպառողին են «հասցվում» հենց զբոսաշրջային գործունեության սուբյեկտների միջոցով:

Ինչպես հայտնի է, քաղաքացիական պատասխանատվություն կիրառելու հիմքը պարտապանի կողմից պարտավորության խախտումն է, որն արտահայտվում է պարտավորությունը չկատարելով կամ ոչ պատշաճ կերպով կատարելով⁸:

Իրավաբանական գրականության մեջ քննարկվող պարտավորության շրջանակներում որպես կատարողի կողմից թույլ տրվող խախտումներ մատնանշվում են պայմանագրի կատարման ժամկետները կամ այլ պայմանները խախտելը, ծառայությունների կամ դրանք մատուցողների վերաբերյալ ոչ հավաստի կամ ոչ լրիվ, կամ ոչ ժամանակին տեղեկություն տրամադրելը, թերություններ ունեցող ծառայություններ մատուցելը, այդ թվում՝ դրանց որակին և անվտանգությանը ներկայացող պահանջները խախտելը, զբոսաշրջային ծառայությունների թերու-

⁷ Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգիրք, ՀՕ-239, ընդունվել է 05.05.1998 թ., ուժի մեջ մտել՝ 01.01.1999 թ., ՀՀԴՏ 1998.08.10/17(50): Այսուհետ նաև՝ Օրենսգիրք, ՀՀ քաղ. օր.:

⁸ Стѣи Гражданское право в 2 т-х, под ред. Б. Гонгалo, Том 2, 2-е изд., М., Статут 2017, էջ 58:

թյունների հետևանքով զբոսաշրջիկի անձին կամ գույքին վնաս պատճառելը, օրենսդրությամբ սպառողի համար սահմանված իրավունքների համեմատ վերջինիս իրավունքները ոտնահարող պայմաններ պայմանագրում նախատեսելը և այլն⁹:

Թվարկված, ինչպես նաև պրակտիկայում հանդիպող այլ խախտումների ուսումնասիրության արդյունքում կարելի է արձանագրել, որ դրանց մի մասը հենց զբոսաշրջային գործունեության սուբյեկտների ոչ իրավաչափ գործողությունների կամ անգործության արդյունք է, ինչպես օրինակ՝ ծառայությունների կամ դրանք մատուցողների վերաբերյալ ոչ հավաստի կամ ոչ լրիվ, կամ ոչ ժամանակին տեղեկություն կամ զբոսաշրջության հետ կապված խորհրդատվություն տրամադրելը, օրենսդրությամբ սպառողի համար սահմանված իրավունքների համեմատ վերջինիս իրավունքները ոտնահարող պայմաններ պայմանագրում նախատեսելը, պատվիրատուի պահանջներին չհամապատասխանող ամրագրումներ կատարելը, համապատասխան ծառայության արժեքը ծառայություն մատուցողին ժամանակին չփոխանցելը, իսկ մյուս մասը՝ անմիջականորեն զբոսաշրջային ծառայություններ մատուցողների, օրինակ՝ ծառայությունները թերություններով մատուցելը, այդ թվում՝ դրանց որակին և անվտանգությանը ներկայացվող պահանջների խախտումը, այդ թերությունների հետևանքով զբոսաշրջիկի անձին կամ գույքին վնաս պատճառելը:

Ակնհայտ է, որ անմիջականորեն զբոսաշրջային գործունեության սուբյեկտների հակաիրավական վարքագծի արդյունքում վրա հասնող պատասխանատվության սուբյեկտը հենց վերջիններս են: Ընդ որում, դատական պրակտիկայում բավականին մեծ թիվ են կազմում հենց այս խումբ իրավախախտումները¹⁰: Սակայն նույն հարցը միանշանակ չէ զբոսաշրջային փաթեթում, տուրերում ներառված կամ առանձին զբոսաշրջային ծառայություններ մատուցելու պարտավորությունը խախտելու դեպքում:

Զբոսաշրջային փաթեթում ներառված զբոսաշրջային ծառայությունների համար պատասխանատվության սուբյեկտի հիմնական մոդելները

Միջազգային պրակտիկայում, ըստ զբոսաշրջային ծառայությունների համար պատասխանատվության սուբյեկտի, առանձնացվում է պատասխանատվության երկու հիմնական մոդել: Այսպես, ԵՄ դիրեկտիվի, համապատասխանաբար՝ ԵՄ երկրների օրենսդրությունների համաձայն՝ զբոսաշրջային փաթեթում ներառված ծառայությունների համար պատասխանատվություն է

⁹ St'а Zавьялова С., նշված աշխատ., էջ 38:

¹⁰ Օրինակ՝ թիվ ԵԴ/18918/02/18 գործով հայցվոր-սպառողը վնասի հատուցման պահանջ էր ներկայացրել զբոսաշրջային գործակալության դեմ, քանի որ վերջինս իր պատվիրված օրերի քանակից 1 օր պակաս ժամկետով էր կատարել հյուրանոցային ծառայությունների ամրագրումը, ինչի արդյունքում հայցվորը ստիպված էր եղել իր միջոցների հաշվին լրացուցիչ սպահովել վերջին օրվա համար ամրագրումը (տե՛ս նշված գործով Երևան քաղաքի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի 06.12.2018 թ. վճիռը):

կրում ճանապարհորդության կազմակերպիչը (զբոսաշրջային օպերատորը)՝ անկախ նրանից՝ դրանք մատուցվում են վերջինիս, թե այլ ծառայություններ մատուցողների կողմից (Դիրեկտիվ, հոդված 13):

Հատկանշական է, որ Դիրեկտիվը պատասխանատվությունը դիտարկում է լայն առումով՝ դրանում ընդգրկելով նաև զբոսաշրջային փաթեթում ներառված ծառայությունների թերությունների դեպքում «Սպառողների իրավունքների պաշտպանության մասին» օրենքով¹¹ (հոդված 27) նախատեսված՝ ծառայություն մատուցողի նկատմամբ կիրառվող ներգործության միջոցներին նույնական միջոցների կիրառությունը¹²: ԵՄ դիրեկտիվը թե՛ ծառայությունների թերությունների համար նախատեսված ներգործության միջոցների¹³, թե՛ պարտավորության խախտման համար վրա հասնող քաղաքացիական պատասխանատվության

¹¹ «Սպառողների իրավունքների պաշտպանության մասին» ՀՀ օրենք, ՀՕ-197, ընդունվել է 26.06.2001 թ., ուժի մեջ մտել՝ 01.01.2002 թ., ՀՀՊՏ 2001.08.02/25(157) Հոդ. 580:

¹² «Սպառողների իրավունքների պաշտպանության մասին» ՀՀ օրենքի 27-րդ հոդվածի համաձայն՝ մատուցված ծառայությունում թերությունների հայտնաբերման դեպքում սպառողն իր ընտրությամբ իրավունք ունի պահանջել մատուցված ծառայության թերությունների անհատույց վերացում, ծառայության գնի համապատասխան իջեցում, համանման նյութից նույն որակով մեկ այլ իրի անհատույց պատրաստում կամ կրկնական աշխատանքի կատարում (ծառայության մատուցման դեպքում այս իրավունքը կարող է իրացվել կրկնակի ծառայության մատուցում պահանջելով. - Ե. Մ.), մատուցված ծառայության թերությունների՝ իր ուժերով վերացման ծախսերի հատուցում: Սպառողն իրավունք ունի լուծելու ծառայության մատուցման պայմանագիրը և պահանջել վնասների լրիվ հատուցում, եթե նշված պայմանագրով սահմանված ժամկետում մատուցված ծառայության թերությունները կատարողը չի վերացրել: Սպառողը ծառայության մատուցման պայմանագիրը լուծելու և ծառայության թերությունների հետ կապված իրեն պատճառված վնասի լրիվ հատուցում պահանջելու իրավունք ունի նաև մատուցված ծառայության մեջ էական խախտումներ կամ պայմանագրի պայմաններից այլ էական շեղումներ հայտնաբերելու դեպքում:

Դիրեկտիվը, իր հերթին, զբոսաշրջիկին պարտավորեցնում է փաթեթում ներառված ցանկացած ծառայության թերության մասին անհապաղ հայտնել զբոսաշրջային գործունեության սուբյեկտին, իսկ վերջինիս պարտավորեցնում՝ վերացնել թերությունները՝ բացառությամբ այն դեպքերի, եթե դա անհնարին է կամ պահանջում է անհամաչափ ծախսեր՝ նկատի ունենալով ծառայության թերությունը վերացնելու համար անհրաժեշտ ծախսերը և զբոսաշրջային ծառայության արժեքը: Եթե զբոսաշրջային փաթեթում ներառված ծառայությունների հիմնական մասը չի կարող մատուցվել, զբոսաշրջային գործունեության սուբյեկտը պարտավոր է սպառողին առաջարկել ավելի բարձր կամ նույն որակի զբոսաշրջային փաթեթ: Եթե այդպիսի ծառայություններ առաջարկելն անհնար է, կամ սպառողը հրաժարվել է դրանցից, սպա նա իրավունք ունի պահանջելու գնի իջեցում և/կամ վնասների հատուցում: Եթե փաթեթում ներառված է սպառողի փոխադրման ծառայությունը, զբոսաշրջային գործունեության սուբյեկտը պարտավոր է սպառողին համարժեք տրանսպորտային միջոցով սպառողի վերադարձը, իսկ արտակարգ և անխուսափելի հանգամանքների հետևանքով դրա անհնարինության դեպքում՝ առնվազն երեք օրվա համար կրել սպառողների կեցության ծախսերը: Սպառողի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում թերությունները չվերացնելու դեպքում վնասը հատուցելու պարտականությունը դարձյալ կրում է զբոսաշրջային գործունեության սուբյեկտը (հոդված 13):

¹³ Ծառայության թերությունների համար կատարողի հանդեպ կիրառվող նշված սանկցիաները պայմանագրային պարտավորության բովանդակությունից բխող ներգործության միջոցներ են, որոնք թեև դասական իմաստով քաղաքացիաիրավական պատասխանատվության միջոցներ չեն, սակայն դրանց կիրառումը տրամաբանորեն փոխկապակցված է ծառայության թերությունների հետևանքով սպառողին պատճառված վնասի հատուցման, այսինքն՝ քաղաքացիական պատասխանատվության հետ:

սուբյեկտ է նախատեսել միայն զբոսաշրջային գործունեության սուբյեկտ(ներ)ին:

Արտասահմանյան իրավաբանական գրականության մեջ զբոսաշրջային ծառայությունների մատուցման համար ԵՄ դիրեկտիվով նախատեսված պատասխանատվության մեխանիզմն առանձնացվում է որպես զբոսաշրջային գործունեության սուբյեկտների և զբոսաշրջային ծառայություններ մատուցողների պատասխանատվության հարաբերակցության երկու հնարավոր տարբերակներից մեկը: Այսպես, օրինակ, Թ. Աթերթոնը նշում է, որ ԵՄ երկրներում զբոսաշրջային օպերատորը (գործակալը) հանդես է գալիս որպես պայմանագրային պրինցիպալ, որը ստանձնում է այլ ենթակատարողների կողմից ծառայությունների մատուցումն ապահովելու պարտականություն: Ուստի որպես պրինցիպալ, որը ստանձնել է ամբողջ ճանապարհորդության համար պատասխանատվություն՝ զբոսաշրջային օպերատորը/գործակալը կարող է փաստացի ծառայություն մատուցողի¹⁴ հետ համատեղ կամ առանձին պատասխանատվություն կրել զբոսաշրջիկի առջև¹⁵:

Պատասխանատվության երկրորդ մոդելն, այսպես կոչված, «ամերիկյան մոդելն» է, երբ զբոսաշրջային օպերատորը/գործակալը հանդես է գալիս որպես ծառայություն մատուցողի և/կամ ուղևորի գործակալ, ուստի քանի որ վերջինս ծառայություն մատուցողի և պատվիրատուի միջև կնքված պայմանագրի կողմ չէ, չի կրում դրանից բխող պատասխանատվություն¹⁶: ԱՄՆ գրեթե բոլոր նահանգներում զբոսաշրջային գործունեության սուբյեկտները համարվում են պրինցիպալներ, որոնք «վարձում են» անկախ ծառայություններ մատուցողների՝ իրենց պարտատերերին՝ զբոսաշրջիկներին, ծառայություններ մատուցելու համար, բայց որին նրանք չեն վերահսկում կամ ղեկավարում: Հենց վերահսկողության կամ ղեկավարման բացակայությունն էլ, սովորաբար, զբոսաշրջային գործունեության սուբյեկտներին ազատում է ծառայություն մատուցողների գործողությունների/անգործության համար պատասխանատվությունից¹⁷: Պատահական չէ, որ ամերիկյան հեղինակներն իրենք են արձանագրում, որ եվրոպական իրավունքը, ի տարբերություն ամերիկյան իրավունքի, ապահովում է զբոսաշրջային փաթեթների սպառողների առավել լայն պաշտպանություն¹⁸:

Այս հարցում տարբերվող մոտեցում է որդեգրել ՌԴ օրենսդիրը՝ սահմանե-

¹⁴ Թեև հեղինակն այս միտքն արտահայտում է փոխադրման ծառայության առնչությամբ, սակայն հաջորդիվ արված վերլուծությունները ցույց են տալիս, որ այն վերաբերելի է նաև զբոսաշրջային փաթեթում ներառված այլ ծառայություններին:

¹⁵ St' u Atherton T., Unlimited liability for air passengers: The position of carriers, passengers, travel agents and tour operators under the IATA passenger liability scheme//Journal of air law and commerce, Volume 63, Issue 2, 1997, էջ 418:

¹⁶ St' u Atherton T., նշված աշխատ., էջ 417:

¹⁷ St' u Anolik A., Travel law, 1999, American Bar association, https://www.jstor.org/stable/23783270?readnow=1&refreqid=excelsior%3Aac34d7cb37de8965c802acdb5f3ced05&seq=2#page_scan_tab_contents

¹⁸ St' u Frank Alleweldt, Klaus Tonner, Marc Mcdonald, Study on safety and liability issues relating to package travel, 2008, էջեր 22, 25:

լով, որ զբոսաշրջային օպերատորը զբոսաշրջիկի կամ այլ պատվիրատուի առջև պատասխանատու է զբոսաշրջային արդյունքում (փաթեթում.- *Ե.Ս.*) ներառված զբոսաշրջային ծառայություններ մատուցող անձանց գործողությունների (անգործության) համար, եթե ՌԴ Ֆեդերալ օրենքներով և այլ նորմատիվ իրավական ակտերով նախատեսված չէ, որ զբոսաշրջիկի կամ այլ պատվիրատուի առջև պատասխանատու է երրորդ անձը¹⁹: Նման բացառություն ՌԴ օդային օրենսգրքով նախատեսված է կանոնավոր ավիափոխադրումների համար, որոնց համար պատասխանատվության սուբյեկտը ավիափոխադրողն է:

Հարկ է նշել, որ իրավաբանական գրականության մեջ որպես զբոսաշրջային փաթեթում ներառված զբոսաշրջային ծառայությունների համար պատասխանատվության առավել արդարացված և արդյունավետ մեխանիզմ միանշանակ ընդունվում է եվրոպական մոդելը: Ընդ որում, ի պաշտպանություն այս մոդելի՝ ներկայացվում են տարբեր փաստարկներ: Այսպես, Ս. Չավյալովան նշում է, որ զբոսաշրջային փաթեթում ներառված զբոսաշրջային ծառայությունները հիմնականում մատուցվում են այլ սուբյեկտների կողմից, ինչն էապես բարձրացնում է սպառողների իրավունքների խախտման վտանգը և որպես հետևանք պահանջում է նախատեսել լրացուցիչ երաշխիքներ, այդ թվում՝ զբոսաշրջային օպերատորի (զբոսաշրջային գործունեության սուբյեկտի.- *Ե.Ս.*) պատասխանատվությունն ընդլայնելու միջոցով²⁰: Յա. Վովաչը զբոսաշրջային գործունեության սուբյեկտների պատասխանատվությունը պայմանավորում է նրանով, որ ծառայությունը մատուցող երրորդ անձն իրավաբանորեն չի փոխարինում ճանապարհորդությունը կազմակերպելու պարտականություն ունեցող զբոսաշրջային օպերատորին. վերջինս դուրս չի գալիս իրավահարաբերությունից և շարունակում է մնալ ընդհուպ մինչև պարտավորությունը դադարելը²¹: Մի շարք հեղինակներ պատասխանատվության այս մեխանիզմը պայմանավորում են զբոսաշրջային փաթեթում ներառված ծառայություններ մատուցողների՝ զբոսաշրջային օպերատորի կոնտրագենտը լինելու հանգամանքով²²:

¹⁹ Տե՛ս Федеральный закон “Об основах туристской деятельности в Российской Федерации” от 24.11.1996 г., N 132-ФЗ, հոդված 9:

²⁰ Տե՛ս Завьялова С., նշված աշխատ., էջ 39:

²¹ Տե՛ս Вольвач Я., Гражданско-правовые способы защиты прав и интересов туриста по туристскому договору//Туризм: Право и экономика, 2005, N 5, էջեր 9-14:

²² Տե՛ս, օրինակ, Багичев Е.А., Ответственность субъектов туристской деятельности//Пробелы в российском законодательстве, N 2, 2012, էջ 69; Carlos Torres, Javier Melgosa Arcos, Laurence Jegouzo and others, Collective commentary about new Package travel directive, ESHTTE, 2020, էջեր 305-306; Отческий И., Защита прав потребителей в обязательствах по возмездному оказанию туристских услуг, М., “Юстицинформ”, 2017, էջ 82:

3. Չբոսաշրջային գործունեության սուբյեկտների և զբոսաշրջային ծառայություններ մատուցողների համագործակցությունը՝ որպես զբոսաշրջային ծառայությունների համար պատասխանատվության սուբյեկտի որոշիչ գործոն

Չբոսաշրջային փաթեթում ներառված զբոսաշրջային ծառայությունների համար պատասխանատվության սուբյեկտի հարցը սերտորեն կապված է զբոսաշրջային գործունեության սուբյեկտների և զբոսաշրջային ծառայություններ մատուցողների իրավահարաբերությունների այն շղթայի հետ, որն առաջանում է այդ փաթեթները ձևավորելու և դրանց շրջանակներում սպառողների ճանապարհորդությունները կազմակերպելու նպատակով:

Չբոսաշրջային փաթեթներ ձևավորելիս զբոսաշրջային օպերատորները զբոսաշրջային ծառայություններ մատուցողների հետ համագործակցում են պայմանագրային տարբեր կառուցակարգերի²³ շրջանակներում:

Այսպես, օրինակ, զբոսաշրջային օպերատորների և հյուրանոցային տնտեսության օբյեկտների՝ պրակտիկայում լայն կիրառություն ունեցող համագործակցության եղանակներից մեկը հյուրանոցային համարների ամրագրման պայմանագիր կնքելն է²⁴:

Թեև այս պայմանագիրն ունի մի շարք տարատեսակներ (երաշխավորված ամրագրման կամ կոմիտմենտի պայմանագիր, չերաշխավորված ամրագրման կամ էլոտմենտի պայմանագիր, ամբողջական վճարի դիմաց տեղերի կոշտ գնման կամ անհետկանչելի ամրագրման պայմանագիր, ընթացիկ ամրագրման պայմանագիր²⁵)՝ յուրաքանչյուրին բնորոշ առանձնահատկություններով, բայցևայնպես, դրանց բոլորի բովանդակությունը հանգում է նրան, որ այդ պայմանագրերով հյուրանոցային տնտեսության օբյեկտը պարտավորվում է զբոսաշրջային գործունեության սուբյեկտի հետ նախապես համաձայնեցված կամ ընթացիկ հարցմամբ որոշվող պայմաններով հյուրանոցային ծառայություններ մատուցել իր կոնտրագենտի հաճախորդին՝ պայմանագրում նշված կամ չնշված զբոսաշրջիկ(ներ)ին, որն, իր հերթին, զբոսաշրջային գործունեության սուբյեկտի կողմից տրամադրված վաուչերը հյուրանոցին ներկայացնելու պահից ձեռք է բերում իր օգտին հյուրանոցային ծառայությունների մատուցում պահանջելու իրավունք²⁶:

²³ Չբոսաշրջային օպերատորի և ծառայություններ մատուցողների համագործակցությունն իրականացվում է գործակալման, հանձնարարության, կոմիսիայի, երաշխավորված ամրագրման կամ կոմիտմենտի պայմանագիր, չերաշխավորված ամրագրման կամ էլոտմենտի պայմանագիր, ամբողջական վճարի դիմաց տեղերի կոշտ գնման կամ անհետկանչելի ամրագրման պայմանագիր, ընթացիկ ամրագրման պայմանագիր, փոխադրողների հետ՝ նաև ֆրախտի, տրանսպորտային միջոցում տեղերի քվոտայի և պայմանագրերի տարատեսակ այլ մոդելների հիման վրա:

²⁴ Օրինակ՝ ԵՂ/8212/02/19 քաղաքացիական գործի շրջանակներում կողմերի իրավահարաբերությունները կառուցված էին հենց այդ պայմանագրային կառուցակարգի հիման վրա (տե՛ս նշված գործով Երևան քաղաքի ընդհանուր իրավասության առաջին աստիճանի դատարանի 25.10.2019 թ. վճիռը):

²⁵ Ст'у Правовое обеспечение туризма, под ред. Е. Писаревского, Москва, 2014, էջ 169:

²⁶ Ст'у Кусков А., Сирик Н., Правовое регулирование туристской деятельности, Учебное пособие, М., Кнорус, 2018, էջ 263:

Ինչպես կարելի է նկատել, այս պայմանագրերը հոգուտ երրորդ անձի կնքված պայմանագրեր են: Հյուրանոցային համարների ամրագրման պայմանագրերի նկատմամբ հոգուտ երրորդ անձի կնքվող պայմանագրային կառուցակարգի կիրառելիության մասին են վկայում նաև միջազգային փաստաթղթերը, մասնավորապես՝ «Զբոսաշրջային գործակալությունների ասոցիացիաների համաշխարհային ֆեդերացիայի անդամ զբոսաշրջային գործակալությունների և Միջազգային հյուրանոցային ասոցիացիայի անդամ հյուրանոցների հարաբերությունների օրենսգիրք»-ը և «Միջազգային հյուրանոցային կանոններ»-ը²⁷:

Այս համատեքստում հարկ ենք համարում անդրադառնալ հոգուտ երրորդ անձի կնքվող պայմանագրերի որոշ առանձնահատկությունների: Այսպես, ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 446-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հոգուտ երրորդ անձի է համարվում այն պայմանագիրը, որում կողմերը սահմանել են, որ պարտապանը պարտավոր է պարտավորությունը կատարել ոչ թե հոգուտ պարտատիրոջ, այլ պայմանագրում նշված կամ չնշված երրորդ անձի, որն իրավունք ունի պարտապանից պահանջելու իր օգտին կատարելու պարտավորությունը:

Խոսելով երրորդ անձի կարգավիճակի մասին՝ պետք է նշել, որ թեև քաղաքացիական իրավունքի գիտության մեջ այս հարցում կան միանգամայն տարբեր տեսակետներ²⁸, այնուամենայնիվ, անվիճելի է, որ երրորդ անձի կողմից իր օգտին կնքված պայմանագրից բխող պարտավորության կատարման պահանջ ներկայացնելու պահից պարտապանը պարտավորությունը պատշաճ կատարելու պարտականություն է կրում հենց նրա առջև:

Միևնույն ժամանակ, երրորդ անձի հետ որոշակի իրավական կապի մեջ է հայտնվում նաև պարտատերը: Կախված պայմանագրային հարաբերություններից երրորդ անձի մասնակցության հանգամանքներից՝ վերջինս պահանջներ ներկայացնելու իրավունք կարող է ձեռք բերել ինչպես այն անձի դեմ, որը տվյալ պայմանագրով ձեռք է բերում իրավունքներ, այնպես էլ այն անձի դեմ, որը ձեռք

²⁷ St'u Code of practice on the relations between hoteliers and travel agencies of 03/07/1991, <https://www.wko.at/oe/tourismus-freizeitwirtschaft/reisebueros/kooperationsabkommen-engl.-ihrauftaa-code-of-practice.pdf>; "International hotel rules" of 02/11/1981: Նշված ակտերում թեպետ որպես հյուրանոցային ծառայություններ մատուցողների կոնտրագենտ մատնանշվում է զբոսաշրջային ընկերությունը, որը որպես պայմանագրի կողմ ստանձնում է նաև հյուրանոցային ծառայությունների դիմաց վճարելու պարտականություն, ինչպես նաև պարտավորության խախտման դեպքում ունի կրած փաստացի վնասների հատուցում պահանջելու իրավունք, սակայն հյուրանոցային ծառայություններից օգտվելու իրավունքը պատկանում է զբոսաշրջային ընկերության հաճախորդներին (հյուրին):

²⁸ Որոշ հեղինակներ գտնում են, որ երրորդ անձը պայմանագրի կողմ չէ, և անգամ պահանջի իրավունքից օգտվելու ցանկություն հայտնելու փաստի ուժով անգամ ձեռք չի բերում այդպիսի կարգավիճակ: Մյուսների կարծիքով երրորդ անձը պայմանագրի ինքնուրույն կողմ է: Երրորդների կարծիքով՝ նա հանդես է գալիս որպես «քվազի-պարտատեր», որն օժտված է միայն պահանջի իրավունքով: Այս մասին տե՛ս Чурилов А., Договор в пользу третьего лица: Вопросы доктрины// Актуальные проблемы экономики и права, 2016, N 4:

է բերում պարտականություններ²⁹: Փաստորեն, երրորդ անձը, չդասվելով կոնտրազենտների թվին, իրավաբանական նշանակություն ունեցող կապի մեջ կարող է հայտնվել ինչպես կոնտրազենտներից մեկի, այնպես էլ երկուսի հետ³⁰:

Այսպիսով, հյուրանոցային ծառայությունների մատուցման համար պատասխանատվության սուբյեկտի որոշման համար էական նշանակություն ունի այն, թե հյուրանոցային ծառայությունների մատուցման պարտավորությունը խախտելու դեպքում զբոսաշրջային գործունեության սուբյեկտը՝ որպես պարտատեր, սպառողի՝ երրորդ անձի առջև իր կոնտրազենտ հյուրանոցի (պարտապանի) կողմից թույլ տրված խախտումների համար կրո՞ւմ է արդյոք պատասխանատվություն, թե՞ ոչ:

Հարկ է նշել, որ հոգուտ երրորդ անձի կնքված պայմանագրերով պարտատիրոջ կողմից երրորդ անձի նկատմամբ որոշակի «հոգաձություն» ցուցաբերելու թեզը լայնորեն տարածված է արտասահմանյան իրավունքում: Օրինակ՝ գերմանական իրավունքում որպես հոգուտ երրորդ անձի կնքված պայմանագրի առանձին տեսակ՝ առանձնացվում են, այսպես կոչված, «երրորդ անձի նկատմամբ պաշտպանական ազդեցությամբ» (Vertrag mit Schutzwirkung zugunsten Dritter) պայմանագրերը, որոնց շրջանակներում երրորդ անձը չի մասնակցում պայմանագրի կնքմանը, ուղղակիորեն չի մասնակցում նաև դրա կատարմանը, սակայն պարտապանի կողմից պայմանագիրը չկատարելը կամ ոչ պատշաճ կատարելը կարող է վերջինիս համար առաջացնել անբարենպաստ հետևանքներ, հաճախ՝ նույն հետևանքները, ինչ պարտատիրոջ համար: Այդպիսով, երրորդ անձը պարտատիրոջ հանդեպ թեև չունի պայմանագրի կատարում պահանջելու իրավունք, բայց պարտապանի կողմից պայմանագիրը չկատարելու դեպքում իրավունք ունի պարտատիրոջից պահանջելու վնասների հատուցում³¹:

Այս տեսության հիման վրա Գերմանիայի Գերագույն դատարանը հաստատել է պարտատիրոջ կողմից երրորդ անձի նկատմամբ «հոգ տանելու» պարտականությունը (Sorgenpflichten)³²: Մասնավորապես, իր որոշումներից մեկում Դատարանն ընդգծել է երրորդ անձի «նակատագրի» համար պատասխանատվության անհրաժեշտությունն այն դեպքում, երբ խոսքը նույնական բովանդակությամբ զանգվածաբար կնքվող գործարքների մասին է: Ընդ որում՝ գերմանական իրավունքում մատնանշվում են երրորդ անձի նկատմամբ պաշտպանության այս մեխանիզմի կիրառման համար անհրաժեշտ պայմանները, որոնցից մեկն այն է, որ երրորդ անձն այնքան ներգրավված լինի պայմանագրային հարաբերությունների մեջ, որ պարտապանի կողմից պայմանագիրը չկա-

²⁹ St'u H. Saliko, E. Bezatliu, Third parties' rights in a contract and the effect of the contract// Global journal of politics and law research, Vol.6, No.3, pp.19-25, May 2018, էջ 7:

³⁰ St'u Брагинский М., Витрянский В., Договорное право, Книга первая, Изд. 3-е, М., Статут, 2001, էջ 201:

³¹ St'u Бибикова Е., Договор в пользу третьего лица в российском и европейском частном праве: сравнительно-правовой обзор// Вестник экономического правосудия Российской Федерации N 12/2017, էջ 114:

³² St'u Бибикова Е., նշված աշխատ., էջեր 117-120:

տարելը կամ ոչ պատշաճ կատարելը վերջինիս համար ունենա նույն ռիսկերը, ինչ պարտատիրոջ համար: Բացի այդ, անհրաժեշտ է, որ երրորդ անձը պարտատիրոջ հետ գտնվի այնպիսի հարաբերության մեջ, որ երրորդ անձի պաշտպանությունը միևնույն ժամանակ լինի պարտատիրոջ հոգաձույթյան առարկա, և, համապատասխանաբար, այդ շահը բխի պայմանագրից³³:

Ավտորիական մասնավոր իրավունքում նույնպես ընդունված է այն մոտեցումը, որ պայմանագրի կողմերը հոգաձույթուն և հեռատեսություն դրսևորելը՝ որպես պայմանագրային պարտականություն, կրում են ոչ միայն իրենց կոնտրագենտների, այլև երրորդ անձանց նկատմամբ, երբ նրանց շահերը փոխպայմանավորված են: Պարտատիրոջ և երրորդ անձանց միջև նման փոխադարձ վստահություն կարող է լինել այն դեպքում, երբ, օրինակ, պարտատերն ունի կոնկրետ երրորդ անձի պաշտպանության շահ կամ **պարտատերը երրորդ անձի նկատմամբ ունի պարտավորություն**, կամ կրում է երրորդ անձի նկատմամբ հսկողության կամ հոգաձույթյան պարտականություն³⁴:

Այսպիսով, հոգուտ երրորդ անձի կնքված պայմանագրերով պարտավորության կատարման նկատմամբ պարտատիրոջ վերահսկողությունը, համապատասխանաբար՝ պարտավորության խախտման դեպքում պատասխանատվություն կրելը արևմտյան պայմանագրային իրավունքում ընդունված կանոն է: Թերևս այս կանոնի դրսևորում է նաև ԵՄ դիրեկտիվով ամրագրված՝ զբոսաշրջային փայթեթների համար զբոսաշրջային գործունեության սուբյեկտների պատասխանատվության մեխանիզմը:

Սակայն գործնականում ինչպես հյուրանոցային տնտեսության օբյեկտների, այնպես էլ այլ զբոսաշրջային ծառայություններ մատուցողների և զբոսաշրջային գործունեության սուբյեկտների համագործակցությունը ոչ միշտ է իրականացվում հոգուտ երրորդ անձի կնքված պայմանագրային մոդելով: Հայրենական պրակտիկայի ուսումնասիրությունը վկայում է, որ հատկապես տեղական հյուրանոցների հետ զբոսաշրջային օպերատորները հիմնականում համագործակցում են գործակալության պայմանագրի հիման վրա:

Գործակալության պայմանագրով գործակալը իրավաբանական և այլ գործողություններ կարող է իրականացնել ինչպես իր, այնպես էլ պրինցիպալի անունից (Քաղ. օր., հոդված 806): Գործնականում առավել հաճախ հանդիպում են այսպես կոչված «հանձնարարության պայմանագրի մոդելով» գործակալության պայմանագրեր, որոնց շրջանակներում զբոսաշրջային գործունեության սուբյեկտները պարտավորվում են պրինցիպալի՝ հյուրանոցային տնտեսության օբյեկտի անունից և վերջինիս հաշվին սպառողների հետ կնքել հյուրանոցային ծառայությունների մատուցման պայմանագրեր, որոնցով, ըստ գործակալության պայմանագիրը կանոնակարգող քաղաքացիաիրավական նորմերի, իրավունքներ և

³³ Տե՛ս Бибикина Е., նշված աշխատ., նույն տեղում:

³⁴ Տե՛ս Бибикина Е., նշված աշխատ., էջ 124:

պարտականություններ, համապատասխանաբար՝ պայմանագրի խախտման համար պատասխանատվություն է կրում պրինցիպալը՝ հյուրանոցային տնտեսության օբյեկտը³⁵: Հազվադեպ հանդիպում են նաև «կոմիսիայի» մոդելով կնքված գործակալական պայմանագրեր, որոնք, որպես զբոսաշրջային փաթեթի շրջանակներում մատուցվող ծառայությունների համար պատասխանատու սուբյեկտ, նախատեսում են զբոսաշրջային գործունեության սուբյեկտին³⁶:

Բացի այդ, հաճախ զբոսաշրջային գործունեության սուբյեկտները ճանապարհորդություններ են կազմակերպում ոչ թե զբոսաշրջային օպերատորի հետ պայմանագրային հարաբերությունների մեջ գտնվող զբոսաշրջային ծառայություններ մատուցողների ծառայությունների հիման վրա ձևավորված/ձևավորվող զբոսաշրջային փաթեթների, այլ սպառողի նախընտրած զբոսաշրջային ծառայությունների համակցմամբ ձևավորվող փաթեթների հիման վրա, որոնք մատուցողների հետ զբոսաշրջային գործունեության սուբյեկտները պայմանագրային հարաբերությունների մեջ չեն գտնվում³⁷:

Պրակտիկայում վաղուց ի վեր կիրառվող այս մեխանիզմի իրավական ամրագրման անհրաժեշտությունը շեշտել է նաև ԵՄ արդարադատության դատարանը՝ արձանագրելով, որ փաթեթ պետք է համարվի ոչ միայն զբոսաշրջային գործունեության սուբյեկտի կողմից նախապես ձևավորված, այլև սպառողի պատվերով կամ ընտրությամբ համակցվող ծառայություններ³⁸:

ԵՄ Դատարանի այս դիրքորոշումը բխում էր այն իրողությունից, որ զբոսաշրջային ծառայությունները գործնականում համախմբվում են տարբեր եղանակներով: Ուստի, Դատարանն իրավացիորեն արձանագրեց, որ անհրաժեշտ է փաթեթ համարել զբոսաշրջային ծառայությունների այն բոլոր համալիրները, որոնք պարունակում են ճանապարհորդների կողմից սովորաբար փաթեթների հետ ասոցացվող հատկանիշները, հատկապես, եթե դրանք զբոսաշրջային գործունեության սուբյեկտի կողմից միավորվել են որպես միասնական զբոսաշրջային արդյունք, որի համար վերջինս ստանձնել է պատասխանատվություն: Ընդ որում, տարբերություն չկա՝ ծառայությունները համախմբվել են նախքան սպառողի հետ պայմանագիր կնքելը, թե վերջինիս ընտրության հիման վրա³⁹:

³⁵ Օրինակ՝ թիվ ԱԲԴ/0299/02/19, ԱՎԴ/0055/02/18, ԿԴ3/0162/02/19 քաղաքացիական գործերով կողմերի իրավահարաբերությունները ձևակերպված են եղել այդ եղանակով:

³⁶ Տե՛ս օրինակ՝ <http://www.armtt.info/docs/paymanagir-new.pdf> (հղումը հասանելի է 25.04.2024 թ. դրությամբ):

³⁷ Այդ դեպքում զբոսաշրջային օպերատորները, համապատասխան ծառայությունը ներառելով փաթեթում, սպառողից գանձում են մատուցվող ծառայության արժեքից բարձր գին՝ արժեքի տարբերությունն օգտագործելով որպես եկամուտ:

³⁸ Տե՛ս Judgment of the Court of Justice of European Union, 30 April 2002, Case C-400/00, <https://curia.europa.eu/juris/showPdf.jsf?text=&docid=47312&pageIndex=0&doclang=en&mode=lst&dir=&occ=first&part=1&cid=568521>.

³⁹ Տե՛ս Landini S., Travel and tourism contracts, Design of Sustainable Tourism System, “Antezza”, 2013, էջ 65:

Ջրոսաշրջիկի պատվերի հիման վրա զբոսաշրջային փաթեթներ ձևավորելու իրավական հնարավորություն նախատեսվել է նաև Օրենքով: Այսպես, Օրենքը զբոսաշրջային փաթեթը բնորոշում է որպես միևնույն այցելության ընթացքում առնվազն երկու տարբեր տեսակի զբոսաշրջային ծառայությունների համալիր, եթե զբոսաշրջային ծառայությունները համակցվում են **(ներառյալ զբոսաշրջիկի ընտրությամբ)** զբոսաշրջային գործունեության միևնույն սուբյեկտի կողմից նախքան զբոսաշրջային փաթեթի մեկ միասնական պայմանագիր կնքելը, *կամ առանձնացված պայմանագրեր կնքելու դեպքում այդ զբոսաշրջային ծառայությունները՝*

- ա. ձեռք են բերվում զբոսաշրջային գործունեության միևնույն սուբյեկտից և համակցվում են մինչև գործարքի վճարման համար համաձայնություն տալը կամ
- բ. առաջարկվում, իրացվում են, կամ դրանց դիմաց վճարումը կատարվում է պայմանագրի ամբողջական գնով, իսկ առանձնացված պայմանագրերի դեպքում՝ այդ պայմանագրերի հանրագումարով (ներառական գին), կամ
- գ. գովազդվում կամ իրացվում են «զբոսաշրջային փաթեթ» կամ նմանատիպ այլ եզրույթի կիրառմամբ կամ
- դ. զբոսաշրջիկի հետ պայմանագիր կնքելուց հետո համակցվում են զբոսաշրջիկի ընտրությամբ կամ
- ե. ձեռք են բերվում զբոսաշրջային գործունեության տարբեր սուբյեկտներից միմյանց հետ կապված առցանց ամրագրման ընթացակարգերով, երբ զբոսաշրջիկի հետ առաջին պայմանագիրը կնքած անձի կողմից զբոսաշրջիկի անձնական տվյալները, էլեկտրոնային փոստի հասցեն և վճարման պայմանները փոխանցվում են ծառայություններ մատուցող երրորդ անձանց, իսկ ծառայություններ մատուցող երրորդ անձանց հետ պայմանագրերը կնքվում են առաջին զբոսաշրջային ծառայության ամրագրման հաստատումից հետո՝ 24 ժամվա ընթացքում (հոդված 3, մաս 1, կետ 12):

Այսպիսով, զբոսաշրջային փաթեթի օրենսդրական հասկացությունից բխում է, որ փաթեթների ձևավորման ավանդական եղանակից բացի, որը ենթադրում է զբոսաշրջային օպերատորի կողմից փաթեթում ներառվող ծառայությունների ընտրություն և դրանք մատուցողների հետ պայմանագրային հարաբերությունների հաստատում, նախատեսվել է նաև փաթեթների ձևավորման նոր եղանակ, այն է՝ զբոսաշրջային ծառայություններ մատուցողների և սպառողի միջև առանձնացված պայմանագրեր կնքելու միջոցով զբոսաշրջային գործունեության սուբյեկտի կողմից համակցվող փաթեթներ, եթե միաժամանակ առկա է օրենքով նախատեսված պայմաններից առնվազն մեկը:

Սա նշանակում է, որ անգամ այն դեպքում, երբ սպառողն ինքն է դառնում ծառայություն մատուցողի հետ կնքվող պայմանագրի կողմ, զբոսաշրջային օպե-

րատորի կողմից նման ծառայությունները համակցելու դեպքում, եթե առկա է նաև Օրենքի 3-րդ հոդվածի 1-ին մասի 12-րդ կետի «ա-ե» պարբերություններով նախատեսված պայմաններից մեկը, կարելի է խոսել զբոսաշրջային փաթեթ ձևավորելու մասին: Միևնույն ժամանակ, զբոսաշրջային փաթեթների ձևավորման այս տարբերակի դեպքում նույնպես պարզ չէ՝ ով է սպառողին մատուցվող զբոսաշրջային ծառայությունների համար պատասխանատվության սուբյեկտը⁴⁰:

Կարծում ենք՝ զբոսաշրջային գործունեության սուբյեկտների և զբոսաշրջային ծառայություններ մատուցողների փոխգործակցության՝ նման տարատեսակ եղանակները և պարտավորության խախտման համար պատասխանատվության սուբյեկտի հարցում առկա ոչ միատեսակ, հաճախ նաև հակասական պրակտիկան զբոսաշրջային ծառայությունների համար պատասխանատվության միասնական և իմպերատիվ կանոնների բացակայության հետևանք է, ինչը դժվար է արդարացված համարել: Ուստի, գտնում ենք, որ պատասխանատվության հատակ մեխանիզմ նախատեսելը զբոսաշրջության զարգացման ժամանակակից պայմաններում անհերքելի անհրաժեշտություն է: Ավելին, կարծում ենք՝ իմպերատիվ նորմերով պատասխանատվության հատակ մեխանիզմ նախատեսելը թույլ կտա զբոսաշրջային գործունեության սուբյեկտների և զբոսաշրջային ծառայությունների մատուցողների պայմանագրային հարաբերությունները հետայսու կառուցել դրան համապատասխան՝ ապահովելով զբոսաշրջային ծառայությունների համար պատասխանատվության միասնական և կայուն պրակտիկա:

Ամփոփելով կատարված ուսումնասիրությունները՝ կարծում ենք, որ, հիմք ընդունելով զբոսաշրջային օպերատորի կողմից զբոսաշրջային փաթեթ ձևավորելու (անկախ նրանից՝ ձևավորումն իրականացվում է իր կոնտրագենտների, թե սպառողի նախընտրած զբոսաշրջային ծառայություններ մատուցողների կողմից առաջարկվող ծառայությունների համակցմամբ) և դրա շրջանակներում անձամբ կամ զբոսաշրջային գործակալի միջոցով կամ նրա հետ համատեղ սպառողի ճանապարհորդությունը կազմակերպելու պարտականություն ստանձնելու հանգամանքները, օրենսդրորեն անհրաժեշտ է ամրագրել այդ փաթեթներում ներառված զբոսաշրջային ծառայությունների համար զբոսաշրջային գործունեության սուբյեկտների պատասխանատվությունը՝ բացառությամբ այն զբոսաշրջային ծառայությունների, որոնց համար, դրանց առանձնահատկություններից ելնելով, օրենքով նախատեսված է ծառայությունն անմիջականորեն մատուցողի պատասխանատվությունը⁴¹:

Ըստ մեզ՝ պատասխանատվության նման մեխանիզմը ոչ միայն կապահովի սպառողների իրավունքների առավել արդյունավետ պաշտպանություն, այլև այն

⁴⁰ Տե՛ս Landini S., նշված աշխատ., էջ 65:

⁴¹ Մասնավորապես՝ պատասխանատվության սուբյեկտի հարցում նման առանձնահատկություն նախատեսված է փոխադրման պարտավորության համար, որի խախտման համար պատասխանատվության սուբյեկտը թե՛ << քաղաքացիական օրենսդրությամբ, թե՛ << իրավական համակարգի մաս կազմող կոնվենցիաների համաձայն՝ հենց փոխադրողն է:

առավելագույնս համապատասխանում է կողմերի պայմանագրային հարաբերությունների էությանը. չէ՞ որ սպառողի ճանապարհորդությունը ոչ թե ինքնուրույն, այլ զբոսաշրջային շուկայի պրոֆեսիոնալ մասնակիցների միջոցով կազմակերպելը և այդ նպատակով վերջիններիս հետ պայմանագիր կնքելն ինքնանպատակ չէ. դա սպառողի մոտ ձևավորում է ճանապարհորդությունը կազմակերպելու, այդ թվում՝ դրա ընթացքում մատուցվող ծառայությունների հետ կապված ցանկացած թերության դեպքում զբոսաշրջային գործունեության սուբյեկտ(ներ)ի կողմից օպերատիվ արձագանքելու, համարժեք միջոցներ ձեռնարկելու, իսկ համապատասխան դեպքերում պատասխանատվություն կրելու իրավաչափ ակնկալիք:

Չբոսաշրջային օպերատորների կողմից զբոսաշրջային ծառայությունների կենտրոնացված համակարգումը երաշխավորում է առավել մեծ արդյունք, այդ թվում՝ ճանապարհորդության ընթացքում հնարավոր սխալների և զբոսաշրջային ծառայությունների մատուցողների կողմից սպառողին մատուցվող ծառայությունների ոչ ճիշտ համակարգումը բացառելու միջոցով: Այլ կերպ ասած՝ զբոսաշրջային գործունեության սուբյեկտների գործունեությունն առավել արդյունավետ կերպով է լուծում ճանապարհորդության ընթացքում զբոսաշրջային ծառայությունների մատուցման գործընթացի համակարգումը՝ ի տարբերություն այն դեպքերի, երբ սպառողն ինքն է ստիպված լինում համակարգել զբոսաշրջային արդյունքի բոլոր բաղադրիչների մատուցումը՝ մի շարք պայմանագրեր կնքելու միջոցով⁴²:

Նույն տրամաբանությամբ պատասխանատվության այս մոդելը, ըստ մեզ, պետք է կիրառվի նաև տուրերի, այսինքն՝ ընդհանուր գնով առաջարկվող կամ «իրացվող» գիշերակաց չընդգրկող և 24 ժամը չզերազանցող տևողությամբ զբոսաշրջային ծառայությունների համալիրների դեպքում:

Եզրակացություն

Թեև բոլորովին վերջերս՝ 2023 թ. ընդունված «Չբոսաշրջության մասին» օրենքով փորձ է արվել հայրենական օրենսդրական կարգավորումները մոտարկելու ԵՄ դիրեկտիվի կարգավորումներին, սակայն նշված օրենքի կարգավորման առարկայից անհասկանալի կերպով դուրս է մնացել զբոսաշրջային ծառայությունների համար պատասխանատվության հարցը: Մինչդեռ, օրենսդրությունը զբոսաշրջիկների ճանապարհորդությունը կազմակերպելու պարտավորության շրջանակներում զբոսաշրջային փաթեթներում ներառված զբոսաշրջային ծառայությունների մատուցման համար պատասխանատվության հստակ մեխանիզմ նախատեսելը զբոսաշրջության ոլորտը կանոնակարգող միջազգային իրավական փաստաթղթերի, ինչպես նաև արդի զբոսաշրջային պրակտիկայի անհերքելի պահանջներից է:

⁴² St'u Aleix Calveras, What do tour operators do? Internet and the economics of the intermediation in the tourism industry, Universitat de les Illes Balears, 2006, էջ 7:

Միջազգային պրակտիկայում այդ ծառայությունների համար պատասխանատվության սուբյեկտի հարցում գոյություն ունի երկու հիմնական մոդել: Այսպես կոչված «եվրոպական» մոդելը ենթադրում է, որ զբոսաշրջային փաթեթներում ներառված զբոսաշրջային ծառայությունների համար պատասխանատվության սուբյեկտը զբոսաշրջային գործունեության սուբյեկտներն են՝ անկախ նրանից, թե ում կողմից են մատուցվում այդ ծառայությունները: Երկրորդ՝ «ամերիկյան» մոդելը ենթադրում է յուրաքանչյուր զբոսաշրջային ծառայության համար դա մատուցողի պատասխանատվությունը:

ՀՀ դատական պրակտիկայի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ օրենսդրական կարգավորումների իսպառ բացակայության պայմաններում զբոսաշրջային գործունեության սուբյեկտները և զբոսաշրջային ծառայությունները մատուցողները համագործակցում են քաղաքացիաիրավական տարբեր պայմանագրերի հիման վրա՝ որպես սպառողին մատուցվող ծառայությունների համար պատասխանատվության սուբյեկտ մի դեպքում նախատեսելով նրանցից մեկին, մյուս դեպքում՝ մյուսին: Ավելին, գործնականում լայն տարածում ունի նաև սպառողի ընտրությամբ այնպիսի զբոսաշրջային ծառայությունների համակցմամբ զբոսաշրջային փաթեթներ ձևավորելը, որոնք մատուցողների հետ զբոսաշրջային գործունեության սուբյեկտները պայմանագրային հարաբերությունների մեջ առհասարակ չեն գտնվում:

Զբոսաշրջային գործունեության սուբյեկտների և զբոսաշրջային ծառայություններ մատուցողների համագործակցության՝ նման տարատեսակ եղանակների պայմաններում պատասխանատվության սուբյեկտի հարցում առկա հակասական պրակտիկան բացառելու նպատակով անհրաժեշտ է օրենսդրորեն ամրագրել զբոսաշրջային փաթեթում ընդգրկված ծառայությունների համար պատասխանատվության հստակ մոդել, ինչը թույլ կտա զբոսաշրջության ոլորտում պայմանագրային հարաբերությունները հետայսու ձևակերպել այդ մոդելը հիմք ընդունելով:

Հաշվի առնելով զբոսաշրջային օպերատորի կողմից զբոսաշրջային փաթեթ ձևավորելու, ինչպես նաև զբոսաշրջային ծառայությունների մատուցման ողջ գործընթացը համակարգելու՝ զբոսաշրջային գործունեության սուբյեկտների պարտականությունը՝ որպես զբոսաշրջային փաթեթում ներառված զբոսաշրջային ծառայությունների համար պատասխանատվության պատշաճ սուբյեկտ՝ անհրաժեշտ է ամրագրել զբոսաշրջային գործունեության սուբյեկտներին, բացառությամբ առանձին զբոսաշրջային ծառայությունների համար պատասխանատվության դեպքի:

Գրականության ցանկ (reference list, список литературы)

1. Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգիրք, ՀՕ-239, ընդունվել է 05.05.1998 թ., ուժի մեջ է մտել 01.01.1999 թ., ՀՀՊՏ 1998.08.10/17(50):
The Civil Code of the Republic of Armenia, LA-239 (adopted on 05.05.1998, entered into force on 01.01.1999, Official Gazette of the Republic of Armenia 1998.08.10/17(50).
2. «Զբոսաշրջության մասին» ՀՀ օրենք, ՀՕ-4-Ն, ընդունվել է 22.12.2023 թ., ուժի մեջ է մտնելու՝ 01.09.2024 թ., սկզբնաղբյուրը՝ միասնական կայք 2024.01.9-2024.01.21:
“Law on tourism” of RA, adopted on 22.12.2023, will come into force on 01.09.2024.
3. «Սպառողների իրավունքների պաշտպանության մասին» ՀՀ օրենք, ՀՕ-197, ընդունվել է 26.06.2001 թ., ուժի մեջ մտել՝ 01.01.2002 թ., ՀՀՊՏ 2001.08.02/25(157):
Law of the Republic of Armenia “On Protection of Consumer Rights”, adopted on 26.06.2001, entered into force on 01.01.2002, Official Gazette of the Republic of Armenia 2001.08.02/25(157):
4. Comprehensive and enhanced partnership agreement between the European Union and the European atomic energy community and their member states, of the one part, and the Republic of Armenia, of the other part, signed on 24.12.2017, ratified by the National Assembly of RA on 18.04.2018).
5. Code of practice on the relations between hoteliers and travel agencies of 03/07/1991, <https://www.wko.at/oe/tourismus-freizeitwirtschaft/reisebueros/kooperationsabkommen-engl.-ihra-uftaa-code-of-practice.pdf>
6. Directive (EU) 2015/2302 of the European Parliament and of the Council of 25 November 2015 “On package travel and linked travel arrangements”, amending Regulation (EC) No 2006/2004 and Directive 2011/83/EU of the European Parliament and of the Council and repealing Council Directive 90/314/EEC.
7. “International hotel rules” of 02/11/1981.
8. Федеральный закон РФ “Об основах туристской деятельности в Российской Федерации” от 24.11.1996.
Federal law of the Russian Federation of 24.11.1996 “About basis of tourism activity in Russian Federation”.
9. Aleix Calveras, What do tour operators do? Internet and the economics of the intermediation in the turism industry, Universitat de les Illes Balears, 2006.
10. Anolik A., Travel law, 1999, American Bar association,
<https://www.jstor.org/stable/23783270?readnow=1&refreqid=excelsior%3Aac34d>

7cb37de8965c802acdb5f3ced05&seq=2#page_scan_tab_contents.

11. C. Torres, J. Melgosa Arcos, L. Jegouzo and others, Collective commentary about new Package travel directive, “ESHTE” pub. house, 2020;
<https://intranet.eshte.pt/collectivecommentary>.
12. Atherton T., Unlimited liability for air passengers: The position of carriers, passengers, travel agents and tour operators under the IATA passenger liability scheme//Journal of air law and commerce, Volume 63, Issue 2, 1997.
13. Frank Alleweldt, Klaus Tonner, Marc McDonald, Study on safety and liability issues relating to package travel, 2008.
14. H. Saliko, E. Bezatliu, Third parties’ rights in a contract and the effect of the contract// Global journal of politics and law research, Vol.6, No.3, pp.19-25, May 2018.
15. Landini S., Travel and tourism contracts, Design of Sustainable Tourism System, “Antezza”, 2013.
16. Батищев Е.А., Ответственность субъектов туристской деятельности//Пробелы в российском законодательстве, N 2, 2012.
Batishev E.A., Liability of subjects of tourist activity//Gaps in russian legislation, N 2, 2012.
17. Бибикова Е., Договор в пользу третьего лица в российском и европейском частном праве: сравнительно-правовой обзор//Вестник экономического правосудия Российской Федерации N 12/2017.
Bibikova E., Contract for the benefit of third persons in Russian and European private law: comparative legal review// Herald of economic justice of the Russian Federation N 12/2017.
18. Брагинский М., Витрянский В., Договорное право, Общие положения, Книга первая, издание 3-е, М., изд. Статут, 2001.
Braginski M., Vitryanski V., “Contract Law, General Provisions”, Book One, 3rd edition, M., “Statute“ pub. house, 2001.
19. Вольвач Я., Гражданско-правовые способы защиты прав и интересов туриста по туристскому договору//Туризм: Право и экономика, 2005, N 5.
Volvach Ya., Civil legal means of protection of rights and interests of tourists under a tourism contract// Tourism: Law and Economics, 2005, N 5.
20. Гражданское право в 2 т-х, под ред. Б. Гонгало, Том 2, 2-е изд., М., Статут 2017
Civil law in 2 chapters, edited by Gongalo B., M., Statute, 2017.
21. Завьялова С., Проблемы гражданско-правового регулирования туристской деятельности в Российской Федерации, Монография, М., Проспект, 2016.
Zavyalova S., Issues on civil legal regulation of tourist activity in Russian Federation, Monograph, M., Prospekt, 2016.

22. Кусков А., Сирик Н., Правовое регулирование туристской деятельности, Учебное пособие, М., Кнорус, 2018.
Kuskov A., Sirik N., Legal regulation of tourist activity, Study guide, M., Snorus, 2018.
23. Отческий И., “Защита прав потребителей в обязательствах по возмездному оказанию туристических услуг, Монография, М., изд. “Юстицинформ”, 2017.
Otcheskiy I., “Protection of consumer rights in obligations for the provision of tourist services”, Monography, M., “Justitsinform” pub. house, 2017.
24. Правовое обеспечение туризма, под ред. Е. Писарева, Москва, 2014
Legal provision of tourism, edited by Pisarevsky E., Moscow 2014.
25. Чурилов А., Договор в пользу третьего лица: Вопросы доктрины// Актуальные проблемы экономики и права, 2016, N 4.
Churilov A., Contract for the benefit of third persons: Doctrinal issues// Current problems of economics and law.
26. Երևան քաղաքի ընդհանուր իրավասության դատարանի՝ 06.12.2018 թ. թիվ ԵԴ/18918/02/18 քաղաքացիական գործով վճիռը:
Court of General Jurisdiction of Yerevan City: 06.12.2018 the judgment in the civil case No. ED/18918/02/18
27. Երևան քաղաքի ընդհանուր իրավասության դատարանի 25.10.2019 թ. թիվ ԵԴ/8212/02/19 գործով վճիռը:
Court of General Jurisdiction of Yerevan City: 25.10.2019 the judgment in case No. ED/8212/02/19
28. ՀՀ Արարատի և Վայոց Ձորի մարզերի ընդհանուր իրավասության դատարանի 04.07.2018 թ. թիվ ԱՎԴ/0055/02/18 քաղաքացիական գործով վճիռը:
Court of General Jurisdiction of Ararat and Vayots Dzor regions of RA: 07.04.2018 the judgment in the civil case No. AVD/0055/02/18.
29. ՀՀ Արմավիրի մարզի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի 03.09.2019 թ. թիվ ԱԲԴ/0299/02/19 քաղաքացիական գործով վճիռը:
Court of first instance of general jurisdiction of Armavir region of RA: 03.09.2019 the judgment in the civil case No. ARD/0299/02/19.
30. ՀՀ Կոտայքի մարզի ընդհանուր իրավասության դատարանի 02.08.2019 թ. թիվ ԿԴ3/0162/02/19 քաղաքացիական գործով վճիռը:
Court of General Jurisdiction of Kotayk Marz, RA: 02.08.2019 the judgment in the civil case No. KD3/0162/02/19.
31. Judgment of the Court of Justice of European Union, 30 April 2002, Case C-400/00, <https://curia.europa.eu/juris/showPdf.jsf?text=&docid=47312&pageIndex=0&doclang=en&mode=lst&dir=&occ=first&part=1&cid=568521>

Eva Saghoyan

*Adviser to the Prosecutor General of the Republic of Armenia,
Ph.D. student at Civil Law Chair, Faculty of Law, Yerevan State University*

SUBJECT OF CIVIL LIABILITY FOR TOURIST SERVICES CONTAINING PACKAGE TOUR¹

Abstract

The article is devoted to the issue of determining the appropriate subject of civil liability for the provision of tourist services included in package tours.

The article aims to propose a preferable model of the subject of liability based on the analysis of the main models of the subject of responsibility for tourism services existing in world practice, as well as the peculiarities of contractual relations between subjects of tourism activities and suppliers of tourism services that arise regarding the formation of package tours.

In order to eliminate the existing contradictory practice regarding the subject of liability in the conditions of various modes of interaction between subjects of tourism activities and suppliers of tourism services, the article proposes to stipulate a clear model of liability for services included in package tours, which will henceforth allow forming contractual relations in the field of tourism on the basis of this model.

In particular, taking into account the fact that the tour operator forms package tours and, within the framework of the latter, separately and/or together with the travel agent, organizes the travel of the consumer, it is suggested to determine mechanism of liability of the subjects of tourism activities for the provision of these services, as more effective and most consistent with the essence of the contractual relations of suppliers and subjects of tourism activities, except from those tourism services, for which the law provides for the liability of the service provider.

Keywords: subject of tourism activity; travel service provider; proper subject of liability; agreement in favor of a third party; EU Directive, travel package; consumer; formation of a tourist package.

¹ The article was presented on 13.05.2024 and was reviewed on 20.05.2024.

Ева Сагоян

*Советник Генерального прокурора Республики Армения,
аспирант кафедры гражданского права юридического факультета
Ереванского государственного университета*

СУБЪЕКТ ГРАЖДАНСКО-ПРАВОВОЙ ОТВЕТСТВЕННОСТИ ЗА ТУРИСТИЧЕСКИЕ УСЛУГИ, СОСТАВЛЯЮЩИЕ ТУРИСТИЧЕСКИЙ ПАКЕТ¹

Абстракт

Статья посвящена вопросу определения надлежащего субъекта гражданско-правовой ответственности за оказание туристических услуг, включенных в состав туристических пакетов в рамках обязанностей по организации поездок потребителей.

Статья имеет цель предложить предпочтительную модель субъекта ответственности на основе анализа существующих в мировой практике основных моделей субъекта ответственности за туристические услуги, а также особенностей, договорных отношений субъектов туристской деятельности и поставщиков туристических услуг, возникающих для формирования туристических пакетов.

В целях исключения существующей противоречивой практики относительно субъекта ответственности в условиях различных режимов взаимодействия субъектов туристической деятельности и поставщиков туристических услуг, в статье предлагается законодательно закрепить четкую модель ответственности за оказание туристических услуг, что позволит впредь формировать договорные отношения в сфере туризма на основе этой модели.

В частности, с учетом того, что туроператор формирует туристические пакеты, и, в рамках последних, отдельно и/или вместе с турагентом, организует путешествие потребителя, то за оказание данных услуг предлагается предусмотреть ответственность субъектов туристической деятельности, как более эффективный и наиболее соответствующий сути договорных отношений поставщиков и субъектов туристической деятельности механизм, за исключением тех туристических услуг, за которые законом предусмотрена ответственность поставщика услуг.

Ключевые слова: субъект туристической деятельности; поставщик туристических услуг; надлежащий субъект ответственности; договор в пользу третьего лица; Директива ЕС, туристический пакет; потребитель; формирование туристического пакета.

¹ Статья была представлена 13.05.2024 и прошла рецензирование 20.05.2024.

Վահան Հարությունյան

ՀՀ գլխավոր դատախազության սահմանադրական կարգի հիմունքների, պետության և հասարակական անվտանգության դեմ ուղղված հանցագործությունների գործերով վարչության դատախազ, արդարադատության առաջին դասի խորհրդական

**ՊԱՅՄԱՆԱԿԱՆ ՎԱՂԱԺԱՄԿԵՏ ԱԶԱՏԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏԸ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ՝**

Համառոտագիր

Հոդվածը վերաբերում է Հայաստանի Հանրապետությունում որոշակի ժամկետով կամ ցմահ ազատազրկման դատապարտված անձանց՝ պատժի հետագա կրումից պայմանական վաղաժամկետ ազատման ինստիտուտի վերլուծությանը, մասնավորապես՝ ներկա և նախկին օրենսդրական կարգավորումներին, կատարված փոփոխություններին, դրանց համեմատությանը, գործնականում առաջացող խնդիրներին, ինչպես նաև դրանց լուծման համար հնարավոր նոր օրենսդրական փոփոխություններին:

Հոդվածում փորձ է արվել հնարավորինս մատչելի և հասանելի եղանակով շարադրել Հայաստանի Հանրապետությունում անկախության ձեռք բերումից հետո նոր իրավակարգի ձևավորման ընթացքում քրեակատարողական օրենսդրության կարևորագույն և բաղկացուցիչ մաս կազմող՝ ցմահ կամ որոշակի ժամկետով ազատազրկման դատապարտված անձանց հիմնարար իրավունքներից մեկի՝ պատժից պայմանական վաղաժամկետ ազատման վերաբերյալ օրենսդրական կարգավորումները, քանի որ գործնականում դատապարտյալների շրջանում բողոքների գերակշիռ մասը վերաբերում է նրանց պայմանական վաղաժամկետ ազատման գործընթացում առաջացող խնդիրներին:

Վերլուծություն է կատարվել թե՛ նախկինում գործող օրենսդրական կարգավորումների և թե՛ 2022 թվականի հուլիսի 1-ից ուժի մեջ մտած նոր օրենսդրական կարգավորումների վերաբերյալ, ինչպես նաև վերլուծվել է դրանց տարբերությունները:

Հոդվածում նաև շարադրված է ցմահ կամ որոշակի ժամկետով ազատազրկման դատապարտված անձանց՝ պատժից պայմանական վաղաժամկետ ազատման վերաբերյալ ՀՀ վճռաբեկ դատարանի նախադեպային որոշումներում արտահայտված իրավական դիրքորոշումները, դրա վերաբերյալ միջազգային

¹ Հոդվածը ներկայացվել է 01.09.2023 թ., գրախոսվել է 25.03.2024 թ.:

պրակտիկան: Հայաստանի Հանրապետությունում ներկայումս գործող օրենսդրական կարգավորումները համեմատվել են միջազգային պրակտիկայի հետ:

Ըստ այդմ, ցմահ կամ որոշակի ժամկետով ազատազրկման դատապարտված անձանց՝ պատժից պայմանական վաղաժամկետ ազատման գործընթացում անկյունաքարային տեղ զբաղեցնող ՀՀ արդարադատության նախարարի 2018 թվականի հունիսի 12-ի 336-Լ հրամանը կարիք ունի փոփոխման և լրամշակման՝ դատապարտյալների չափորոշիչների գնահատման և գումարման առումով:

Հիմնաբառեր - պատիժ, վաղաժամկետ, ազատում, միջազգային փորձ, օրենսդրություն, օրենսգիրք, վճարեկ, քրեական, քրեակատարողական:

Ներածություն

Անկախության ձեռք բերումից հետո Հայաստանի Հանրապետությունը ձեռնամուխ եղավ նոր իրավակարգի ձևավորմանը, այդ թվում՝ քրեաիրավական և քրեակատարողական նոր քաղաքականության իրականացմանը և դրան համահունչ օրենսդրության և իրավակիրառ համակարգի կայացմանը: Մման քաղաքականության առաջնահերթ խնդիրներից մեկը դարձավ պատժի համակարգում ազատազրկմանն այլընտրանք հանդիսացող պատժատեսակների և այլ միջոցների նախատեսումն ու դրանց արդյունավետության ապահովումը, այդ թվում՝ պատժից ազատելու և մասնավորապես պատիժը կրելուց պայմանական վաղաժամկետ ազատելու ինստիտուտի կատարելագործումը: Դեռևս 2003 թվականին **Եվրախորհրդի նախարարների կոմիտեի «Պատիժը կրելուց պայմանական վաղաժամկետ ազատելու մասին» հանձնարարականը**² սահմանեց, որ պատիժը կրելուց պայմանական վաղաժամկետ ազատելու ինստիտուտը հասարակությունում անձի վերաինտեգրումն ապահովող և կրկնահանցագործությունը, ազատազրկման բացասական հետևանքները, քրեակատարողական հիմնարկների գերբնակեցումը կանխարգելող առավել արդյունավետ միջոցներից է, պայմանով, որ հաշվի առնվեն կոնկրետ անձին վերաբերող հանգամանքները, ապահովվի արդարության սկզբունքը և դատապարտյալին ցուցաբերվի հստակ մշակված, վերահսկելի օժանդակություն հասարակությունում վերաինտեգրվելու առումով: Նույն հանձնարարականով սահմանվեց, որ յուրաքանչյուր պետություն իր օրենսդրությամբ պետք է նախատեսի և խթանի այս ինստիտուտի կիրառման հնարավորությունը դասակարգման բոլոր խմբերի դատապարտյալների, այդ թվում՝ ցմահ դատապարտվածների համար և քննարկվող ինստիտուտի կիրառման թե՛ օրենսդրական և թե՛ իրավակիրառ պրակտիկան համահունչ դարձնի ժողովրդավարական երկրների հիմնարար սկզբունքներին, որտեղ առաջ-

² Մանրամասն տե՛ս Եվրախորհրդի նախարարների կոմիտեի «Պատիժը կրելուց պայմանական վաղաժամկետ ազատելու մասին» հանձնարարականը /<https://rm.coe.int/CoERMPublicCommonSearchServices/DisplayDCTMContent?documentId=09000016800ccb5a/>

նահերթը մարդու իրավունքների պաշտպանությունն ու երաշխավորումն է: Թեև պատիժը կրելուց պայմանական վաղաժամկետ ազատելու ինստիտուտը նորություն չէր ՀՀ-ի համար, այնուհանդերձ նշված հանձնարարականը վեր հանեց այն կարևորագույն խնդիրները, որոնց հրատապ լուծման պարագայում միայն հնարավոր կլինի խոսել պատիժը կրելուց պայմանական վաղաժամկետ ազատելու ինստիտուտի արդյունավետության, դատապարտյալների վերաինտեգրման, նրանց կողմից նոր հանցագործությունների կանխարգելման մասին: Հարկ է նշել, որ քննարկվող ինստիտուտը ՀՀ-ում բավականին հաճախ է կիրառվում: ՀՀ դատական վիճակագրության վերլուծությունը վկայում է, որ պատիժը դեռևս լրիվ չկրած, սակայն պատժից ազատված դատապարտյալների շրջանում գերակշռողը պատիժը կրելուց պայմանական վաղաժամկետ ազատելու ինստիտուտի կիրառմամբ ազատված անձինք են:

Պայմանական վաղաժամկետ ազատման ինստիտուտը գործում է նաև Արևմտյան Եվրոպայի բոլոր երկրների քրեական իրավունքի համակարգերում: Որոշ երկրներում այն գոյություն ունի շուրջ մեկ դարից ավելին: Պետք է նշել, որ պայմանական վաղաժամկետ ազատման ինստիտուտն իրավական համակարգերում ի սկզբանե նշանակալից նորամուծություն է եղել, որը էապես փոխել է քրեական իրավունքում պատժի վերաբերյալ գոյություն ունեցող մոտեցումները: Պատժի և դատապարտյալի ուղղման/վերաուցիալականացման վերաբերյալ քրեական իրավունքում մոտեցումները փոխվել են մասնավորապես 18-րդ դարի վերջից՝ սկսած Մոնտեսքիոյի, Չեզարե Բեկարիայի և Վոն Ֆյոլբախի գիտական աշխատանքների և հետազոտությունների ազդեցության ներքո:

Դատապարտյալի՝ պատիժը կրելուց պայմանական վաղաժամկետ ազատելու հնարավորությունը նրա իրավական կարգավիճակի կարևոր բաղադրիչներից մեկն է, որի համար անհրաժեշտ են ինչպես օրենսդրական հիմքեր, այնպես էլ պրակտիկ կիրառելիության մեխանիզմներ: Ներկայումս ՀՀ-ում պայմանական վաղաժամկետ ազատման հարցը նախատեսված է քրեական և քրեակատարողական օրենսդրությամբ, ինչպես նաև ՀՀ արդարադատության նախարարի 2018 թվականի հունիսի 12-ի 336-Լ հրամանով: Նախատեսված կարգավորումներն ու օրենսդրական հիմքերը կարծես թե բավարար լծակներ են համակարգը աշխատեցնելու համար, մինչդեռ գործնականում պայմանական վաղաժամկետ ազատման համակարգում նկատելի են բազմաթիվ խնդիրներ, ինչով պայմանավորված՝ համակարգը վերանայման կարիք ունի:

Ելնելով թեմայի կիրառման առանձնահատկություններից, կարգավորման խնդիրներից և վիճակագրական տվյալների վերլուծությունից՝ հողվածի արդիականությունը կասկած չի առաջացնում:

Սույն աշխատությունը նպատակ է հետապնդում ներկայացնել ներկայումս ՀՀ-ում պայմանական վաղաժամկետ ազատման համակարգի օրենսդրական հիմքերն ու կարգավորումները, գոյություն ունեցող միջազգային ստանդարտ-

ներն ու լավագույն փորձը: Վերջիններիս և ՀՀ-ում նախատեսված համակարգի համեմատական վերլուծությունը վեր կհանի գործող խնդիրներն ու դրանց պատճառները՝ հնարավոր լուծումներ առաջարկելու մտադրությամբ:

**ՊԱՅՄԱՆԱԿԱՆ ՎԱՂԱԺԱՄԿԵՏ ԱԶԱՏԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏԸ
ՀՀ-ՈՒՄ: ՕՐԵՆՍԳՐԱԿԱՆ ԿԱՐԳՎՎՈՐՈՒՄՆԵՐԸ,
ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ, ՊՐԱԿՏԻԿԱՅՈՒՄ ԱՌԱՋԱՑՈՂ
ԽՆԴԻՐՆԵՐԸ**

Ազատությունից զրկված անձանց իրավական կարգավիճակի կարևորագույն բաղադրատարրերից է պատժից ազատման ինստիտուտների արդյունավետ գործունեությունը: Այս առումով ՀՀ-ում, ի թիվս այլ հնարավորությունների ու մեխանիզմների, առանձնակի կարևորություն ունի պատժի կրումից պայմանական վաղաժամկետ ազատման ինստիտուտը: Վերջինս մշտապես եղել և շարունակում է մնալ հանրության և քրեական արդարադատության ոլորտի մասնագետների ուշադրության կենտրոնում, ինչը պայմանավորված է ինչպես այս ինստիտուտի կարևորությամբ, այնպես էլ դրա գործունեության ընթացքում դրսևորված խնդիրների բազմազանությամբ: Վերջին տարիներին պատժի կրումից պայմանական վաղաժամկետ ազատման ինստիտուտը մշտապես եղել է քննադատությունների կենտրոնում և ազատությունից զրկված անձանց բողոքի հիմնական առարկան, ինչն էլ հանգեցրել է համակարգի շարունակական փոփոխությունների:

Այսպես, 2017 թվականի ընթացքում օրենսդրական փոփոխություններ տեղի ունեցան պատժի կրումից վաղաժամկետ ազատման համակարգում, ինչին հաջորդեցին նաև պրակտիկայում փոփոխությունները: Մասնավորապես, Հայաստանի Հանրապետության քրեական և քրեակատարողական օրենսգրքերում կատարվեցին մի շարք փոփոխություններ. որոնք միտված էին մասնավորապես Անկախ հանձնաժողովների վերացմանը և գործընթացում ի հայտ եկող բազմաթիվ խնդիրների լուծմանը:

Գործընթացում ի հայտ եկող բազմաթիվ խնդիրները հիմք հանդիսացան օրենսդրական շարունակական փոփոխությունների: Նախ պետք է նշել, որ Անկախ հանձնաժողովների ձևավորման մասին ՀՀ նախագահի հրամանագիրը ուժը կորցրել է և անկախ հանձնաժողովները ինստիտուցիոնալ առումով այլևս գոյություն չունեն և ընդգրկված չեն պատժի կրումից պայմանական վաղաժամկետ ազատման գործընթացում:

Համաձայն 2018 թվականի օրենսդրական կարգավորումների՝ ինստիտուցիոնալ առումով պայմանական վաղաժամկետ ազատման հարցում հիմնական դերակատարումն ընկավ ՀՀ արդարադատության նախարարության քրեակատարողական և պրոբացիայի ծառայությունների վրա:

Պատժի կրումից պայմանական վաղաժամկետ ազատման ինստիտուտի ար-

դյունավետության բարձրացման նպատակով Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության կողմից մշակվեց և 2018 թվականի մայիսի 23-ին Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի կողմից երկրորդ ընթացմամբ և ամբողջությամբ ընդունվեց «Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքում փոփոխություններ կատարելու մասին», «Հայաստանի Հանրապետության քրեակատարողական օրենսգրքում փոփոխություններ և լրացում կատարելու մասին», «Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքում փոփոխություններ կատարելու մասին» և «Պրոբացիայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացում կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների նախագծերի փաթեթը:

Սահմանադրության 2015 թվականի փոփոխություններով Հայաստանի Հանրապետության նախագահին վերապահված լիազորություններով պայմանավորված՝ անհրաժեշտություն էր առաջացել դադարեցնել անկախ հանձնաժողովների գործունեությունը, բացի այդ, անկախ հանձնաժողովի գործունեության ընթացքում ծագել էին մի շարք խնդիրներ, որոնք նվազեցնում էին պատժի կրումից պայմանական վաղաժամկետ ազատելու գործընթացի արդյունավետությունը:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ օրենսդրական փոփոխություններով պատժիժը կրելուց պայմանական վաղաժամկետ ազատելու գործընթացում կատարվեցին մոդելային և ընթացակարգային փոփոխություններ, որոնց առանձնահատկությունները հետևյալն են.

- Դատապարտյալի կողմից դիմումի ներկայացման ընթացակարգ.

Փոփոխություններով ամրագրվեց, որ պատժիժը կրելուց պայմանական վաղաժամկետ ազատվելու գործընթացի մեկնարկը պայմանավորում է ոչ միայն պատժի ժամկետի օրենքով սահմանված մասը կրելու, այլ նաև դատապարտյալի դիմումի առկայության հետ: Այլ կերպ՝ գործընթացը սկսվում է, երբ դատապարտյալն ինքն է դիմում ներկայացնում պատժիժը կրելուց պայմանական վաղաժամկետ ազատվելու համար: Ընդ որում՝ դիմումը պետք է ներկայացվի պատժի ժամկետի՝ օրենքով սահմանված մասը լրանալուց ոչ շուտ, քան երեք ամիս առաջ: Դիմումի ներկայացման կարգի մասին պատժիժը կատարող հիմնարկի վարչակազմը նախօրոք պարտավոր է ծանուցել դատապարտյալին:

- Քրեակատարողական ծառայություն - պրոբացիայի ծառայություն - դատարան մոդելի գործարկում.

Փոփոխությունների արդյունքում դատապարտյալի պատշաճ վարքագիծը և նրա կողմից նոր հանցագործություն կատարելու հավանականությունը գնահատող հանգամանքների վերաբերյալ զեկույցներ են տրամադրում մասնագիտացված երկու կառույցներ, որոնք ունեն մարդկային և նյութական անհրաժեշտ ռեսուրսներ: Քրեակատարողական ծառայությունը պետք է կարողանա պատշաճ կերպով գնահատել դատապարտյալի անձը և վարքագիծը պատժի կրման

ընթացքում, իսկ Պրորացիայի ծառայությունը՝ հասարակություն վերաինտեգրվելու հնարավորությունը:

- Դատապարտյալի իրավունքները.

Չեկույցների կազմման ընթացքում դատապարտյալը պահպանում է այն իրավունքները, որոնք նրան վերապահվել էին անկախ հանձնաժողովի նիստին մասնակցելու համար: Այսպես, դրական զեկույցների դեպքում՝ մինչև զեկույցները դատարան ներկայացնելը, իսկ զեկույցներից առնվազն մեկի բացասական լինելու դեպքում՝ մինչև պատիժը կատարող հիմնարկի վարչակազմի կողմից որոշում ընդունելը, դատապարտյալն իրավունք ունի.

- 1) իրեն մատչելի ձևով, այդ թվում՝ համապատասխան մասնագետի միջոցով ծանոթանալու իր վերաբերյալ կազմված նյութերին և անվճար ստանալու դրանց պատճենները,
- 2) ներկայացնելու բացատրություններ և փաստաթղթեր, հանդես գալու հայտարարություններով,
- 3) հայտնելու իր կարծիքը իրեն վերաբերող հարցերի քննարկման ժամանակ,
- 4) ստանալ իր վերաբերյալ կազմված զեկույցները,
- 5) հայերենին չտիրապետելու դեպքում պետության միջոցների հաշվին օգտվելու թարգմանչի ծառայություններից,
- 6) օրենքով նախատեսված դեպքերում՝ այլ իրավունքներ:

Օրենսդրական փոփոխություններով ընդունված ընթացակարգի համաձայն՝ քրեակատարողական հիմնարկի վարչակազմը օրենքով նախատեսված ժամկետը լրանալուց մեկ ամիս առաջ պարտավոր է դատապարտյալին գրավոր կերպով ծանուցել դիմում ներկայացնելու կարգի մասին: Դատապարտյալի գրավոր դիմումն ստանալու պահից երեք աշխատանքային օրվա ընթացքում պատիժը կատարող հիմնարկի վարչակազմն այդ մասին պաշտոնապես ծանուցում է պրորացիայի ծառայությանը: Դատապարտյալի գրավոր դիմումն ստանալուց հետո արդարադատության ոլորտում Կառավարության քաղաքականությունը մշակող նախարարի՝ ՀՀ արդարադատության նախարարի սահմանած ժամկետում և կարգով պատիժը կատարող հիմնարկի վարչակազմն այդ մասին պաշտոնապես ծանուցում է քրեակատարողական ծառայության կենտրոնական մարմնին՝ կցելով դատապարտյալի անձնական գործի ամփոփ տեղեկանքը և անհրաժեշտ այլ փաստաթղթերը: Քրեակատարողական ծառայությունը և պրորացիայի ծառայությունը պաշտոնական ծանուցումն ստանալուց հետո 80 օրվա ընթացքում կազմում և ներկայացնում են Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքով նախատեսված հանգամանքների վերաբերյալ զեկույցներ:

Եթե քրեակատարողական ծառայության և պրորացիայի ծառայության զեկույցները դրական են, ապա պատիժը կատարող հիմնարկի վարչակազմը դատապարտյալի նկատմամբ նշանակված պատժի ժամկետի՝ օրենքով սահմանված

մասը լրանալուց հետո երեք աշխատանքային օրվա ընթացքում ընդունում է դատապարտյալին պատիժը կրելուց պայմանական վաղաժամկետ ազատելու կամ պատժի չկրած մասն ավելի մեղմ պատժատեսակով փոխարինելու հարցը դատարան ներկայացնելու մասին որոշում և յոթ աշխատանքային օրվա ընթացքում միջնորդագրով ներկայացնում դատարան: Եթե քրեակատարողական ծառայության և պրոբացիայի ծառայության զեկույցներից մեկը բացասական է, ապա պատիժը կատարող հիմնարկի վարչակազմը ընդունում է դատապարտյալին պատիժը կրելուց պայմանական վաղաժամկետ ազատելու կամ պատժի չկրած մասն ավելի մեղմ պատժատեսակով փոխարինելու հարցը դատարան ներկայացնելու մասին որոշում, եթե դատապարտյալը տալիս է գրավոր համաձայնություն, և յոթ աշխատանքային օրվա ընթացքում միջնորդագրով ներկայացնում դատարան: Եթե քրեակատարողական ծառայության և պրոբացիայի ծառայության զեկույցները բացասական են, ապա պատիժը կատարող հիմնարկի վարչակազմը դատապարտյալի նկատմամբ նշանակված պատժի ժամկետի՝ օրենքով սահմանված մասը լրանալուց հետո երեք աշխատանքային օրվա ընթացքում ընդունում է դատապարտյալին պատիժը կրելուց պայմանական վաղաժամկետ ազատելու կամ պատժի չկրած մասն ավելի մեղմ պատժատեսակով փոխարինելու հարցը դատարան չներկայացնելու մասին որոշում: Այս դեպքում դատապարտյալը կարող է որոշումը բողոքարկել դատարան:

Այս կապակցությամբ անկյունաքարային նշանակության ունեցավ նաև ՀՀ արդարադատության նախարարի՝ «Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության քրեակատարողական և պրոբացիայի ծառայությունների կողմից պատիժը կրելուց պայմանական վաղաժամկետ ազատելու, պատժի չկրած մասն ավելի մեղմ պատժատեսակով փոխարինելու վերաբերյալ զեկույցների կազմման կարգը և պատիժը կրելուց պայմանական վաղաժամկետ ազատելու, պատժի չկրած մասն ավելի մեղմ պատժատեսակով փոխարինելու հարցերով ներկայացվող փաստաթղթերի օրինակելի ձևերը հաստատելու մասին» 2018 թվականի հուլիսի 12-ի 336-Լ հրամանը, որով սահմանվեց նոր ձևաչափ և չափանիշներ՝ պատժի կրումից պայմանական վաղաժամկետ ազատման համար, մասնավորապես ներդրվեց չափորոշիչների գնահատման և գումարման համակարգը:

Նշված կարգավորումները թեպետև միտում ունեն ավելի արդյունավետ դարձնել պատժի կրումից ազատման ինստիտուտի գործունեությունը, սակայն օրենսդրական նման կարգավորումները արդեն իսկ հիմք են տալիս որոշակի մտահոգությունների:

Ինչպես քրեակատարողական ծառայության, այնպես էլ պրոբացիայի ծառայությունների կողմից ներկայացվող զեկույցները պետք է արտացոլեն դատապարտյալի վերասոցիալականացմանն ուղղված նախադրյալները, վարքագծի փոփոխություններն ու հեռանկարները, ինչը պահանջում է դատապարտյալի

հետ ստատիկ և դինամիկ պլանով աշխատանք և, ըստ այդմ, նաև հստակ չափանիշներ ու պայմաններ՝ այդ աշխատանքը և, ըստ այդմ, դատապարտյալի վարքագծի փոփոխությունները գնահատելու համար: Մինչդեռ, դեռևս տեսանելի չեն վարքագծի փոփոխությունները գնահատելու հստակ և իրատեսական չափանիշները:

Այս համատեքստում խիստ խոցելի է ՀՀ արդարադատության նախարարի վերոհիշյալ հրամանը մի շարք պատճառաբանություններով. դատապարտյալներին տրամադրվող միավորները հիմնականում չեն արտացոլում նրանց իրական վարքագիծը պատժի կրման ընթացքում, երբեմն անգամ սուբյեկտիվ կարծիք են ձևավորում դատապարտյալների վերաբերյալ, ինչպես նաև խախտվում է դատապարտյալների միջև հավասարության սկզբունքը:

Նշվածի վառ ապացույցն է այն, որ մի դեպքում դատապարտյալին տրվում է 1 միավոր պատժի կրման ողջ ընթացքում ընդամենը մեկ անգամ շաշկի կամ բիլիարդ խաղալու համար, իսկ մեկ այլ դատապարտյալի նույն 2 միավորն է հատկացվում պատժի կրման ընթացքում տասնյակից ավելի վերասոցիալականացման միջոցառումների մասնակցելու համար:

Մինևույն ժամանակ նույն միջոցառումներին մասնակցելը համարվում է նաև վերասոցիալականացման միջոցառումներին մասնակցություն և տրվում է ևս 3 միավոր: Արդյունքում՝ բազմաթիվ դեպքերում ստացվում է արհեստական դրական գեկույցներ:

Իսնդրահարույց է նաև գեկույցի կազմման այն կետը, որով հանցանքը մինչև 28 տարեկանը կատարելու համար դատապարտյալին միավոր չի տրվում, իսկ 28 տարեկանից բարձր տարիքում հանցանք կատարած դատապարտյալներին տրվում է 1 կամ 2 միավոր:

Նման մոտեցումը նույնպես չի կարող համարվել արդարացի և խտրական մոտեցում է առաջացնում դատապարտյալների միջև:

Այս առումով հարկ է արձանագրել, որ քրեակատարողական ծառայության կողմից գեկույցի կազմման գործընթացում ի հայտ եկող այս և բազմաթիվ այլ խնդիրների կապակցությամբ տարբեր իրավակիրառ մարմինների կողմից նախատեսվել է ՀՀ արդարադատության նախարարի նշված հրամանի փոփոխություններ:

Պատժից պայմանական վաղաժամկետ ազատման ինստիտուտի գործընթացում կարևոր նշանակություն ունի նաև ՀՀ վճռաբեկ դատարանի կողմից այդ կապակցությամբ կայուն նախադեպային իրավունքի ձևավորումը, համաձայն որի՝ ուղղվելու համար ազատագրկման ձևով պատժի մնացած մասը դատապարտյալի կողմից կրելու կարիք չունենալու վերաբերյալ դատարանների հետևությունները պետք է կառուցված լինեն պատժի կրումից պայմանական վաղաժամկետ ազատելու համար նշանակություն ունեցող հանգամանքների՝ քրեակատարողական հիմնարկում դատապարտյալի գտնված լինելու ամբողջ

Ժամանակահատվածում վերջինիս վարքագծի, նրա անձի և կատարված հանցագործությունների մասին տվյալների բազմակողմանի ուսումնասիրության, վերլուծության և համակցության մեջ գնահատման վրա³:

Նշվածն ուշագրավ է ոչ միայն դատապարտյալի անձի վերաբերյալ ճիշտ պատկերացում կազմելու, այլև նրա ուղղման և վերասոցիալականացման՝ ընդունելի աստիճանի հասած լինելու կապակցությամբ հիմնավոր կանխատեսում անելու տեսանկյունից:

Ուշադրության է արժանի նաև պատիժը կրելուց պայմանական վաղաժամկետ ազատելու կամ պատժի չկրած մասն ավելի մեղմ պատժատեսակով փոխարինելու հարցում քրեակատարողական ծառայության՝ որպես պատժի կրման ընթացքում դատապարտյալի վարքը գնահատող և պրոբացիայի պետական ծառայության՝ որպես պրոբացիայի միջոցով դատապարտյալի վերասոցիալականացման գործընթացն իրականացնող մարմինների գեկույցների բացասական լինելը: Տվյալ դեպքում, դատապարտյալի վերասոցիալականացման ընդունելի աստիճանի հասած լինելու նախադրյալները և պատժի հետագա կրման նպատակահարմարությունը գնահատելու հարցում դատարանը՝ որպես քննարկվող ինստիտուտի գործադրման հնարավորության առնչությամբ վերջնական որոշում կայացնող մարմին, պետք է հաշվի առնի նաև մասնագիտական, խորհրդատվական բնույթ կրող վերոհիշյալ մարմինների դիրքորոշումները:

2022 թվականի հուլիսի 1-ին գործողության մեջ դրված ՀՀ քրեական, քրեակատարողական և քրեական դատավարության օրենսգրքերով նույնպես որոշակի փոփոխություններ կատարվեցին պատժի կրումից պայմանական վաղաժամկետ ազատման գործընթացում: Մասնավորապես. ՀՀ գործող քրեական օրենսգրքով պատժի կրումից պայմանական վաղաժամկետ ազատելու համար ժամկետների հաշվարկի առումով տեղի ունեցավ փոփոխություն, այն է՝ ժամկետը հաշվարկելու համար կարևորվում է ոչ թե արարքի ծանրությունը, այլ դրա համար դատարանի կողմից նշանակված պատժաչափը:

Այսինքն՝ ընդունվեց անձի վիճակն այլ կերպ բարելավող օրենք (ի տարբերություն նախկին օրենսգրքի, երբ ծանր հանցագործություն կատարելու համար դատապարտյալը պետք է կրեր նշանակված պատժի կեսը՝ նոր օրենսգրքով սահմանված է նշանակված պատժի մեկ երրորդը կրելու դատավարական անհրաժեշտությունը), սակայն ՀՀ գործող քրեական օրենսգրքով այդ դրույթին հետադարձ ուժ տալու մասին իրավակարգավորում չնախատեսվեց, այլ կերպ ասած՝ մինչև 2022 թվականի հուլիսի 1-ը ազատագրված մանկավարժական դատապարտված դատապարտյալների համար նշված փոփոխությունը չունի հետադարձ ուժ, քանի որ դրա հետադարձ ուժ ունենալու մասին ՀՀ քրեական

³ Տե՛ս ՀՀ վճռաբեկ դատարանի Գարիկ Ստեփանի Դավթյանի վերաբերյալ նախադեպային որոշումը:

օրենսգրքում և «ՀՀ քրեական օրենսգիրքը գործողության մեջ դնելու մասին» ՀՀ օրենքում նշում առկա չէ:

Ինչպես ՀՀ գործող քրեական օրենսգիրքը, այնպես էլ ՀՀ նախկին քրեական օրենսգիրքը, դատապարտյալին պատժից պայմանական վաղաժամկետ ազատման համար նախատեսել է 3 նախապայման, այն է՝

- ա) պատժի ժամկետի սահմանված նվազագույն չափի կրելը,
- բ) պատշաճ վարքագիծ դրսևորելը,
- գ) նոր հանցանք կատարելու հավանականությունը⁴:

Վերը հիշատակված երեք նախապայմանների բացակայությունն ինքնին դատավարական արգելք է հանդիսանում անձի՝ պատժից պայմանական վաղաժամկետ ազատման հարցը դատարանում քննարկելու համար:

Վերաբերելի իրավակարգավորումներից տեսանելի է, որ օրենքով սահմանված նախապայմաններից մեկի՝ պատժի ժամկետի սահմանված նվազագույն ժամկետի կրումը նախատեսված է միայն քրեական օրենսգրքով, իսկ ՀՀ քրեակատարողական օրենսգրքով նախատեսված են պատժից պայմանական վաղաժամկետ ազատման ինստիտուտի վերաբերելի այլ հանգամանքներ, մասնավորապես՝ քրեակատարողական և պրոբացիայի ծառայության կողմից կազմվող զեկույցների բովանդակությունը, դրանք կազմելու ժամկետները, չափանիշները, այդ գործընթացում դատապարտյալի և քրեակատարողական հիմնարկի վարչակազմի իրավունքները և պարտականությունները:

Այսինքն՝ ՀՀ քրեակատարողական օրենսդրությամբ սահմանված չէ որևէ նորմ, որտեղ կկարգավորվի դատապարտյալին պատժից պայմանական վաղաժամկետ ազատման համար պայմանների առկայություն, մասնավորապես՝ պատժի ժամկետի կրած լինելու նվազագույն չափի վերաբերյալ: Հետևաբար, այս համատեքստում քրեակատարողական և քրեական օրենսդրության խնդիրները տարբեր են և չեն կարող նույնացվել:

ՀՀ քրեակատարողական օրենսգրքով նախատեսված պատիժների կատարման, դրանց կարգին ու պայմաններին վերաբերելի իրավակարգավորումներն ընդգրկված են ՀՀ քրեակատարողական օրենսգրքի 17-րդ գլխում, որում ներառված են դատապարտյալին համապատասխան անվտանգային գոտու խիստ և մեղմ պայմաններում պահելու, ինչպես նաև առանձին պահելու կարգը, նյութակենցաղային ապահովումը, դատապարտյալների տեսակցությունները, հանձնույնքներ և ծանրոցներ ստանալուն, նամակագրության, հեռախոսակապից և տեսազանգից օգտվելուն, մեկնումներ տրամադրելուն վերաբերող դրույթները:

ՀՀ քրեակատարողական օրենսգրքով նախատեսված դրույթի, այն է՝ պատիժների կատարումը, դատապարտյալի նկատմամբ քրեաիրավական ներգործության այլ միջոցների կիրառումը կարգավորվում են դրանց կատարման կամ կիրառման պահին գործող քրեակատարողական օրենսդրությամբ: Համադրված

⁴ ՀՀ քրեական օրենսգրքի հոդված 85:

վերլուծությունից տեսանելի է, որ այն չի պարունակում որևէ իրավակարգավորում պատժից պայմանական վաղաժամկետ ազատման ինստիտուտի կիրառման, օրենքով սահմանված պայմանների՝ պատժի ժամկետի սահմանված նվազագույն չափը կրելու, պատշաճ վարքագիծ դրսևորելու և նոր հանցանք կատարելու հավանականությունը գնահատելու մասին, քանի որ հիշյալ ինստիտուտն իր բնույթով հանդիսանում է բացառապես քրեաիրավական ինստիտուտ, հետևաբար չի կարող նույնականացվել ՀՀ քրեակատարողական օրենսգրքով նախատեսված խնդիրների հետ:

Ինչ վերաբերվում է օրենքին հետադարձ ուժ տալու հարցին, ապա հարկ է նշել, որ դատապարտյալին պատժից պայմանական վաղաժամկետ ազատելու պայմաններից մեկը՝ կրած ժամկետի նվազագույն չափը, թեև ՀՀ նոր քրեական օրենսգրքով սահմանված կարգով առավել բարենպաստ է դատապարտյալի համար, սակայն չի կարող կիրառվել, քանի որ թե՛ ՀՀ քրեական օրենսգրքով և թե՛ ՀՀ քրեակատարողական օրենսգրքով տվյալ իրավանորմի հետադարձության ուժի մասին որևէ նշում առկա չէ:

Օրենքին հետադարձ ուժ տալու խնդրո առարկա հարցի վերաբերյալ որևէ դրույթ առկա չէ նաև «ՀՀ քրեական օրենսգիրքը գործողության մեջ դնելու մասին» 2022 թվականի հունիսի 9-ի ՀՀ օրենքում⁵:

Այսինքն, եթե դատապարտյալը հանցանքը գործել է և դատապարտվել է ՀՀ նախկին քրեական օրենսգրքի գործողության ժամանակահատվածում, հետևաբար նրա նկատմամբ կիրառելի են եղել ՀՀ նախկին քրեական օրենսգրքի դրույթները, և չնայած այն հանգամանքին, որ ՀՀ գործող քրեական օրենսգրքի վիճարկվող դրույթը առերևույթ բարելավվում է դատապարտյալի վիճակը, սակայն, ինչպես վերը նշվեց դրա հետադարձության ուժի մասին որևէ օրենքով կարգավորում չի նախատեսվել:

Հարկ է արձանագրել նաև, որ 2018 թվականի ընթացքում ՀՀ արդարադատության նախարարության քրեակատարողական հիմնարկներից պատժից պայմանական վաղաժամկետ ազատվել է 530 դատապարտյալ: Եթե նշված թիվը համեմատենք դրան նախորդող 3 տարիներին պատժից պայմանական վաղաժամկետ ազատված դատապարտյալների թվաքանակի հետ, ապա դրական աճի միտումն ակնհայտ է:

Մասնավորապես, 2016 թվականին պատժից պայմանական վաղաժամկետ ազատվել է 115 դատապարտյալ, 2017 թվականին՝ 362 դատապարտյալ (250-ով կամ 217,4 %-ով ավելի), իսկ 2018 թվականին՝ 530 դատապարտյալ (165-ով կամ 45,2%-ով ավելի):

Պետք է փաստել, որ 2016 թվականի հետ համեմատած՝ 2017-2018 թվականների ընթացքում պատիժը կրելուց պայմանական վաղաժամկետ ազատելու

⁵ «ՀՀ քրեական օրենսգիրքը գործողության մեջ դնելու մասին» 2022 թվականի հունիսի 9-ի ՀՀ օրենք

վերաբերյալ քննված գործերի և կայացված դատական ակտերի թվի էական աճը հիմնականում պայմանավորված է եղել պատիժը կրելուց պայմանական վաղաժամկետ ազատման գործընթացի ոլորտում 2017 թվականի մարտի 1-ին կատարված օրենսդրական բարեփոխումներով, որոնց արդյունքում էլ առավել երաշխավորվել է այս ոլորտում դատապարտյալների դատական պաշտպանության իրավունքը⁶:

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՊՐԱԿՏԻԿԱ

Հարկ է անդրադառնալ նաև պայմանական վաղաժամկետ ազատելու մասին Եվրոպայի խորհրդի Նախարարների կոմիտեի 2003 թվականի սեպտեմբերի 24-ի թիվ Rec(2003) 22 հանձնարարականին: Նշյալ հանձնարարականի ընդունման որոշումը 2000 թվականի Բանտային գերբեռնվածության ու դատապարտյալների քանակի նվազեցման վերաբերյալ հանձնարարականի տրամաբանական շարունակությունն էր: Հանձնարարականների հաջորդականությունը և պայմանական ազատման վերաբերյալ հանձնարարականի բովանդակության ուսումնասիրությունը վկայում են այն մասին, որ վաղաժամկետ ազատման հիմնական և կենտրոնական նպատակներից մեկը քրեակատարողական հիմնարկների բեռնաթափումն է: Միևնույն ժամանակ, պայմանական վաղաժամկետ ազատումը նպատակ է հետապնդում դատապարտյալներին օգնել քրեակատարողական հիմնարկի կյանքից հասարակություն վերադառնալու հարցում ազատությանը հաջորդող համապատասխան պայմանների և հսկողության միջոցով:

Ըստ Եվրոպայի խորհրդի Նախարարների կոմիտեի վերոհիշյալ հանձնարարականի՝ առկա են պայմանական վաղաժամկետ ազատման երկու հիմնական համակարգեր՝

- 1) հայեցողական,
- 2) պարտադիր:

Հայեցողական համակարգով գործող պայմանական վաղաժամկետ ազատման պարագայում օրենքով հստակ պետք է սահմանված լինի պատժի այն նվազագույն ժամանակահատվածը, որը պետք է կրի դատապարտյալը: Տվյալ նվազագույն ժամկետը վրա հասնելու դեպքում իրավասու մարմինները պետք է սկսեն ազատման ընթացակարգը: Սույն համակարգի պարագայում պետք է սահմանված լինեն հստակ և հասկանալի չափանիշներ: Ավելին՝ նման չափանիշները պետք է իրատեսական լինեն՝ հաշվի առնելով դատապարտյալի անհատական, սոցիալական և տնտեսական առանձնահատկություններն ու վերականգնողական ծրագրերի առկայությունը: Օրենքով լիազորված մարմնի կողմից պայմանական վաղաժամկետ ազատումը մերժող որոշումը կայացնելու դեպքում պետք է նշանակվի նաև հարցի հաջորդ լսման օրը, որը կապահովի դատապարտյալների կողմից ազատման համար կրկին դիմելու հնարավորությունը:

⁶ ՀՀ դատախազության 2018 թվականի գործունեության մասին հաղորդում Ազգային Ժողով:

Պարտադիր վաղաժամկետ ազատման համակարգի դեպքում օրենքով սահմանվում է միայն պատժի նվազագույն ժամանակահատվածը, որը պետք է հաշվի առնվի ազատման հարցը քննելիս:

Անդրադառնալով դիմումի առկայության դեպքում նշյալ ինստիտուտների իրացման միջազգային փորձին՝ հարկ է նկատել, որ քննարկվող հարցի առնչությամբ միասնական մոտեցումը բացակայում է: Կան երկրներ, որտեղ պայմանական վաղաժամկետ ազատման հարցը քննվում է դատապարտյալի դիմումի հիման վրա (Ֆրանսիա, Գերմանիա, ԱՄՆ, Մեծ Բրիտանիա, Կանադա), և կան երկրներ, որտեղ քննվում է մեխանիկորեն (Իսպանիա, Նիդեռլանդներ, Պորտուգալիա, Խորվաթիա):

Օրինակ՝ Ֆրանսիայում դատապարտյալը պետք է դիմում ներկայացնի պատիժների կատարման գծով դատավորին կամ դատարան:

Գերմանիայում նույնպես դատապարտյալը պետք է դիմում ներկայացնի տարածքային դատարաններում պատիժների կատարման հարցերով քրեական պալատ:

Իսպանիայում պայմանական վաղաժամկետ ազատման հարցի քննությունը պետք է սկսվի մեխանիկորեն, հակառակ դեպքում դատապարտյալը կարող է բողոք ներկայացնել:

Սույն համատեքստում անդրադարձ կատարելով միջազգային ստանդարտներին՝ անհրաժեշտ է քննարկման առարկա դարձնել նաև Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին եվրոպական կոնվենցիայի 5-րդ հոդվածի վերաբերյալ Եվրոպական դատարանի ներկայացրած դիրքորոշումները:

Մասնավորապես՝ Հուսսեյն ընդդեմ Միացյալ Թագավորության (տե՛ս Abed Hussain v. the United Kingdom, գանգատ թիվ 21928/93, 1996 թվականի փետրվարի 21-ի վճիռ) գործով Եվրոպական Դատարանը նշել է.

«59. Այնպիսի սկզբունքային նշանակություն ունեցող գործերով, որպիսին են ազատությունից զրկելու հետ կապված գործերով, և երբ ծագում են հարցեր, կապված, օրինակ, դիմողի բնավորության և հոգեվիճակի գնահատման հետ, արդար դատավարության ապահովման համար կարող է անհրաժեշտ լինել, որպեսզի դիմողը ներկա լինի դատավարությանը:

60. Դիմողի իրավիճակի պես իրավիճակներում, երբ քննարկվում է ազատագրման զգալի ժամկետի հետ կապված հարց, և որտեղ նրա բնավորությանը բնորոշ գծերը և հասունության աստիճանը կարևոր դեր են խաղում որոշելու, թե վտանգավո՞ր է արդյոք նա հանրության համար, 5-րդ հոդվածի 4-րդ կետը պահանջում է բանավոր լուծման մրցակցային դատավարության ենթատեքստում, որը ենթադրում է դիմողի շահերի օրինական ներկայացուցչություն ու վկաներ իրավիճակի և հարցաքննելու հնարավորություն»:

Մեկ այլ՝ Ամուրն ընդդեմ Ֆրանսիայի գործով⁷ Եվրոպական Դատարանը նշել է.

«50. Պնդելով, որ ցանկացած ազատագրկում պետք է տեղի ունենա օրենքով սահմանված կարգով՝ Կոնվենցիայի 5 (1) հոդվածը նախևառաջ պահանջում է, որպեսզի ցանկացած կալանավորում կամ ձերբակալում ունենա իրավական հիմնավորում ներպետական օրենսդրության մեջ: Սակայն այս բառերը ոչ միայն հղում են պարունակում ներպետական օրենսդրությանը, ինչպես «օրենքին համապատասխան» և «օրենքով նախատեսված» արտահայտությունները, որոնք առկա են 8-11 հոդվածների երկրորդ կետում: Այս բառերը նաև վերաբերում են օրենքի որակին՝ պահանջելով, որպեսզի այն համապատասխանի օրենքի գերակայության սկզբունքին, որը բնորոշ է Կոնվենցիայի բոլոր հոդվածներին: Որպեսզի հավաստիանալ՝ համապատասխանում է արդյոք ազատագրկումը ազգային օրենսդրության հետ համատեղելիության սկզբունքին, դատարանը պետք է ոչ միայն գնահատի քննարկվող ոլորտի ազգային օրենսդրությունը, այլև գնահատի այլ իրավական ակտերի որակը, որոնք կիրառվել են քննարկվող անձանց հանդեպ: Այս իմաստով որակը ենթադրում է, որ եթե ազգային օրենքը պահանջում է ազատագրկում, հատկապես քաղաքական ապաստան խնդրող օտարերկրյա քաղաքացիների նկատմամբ, ապա այն պետք է բավարար չափով մատչելի և ճշգրիտ լինի՝ կամայականության վտանգից խուսափելու համար»:

Հետևաբար, պայմանական վաղաժամկետ ազատման վերաբերյալ հարցի քննությունը պետք է՝

- հիմնված լինի օրենքով սահմանված, մատչելի և կանխատեսելի ընթացակարգերի վրա,
- իրականացվի մրցակցային սկզբունքով,
- կայացված որոշումը պետք է լինի պատճառաբանված և օբյեկտիվ, իսկ որոշման հետ դատապարտյալի անհամաձայնության դեպքում դատապարտյալն իրավունք ունենա բողոքարկելու այն:

Անհրաժեշտ է փաստել, որ քննարկվող հարցի շուրջ միջազգային փորձում (խոսքը վերաբերում է այն պետություններին, որտեղ, բացի դատական կարգից, պատժից պայմանական վաղաժամկետ ազատման վերաբերյալ վերջնական որոշում կարող է կայացվել նաև հանձնաժողովային կարգով) ներդաշնակություն չի տիրում:

Այսպես, Խորվաթիայում պայմանական վաղաժամկետ ազատման մասին որոշում կայացնում է հանձնաժողովը, որը բաղկացած է 4 (5) անդամից: Հանձնաժողովի անդամներին նշանակում է արդարադատության նախարարը: Անդամներից մեկը քրեակատարողական վարչության կենտրոնական գրասենյակի ներկայացուցիչ է, մյուսը՝ պետական փաստաբանների գրասենյակի ներկայացուցիչ, երկու դատավոր և մեկ ոչ մշտական հիմունքներով պատիժը նշանակող

⁷ St' u Amuur v. France, զանգստ թիվ 19776/92, 1996 թվականի հունիսի 25-ի վճիռ:

դատավոր, որին ենթակա են տվյալ պատժի կրման վայրի գործերը: Հանձնաժողովի գործունեության կարգը սահմանում է արդարադատության նախարարը:

Կանադայում պայմանական վաղաժամկետ ազատման մասին որոշումների կայացման բացառիկ իրավունքը պատկանում է պայմանական վաղաժամկետ ազատման ազգային հանձնաժողովին: Այս հանձնաժողովը բաղկացած է ոչ ավելի, քան 45 լրիվ դրույքով և մի քանի կես դրույքով աշխատող անդամներից, որոնց՝ նախարարի առաջարկությամբ նշանակում է Կանադայի գլխավոր նահանգապետը՝ համապատասխանաբար 10 և 3 տարի ժամկետով: Անդամները պետք է ունենան կրթություն տարբեր ոլորտներում՝ իրավաբանություն, քրեաբանություն, սոցիալական աշխատանք, հոգեբանություն և այլն:

Ամերիկայի Միացյալ Նահանգներում պայմանական վաղաժամկետ ազատման հանձնաժողովները բաղկացած են նախկին բանտային ծառայողներից կամ այլ հաստատություններում (հանախ բանտերում) ծառայող անձանցից: Հանձնաժողովները, որպես կանոն, գտնվում են պետական գործադիր մարմնում, ընդ որում՝ անդամներին նշանակում է նահանգապետը:

Մեծ Բրիտանիայում 2005 թվականին ուժի մեջ մտած Քրեական արդարադատության ակտի ուժով որոշակի ժամկետով ազատագրվման դատապարտված անձանց պայմանական վաղաժամկետ ազատումը դարձավ պարտադիր՝ պատժի համապատասխան մասը կրելուց հետո: Այս դեպքում համապատասխան պայմաններ է նշանակում բանտի վարչակազմը: Առանձին հանցագործությունների դեպքում պայմանական վաղաժամկետ ազատման վերաբերյալ որոշումները կայացնում է պայմանական վաղաժամկետ ազատման հանձնաժողովը: 2016 թվականի դրությամբ հանձնաժողովի կազմում ընդգրկված է 206 անդամ՝ դատավորներ, հոգեբաններ, քրեաբաններ, պրոբացիայի ծառայողներ, հաշտարարներ, փաստաբաններ, գիտնականներ և այլ անկախ անձինք: Հանձնաժողովն իր գործառնություններն իրականացնում է բազմազան ընթացակարգերով՝ որոշ դեպքերում՝ միայն գրավոր կերպ, որոշ դեպքերում՝ բանավոր, 1 կամ 3 անդամներով:

Խնդրո առարկայի մասին առավել ամբողջական պատկերացում կազմելու նպատակով դիտարկենք, թե ինչպես են կարգավորված պայմանական վաղաժամկետ ազատման ինստիտուտին վերաբերող հիմնահարցերը տարբեր երկրներում:

Գերմանիայի Դաշնային Հանրապետության քրեական օրենսգրքի հոդված 57-ի համաձայն՝ որոշակի ժամկետով ազատագրվման ձևով պատժից պայմանական վաղաժամկետ ազատումը կարող է կիրառվել դատարանի կողմից, եթե՝

- 1) դատապարտյալը կրել է պատժի 2/3-ը, սակայն երկու ամսից ոչ պակաս,
- 2) անձի ազատումը ընդունելի է՝ հաշվի առնելով նաև հասարակության անվտանգության ապահովման շահերը,
- 3) դատապարտյալը համաձայն է, որ իր նկատմամբ պատժից պայմանական վաղաժամկետ ազատում կիրառվի:

Որոշ դեպքերում դատարանն իրավունք ունի պայմանական վաղաժամկետ ազատել նաև պատժի կեսը, սակայն վեց ամսից ոչ պակաս ժամկետով ազատագրվում կրած անձին՝ երկու ինքնուրույն հիմքերի առկայության դեպքում, այն է՝ 1) դատապարտյալը ազատագրվման ձևով պատիժ է կրում առաջին անգամ, և նշանակված պատիժը չի գերազանցում երկու տարին, 2) դատապարտյալի անձը, նրա կատարած արարքի բնույթը, ազատագրվման վայրում գտնվելու ժամանակ նրա զարգացումը թույլ են տալիս կոնկրետ դեպքը գնահատել որպես առանձնահատուկ: Գերմանիայի քրեական օրենսգրքի հոդված 57-ը սահմանում է, որ ցմահ ազատագրվման դատապարտված անձը կարող է պատժից պայմանական վաղաժամկետ ազատվել, եթե դատապարտյալը փաստացի կրել է ազատագրվման 15 տարին, հասարակության համար վտանգ չի ներկայացնում, և նրա կողմից պատժի հետագա կրման անհրաժեշտություն չկա: Ի դեպ, հարցի նման կարգավորում է նախատեսված նաև Շվեյցարիայի քրեական օրենսդրությամբ:

Ավստրիայի քրեական օրենսդրությունը ևս նախատեսում է պատժից պայմանական վաղաժամկետ ազատման ինստիտուտ, որը, սակայն, հնարավոր է համարվում դատապարտյալի կողմից ազատագրվման մեկ երկրորդը փաստացի կրելուց հետո: Ընդ որում, ամեն դեպքում այդ ժամկետը չի կարող պակաս լինել երեք ամսից: Պատժից պայմանական վաղաժամկետ ազատվելու չափանիշները Ֆրանսիայում ներառված են ոչ թե քրեական, այլ քրեական դատավարության օրենսգրքում, որի հոդված 729-ը սահմանում է, որ պատժից պայմանական վաղաժամկետ ազատում հնարավոր է դատապարտյալի կողմից նշանակված պատժի առնվազն մեկ երկրորդը, իսկ քրեական օրենսգրքի հոդվածներ 132-8, 132-9, 132-10-ի իմաստով ռեցիդիվ դրսևորած անձանց պարագայում՝ երկու երրորդը փաստացի կրելուց հետո: Ցմահ ազատագրվման դատապարտված անձինք պատժից պայմանական վաղաժամկետ կարող են ազատվել նվազագույնը 15 տարի ժամկետով ազատագրվում կրելուց հետո:

Իսպանիայում դատապարտյալը սովորաբար կարող է պայմանական վաղաժամկետ ազատվել պատժի կրումից, եթե փաստացի կրել է պատժի երեք քառորդը, դրսևորել է անբասիր վարքագիծ և հիմք տվել կարծելու, որ հասարակությունն վերադառնալու պարագայում նա այլևս հանցանք չի կատարի: Առանձին դեպքերում Իսպանիայի քրեական օրենսդրությունը թույլ է տալիս անձին պայմանական վաղաժամկետ ազատել նաև պատժի երկու երրորդը, իսկ բացառիկ դեպքերում՝ մեկ երկրորդը փաստացի կրելուց հետո, թեև օրենսդրությամբ հստակ չեն սահմանված այն չափանիշները, որոնք թույլ կտան տարբերակել, թե որ դեպքերում պետք է որպես պարտադիր պայման դիտվի պատժի 3/4-ը, իսկ որ դեպքերում՝ 2/3-ը կամ 1/2-ը կրած լինելը:

Մեծ Բրիտանիայում պատժից պայմանական վաղաժամկետ ազատում կարող է կիրառվել անբասիր վարք դրսևորած այն դատապարտյալի նկատմամբ, որը փաստացի կրել է պատժի մեկ երրորդը: Ընդ որում, այդ ժամկետը չի կարող

պակաս լինել 12 ամսից: Պայմանական վաղաժամկետ կարող են ազատվել նաև նրանք, ովքեր դատապարտված են ցմահ ազատազրկման:

ԱՄՆ-ում պատժից պայմանական վաղաժամկետ ազատման հիմքերն ու պայմանները տարբեր նահանգներում նույնական չեն: Ընդհանուր մոտեցման համաձայն՝ պատժից պայմանական վաղաժամկետ ազատումը թույլատրվում է ոչ պակաս, քան երեք հիմքերի միաժամանակյա առկայության դեպքում.

- 1) եթե օրենքը կոնկրետ կատեգորիայի դատապարտյալների՝ պատժից պայմանական վաղաժամկետ ազատման համար արգելք չի նախատեսում (օրինակ՝ որոշ նահանգներում նման արգելք է սահմանված ցմահ ազատազրկման դատապարտվածների, ծանրացուցիչ հանգամանքներում սպանություն կատարած անձանց համար),
- 2) եթե դատապարտյալը փաստացի կրել է պատժի որոշակի ժամկետը,
- 3) եթե մարմինը, որի վրա դրված է դատապարտյալին պայմանական վաղաժամկետ ազատելու հարցի լուծումը, գտնում է, որ տվյալ դատապարտյալը «իրեն լավ է դրսևորել» և ընդունակ կլինի ազատվելուց հետո գերծ մնալ նոր հանցանքներ կատարելուց, կատարել պատժից պայմանականորեն ազատված անձանց վարքի նկատմամբ հսկողություն իրականացնող մարմնի ցուցումները և վտանգ չի ներկայացնի հասարակության համար:

ԱՄՆ-ի նահանգների մեծ մասում դատարանը դատավճիռ կայացնելիս սահմանում է, թե պատժի քանի տարին կրելուց հետո դատապարտյալը պատժից պայմանական վաղաժամկետ ազատվելու իրավունք կստանա:

Պայմանական վաղաժամկետ ազատման վերաբերյալ գոյություն ունեցող միջազգային ստանդարտները ձևավորվել են մասնավորապես ՄԱԿ-ի և Եվրոպայի Խորհրդի կողմից: Այսպես, Միավորված ազգերի կազմակերպության կողմից Ազատազրկման հետ կապ չունեցող նվազագույն ստանդարտ կանոնների (Տոկիոյի Կանոններ) չորրորդ մասով սահմանված են դատապարտյալների կողմից հասարակություն վերադառնալու մեխանիզմներն ու անհրաժեշտ գործողությունները: Մասնավորապես, սահմանված է, որ իրավասու մարմինը պետք է իր տրամադրության տակ հետդատապարտման մի շարք այլընտրանքներ ունենա՝ ինստիտուցիոնալացումից խուսափելու և դատապարտյալների ինտեգրմանը նպաստելու նկատառումներից ելնելով: Իսկ նույն գլխի 9.4 կետի համաձայն՝ ազատման ցանկացած եղանակ պետք է հնարավորինս վաղ իրականացվի: ՄԱԿ-ի կողմից ընդունված մեկ այլ խումբ կանոնների, այն է՝ Բանգկոկի Կանոնների⁸ համաձայն՝ պայմանական վաղաժամկետ ազատման որոշումները պետք է կիրառելի լինեն նաև իզական սեռի դատապարտյալների համար: Թերևս պայմանական վաղաժամկետ ազատման վերաբերյալ առավել մանրակրկիտ մոտեցում

⁸ Տե՛ս «Ազատությունից զրկելու հետ չկապված միջոցների վերաբերյալ» 1990 թվականի դեկտեմբերի 14-ի ՄԱԿ-ի նվազագույն ստանդարտ կանոնները (Տոկիոյի կանոններ):

ցուցաբերվել է Եվրոպայի Խորհրդի կողմից: Դեռևս 1973 թվականին ԵԽ կողմից ընդունվեցին Եվրոպական Բանտային Կանոնները⁹, որոնք վերանայվել և զարգացում են սպրել 2006 թվականին՝ ի պատասխան պատժողական քաղաքականության զարգացումներին: Այս կանոնները հիմնված են ՄԱԿ-ի ստանդարտ նվազագույն կանոնների վրա, որոնք սահմանում են դատապարտյալների և բանտային պայմանների վերաբերյալ ընդհանուր ճանաչում և ընդունում գտած սկզբունքներն ու պրակտիկան:

Պայմանական վաղաժամկետ ազատման մասով կանոնները սահմանում են ազատ արձակումից առաջ և հետո դատապարտյալներին հատուկ ծրագրերի ու միջոցառումների միջոցով տրամադրվող օժանդակության հիմնական միջոցները: Եվրոպայի խորհրդի կողմից 2003 թվականին ընդունվել է պայմանական ազատման վերաբերյալ /2003/22 հանձնարարականը՝ հիմք ընդունելով այն, որ պայմանական ազատումը նոր հանցագործության կատարումը կանխելու և դատապարտյալի պլանավորած ու վերահսկվող ինտեգրումն ապահովելու ամենաարդյունավետ միջոցներից մեկն է: Հանձնարարականի համաձայն՝ պայմանական ազատումը նշանակում է դատապարտյալի վաղաժամկետ ազատումը՝ հետազատման անհատականացված պայմանների ներքո: Ընդ որում, ներումն ու համաներումը այս սահմանման մեջ չեն մտնում: Հանձնարարականում տեղ գտած ընդհանուր սկզբունքների համաձայն՝ պայմանական ազատումը պետք է նպատակ հետապնդի օգնել դատապարտյալին բանտային կյանքից անցում կատարել հասարակական, օրինապահ կյանքի՝ հսկողության և հետազատման պայմաններ սահմանելու միջոցով: Ներպետական օրենքները պետք է նման հնարավորությունն ընձեռեն բոլոր դատապարտյալներին՝ ներառյալ ցմահ ազատազրկվածներին: Վերը ներկայացված միջազգային ստանդարտների և ՀՀ-ում գործող համանման դրույթների համեմատությունը ցույց է տալիս, որ ՀՀ օրենսդրական դաշտն ու իրավակիրառ պրակտիկան դեռևս լրացումների և շտկումների կարիք ունեն: Այսպես, համաձայն վերը ներկայացված ԵԽ բանտային կանոնների՝ ազատ արձակումից բավականաչափ երկար ժամանակ առաջ դատապարտված բանտարկյալներին պետք է աջակցություն ցուցաբերել՝ հատուկ ընթացակարգերով և ծրագրերով, որոնք նրանց հնարավորություն կտան բանտային կյանքից անցում կատարել հասարակություն՝ օրինապահ կյանքի: Հաջորդ դրույթի համաձայն՝ ավելի երկար ժամկետներով պատիժներ կրող բանտարկյալների դեպքում պետք է քայլեր ձեռնարկել դեպի հասարակություն նրանց աստիճանական վերադարձը երաշխավորելու ուղղությամբ: Վերջինս հնարավոր է իրականացնել նախքան ազատ արձակվելը բանտում իրականացվող ծրագրերի միջոցով կամ վերահսկողության ներքո մասնակի կամ պայմանական ազատմամբ՝ համադրելով սոցիալական օժանդակության հետ: Հաջորդ կետի համաձայն՝ սոցիալական ծառայությունների կամ մարմինների ներկայացուցիչ-

⁹ <https://rm.coe.int/16806f5b92>

ներին պետք է հնարավորություն տրվի անհրաժեշտության դեպքում ցանկացած ժամանակ մուտք գործել բանտ և հանդիպել բանտարկյալների հետ՝ օգնելու վերջիններիս ազատ արձակմանը նախապատրաստվելու և ազատ արձակումից հետո իրականացվող խնամքի ծրագրեր պլանավորելու գործում¹⁰:

Եզրակացություն

Քննարկվող ինստիտուտի ցածր արդյունավետության պատճառները պետք է փնտրել թե՛ օրենսդրության և թե՛ իրավակիրառ ոլորտներում: Առաջին հերթին, էական բարեփոխումների կարիք ունի պատիժը կրելուց պայմանական վաղաժամկետ ազատելու ինստիտուտի կիրառումն ապահովող ենթաօրենսդրական կարգավորումները, մասնավորապես ՀՀ արդարադատության նախարարի 2018 թվականի հունիսի 12-ի 336-Լ հրամանը:

Վերոշարադրյալի հիման վրա՝ պատժի կրման ընթացքում դատապարտյալի կողմից պատշաճ վարքագիծ դրսևորելու և նոր հանցանք կատարելու հավանականությունը գնահատելու համատեքստում առկա է Չեկոյցների կազմման կառուցակարգը վերանայելու անհրաժեշտություն, ինչը հնարավորություն կտա առավել ամբողջական և համապարփակ պատկերացում կազմել դատապարտյալի անձի, պատժի կրման ընթացքում նրա դրսևորած վարքագծի, վերասոցիալականացման, պատժի մնացած մասը կրելու անհրաժեշտության բացակայության, ուղղման ճանապարհին կանգնած լինելու, իրավահպատակ վարքագիծ դրսևորելու հավանականության և պատժի նպատակներն իրագործված լինելու վերաբերյալ:

Իրավական ոչ հստակությունը, առանձին հասկացությունների օրենսդրական բնորոշման բացակայությունը խնդիրներ են ստեղծում այս ինստիտուտի կիրառման միատեսակությունն ապահովելիս և հաճախ հանգեցնում իրավակիրառ պրակտիկայում ծագող խնդիրների իրարամերժ լուծումների, սխալների: Օրինակ՝ առ այսօր հստակեցված չէ, թե ո՞րն է «դատապարտյալի վերասոցիալականացման» այն աստիճանը, որը բավարար է կոնկրետ անձին պատիժը կրելուց պայմանական վաղաժամկետ ազատելու կամ նման ազատումը մերժելու համար, կամ ի՞նչ չափանիշների հիման վրա պետք է որոշվի այդ աստիճանը: Բովանդակային վերանայման կարիք ունի պատիժը կրելուց պայմանական վաղաժամկետ ազատված դատապարտյալների հետ «փորձաշրջանի» ընթացքում իրականացվող աշխատանքների շրջանակը՝ հասարակությունում նրանց վերաինտեգրումն ապահովելու, օրինապահ վարքագիծ դրսևորելու ունակություններ ձևավորելու և դրանք ամրապնդելու առումով: Ներկայումս նման գործունեություն թեև իրականացվում է ՀՀ արդարադատության նախարարության պրոբացիայի ծառայության կողմից, սակայն դատապարտյալի հետ տարվող «աշխատանքը», որպես

¹⁰ Պատիժը կրելուց պայմանական վաղաժամկետ ազատման համակարգի առանձնահատկությունները Հայաստանի Հանրապետությունում, Հ. Հարությունյան, Հ. Ալումյան:

կանոն, սահմանափակվում է նրանց վարքագծի նկատմամբ ձևական վերահսկողություն սահմանելով: Բնականաբար, բարձրացված խնդիրների լուծումը գուտ օրենսդրական մակարդակում սահմանափակվել չի կարող և անհրաժեշտ է նաև ապահովել այս ինստիտուտի կիրառման համակարգային տարրը, մասնավորապես՝ որակյալ պրոֆեսիոնալ կադրերով ապահովված պրոբացիայի ծառայության ձևավորմամբ, որը ևս ներկայիս սոցիալ-տնտեսական պայմաններում մարտահրավեր է ՀՀ իրավական համակարգի համար: Վերոգրյալը մի մասն է միայն պատժից պայմանական վաղաժամկետ ազատելու ինստիտուտի կիրառման հիմնախնդիրների, որոնք, սակայն, արդեն իսկ վկայում են սույն աշխատության արդիականության մասին:

Գրականության ցանկ (reference list, список литературы)

1. ՀՀ քրեական օրենսգիրք
RA Criminal Code
2. ՀՀ քրեակատարողական օրենսգիրք
RA Criminal Executive Code
3. ՀՀ քրեական դատավարության օրենսգիրք
RA Criminal Procedure Code
4. ՀՀ քրեակատարողական իրավունք, Հ. Մ. Խաչիկյան
Criminal law of the Republic of Armenia. Khachikyan Kh. M.
5. ՀՀ դատախազության տարեկան գործունեության վերաբերյալ հաղորդումներ ՀՀ Ազգային ժողով
Report of 2018 on activities of the RA prosecutor’s office
6. Եվրախորհրդի նախարարների կոմիտեի «Պատիժը կրելուց պայմանական վաղաժամկետ ազատելու մասին» հանձնարարական
Recommendation of the Committee of Ministers of the Council of Europe “On parole from serving the sentence”.
7. ՀՀ վճռաբեկ դատարանի Գարիկ Ստեփանի Դավթյանի վերաբերյալ նախադեպային որոշումը
The precedent decision of the RA Court of Cassation regarding Garik Stepani Davtyan
8. Պատիժը կրելուց պայմանական վաղաժամկետ ազատման համակարգի առանձնահատկությունները Հայաստանի Հանրապետությունում, Հ. Հարությունյան, Հ. Ալումյան
Features of the parole system in the Republic of Armenia, H. Harutyunyan, H. Alummyan
9. Amur v. France, գանգատ թիվ 19776/92, 1996 թվականի հունիսի 25-ի վճիռ
Amur v. France, Complaint No. 19776/92, Judgment of June 25, 1996

Vahan Harutyunyan

*Prosecutor of the Department for Cases of Crimes against the
Fundamentals of the Constitutional Order, State and Public
Security of the Prosecutor General's Office of the
Republic of Armenia, First Rank Counsellor of Justice*

INSTITUTE OF CONDITIONAL EARLY RELEASE IN THE REPUBLIC OF ARMENIA¹

Abstract

The article refers to the analysis of the institution of parole from the further serving of the sentence of persons sentenced to a certain term or life imprisonment in the Republic of Armenia, in particular, the current and previous legislative regulations, the changes made, their comparison, the problems arising in practice, as well as the possible new legislative changes for their solution.

In the article, an attempt was made to outline in the most accessible and accessible way possible the legislative regulations regarding early release from punishment, one of the fundamental rights of persons sentenced to life imprisonment or a certain period of imprisonment, which is an important and integral part of the penal legislation during the formation of the new legal system after the achievement of independence in the Republic of Armenia, because in practice the majority of complaints among convicts relate to the problems arising in the process of their parole.

An analysis was made of both the previously existing legal regulations and the new legal regulations that came into force on July 1, 2022, and their differences were also analyzed.

The article also describes the legal positions expressed in precedent decisions of the RA Court of Cassation regarding the parole of persons sentenced to life imprisonment or a certain period of imprisonment, as well as the international practice regarding it. The current legislative regulations in the Republic of Armenia were compared with the international practice.

Accordingly, the Order 336-L of the RA Minister of Justice of June 12, 2018, which is a cornerstone in the process of parole for persons sentenced to life or a certain term of imprisonment, needs to be amended and amended in terms of assessing and summarizing the standards of convicts.

Keywords: punishment; parole; release; international experience; legislation; code; cassation; criminal; penitentiary.

¹ The article was presented on 01.09.2023 and was reviewed on 25.03.2024.

Ваан Арутюнян

*Прокурор управления по преступлениям против основ конституционного строя, государства и общественной безопасности
Генеральной прокуратуры Республики Армения,
советник юстиции первого класса*

ИНСТИТУТ УСЛОВНО-ДОСРОЧНОГО ОСВОБОЖДЕНИЯ В РЕСПУБЛИКЕ АРМЕНИЯ¹

Абстракт

В статье речь идет об анализе института досрочного условно-досрочного освобождения для лиц, осужденных к определенному сроку или пожизненному заключению в Республике Армения, в частности, законодательных норм, изменений, проблем, возникающих на практике, возможных новых законодательных изменений для их решения.

В статье предпринята попытка в максимально доступной форме изложить законодательные нормы, касающиеся досрочного освобождения от наказания, одного из основных прав лиц, приговоренных к пожизненному или определенному сроку лишения свободы, что является важной и неотъемлемой частью уголовного законодательства в период формирования новой правовой системы после обретения независимости Республики Армения, поскольку на практике большинство жалоб осужденных связаны с проблемами, возникающими в процессе их условно-досрочного освобождения. Был проведен анализ как ранее существовавших правовых норм, так и новых правовых норм, вступивших в силу с 1 июля 2022 года, а также проанализированы их различия.

В статье также описываются правовые позиции, выраженные в прецедентных решениях Кассационного суда РА относительно условно-досрочного освобождения лиц, приговоренных к пожизненному заключению или определенному сроку лишения свободы, а также международная практика по этому поводу. Действующее законодательное регулирование Республики Армения было сопоставлено с международной практикой.

Соответственно, в Приказ Министра юстиции РА от 12 июня 2018 года 336-Л, который является краеугольным камнем в процессе условно-досрочного освобождения лиц, приговоренных к пожизненному или определенному сроку лишения свободы, необходимо внести изменения и дополнения в части оценки и обобщение стандартов осужденных.

Ключевые слова: наказание; условно-досрочное освобождение; освобождение; международный опыт; законодательство; кодекс; кассация; уголовный; пенитенциарный процесс.

¹ Статья была представлена 01.09.2023 и прошла рецензирование 25.03.2024.

Ռորերտ Միերյան

ՀՀ գլխավոր դատախազության սահմանադրական կարգի հիմունքների, պետության և հասարակական անվտանգության դեմ ուղղված հանցագործությունների գործերով վարչության դատախազ, Երևանի պետական համալսարանի իրավագիտության ֆակուլտետի քրեական դատավարության և կրիմինալիստիկայի ամբիոնի հայցորդ

ՆԿԱՏԱՌՈՒՄՆԵՐ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՎԱՐՈՒՅԹԻ ԷՈՒԹՅԱՆ ԵՎ ՎԵՐԱԲԵՐԵԼԻ ԱՌԱՆՁԻՆ ՀԱՐՑԵՐԻ ՕՐԵՆՍԴՐԱԿԱՆ ԿԱՐԳՎՎՈՐՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ¹

Համառոտագիր

Սույն աշխատանքն ուսումնասիրում է համագործակցության վարույթի՝ որպես պարզեցված դատավարական ձևի վերաբերյալ որոշ հիմնախնդիրներ, ներկայացվում է դրա հասկացությունը և դրանում գործածված տերմինաբանությունը:

Նշված ինստիտուտը ներպետական իրավական համակարգում դեռևս համեմատաբար նոր է մտել կիրառական դաշտ, ինչը նշանակում է, որ գործնական աշխատանքում առաջացել և առաջանալու են մի շարք խնդիրներ, որոնց մի մասի առաջանցիկ քննարկումը վստահաբար կարող է նպաստել դրանց առավել ճշգրիտ լուծումների որոնմանը և այդ լուծումների կիրառմանը, ինչով պայմանավորված է նաև աշխատանքի արդիականությունը: Աշխատանքով խնդիր է դրված վեր հանել համագործակցության վարույթի կիրառման շրջանակներում հնարավոր առաջացող խնդիրները, քննարկել դրանց իրավական կարգավորումները, վեր հանել խնդրահարույց և արդյունավետ կողմերը, և որպես աշխատանքի նպատակ՝ առաջարկել դրանց համար որոշակի լուծումներ:

Քննարկման առարկա են դարձվել համագործակցության սահմանների, մեղադրյալի միջնորդության, հսկող դատախազի կողմից դրա վերաբերյալ կայացվող որոշման, քննիչի կարծիքի, «չհաջողված» համագործակցության, միջնորդություն անմիջապես դատախազին ներկայացնելու, ինչպես նաև մեղադրյալի իրեն վերագրվող արարքում մեղքն ընդունելու վերաբերյալ հստակ արտահայտված դիրքորոշման բացակայության պայմաններում բանակցությունների արդյունքում համագործակցության համաձայնագրի կնքման հնարավորության վերաբերյալ հարցերը, դրանց վերաբերյալ ներկայացվել են առաջարկներ: Քննարկվել են նաև այն իրավիճակները, երբ փաստաթղթային առումով մեղադրյալ չհանդիսացող ան-

¹ Հոդվածը ներկայացվել է 31.01.2024 թ., գրախոսվել է 17.05.2024 թ.:

ձը, ըստ էության, համագործակցում է նախաքննական մարմինների հետ՝ տեղեկացված չլինելով, որ իր իրազեկության ներքո գտնվող տեղեկատվությունը կարող էր դառնալ համագործակցության վարույթի առարկա:

Մատնանշված հարցերի վերաբերյալ աշխատանքում կատարված նկատառումները կարող են էլ ավելի լավարկել գործող իրավակարգավորումները՝ ի նպաստ վարույթի մասնավոր և հանրային մասնակիցների:

Հիմնաբառեր - համագործակցության վարույթ, համաձայնագիր, դատախազ, մեղադրյալ, գործարք, համագործակցության առարկա:

Ներածություն

ՀՀ քրեական դատավարության օրենսդրական վերջին շրջափուլի զարգացումների բերմամբ, ի թիվս այլ պարզեցված դատավարական ձևերի, ներդրվեց համագործակցության վարույթի ինստիտուտը: Նշված ինստիտուտը ներպետական իրավական համակարգում դեռևս համեմատաբար նոր է մտել կիրառական դաշտ, ինչը նշանակում է, որ գործնական աշխատանքում առաջացել և առաջանալու են մի շարք խնդիրներ, որոնց մի մասի առաջանցիկ քննարկումը, վստահաբար, կարող է նպաստել դրանց առավել ճշգրիտ լուծումների որոնմանը և այդ լուծումների կիրառմանը, ինչով պայմանավորված է նաև աշխատանքի արդիականությունը:

Աշխատանքով խնդիր է դրված վեր հանել համագործակցության վարույթի կիրառման շրջանակներում հնարավոր առաջացող խնդիրները, քննարկել դրանց իրավական կարգավորումները, վեր հանել խնդրահարույց և արդյունավետ կողմերը, և որպես աշխատանքի նպատակ՝ առաջարկել դրանց համար որոշակի լուծումներ:

«Համագործակցության վարույթը»՝ որպես ինստիտուտ և հասկացություն

Համագործակցության վարույթը, որն իրավական ծագումնաբանության առումով սկզբնավորվել է անգլոսաքսոնական իրավական համակարգից, տվյալ իրավական համակարգում ունի առավել երկարաժամկետ կիրառություն, քան հետխորհրդային պետություններում: Հիշյալ ինստիտուտը, որը, մասնավորապես Միացյալ Նահանգներում առավել հայտնի է որպես «Plea bargain», և իր էությամբ ասոցացվում է մեղքի ընդունման գաղափարի հետ, քրեական գործերի հանգուցալուծման առումով վերջին տարիներին համարվում է գրեթե միակ գործիքը՝ ունենալով շուրջ 98 % կիրառություն²: Բացի այդ, ամերիկյան վիճակագրությունը վկայում է, որ նրանք, ովքեր հրաժարվում են պարզեցված դատավարական ընթացակարգով գործի քննությունից և նախընտրում են իրենց գործի

² <https://www.americanbar.org/news/abanews/aba-news-archives/2023/02/plea-bargain-task-force/>

քննության ընդհանուր կարգով իրականացումը, դատապարտվում են առավել խիստ պատիժների և պատժաչափերի, քան համագործակցության վարույթի կիրառման դեպքերում³:

Վերը նշվածի համատեքստում կարելի է պնդել, որ անգլոսաքսոնական իրավական համակարգը և հասարակությունը եկել են այն գիտակցմանը, որ կարող է և պետք է խրախուսվի և ենթարկվի առավել մեղմ պատասխանատվության այն հանցագործը, որը ոչ միայն ընդունել է մեղքը, գղջացել կատարած արարքի համար, այլև համագործակցել է իրավապահ մարմինների հետ և բացահայտել իր բնույթով համաչափ կամ առավել վտանգ ներկայացնող մեկ այլ հանցագործի կամ հանցավոր խմբի: Այլ խոսքով՝ հասարակությունը համաձայնել է, որ այս չարիքների դեմ պայքարելու համար կարելի է գնալ սոցիալական պաշտպանության ավանդական միջոցներից որոշ զիջումների, որոնցից ամենակարևորն այն է, որ ոչ բոլոր հանցագործները պետք է ենթարկվեն համարժեք պատասխանատվության: Սա, ինչ խոսք, դատավարական հայեցողության լուրջ հնարավորություններ և միաժամանակ պատասխանատվություն է ստեղծում հենց դատախազության համար, որը և քրեական դատավարությունում մարմնավորում է համընդհանուր տուժող հասարակությունը: Դատախազն է, որ պետք է ապահովի այնպիսի պատիժ, որն իրոք կհամապատասխանի արդարացի հատուցման մասին՝ հասարակության, ողջամիտ դիտորդի պատկերացումներին և հասարակությանը այդպիսով կհաշտեցնի հանցագործի հետ⁴:

Համագործակցության վարույթի ինստիտուտը ՀՀ քրեադատավարական համակարգ ներդրվել է 2021 թվականի կեսերին և, ի հեճուկս վերը նշված՝ ամերիկյան ցուցանիշի, իր կիրառման առումով դեռևս, մեղմ ասած, աչքի չի ընկնում: Պատճառները բազմաթիվ են՝ սկսած դրա նոր լինելու և կիրառման առումով դեռևս պրակտիկա ձևավորված չլինելու հանգամանքից, վերջացրած դրա կիրառման իրավական մշակույթի, հանցանք կատարած անձանց՝ իրավապահ մարմինների հետ ոչ այնքան հաճախ համագործակցելու ավանդույթների բացակայությամբ: Մինևույն ժամանակ, արձանագրման է ենթակա, որ ՀՀ իրավական համակարգում առավել լայն կիրառություն ունեն պարզեցված մյուս դատավարական ձևերից համաձայնեցման և արագացված վարույթները:

Համագործակցության վարույթի տեսական և կիրառական հիմնախնդիրներին նախքան անդրադառնալը օբյեկտիվորեն անհրաժեշտ է քննարկման առարկա դարձնել բուն եզրույթի՝ «Համագործակցության վարույթի»՝ որպես հասկացության վերաբերյալ հիմնահարցերը:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 13-րդ բաժնում տեղ գտած առանձին տեսակի վարույթների կամ որ նույնն է՝ պարզեցված դատավարական

³ <https://bja.ojp.gov/sites/g/files/xyckuh186/files/media/document/pleabargainingresearchsummary.pdf>
⁴ Խաչատրյան Դ., Համագործակցության վարույթ. իրավափիլիսոփայական հիմքերը, կիրառման շրջանակներն ու կարգը, արդյունավետության երաշխիքները և զարգացման հեռանկարները, Երևան, «Պետություն և իրավունք», № 2 (64), 2014 թ., էջ 69:

ձևերի շարքում իր ուրույն տեղն է զբաղեցնում համագործակցության վարույթը: Դատավարական ձևի պարզեցումն ինչպես հանցագործություններին առավել արագ և օպերատիվ արձագանքելու, այնպես էլ առավելագույն տնտեսման պայմաններում գործերն արագ և արդյունավետ քննելու և լուծելու նպատակ է հետապնդում⁵:

Ինչպես նշված բաժնի մյուս վարույթները, այնպես էլ քննարկման առարկա հանդիսացող համագործակցության վարույթը միտված են դատավարական ձևի պարզեցմանը, հանրային իրավական ռեսուրսների խնայողական՝ օպտիմալ կառավարմանը և բաշխմանը, օպերատիվ և միևնույն ժամանակ պատշաճ իրավական ընթացակարգերի շրջանակներում նախաձեռնված քրեական վարույթների շրջանակներում հանցագործությունների բացահայտմանը և քրեադատավարական վերջնական պատակի՝ արդարադատության իրականացմանն ու արդարության վերականգնմանը: Համագործակցության վարույթի նպատակը ոչ թե պարզապես ավելի ծանր հանցագործությունը բացահայտելն ու մեղավորներին քրեական պատասխանատվության ենթարկելն է, այլ, ի վերջո, համարժեք պատասխան տալը հանցավոր դրսևորումները ծնող փոքր թե մեծ համակարգին⁶:

«Համագործակցության վարույթ» եզրույթն ինքնին հենց բնորոշում է այդ ինստիտուտի էությունը: Նշված ինստիտուտի գործարկման առաջնային պայմանը քրեական վարույթի շրջանակներում արդեն իսկ մեղադրյալի դատավարական կարգավիճակ ունեցող անձի նախաձեռնողականությունն է՝ մինչդատական համաձայնագիր կնքելու մասին գրավոր միջնորդություն կամ համագործակցության միջնորդություն (ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 465-րդ հոդվածի 2-րդ մաս) ներկայացնելու ձևով: Նշված տերմինաբանությունը (համագործակցություն, համաձայնագիր) իրավագիտության մեջ մեծապես կիրառվում է մասնավոր իրավունքի ոլորտում և առաջին հայացքից խորթ է թվում հանրային, առավել ևս՝ քրեադատավարական հարաբերությունների տիրույթում:

«Համագործակցություն» հասկացությունն ընկալվում է որպես կողմերի՝ որևէ հարցի կամ հարցերի շրջանակի շուրջ իրավունքների, պարտականությունների փոխադարձ սահմանմամբ, դրանից բխող պատասխանատվության որոշմամբ ձեռք բերված համաձայնություն, գործարք, ինչի արդյունքում «կնքվում է համաձայնագիր» կամ ինչի արդյունքներն արտացոլվում են «համաձայնագրում»: Հետևապես, որպես ընթացքի և արդյունքի հարաբերակցություն՝ համագործակցության արդյունքում «կնքվում է» համաձայնագիր: Տեսական գրականությունում մի շարք դատավարագետներ են այս ինստիտուտը դիտարկում որպես գործարք: Օրինակ՝ Վ. Բիկովի դիրքորոշման համաձայն՝ համագործակցության

⁵ Ղուկասյան Հ., Մելքոնյան Դ., Տարբերակված դատավարության ձևը և դրա առանձնահատկությունները, Երևան, «Պետություն և իրավունք», № 1, 2007 թ., էջեր 33-34:

⁶ Խաչատրյան Դ., Համագործակցության վարույթ. իրավափիլիսոփայական հիմքերը, կիրառման շրջանակներն ու կարգը, արդյունավետության երաշխիքները և զարգացման հեռանկարները, Երևան, «Պետություն և իրավունք», № 2 (64), 2014 թ., էջ 69:

վերաբերյալ համաձայնագրի կիրառմամբ գործի քննության հատուկ կարգը «արդարադատության հետ գործարքի» է նման⁷:

Վերը նշված ընդհանուր մեկնաբանության պրիզմայում դիտարկելով քրեադատավարական «համագործակցության» հասկացությունը և դրանում ներառելով այդ ինստիտուտի առանձնահատկությունները՝ պետք է փաստել, որ մինչդասական համագործակցությունը քրեադատավարական կողմերի՝ վարույթի հանրային և մասնավոր մասնակիցներից հսկող դատախազի և մեղադրյալի (պաշտպանի պարտադիր մասնակցությամբ)՝ իրավական հենք ունեցող և այդպիսի հետևանքներ առաջացնող «գործարքն է»: Դրա մեկնարկի հնարավորությունը տրվում է անձի նկատմամբ քրեական հետապնդում հարուցելու պահից մինչև նախաքննության ավարտի մասին հայտարարելը վարույթն իրականացնող մարմնին՝ քննիչին՝ հսկող դատախազին հանձնելու նպատակով միջնորդություն ներկայացնելով, որում պետք է նշվի, թե ինչում է դրսևորվելու մեղադրյալի համագործակցության բնույթը, միջին, ծանր կամ առանձնապես ծանր հանցագործության բացահայտման կամ այն կատարած անձի պատասխանատվության ապահովմանն աջակցելու նպատակով իրականացվելիք գործողությունները: Նշված միջնորդությունը դրա բավարարման կամ մերժման վերաբերյալ իր գրավոր կարծիքով քննիչը եռօրյա ժամկետում հանձնում է հսկող դատախազին:

Բանակցությունները համագործակցության վարույթում

Քրեադատավարական համագործակցության էական առանձնահատկություններից է համագործակցության առարկայի շուրջ կողմերի «բանակցությունների» նախնական-միջնորդավորված ձևը միջնորդության գրավոր քննարկումը հսկող դատախազի կողմից, և միայն միջնորդության բավարարման դեպքում կողմերը ստորագրում են հսկող դատախազի՝ մեղադրյալի և պաշտպանի մասնակցությամբ կազմված համագործակցության համաձայնագիրը, որում, ի թիվս այլնի, պետք է տեղ գտնի համագործակցության բնույթը և այն գործողությունները, որոնք մեղադրյալը պարտավորվում է կատարել համագործակցության նպատակին հասնելու համար:

«Բանակցությունների» միջնորդավորված բնույթն արդարացիորեն կոչված է ընդգծելու համագործակցության վարույթի մեկնարկային փուլում վարույթի հանրային մասնակցի՝ հսկող դատախազի վճռորոշ դերը և խոսքը այն առումով, որ նշված փուլում փաստացիորեն հսկող դատախազը ոչ միայն իրավասու է, այլ նաև կրում է ուղիղ պարտականություն՝ գնահատելու ներկայացված միջնորդության՝ նշված վարույթի էությանը համապատասխանելու տեսանկյունից հիմնավորվածությունը:

Փաստացի, նշված վարույթի մեկնարկային փուլում պաշտպանության կող-

⁷ Быков В. М., Новый закон о сделке обвиняемого с правосудием: критические заметки. Российский судья. 2009. N 9. . с 5.

մը պարտավոր է «խաղալ» բաց՝ մինչդասական համաձայնագիր կնքելու մասին գրավոր միջնորդությամբ պարտադիր նշելով, թե ինչում է արտահայտվելու իր համագործակցության բնույթը, ինչպես նաև այն գործողությունները, որոնք ինքը պարտավորվում է կատարել, կամ տեղեկությունները, որոնք պատրաստվում է հայտնել՝ հանցագործության բացահայտմանը կամ այն կատարած անձի պատասխանատվության անխուսափելիությունն ապահովելուն աջակցելու նպատակով (ՀՀ քր. դատ. 466-րդ հոդվածի 3-րդ մաս):

Հանրային մեղադրողի՝ որպես համագործակցության կողմի՝ առավել լայն գործիքակազմի և «կնքվող գործարքում վերջինիս շահեկան դիրքի» մասին վկայող հաջորդ նորմատիվ կանոնը տարրալուծված է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 468-րդ հոդվածի 2-րդ մասի 10-րդ կետում: Մասնավորապես, նշված կանոնի համաձայն՝ համագործակցության համաձայնագրի մեջ ի թիվս այլնի նշվում է տեղեկացում այն մասին, որ համագործակցությունից մեղադրյալի հրաժարվելու դեպքում համագործակցության ընթացքում ստացված տվյալները կարող են օգտագործվել որպես ապացույց: Նման պայմաններում չի բացառվում այնպիսի իրավիճակը, երբ ինչ-ինչ պատճառներով համագործակցությունը դադարեցվի և հետագայում մեղադրյալի հայտնած տվյալներն օգտագործվեն նաև հենց իր դեմ: Ուստի, կարծում ենք, որ նշված խնդրին առավել խորքային մոտեցում է պետք ցուցաբերել, և «չհաջողած համագործակցության արդյունքում մեղադրյալի հայտնած տվյալների վավերության կանոնը», դրանց՝ նույնիսկ մեղադրյալի դեմ հետագայում օգտագործելու չբացառումը անհավասար սահմանափակում են համագործակցության «գործարքի կողմի» իրավունքները:

Հետևապես առաջարկում ենք քրեադատավարական օրենքով նախ հստակ սահմանել նշված կանոնը՝ ոչ միայն համագործակցության ռեկվիզիտային տեսքով, այլ նաև սահմանելով մեղադրյալի հայտնած տվյալների օգտագործման հետևյալ երաշխիքը.

«Այն դեպքում, երբ մեղադրյալը հրաժարվում է համագործակցությունից մինչև համագործակցության համաձայնագրով ստանձնած պարտականությունների կատարումը կամ դրանց կատարման ընթացքում, կամ դատախազը որոշմամբ մերժում է դատաքննության հատուկ կարգ կիրառելու մասին միջնորդությամբ վարույթի նյութերը դատարան հանձնելը, ապա համագործակցության առարկա վարույթում մեղադրյալի հայտնած և դատավարական ապացույցների տեսք ստացած տվյալների և դրանք մեղադրական եզրակացությամբ տեղ գտնելու ուժով իրավասու դատարանը (հիմնական գործով) մեղադրական վերդիկտ կայացնելու դեպքում՝ դրանք գնահատելով իրենց պիտանիության և վերաբերելիության համատեքստում, լրացուցիչ դատախուսմանում կողմերի առջև բարձրացնում է ՀՀ քրեական օրենսգրքի Հատուկ մասի համապատասխան հոդվածի սանկցիայով նախատեսված առավել խիստ պատժատեսակի համար նախատեսված առավելագույն չափի կամ ժամկետի երեք քառորդը չգերազանցող

պատժի նշանակման նպատակահարմարության հարցը, եթե մեղադրյալի կատարած արարքը ծանր կամ առանձնապես ծանր հանցագործություն չէ: Դատավճռով նշված կանոնի կիրառման ոչ նպատակահարմարության վերաբերյալ եզրահանգման հանգելու դեպքում, ինչպես նաև ծանր կամ առանձնապես ծանր հանցագործություն կատարված լինելու դեպքում, մեղադրյալի կողմից այդպիսի տվյալների հայտնումը գնահատվում է որպես քրեական պատասխանատվությունը կամ պատիժը մեղմացնող հանգամանք»:

Բանակցությունների արդյունքում համագործակցության համաձայնագրի կնքման հնարավորությունը մեղադրյալի՝ իրեն վերագրվող արարքում մեղքն ընդունելու վերաբերյալ հստակ արտահայտված դիրքորոշման բացակայության պայմաններում

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 467-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ համագործակցության միջնորդությունը մերժվում է, եթե այն չի համապատասխանում ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 465-րդ և 466-րդ հոդվածներով սահմանված պայմաններին, կամ եթե հսկող դատախազը տվյալ համագործակցությունը համարում է ոչ անհրաժեշտ:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 468-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ համագործակցության միջնորդությունը բավարարելու դեպքում հսկող դատախազը մեղադրյալի և նրա պաշտպանի մասնակցությամբ կազմում է համագործակցության համաձայնագիր:

Նույն հոդվածի 2-րդ մասի 6-րդ կետի համաձայն՝ համագործակցության համաձայնագրի մեջ նշվում են մեղադրյալին ներկայացված մեղադրանքի փաստական նկարագրությունը, արարքի իրավական գնահատականը, **ինչպես նաև մեղադրյալի կողմից մեղադրանքը չվիճարկելը:**

Վերը բերված իրավանորմերի համադրված մեկնաբանությունից պարզ է դառնում, որ ի թիվս համագործակցության վարույթի կիրառման և դրա մեկնարկի տրման այլ նախապայմանների, կարևոր նախապայման է նաև մեղադրյալի կողմից իրեն ներկայացված մեղադրանքը չվիճարկելը, որի մասին համապատասխան նշում է կատարվում համագործակցության համաձայնագրում:

Այս առումով, ուշագրավ է, որ օրենսդրորեն նախատեսված է համագործակցության վերաբերյալ ներկայացված միջնորդության մերժման երկու հիմք՝

1. *միջնորդության անհամապատասխանությունը ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 465-րդ և 466-րդ հոդվածներով սահմանված պայմաններին,*
2. *հսկող դատախազի կողմից տվյալ համագործակցության ոչ անհրաժեշտության մասին եզրահանգման գաղը:*

Պայմանական թվագրված առաջին կետը վերաբերում է համագործակցության վարույթի կիրառման մեկնարկային և ընթացակարգային պայմաններին, որոնք մեղքի ընդունման մասին որևէ նշում չեն պարունակում:

Մերժման երկրորդ հիմքը տեսականորեն կարող է կիրառվել այն դեպքերում, երբ դատախազը, ուսումնասիրելով միջնորդությունը, գտնում է, որ դրանում բերված փաստարկները խիստ վերացական են, անիրատեսական, նպատակ են հետապնդում ժամանակավորապես «համագործակցման տպավորություն» ստեղծել՝ այս կամ այն մղումներից ելնելով, ինչպես նաև հնարավոր ցանկացած այնպիսի դեպքերում, որոնք ողջամտորեն ենթակա են գնահատման:

Նշվածից պարզ է դառնում, որ օրենսդրորեն նախատեսված չէ ուղիղ արգելք՝ մեղադրյալի կողմից մեղքն ընդունելու վերաբերյալ նախապես չհայտնած դիրքորոշման դեպքում համագործակցության միջնորդության՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 465-րդ և 466-րդ հոդվածներով սահմանված պայմաններին համապատասխանության արձանագրման և հսկող դատախազի կողմից տվյալ համագործակցության ոչ անհրաժեշտության մասին եզրահանգման չգալու պայմաններում բավարարել ներկայացված միջնորդությունը՝ բավարարվելով միայն օրենսդրական պահանջի կատարմամբ, այն է՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 468-րդ հոդվածի 2-րդ մասի 6-րդ կետի ուժով համաձայնագրում արտացոլել մեղադրյալի կողմից մեղադրանքը չվիճարկելու հանգամանքը, ինչի ներքո վերջինս և իր պաշտպանը կդնեն իրենց ստորագրությունները:

Գտնում ենք, որ առկա իրավակարգավորումներն այդ մասով այնքան էլ ընդունելի չեն. թեև մեղադրյալի կողմից իրեն մեղսագրված արարքում մեղավոր ճանաչելը (մեղադրանքը չվիճարկելը) որպես համագործակցության վարույթի կիրառման նախապայման օրենսդրորեն հստակ նախատեսված չէ, սակայն նշված գաղափարը բխեցվում է համագործակցության համաձայնագրի կնքման օրենսդրական հիմքերից, մասնավորապես, 468-րդ հոդվածի 2-րդ մասի 6-րդ կետից, իսկ մեղադրյալին մեղսագրվող արարքն իր կողմից չվիճարկելու առաջնային քրեադատավարական եղանակն անձի ցուցմունքն է, որի բացակայությունը ուղիղ հակասում է նշված վարույթի տրամաբանությանը, քանի որ համագործակցության վարույթի առանցքում դրված են երեք հիմնական գաղափարներ.

1. *անձին ներկայացված մեղադրանքն ընդունելը,*
2. *համաձայնեցված համագործակցության արդյունքում համաչափ կամ առավել ծանր հանցանքի բացահայտումը,*
3. *նախորդ երկու կետերի առկայության պայմաններում մեղմ պատժի սկնկալիքը:*

Նշված համատեքստում անտրամաբանական է թվում այն իրավիճակը, երբ մեղադրյալն իր ցուցմունքով կհայտնի, որ իրեն ներկայացված մեղադրանքի մասով դիրքորոշում չի հայտնի և ցուցմունք չի տա, սակայն կմիջնորդի համագործակցել իրավապահ մարմինների հետ՝ խոստանալով բացահայտել մեկ այլ հանցանք: Նման իրավիճակում բացակայում է համագործակցության հնարավորության ամենանվազագույն կոմպոնենտը՝ վստահությունը մեղադրյալի խոսքերին և դրանց արժանահավատությունը, իսկ մնացած հանգամանքները թերևս պետք է բխեցվեին դրանից:

Ուստի գտնում ենք, որ անհրաժեշտ է որպես համագործակցության համաձայնագրի կնքման նախապայման՝ նախատեսել մեղադրյալի կողմից մեղքն ընդունելը նախքան համապատասխան միջնորդությամբ հանդես գալը կամ գոնե միջնորդության քննարկման փուլում, իսկ նշված պայմաններում մեղքը չընդունելը նախատեսել որպես միջնորդության մերժման ինքնուրույն հիմք:

Համագործակցության առարկան

Քննարկման է արժանի նաև ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 465-րդ հոդվածի 3-րդ մասը: Նշված մասի համաձայն՝ համագործակցության միջնորդությունը պետք է վերաբերի այլ անձի կողմից ենթադրաբար կատարված և մեղադրյալին վերագրվող հանցանքի ծանրությանը համարժեք կամ ավելի ծանր հանցանքի:

Նշված կանոնից հետևում է, որ, հիպոթետիկ, առանձնապես ծանր հանցագործության վերաբերյալ քրեական վարույթի ընթացքում մեղադրյալի կողմից այլ անձի ենթադրաբար կատարած ծանր կամ միջին ծանրության հանցագործության բացահայտմանն ուղղված՝ համագործակցելու վերաբերյալ առաջարկը չի կարող «քրեադատավարական համագործակցության» առարկա դարձվել: Կարծում ենք, որ առավել ծանր հանցագործությունից «մեկ քայլ ետ ծանրության հանցագործության բացահայտման անթույլատրելիության» սկզբունքը այնքան էլ ընդունելի մոտեցում չէ, և իր կատարած հանցանքից նվազ ծանրության հանցանքի բացահայտմանն ուղղված մեղադրյալի համագործակցության արժեքը չի կարող թերագնահատվել:

Այս համատեքստում ուշադրության է արժանի նաև ՀՀ քրեական օրենսգրքի 77-րդ հոդվածի 3-րդ մասով նախատեսված դրույթն առ այն, որ ոչ միայն միջին, այլ նաև ոչ մեծ ծանրության հանցագործությունների մասով սահմանում է համագործակցության արդյունքների շրջանակը: Նշվածը կարող է պայմանավորված լինել մի շարք հանգամանքներով. չի բացառվում, որ տեխնիկական բացթողման արդյունքում քրեադատավարական և քրեական օրենսգրքերը չեն համապատասխանեցվել, ինչի արդյունքում ՀՀ քրեական օրենսգրքում ոչ մեծ ծանրության հանցագործություններով փաստացի անհարկի նախատեսվել է համագործակցության հնարավորություն: Մինևույն ժամանակ, հնարավոր է, որ բացթողումը քրեադատավարական օրենքում է առկա և ոչ մեծ ծանրության հանցագործություններով համագործակցության հնարավորությունը դուրս է թողնվել տեխնիկական պատճառներով:

Ամեն դեպքում, կարծում ենք, որ համագործակցության վարույթի՝ որպես մաքուր քրեադատավարական ինստիտուտի կիրառման (պատժի վերաբերյալ հարցերը նկատի չեն առնվում) վերաբերյալ կարգավորումները պետք է տեղ գտնեն բացառապես ընթացակարգային օրենքում, և ոչ թե դրանք ենթադրվեն կամ բխեցվեն նյութական օրենքի վերլուծությունից:

Ստեղծված իրավիճակը իրավակիրառողների համար կարող է առաջացնել չհիմնավորված և վիճելի միջնորդությունների քննության առնելու պարտականություն այն մասով, որ մեղադրյալը կամ վերջինիս պաշտպանը կարող են փորձ կատարել օգտվելու օրենսդրական ոչ հատակ կարգավորումներից՝ մեղադրյալի կողմից կատարված ոչ մեծ ծանրության հանցագործությունների վերաբերյալ քրեական վարույթով ևս ծանրաբեռնեն իրավակիրառողներին՝ համագործակցության վերաբերյալ միջնորդություններ ներկայացնելով, որպիսի պայմաններում առնվազն խիստ վիճելի է մնում դրանց բավարարումը կամ մերժումը:

Համագործակցության միջնորդության վերաբերյալ քննիչի կարծիքի իրավական դերը

Ռոշակի տարակարծությունների տեղիք է տալիս նաև համագործակցության վարույթի կիրառման վերաբերյալ քննիչի կարծիքին վերաբերող իրավակարգավորումները: Մասնավորապես, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 467-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ համագործակցության միջնորդությունը մերժվում է, եթե այն չի համապատասխանում ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 465-րդ և 466-րդ հոդվածներով սահմանված պայմաններին, կամ եթե հսկող դատախազը տվյալ համագործակցությունը համարում է ոչ անհրաժեշտ: Նշված կանոնից տրամաբանորեն հետևում է, որ դատախազի՝ համագործակցության անհրաժեշտության բացակայության վերաբերյալ հիմնավորումների ներկայացումը, կամ դատավարական օրենքի 465-րդ, 466-րդ հոդվածներին՝ միջնորդության անհամապատասխանության արձանագրումն ինքնին ի չիք են դարձնում դրա կնքման հնարավորությունը, միաժամանակ արժեզրկում քննիչի՝ «Համագործակցության վերաբերյալ կարծիք» վերտառությամբ փաստաթղթի իմաստը, նախ այն առումով, որ կարծիքն ինքնին իրավաբանորեն չարժևորվող հասկացություն է, երկրորդ՝ օրենսդիրն ըստ էության ելել է «քննիչի կարծիքը գուտ ի գիտություն» ընդունելու տրամաբանությունից, և ոչ ավելին, երրորդ՝ քննիչն ըստ էության չունի իրավական «լծակ»՝ պնդելու իր կարծիքը:

«Չփաստաթղթավորված համագործակցությունը»

Ուշադրության են արժանի նաև այն իրավիճակները, երբ անձը փաստացի ենթարկվում է քրեական հետապնդման, վարույթն իրականացնող մարմնին տալիս է տեղեկություններ, որոնք, ըստ էության, կարող են դառնալ համագործակցության վարույթի առարկա, սակայն փաստացի չի օգտվում այդ հնարավորությունից, քանի որ նման հնարավորության մասին տեղեկացված չէ: Նշված շիսկը հատկապես առկա է այն իրավիճակներում, երբ անձը չի ձերբակալվել հանցանք կատարած լինելու անմիջականորեն ծագած հիմնավոր կասկածի հիմքով և հետագայում ազատ արձակվել ձերբակալումից՝ առանց քրեական հետա-

պնդման հարուցման, այլ վերջինիս վերաբերյալ առկա է կասկածանք⁸, նա ինքնակամ ներկայացել է կամ հարկադրաբար ներկայացվել է վարույթն իրականացնող մարմնին, միաժամանակ դեռևս առկա չեն քրեական հետապնդման իրականացման և հարուցման հիմքեր⁹:

Այսպես, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 109-րդ հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ սույն հոդվածով (հանցանք կատարած լինելու անմիջականորեն ծագած հիմնավոր կասկածի հիմքով) սահմանված կարգով ձերբակալվածին ազատությունից փաստացի զրկելու պահից անհապաղ, բայց ոչ ուշ, քան 6 ժամվա ընթացքում պետք է հանձնվի նրան ձերբակալելու կամ ազատ արձակելու վերաբերյալ որոշում, **ինչպես նաև մեղադրյալի՝ սույն օրենսգրքով սահմանված իրավունքների և պարտականությունների ցանկը**: Ձերբակալման որոշման մեջ նշվում են այն կազմելու տարին, ամիսը, օրը, ժամը, րոպեն և վայրը, ձերբակալվածի տվյալները, նրան վերագրվող արարքի փաստական հանգամանքները, ձերբակալման հիմքը:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 43-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի համաձայն՝ մեղադրյալը սույն օրենսգրքով սահմանված կարգով իրավունք ունի հսկող դատախազին միջնորդելու՝ կիրառելու համագործակցության վարույթ:

Այսինքն՝ անձի փաստացի արգելանքի վերցվելու դեպքում, անկախ այդ փուլում քրեական հետապնդման հարուցման ընթացակարգերին գնալու կամ չգնալու հանգամանքներից, օրենսդիրն իրավակիրառողներին պարտավորեցրել է առնվազն այդ փուլում անձին տրամադրել մեղադրյալի իրավունքների և պարտականությունների ցանկը՝ այդքանով վերջինիս տեղեկացնելով, որ անգամ այդ փուլում վերջինիս ազատ արձակումը (ձերբակալման որոշման կայացման դեպքում ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 189-րդ հոդվածի 2-րդ մասի ուժով քննիչը պետք է առաջնորդվի քրեական հետապնդման գնալու օրենսդրական իմպերատիվ կարգավորումներով՝ այդ մասին հսկող դատախազին ներկայացնելով միջնորդություն) և քրեական հետապնդման հարուցման ընթացակարգերին չդիմելը հետագայում չի բացառում վերջինիս՝ մեղադրյալի կարգավիճակում հայտնվելը: Ուստի, այդ փուլում անձը, մեղադրյալի իրավունքների և պարտականությունների ցանկին ծանոթանալով, հնարավորություն է ստանում որոշելու,

⁸ Դեվեերն ընդդեմ Բելգիայի (Deweere v. Belgium) գործով վճիռ, (Application no. 6903/75), Ստրասբուրգ, 1980 թ., Էկլեն ընդդեմ Գերմանիայի (Eckle v. Germany) գործով վճիռ, (Application no. 8130/78), Ստրասբուրգ, 1983 թ.:

⁹ Մարդու իրավունքների եվրոպական դատարանի նախադեպային իրավունքի հիման վրա «քրեական մեղադրանք» հասկացությունը պետք է հասկացվի ոչ թե ձևական (փաստաթղթային), այլ բովանդակային (գործնական) իմաստով (Դեվեերն ընդդեմ Բելգիայի (Deweere v. Belgium) գործով վճիռ): Այսինքն՝ անձի նկատմամբ «մեղադրանքի» առկայության մասին կարող է վկայել նաև այնպիսի միջոցներ ձեռնարկելը, որոնք ենթադրում են հանցագործության մեջ կասկածանքի առկայություն, ինչպես նաև էականորեն ներգործում են կասկածվող անձի դրության վրա (Էկլեն ընդդեմ Գերմանիայի (Eckle v. Germany) գործով վճիռ):

ճիշտ տնօրինելու և օգտագործելու իր իրազեկության սահմաններում առկա տեղեկատվությունը՝ այդքանով հնարավորություն ունենալով «տակտիկապես ճիշտ» դատավարական՝ մեղադրյալի կարգավիճակում օգտագործելու իր իրազեկության և հնարավոր համագործակցության առարկա տեղեկատվությունը:

Մնացած բոլոր դեպքերում, հնարավոր մեղադրման ենթակա անձին պետք է իրազեկել ոչ միայն նշված իրավունքի, այլ նաև մեղադրյալի մյուս բոլոր իրավունքների և պարտականությունների մասին, ինչը ոչ միայն կերաշխավորի նշված ինստիտուտի կենսագործման հնարավորությունը, այլ նաև վկայի կարգավիճակով պայմանավորված ցուցմունք տալու պարտականությունից ելնելով՝ ցուցմունքների կորզման բացառումը կամ այլ ապացույցների ձեռքբերումը, քանի որ այդպիսի եղանակներով ստացված ապացույցներն իրենց հերթին կարող են ճանաչվել օրենքի էական խախտմամբ ձեռք բերված և այդպիսով՝ անթույլատրելի (ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 97-րդ հոդվածի 2-րդ մասի 4-րդ կետ):

Համագործակցության միջնորդությունը

Քննարկման է արժանի նաև ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 466-րդ հոդվածի 4-րդ մասի պահանջն առ այն, որ համագործակցության միջնորդությունը մեղադրյալի կամ նրա պաշտպանի կողմից հսկող դատախազին հանձնվում է քննիչի միջոցով:

Չեն կարող բացառվել այնպիսի իրավիճակները, երբ պաշտպանական կողմի միջնորդությունն ուղղվի անմիջապես դատախազին, իսկ դրա քննության հաստատումը հանգեցնի մեղադրյալի՝ իր միջնորդությունից նահանջելուն, և այդպիսով այլ անձի կողմից կատարված ենթադրյալ հանցագործության հնարավոր բացահայտման անհնարինությունն է: Ի վերջո, որքան համագործակցությունը բխում է մեղադրյալի շահերից՝ ի հաշիվ սպասվող մեղմացուցիչ պատժի և պատասխանատվության, այնքան էլ բխում է վարույթի հանրային մասնակիցների, ի դեմս պետության, հանրային շահից:

Հետևապես նման իրավիճակներում դատախազը պետք է հնարավորություն ունենա լուծել իրեն ներկայացված միջնորդությունը՝ դրա լուծման համար քննիչից անհապաղ պահանջելով և ստանալով քրեական վարույթի նյութերը: Հակառակ դեպքում, առկա օրենսդրական կարգավորումների պայմաններում դատախազը պետք է այն հասցեագրի քննիչին, ապա քննիչը երեք օրվա ընթացքում դրա բավարարման կամ մերժման վերաբերյալ իր գրավոր կարծիքի հետ միասին վերահասցեագրի դատախազին, ինչի արդյունքում կարող են առաջ գալ վերը նկարագրված հետևանքները:

Եզրակացություն

Ամփոփելով՝ կարող ենք եզրահանգել, որ համագործակցության վարույթը, հայրենական քրեադատավարական համակարգում հանդիսանալով առավելապես նոր ինստիտուտ, կարող է առանցքային տեղ զբաղեցնել պարզեցված մյուս վարույթների շարքում, մինչև նույն ժամանակ, դեռևս ունի զարգացման ճանապարհ և գործնական դաշտում կիրառելիության հիմնախնդիրներ, որոնց վերհանումը և համապատասխան լուծումների առաջարկներով հանդես գալը խիստ արդիական են, քանի որ ինստիտուտի պատշաճ գործադրումը բխում է ոչ միայն վարույթի մասնավոր մասնակցի՝ մեղադրյալի շահերից, այլ նաև պետության անունից հանդես եկող վարույթի հանրային մասնակիցների, այդպիսով հասարակության և պետության շահերից՝ ի նպաստ այլ հանցագործությունների բացահայտման:

Վերը նշվածի համատեքստում համագործակցության սահմանների, մեղադրյալի միջնորդության, հսկող դատախազի կողմից դրա վերաբերյալ կայացվող որոշման, քննիչի կարծիքի, «չհաջողված» համագործակցության, միջնորդությունն անմիջապես դատախազին ներկայացնելու, մեղադրյալի՝ իրեն վերագրվող արարքում մեղքն ընդունելու վերաբերյալ հստակ արտահայտված դիրքորոշման բացակայության պայմաններում բանակցությունների արդյունքում համագործակցության համաձայնագրի կնքման հնարավորության, ինչպես նաև փաստաթղթային առումով մեղադրյալ չհանդիսացող անձի կողմից նախաքննական մարմնին հնարավոր հետագա համագործակցության առարկայի արժեք ունեցող տեղեկատվության հայտնման վերաբերյալ հարցերի քննարկումը, դրանց վերաբերյալ աշխատանքում վկայակոչված նկատառումները կարող են էլ ավելի լավարկել գործող իրավակարգավորումները՝ ի նպաստ վարույթի մասնավոր և հանրային մասնակիցների:

Գրականության ցանկ (reference list, список литературы)

1. Ղուկասյան Հ., Մելքոնյան Դ., Տարբերակված դատավարության ձևը և դրա առանձնահատկությունները, Երևան, «Պետություն և իրավունք», № 1, 2007 թ.:
Ghukasyan H., Melkonian D., Differentiated procedural form and its features” Yerevan, “State and law”, № 1, 2007.
2. Խաչատուրյան Դ., Համագործակցության վարույթ. իրավափիլիսոփայական հիմքերը, կիրառման շրջանակներն ու կարգը, արդյունավետության երաշխիքները և զարգացման հեռանկարները, Երևան, «Պետություն և իրավունք», № 2 (64), 2014 թ.:
Khachaturyan D., “Cooperation agreements: Philosophical and criminological foundations, scope and procedure of application, safeguards of efficiency and ways of development”, Yerevan, “State and law”, № 2 (64), 2014.
3. Быков В. М., Новый закон о сделке обвиняемого с правосудием: критические заметки. Российский судья. 2009. N 9.
Bikov V. M., New law on the defendant’s deal with justice: Critical notes. Russian judge. 2009. N 9.
4. Դեվեերն ընդդեմ Բելգիայի գործով վճիռ, գանգատ 6903/75, Ստրասբուրգ, 1980 թ., Էկլեն ընդդեմ Գերմանիայի գործով վճիռ, գանգատ 8130/78, Ստրասբուրգ, 1983 թ.:
Deweere v. Belgium, Application no. 6903/75, Strasbourg, 1980, Eckle v. Germany, Application no. 8130/78, Strasbourg, 1983.
5. <https://www.americanbar.org/news/abanews/aba-news-archives/2023/02/plea-bargain-task-force/> (մուտք 29.01.2024թ.) (access 29.01.2024)
6. <https://bja.ojp.gov/sites/g/files/xyckuh186/files/media/document/pleabargainingresearchsummary.pdf> (մուտք 29.01.2024թ.) (access 29.01.2024)

Robert Mheryan

*Prosecutor of the Department for Cases of Crimes against the
Fundamentals of the Constitutional Order, State and Public Security of the
Prosecutor General's Office of the Republic of Armenia,
Ph.D. Degree Applicant at the Department of Criminal Procedure and
Criminology of Law Faculty of Yerevan State University*

CONSIDERATIONS ON THE NATURE OF THE COOPERATION PROCEEDINGS AND THE LEGISLATIVE REGULATION OF SEPARATE RELATED ISSUES¹

Abstract

This article explores certain fundamental issues concerning cooperation proceedings as simplified form of judicial procedure, introduces its definition and terminology used therein.

Ի վերջո, վճռաբեկ դատարանը, շարունակելով մեկնաբանությունը, ավելացրել է, որ «(...) պատիժը մեղմացնող օրենսդրությանը հետադարձ ուժ տալու պահանջը հավասարապես պետք է կիրառելի լինի նաև քրեական պատասխանատվությունից անվերապահ ազատում նախատեսող նորմերի պարագայում: Մասնավորապես, եթե օրենսդիրը եզրափակիչ դատավարական ակտի բացակայության պայմաններում երաշխավորել է պատիժը մեղմացնող քրեական օրենսդրությանը հետադարձ ուժ տալու հնարավորությունը՝ առանց որևէ բացառության, սապա վերոնշյալն առավել ևս պետք է կիրառելի լինի՝ իր բովանդակությամբ և ծավալով ավելի լայն և հանդիմարկուն երևույթի՝ քրեական պատասխանատվությունից ազատելու նկատմամբ:

Հակառակ պարագայում կատարվի, որ քրեական պատասխանատվության բաղադրիչ հանդիսացող պատժի մեղմացման ցանկացած դեպքում քրեական օրենքը հետադարձ ուժ ունի (...), մինչդեռ քրեական պատասխանատվությունից անվերապահ ազատում նախատեսող նոր օրենքի պարագայում պետք է կիրառվեն արարքի կատարման պահին գործող կարգավորումները, և անձը պետք է ենթարկվի քրեական պատասխանատվության ու պատժի, ինչն անընդունելի է (...)»²⁴:

Այսպիսով, ամբողջացնելով ՀՀ քրեական օրենսգրքի 335-րդ հոդվածի 4-րդ մասով նախատեսված խրախուսական նորմի և դրա՝ ժամանակի ընթացքում գործողության վերաբերյալ ՀՀ վճռաբեկ դատարանի մեկնաբանությունը, կարելի է հետևյալ եզրահանգումն անել.

Ըստ ՀՀ վճռաբեկ դատարանի.

- Քրեական նոր օրենսգրքի 335-րդ հոդվածի 4-րդ մասով նախատեսված խրախուսական նորմը, համեմատած քրեական նախկին օրենսգրքի 235-րդ հոդվածի 5-րդ մասով նախատեսված խրախուսական նորմի, անձի իրավական վիճակն այլ կերպ բարելավող նորմ է:
- Քրեական նոր օրենսգրքի 9-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ հանցանք կամ քրեական օրենսդրությամբ նախատեսված արարք կատարած անձի վիճակն այլ կերպ բարելավող օրենսդրությունն ունի հետադարձ ուժ, եթե դա նախատեսված է օրենքով, ընդ որում՝ խրախուսական որևէ նորմի առնչությամբ այդպիսի կանոն օրենքով նախատեսված չէ, սակայն այդ կարգավորումը իրավական սկզբունքների և մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիային հակասող է:

²⁴ Տես՝ Նույն որոշման 19-րդ կետը:

- Բացի այդ, քրեական նոր օրենսգրքի 335-րդ հոդվածի 4-րդ մասով նախատեսված խրախուսական նորմը, որպես քրեական պատասխանատվությունից ազատող իմպերատիվ նորմ, հարկ է դիտարկել իբրև պատիժը մեղմացնող օրենք և այդպիսով դրան տալ հետադարձ ուժ:

Եզրակացություն

Ամփոփելով խրախուսական նորմերի առնչությամբ նախորդիվ իրականացված վերլուծությունները՝ նախ անհրաժեշտ է ձևակերպել խրախուսական նորմերի հասկացությունը.

Քրեական օրենսգրքի հատուկ մասի հանցակազմերի խրախուսական նորմերը ոչ լիարժեք իրավավերացնող նորմեր են, որոնք խրախուսում են հանցանք կատարած անձին որոշակի իրավահպատակ վարքագիծ դրսևորելու միջոցով ազատվել քրեական պատասխանատվությունից:

Խրախուսական այս ոչ լիարժեք նորմերը ինքնին իրավահարաբերություն առաջացնել կամ դադարեցնել չեն կարող, դրանք կենսագործվում են բացառապես քրեական օրենսգրքի՝ հանցակազմ պարունակող լիարժեք նորմերի միջոցով, ուստի խրախուսական նորմերը հնարավոր չէ կառուցվածքային առումով դիտարկել լիարժեք նորմերից անջատ: Ինչպես վերը ներկայացվեց, դիցուք ՀՀ քրեական օրենսգրքի 335-րդ հոդվածով նախատեսված հանցակազմի և դրա խրախուսական նորմի համադրության արդյունքում կարելի է ստանալ մի լիարժեք նորմ՝ հետևյալ ձևակերպմամբ.

«Անձը ենթակա է քրեական պատասխանատվության ապօրինի կերպով հրազեն, դրա հիմնական բաղկացուցիչ մաս, ռազմամթերք, ակոսափող հրազենի փամփուշտ, պայթուցիկ նյութ կամ պայթեցման սարք ձեռք բերելու, իրացնելու, պահելու, փոխադրելու, առաքելու կամ կրելու համար՝ բացառությամբ այն դեպքի, երբ այս հանցավոր արարքներից մեկը կամ մի քանիսը կատարած անձը հանձնում է նշված առարկաները մինչև իրավասու մարմինների կողմից դրանց գտնվելու վայրի մասին իմանալը:»

Հետևապես, եթե որևէ խրախուսական նորմ նոր օրենսդրությամբ ենթարկվել է փոփոխությունների և անձի իրավական վիճակն այդպիսով բարելավվել է, օրինակ՝ ապօրինի պահվող զինամթերքի հանձնմանն առնչվող խրախուսական նորմի փոփոխությունը, ինչն արդեն իսկ մասնրամասն վերլուծվեց, ապա այն հարկ է դիտարկել որպես հանցավորությունը մասնակիորեն վերացնող նորմ: Այս պնդումը հիմնավորվում է նրանով, որ հանցավոր համարվող արարքների շրջանակն այդպիսով նեղանում է: Եթե նախկինում իրավասու մարմինները տեղյակ էին, որ անձն ինչ-որ վայրում հրազեն է պահում կամ դրանով հանցանք է կատարել, ապա եթե նույնիսկ հետագայում այդ անձը հանձնելը հրազենը, միևնույնն է, չէր ազատվի պատասխանատվությունից, սակայն ներկա կարգավորումների պարագայում այդ անձը կազատվի պատասխանատվու-

թյունից, քանի որ իրավասու մարմինները չգիտեն այդ հրազենի գտնվելու կոնկրետ վայրը:

Հակառակ պարագայում, ինչպես մեկնաբանել է ՀՀ վճռաբեկ դատարանը, ստացվում է, որ ոչ լիարժեք իրավավերացնող խրախուսական նորմը դիտարկվում է լիարժեք հանցակազմ պարունակող նորմից անջատ, և որպես առանձին, ինքնին իրավահարաբերություն կարգավորող նորմ՝ համարվում է անձի իրավական վիճակն այլ կերպ բարելավող կամ պատիժը վերացնող նորմ, ինչը հակասում է ոչ լիարժեք նորմերի վերաբերյալ արդի իրավագիտության մեջ առկա մոտեցումներին, քանի որ ոչ լիարժեք նորմն ինքնին չի կարող մի կոնկրետ որոշում կայացնելու համար բավարար լինել, այն օժանդակում, լրացնում է լիարժեք նորմին կամ նորմերին, ուստի լիարժեք նորմի հետ համադրման արդյունքում պետք է որոշվի այդ ոչ լիարժեք նորմի հետադարձ ուժով կիրառելու հարցը: Հետևաբար, այս հարցի առնչությամբ ՀՀ վճռաբեկ դատարանի մեկնաբանությունները հակասում են արդի իրավագիտության մեջ նորմի տեսակների վերաբերյալ առկա մոտեցումներին:

Այսպիսով, ՀՀ գործող քրեական օրենսգրքի 335-րդ հոդվածի 4-րդ մասով նախատեսված ոչ լիարժեք, իրավավերացնող խրախուսական նորմը նույն հոդվածի 1-ին մասի լիարժեք նորմին լրացնելու արդյունքում, հանցավորությունը մասնակիորեն վերացնող նորմ է և ՀՀ քրեական օրենսգրքի 9-րդ հոդվածի 2-րդ մասի ուժով պետք է ունենա հետադարձ ուժ:

Գրականության ցանկ (reference list, список литературы)

1. 2015 թվականին ուժի մեջ մտած ՀՀ Սահմանադրություն
The Constitution of the Republic of Armenia entered into force in 2015
2. 2022 թվականին ուժի մեջ մտած ՀՀ քրեական օրենսգիրք
The Criminal Code of the Republic of Armenia entered into force in 2022
3. 2003 թվականին ուժի մեջ մտած ՀՀ քրեական օրենսգիրք
The Criminal Code of the Republic of Armenia entered into force in 2003
4. ՀՀ վճռաբեկ դատարանի՝ Միշա Սուրադյանի վերաբերյալ 2022 թվականի նոյեմբերի 22-ի թիվ ԵԴ/1424/01/21 որոշումը
Decision of the RA Court of Cassation No. ED/1424/01/21 of November 22, 2022 regarding Misha Muradyan
5. ՀՀ վճռաբեկ դատարանի՝ Հրանտ Հարությունյանի և Բեգլար Հովհաննիսյանի վերաբերյալ 2015 թվականի դեկտեմբերի 18-ի թիվ ԵԱՆԴ/0011/01/14 որոշումը
Decision of the RA Court of Cassation No. YAND/0011/01/14 of December 18, 2015 regarding Hrant Harutyunyan and Beglar Hovhannisyanyan
6. ՀՀ վճռաբեկ դատարանի՝ Հուսիկ Բաղդասարյանի վերաբերյալ 2008 թվականի նոյեմբերի 28-ի թիվ ԱՎԴ2/0059/01/08 որոշումը:
Decision of the RA Court of Cassation No. AVD2/0059/01/08 of November 28, 2008 regarding Husik Baghdasaryan.
7. Գաբուզյան Ա., Ղազինյան Գ. և այլք, ՀՀ քրեական իրավունք, հատուկ մաս (վեցերորդ հրատարակություն), դասագիրք ԲՈՒՀ-ի համար, ԵՊՀ հրատ., Երևան, 2012 թ.:
Gabuzyan A., Ghazinyan G. and others “Criminal law of the Republic of Armenia, special part” (sixth edition), textbook for the University, YSU publishing house, Yerevan, 2012.
8. Ռուբել Ռ., Պողոսյան Վ., ՀՀ ընդհանուր վարչական իրավունք, Երևան, 2011 թ.:
Rubel R., Poghosyan V., RA General Administrative Law, Yerevan 2011.
9. Հովհաննիսյան Գ., Ընդհանուր իրավագիտություն և իրավաբանական մեթոդաբանություն, «Հանրային դիվանագիտություն» բարեգործական ՀԿ, Երևան, 2020 թ.:
Hovhannisyanyan G., General Jurisprudence and Legal Methodology, “Public Diplomacy” charitable NGO, Yerevan 2020.
10. Ավետյան Հ., Իրավական նորմի երկանդամ կառուցվածքի տեսությունը՝ «փաստակազմ, իրավական հետևանք», և իրավական հայեցողությունը, Բանբեր արդարադատության ակադեմիայի, Երևան, № 2 (6), 2021 թ.:
Avetyan H., Theory of the Bipartite Structure of the Legal Norm: “Corps of Facts,

- Legal Consequence” and Legal Discretion, Banber Academy of Justice, Yerevan, № 2 (6), 2021.
11. Von Arnould, A., Norms and Narrative. *German Law Journal*, 18 (2), 2017.
 12. Головненков П.В. Уголовное Уложение Федеративной Республики Германия – Strafgesetzbuch (StGB). - Potsdam: Universitätsverlag, Potsdam, 2021.
Golovnenkov P.V. Criminal Law of the Federal Republic of Germany – Strafgesetzbuch (StGB). - Potsdam. Universitätsverlag, Potsdam, 2021.
 13. Журавлев М. П., Наумов А. В., и др., Уголовное право России. Части Общая и Особенная: учебник / под ред. А. И. Рарога. — 10-е изд., перераб. и доп. — Москва: Проспект, 2023.
Zhuravlev M.P., Naumov A.V., et al., Criminal law of Russia. Parts General and Special: textbook / ed. A. I. Raroga. — 10th ed., revised. and add. — Moscow: Prospekt, 2023.
 14. Хомчик В. В., Комментарий к Уголовному кодексу Российской Федерации / Отв. ред. В. М. Лебедев. — 8-е изд., перераб. и доп. - Москва: Юрайт-Издат, 2008.
Khomchik V.V., Commentary on the Criminal Code of the Russian Federation / Rep. ed. V. M. Lebedev. — 8th ed., revised. and add. - Moscow: Yurayt-Izdat, 2008.
 15. Костарова Т. А., Комментарий к Уголовному кодексу Российской Федерации. Изд. 2-е, изм. и доп. Под общей редакцией Генерального прокурора Российской Федерации, профессора Ю. И. Скуратова и Председателя Верховного Суда Российской Федерации В. М. Лебедева. — Москва, Издательская группа НОРМА—ИНФРА, 1998.
Kostarova T. A., Commentary on the Criminal Code of the Russian Federation. Ed. 2nd, rev. and add. Under the general editorship of the Prosecutor General of the Russian Federation, Professor Yu. I. Skuratov and the Chairman of the Supreme Court of the Russian Federation V. M. Lebedev. - Moscow, Publishing group NORMA-INFRA, 1998.
 16. Молчанов Д. М., Комментарий к Уголовному кодексу Российской Федерации / Ю. В. Грачева, Л. Д. Ермакова и др.; Отв. ред. А. И. Рарог. - Москва: ТК Велби, Изд-во Проспект, 2004.
Molchanov D. M., Commentary on the Criminal Code of the Russian Federation / Yu. V. Gracheva, L. D. Ermakova and others; Rep. ed. A. I. Rarog. - Moscow: TK Welby, Prospekt Publishing House, 2004.
 17. Волкова В.В., Поощрительные нормы: понятие, содержание, журнал «Право и практика», изд., АНО «Научно-исследовательский институт истории, экономики и права», номер 2, 2011.
Volkova V.V., Incentive norms: concept, content, magazine “Law and Practice”,

ed., ANO “Research Institute of History, Economics and Law”, number 2, 2011.

18. Попова В.В., Поощрительные нормы современного российского права: автореф. дис. Омск, 2015.

Popova V.V., Incentive norms of modern Russian law: abstract. dis. Omsk, 2015.

19. Горбунова М.Ю., Поощрительные нормы права: особенности закрепления в российском законодательстве, научная сеть «Современное Право» № 12 – 2018.

Gorbunova M.Yu., Incentive norms of law: features of consolidation in Russian legislation, scientific network “Modern Law” No. 12 – 2018.

Hayk Avetyan

*Prosecutor of the Prosecutor's Office of Yerevan City,
Lecturer and Ph.D. Degree Applicant at the Chair of
Criminal Law of Faculty of Law of Yerevan State University*

THE CONCEPT, AND THE STRUCTURE OF THE INCENTIVE NORMS, AND THE CONSEQUENCES OF THEIR CHANGES OVER TIME¹

Abstract

The incentive norms provided by the special part of the Criminal Code of the Republic of Armenia have undergone various changes. A number of questions arise in connection with the mentioned. First of all, what kind of norms are incentive norms, are they complete or incomplete norms, are they eliminating or determining criminality or punishment, are they norms improving or worsening the legal status of a person, etc. These issues currently have a very topical practical significance, because with the adoption of the new Criminal Code of the Republic of Armenia, which came into force on July 1, 2022, the question arises as to whether they are applicable at the time of the act, or in accordance with the current legislation including incentives norms.

In order to get the answers to the mentioned questions, this article introduces various scientific approaches regarding the role, meaning, structure and type of incentive norms, the comments of the RA Court of Cassation, through which the author reaches his conclusions.

As a result, the reader will be presented with a clear concept of the incentive norm, its structure, which type of norm the incentive norms belong to, and finally, the specifics of the operation of these norms over time.

Keywords: incentive norm; retroactivity; Constitution; constitutionality; authority of the cassation court.

¹ The article was presented on 17.05.2024 and was reviewed on 20.05.2024.

Айк Аветян

*Прокурор прокуратуры города Ереван, преподаватель и
соискатель кафедры уголовного право юридического факультета
Ереванского государственного университета*

ПОНЯТИЕ, СТРУКТУРА ПООЩРИТЕЛЬНЫХ НОРМ И ПОСЛЕДСТВИЯ ИХ ИЗМЕНЕНИЯ ВО ВРЕМЕНИ¹

Абстракт

Поощрительные нормы, предусмотренные особенной частью Уголовного кодекса Республики Армения, претерпели различные изменения. В связи с указанным возникает ряд вопросов. Прежде всего, какие нормы являются поощрительными, являются ли они полноценными или неполноценными, устраняют или определяют преступность или наказание, являются ли они нормами, улучшающими или ухудшающими правовое положение человека и т. д. Эти вопросы в настоящее время имеют весьма актуальное практическое значение, поскольку с принятием нового Уголовного кодекса Республики Армения, вступившего в силу с 1 июля 2022 года, возникает вопрос о том, применимы ли они, в том числе: Поощрительные нормы, на момент совершения деяния, либо в соответствии с действующим законодательством.

Для получения ответов на упомянутые вопросы в данной статье представлены различные научные подходы относительно роли, значения, структуры и вида норм стимулирования, комментарии Кассационного суда РА, на основании которых автор приходит к своим выводам.

В результате читателю будет представлена четкая концепция о поощрительной норме, ее структуре, к какому типу норм относятся поощрительные нормы и, наконец, об особенностях действия этих норм во времени.

Ключевые слова: поощрительные нормы; обратная сила; Конституция; конституционность; правомочие кассационного суда.

¹ Статья была представлена 17.05.2024 и прошла рецензирование 20.05.2024.

Վիրաբ Համբարձումյան

Երևան քաղաքի Արաբկիր և Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանների դատախազության դատախազ

ԳՈՐԾՈՒՆ ԶԳՋԱԼՈՒ ՀԻՄՔՈՎ ՔՐԵԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱԿՎՈՒԹՅՈՒՆԻՑ ԱԶԱՏԵԼՈՒ ԼԻԱԶՈՐՈՒԹՅՈՒՆ ՈՒՆԵՑՈՂ ՄԱՐՄԻՆՆԵՐԸ¹

Համառոտագիր

Հոդվածը վերաբերում է գործուն գղջալու հիմքով քրեական պատասխանատվությունից ազատելու արդի հիմնախնդիրներին: Այն ուղղված է սույն գործիքակազմի կիրառման ընթացքում գործնականում առաջ եկած խնդիրների՝ գործուն գղջալու հիմքով քրեական պատասխանատվությունից ազատելու իրավասություն ունեցող մարմինների (անձանց) շրջանակի, դատարանի կողմից այն կիրառելու և փոխկապակցված այլ հարցերի վերլուծությանը:

ՀՀ քրեական և քրեադատավարական նոր օրենսդրության կիրառման ընթացքում առաջ են եկել սույն կառուցակարգը կիրառելու իրավասություն ունեցող մարմինների (անձանց) շրջանակի, դատարանի կողմից այն կիրառելու և փոխկապակցված այլ հարցերի վերաբերյալ ոչ միատեսակ մոտեցումներ:

Սույն հոդվածի շրջանակներում վերլուծվել են գործուն գղջալու հիմքով քրեական պատասխանատվությունից ազատելու արդի հիմնախնդիրները և ներկայացվել են միատեսակ պրակտիկա ապահովելու համար հիմնավորված առաջարկներ:

Հիմնաբառեր – գործուն գղջալ, քրեական պատասխանատվությունից ազատել, դատախազ, հայեցողություն, լիազորություն:

Ներածություն

Իրավաբան-գիտնականները և դատարանները բարձր են գնահատում գղջման դերը: Զոջումը քրեական դատավարությունում, մասնավորապես՝ դատավճի կայացման փուլում դիտվում է կարևոր հանգամանք²:

Քրեական դատավարությունում իրականացված էմպիրիկ ուսումնասիրությունները ցույց են տվել, որ գղջումը կարևոր դեր է խաղում նաև մեղադրյալնե-

¹ Հոդվածը ներկայացվել է 14.10.2023 թ., գրախոսվել է 29.02.2024 թ.:
² St'u Rocksheng Zhong, Madelon Baranoski, Neal Feigenson, Larry Davidson, Alec Buchanan, Howard V. Zonana. So You're Sorry? The Role of Remorse in Criminal Law. The Journal of the American Academy of Psychiatry and the Law Volume 42 (1).

րի վերաբերյալ այլ անձանց կողմից դատողություններ կատարելիս: Եթե մարդը համարվում է «զղջացող», ապա նրա բնավորության վերաբերյալ արված դատողություններն ավելի բարենպաստ են³: Բացի այդ, եթե անձը զղջում է իր կատարած հանցանքի համար, ենթադրվում է, որ նրա կողմից ապագայում հանցանք կատարելը քիչ հավանական է, և վերջինն ունի ուղղվելու ավելի մեծ ներուժ⁴:

Այս համատեքստում արդի քրեական օրենսդրությունը շահագրգռված է առավելագույնի հասցնել հանցանք կատարած անձի մարդկային զգացմունքները՝ խթանելով նրա դրական վարքագիծը ինչպես հանցագործության կատարման ընթացքում, այնպես էլ դրանից հետո՝ մեղմացնելով պատիժը, ընդհուպ մինչև վերջնականապես ազատվելով քրեական պատասխանատվությունից:

ՀՀ քրեական օրենսդրությունը, ևս հիմքում ունենալով վերը նշված մոտեցումները, նախատեսում է գործուն զղջալու հիմքով անձին քրեական պատասխանատվությունից ազատելու կառուցակարգ՝ իրավասու պետական մարմնին իրավունք վերապահելով որոշում կայացնելու հանցանքի հատկանիշներ պարունակող արարք կատարած անձի նկատմամբ պատիժ կամ քրեաիրավական ներգործության այլ միջոց չկիրառելու մասին:

Որոշ հեղինակների կարծիքով՝ գործուն զղջալը ենթադրում է հանցագործության կատարումից հետո այն ակտիվ գործողությունները, որոնք ցույց են տալիս, որ անձը զղջում է կատարված հանցագործության համար և ձգտում է վերացնել կամ նվազեցնել դրա վտանգավոր հետևանքները⁵:

Երկրորդ մոտեցման համաձայն՝ գործուն զղջալը պետք է հասկանալ որպես հետհանցավոր դրական գործողությունների համալիր, որն ուղղված է արարքի հասարակական վտանգի վերացմանը⁶:

Այլ հեղինակներ կարծիքով՝ գործուն զղջալը հանցագործություն կատարած անձի ակտիվ և կամավոր վարքն է, որն ուղղված է արարքի վտանգավոր հետևանքները վերացնելուն, նվազեցնելուն կամ հանցագործության բացահայտմանը ակտիվորեն նպաստելուն⁷:

Ընդհանուր առմամբ վերլուծելով բացահայտված տեսակետները՝ գործուն զղջալը կարելի է բնորոշել դրական գործողությունների ամբողջություն, որոնց միջոցով հանցանք կատարած անձը կանխում, վերացնում կամ նվազեցնում է արարքի վտանգավոր հետևանքները և/կամ օժանդակում է իրավապահ մարմին-

³ St'u Gold GJ, Weiner B: Remorse, confession, group identity, and expectancies about repeating a transgression. *Basic Appl Soc Psychol* 22(291), 2000, էջ 300:

⁴ St'u Proeve MJ, Howells K: Effects of remorse and shame and criminal justice experience on judgments about a sex offender. *Psychol Crime Law*, 12(145), 2006, էջ 61:

⁵ Советское уголовное право. Часть Общая. Под ред. Е.А. Смирнова, А.Ш. Якупова. Киев, 1973, էջ 464:

⁶ St'u Кушнарв В. А. Проблемы толкования норм уголовного права о деятельном раскаянии //Юридический мир. 2002. № 1., էջ 45:

⁷ St'u Lașcu M., Liberarea de răspundere penală în legătură cu căința activă prevăzută în noul Cod penal al Republicii Moldova, „Revista națională de drept”, 2003, nr.3, էջ 12:

ներին հանցանքի բացահայտման գործում, արդյունքում՝ օրենքով նախատեսված պայմաններով ազատվելով քրեական պատասխանատվությունից:

Հարկ է նշել, որ տեսական գրականությունում բազմիցս քննարկման առարկա են դարձել գործուն զղջալու հիմքով քրեական հետապնդումը բացառող, մասնավորապես, անձի կողմից կամավոր⁸, «անկեղծորեն»⁹, ժամանակին^{10,11} և անձամբ¹² (հանցանք կատարած անձի կողմից անձամբ, այլ ոչ թե հեռագիր կամ նամակ ուղարկելու միջոցով)¹³ զղջալու, հանցանքի բացահայտմանն ակտիվորեն նպաստելու¹⁴ պայմանները:

Այնուհանդերձ, հարկ է նկատել, որ դատախազական գործունեության ընթացքում սույն գործիքակազմը կիրառելիս հաճախ առաջ են գալիս հարցեր, որոնք վերաբերում են ոչ թե գործուն զղջալու հիմքով քրեական հետապնդումը բացառող օրենսդրությամբ նախատեսված պայմաններին և դրանց վերաբերյալ առկա տարատեսակ մեկնարանություններին, այլ քննարկվող հիմքով քրեական պատասխանատվությունից ազատելու լիազորություն ունեցող մարմինների (անձանց) շրջանակին:

Վերը նշվածը հիմք ընդունելով՝ վերաբերելի նյութափրավական և դատավարական իրավանորմերի լույսի ներքո քննարկման առարկա կդարձնենք հետևյալ հարցը. քրեական վարույթն իրականացնող ո՞ր մարմնին է վերապահված գործուն զղջալու հիմքով քրեական պատասխանատվությունից ազատելու իրավասությունը:

◀◀ ներպետական իրավակարգավորումները

Գործուն զղջալու հիմքով քրեական պատասխանատվությունից ազատելու կառուցակարգը, որն իր մեջ, ի թիվս այլնի, ներառում է նաև վերականգնողական արդարադատության տարրեր¹⁵ (հանցանք կատարած անձի կողմից հանցանքի արդյունքում վնաս պատճառած լինելու դեպքում այն հատուցելը կամ այլ կերպ

⁸ Տե՛ս Петрухин И. Гуманность или трезвый расчет? // Рос.юстиция. - 1999. - № 9, էջեր 25-26:

⁹ Տե՛ս Головкин Л.В. Прекращение уголовного дела в связи с деятельным раскаянием. Законодательство. - 1999. - № 1, էջեր 72-77:

¹⁰ Տե՛ս Алюшкин П.В. Фактический состав освобождения от уголовной ответственности в связи с деятельным раскаянием. Дис. канд. юрид. наук. - Волгоград 2001, էջ 198:

¹¹ Տե՛ս Soyer Richard, Pollak Sergio (2017). Active Repentance. Basic questions regarding the timeliness and voluntary nature of damage compensation SIAK-Journal – Journal for Police Science and Practice (International Edition Vol. 7), էջեր 32–43:

¹² Տե՛ս Григорьев Н.В. Процессуальные аспекты освобождения от уголовной ответственности по специальным основаниям, предусмотренным Особенной частью УК РСФСР. Автореф дис. канд. юрид. наук - М., 1992, էջ 22:

¹³ Տե՛ս Скрыбин М. А., Шакиров Х. С. Общий и специальные виды освобождения от уголовной ответственности в связи с деятельным раскаянием. - Казань: ЗАО «Новое знание», 2006, էջ 168:

¹⁴ Տե՛ս Курс уголовного права: в 5 т. Общая часть. Т. 2. Учение о наказании Н.Ф. Кузнецовой, И.М. Тяжковой. - М.: Зерцало, 1999, էջ 399:

¹⁵ Այս մասին մանրամասն տե՛ս Patrick Bashizi BashigeMurhula, AdenDejeneTolla: The Effectiveness of Restorative Justice Practices on Victims of Crime, Vol. 10 No. 1 (2021), էջեր 98-110:

հարթելը), իր արտացոլումն է գտել թե՛ 2003 թվականի ապրիլի 18-ին ընդունված ՀՀ քրեական օրենսգրքում (այսուհետ նաև՝ Նախկին քրեական օրենսգիրք), թե՛ 2021 թվականի մայիսի 05-ին ընդունված ՀՀ քրեական օրենսգրքում (այսուհետ նաև՝ Գործող քրեական օրենսգիրք):

Գործող քրեական օրենսգրքի 81-րդ հոդվածի համաձայն՝

«1. Եթե անձն առաջին անգամ է հանցանք կատարել, սպա կարող է ազատվել քրեական պատասխանատվությունից, եթե նրա կատարած արարքը ոչ մեծ կամ միջին ծանրության հանցանք է, և նա համագործակցում է քրեական հետապնդման մարմինների հետ, չի վիճարկում իրեն մեղսագրվող արարքը, վնաս պատճառած լինելու դեպքում հատուցել կամ այլ կերպ հարթել է հանցագործությանը պատճառված վնասը:

1.1. Եթե անձի առաջին անգամ կատարած հանցանքը ծանր կամ առանձնապես ծանր հանցանք է, սպա հանցավորի դերի, հանցանքը կատարելիս կամ դրանից հետո նրա վարքագծի և այլ հանգամանքների հետ կապված բացառիկ գործոնների առկայության դեպքում նա կարող է ազատվել քրեական պատասխանատվությունից, եթե համագործակցում է քրեական հետապնդման մարմինների հետ, չի վիճարկում իրեն մեղսագրվող արարքը, վնաս պատճառած լինելու դեպքում հատուցել կամ այլ կերպ հարթել է հանցագործությանը պատճառված վնասը: Բացառիկ կարող են ճանաչվել ինչպես առանձին մեղմացնող հանգամանքները, այնպես էլ այդ հանգամանքների համակցությունը: (...):»:

Վերոնշյալ իրավանորմի վերլուծության արդյունքում պարզ է դառնում, որ գործուն զոջալու հիմքով հսկող դատախազն իրավասու է չհարուցել քրեական հետապնդում կամ դադարեցնելու քրեական հետապնդումը, եթե անձը.

- 1) առաջին անգամ կատարել է ոչ մեծ կամ միջին ծանրության հանցանք,
- 2) համագործակցում է քրեական հետապնդման մարմինների հետ,
- 3) չի վիճարկում իրեն մեղսագրվող արարքը,
- 4) վնաս պատճառած լինելու դեպքում հատուցել կամ այլ կերպ հարթել է հանցագործությանը պատճառված վնասը և
- 5) նախկինում գործուն զոջալու հիմքով քրեական պատասխանատվությունից չի ազատվել:

Անդրադառնալով վերը նշված առաջին պայմանին՝ հարկ է նշել, որ Գործող քրեական օրենսգրքի 3-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի համաձայն՝ առաջին անգամ հանցանք կատարած համարվում է այն անձը, որը նախկինում հանցանք չի կատարել կամ կատարել է, սակայն ազատվել է քրեական պատասխանատվությունից, կամ որի դատվածությունը սույն օրենսգրքով սահմանված կարգով մարվել կամ վերացվել է:

Ինչ վերաբերում է համագործակցում է քրեական հետապնդման մարմինների հետ պայմանին, ապա հարկ է նկատել, որ «Քրեական հետապնդման մարմին» հասկացության կիրառությունը համահունչ չէ գործող ՀՀ քրեական դատավարության օրենսգրքում օգտագործվող հասկացություններին, քանի որ

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքում «Քրեական հետապնդման մարմին» հասկացությունն առկա չէ: Ըստ էության, այս հասկացությունը ՀՀ գործող քրեական օրենսգրքում մնացել է ՀՀ նախկին քրեական դատավարության օրենսգրքից, որի համաձայն՝ քրեական հետապնդման մարմիններ էին հանդիսանում դատախազը (մեղադրողը), քննիչը և հետաքննության մարմինը:

Մեղսագրվող արարքը չվիճարկելը ենթադրում է անձի կողմից իրեն մեղսագրվող արարքի փաստական հիմքը՝ մեղսագրվող արարքի էությունը, կատարման տեղը, ժամանակը, եղանակը և մյուս հանգամանքները, ինչպես նաև այդ արարքի իրավական գնահատականը (այն հոդվածը կամ հոդվածի մասը կամ կետը, որով պատասխանատվություն է նախատեսված անձին մեղսագրվող արարքի կատարման համար) չվիճարկելու պահանջ:

Վնաս պատճառած լինելու դեպքում այն հատուցելու կամ այլ կերպ հարթելու պայմանը ենթադրում է հանցանք կատարած անձի կողմից պատճառված գույքային վնասի փոխհատուցում ինչպես բնամիջերթով (մասնավորապես՝ հափշտակված գույքի դիմաց դրան համարժեք այլ գույքի տրամադրմամբ), այնպես էլ դրամական ձևով (օրինակ՝ հափշտակված կամ վնասված գույքի արժեքի փոխհատուցմամբ) և այլն:

Բացի հատուցելուց՝ վնասը կարող է նաև այլ կերպ հարթվել: Օրինակ՝ բժշկական ծախսերը փոխհատուցելը, սեփական աշխատանքով բնակարանը կամ մեքենան վերանորոգելը և այլն:

Վերջիվերջո, հարկ է նկատի ունենալ, որ գործուն գղջալու հիմքով մեկ անգամ արդեն քրեական պատասխանատվությունից ազատված լինելու դեպքում օրենքը անձին հնարավորություն չի տալիս երկրորդ անգամ քրեաիրավական այս ինստիտուտի կիրառման արդյունքում ազատվել քրեական պատասխանատվությունից:

ՀՀ քրեական օրենսգրքում կատարված լրացումներից հետո անձը ծանր կամ առանձնապես ծանր հանցանք կատարելու դեպքում ևս կարող է գործուն գղջալու հիմքով ազատվել քրեական պատասխանատվությունից, սակայն այդ դեպքում, բացի վերը նշված նախապայմաններից, անհրաժեշտ է նաև բացառիկ գործոնների առկայություն, որոնք կապված են հանցավորի դերի, հանցանքը կատարելիս կամ դրանից հետո նրա վարքագծի և այլ հանգամանքների հետ:

Այսպիսով, քննարկվող հիմքով հանցանք կատարած անձը կարող է ազատվել քրեական պատասխանատվությունից ոչ թե գղջման դրսևորում հանդիսացող ցանկացած, այլ Գործող քրեական օրենսգրքով սահմանված անհրաժեշտ գործողությունների կատարման արդյունքում:

Անդրադառնալով գործուն գղջալու հիմքով քրեական պատասխանատվությունից ազատվելու համար անհրաժեշտ գործողությունների ծավալին՝ հարկ է նշել, որ քրեական իրավունքի տեսությունում այս հարցի վերաբերյալ ձևավորվել է երեք տեսություն.

- Կուտակային (կումուլյատիվ) տեսություն, ըստ որի՝ գործուն զղջալը ձևավորվում է միայն օրենսդրությամբ թվարկված բոլոր գործողությունների կատարման արդյունքում¹⁶:
- Ողջամիտ կուտակային տեսություն, որի համաձայն՝ գործուն զղջալը ձևավորվում է միայն օրենսդրությամբ թվարկված այն գործողությունների կատարման արդյունքում, որը տվյալ իրադրությունում իրագործելի է¹⁷: Մասնավորապես, սույն տեսության համաձայն՝ անձը գործուն զղջալու հիմքով կարող է ազատվել քրեական պատասխանատվությունից ինչպես քրեական օրենսդրությամբ թվարկված բոլոր գործողությունների, այնպես էլ դրանց մի քանիսի կատարման արդյունքում: Ըստ էության, դրանք այն գործողություններն են, որոնք, հաշվի առնելով կոնկրետ հանգամանքները և օբյեկտիվ իրադրությունը, անձը հնարավորություն է ունեցել կատարելու:
- Հակակուտակային տեսություն (անտիկումուլյատիվ), որի համաձայն՝ գործուն զղջալը ձևավորվում է քրեական օրենսդրությամբ թվարկված յուրաքանչյուր գործողության կատարման արդյունքում¹⁸:

Հարկ է նկատել, որ Գործող քրեական օրենսգրքի 81-րդ հոդվածի տեքստային ձևակերպումը հանդիսանում է կուտակային տեսության դրսևորում: Ըստ էության, առկա իրավակարգավորման պայմաններում անձը գործուն զղջալու հիմքով կարող է ազատվել քրեական պատասխանատվությունից միայն Գործող քրեական օրենսգրքի 81-րդ հոդվածով նախատեսված բոլոր պայմանների առկայության դեպքում: Միաժամանակ, Գործող քրեական օրենսգիրքը հստակեցրել է, որ վնասը հատուցելու կամ հարթելու հարցը առաջանում է միայն *վնաս պատճառած լինելու դեպքում*:

Վերը նշվածի լույսի ներքո հետաքրքիր է նաև քննարկման առարկա դարձնել Նախկին քրեական օրենսգրքի 72-րդ հոդվածով նախատեսված իրավակարգավորումը:

Այսպես, Նախկին քրեական օրենսգրքի 72-րդ հոդվածի համաձայն՝

- «1. *Առաջին անգամ ոչ մեծ ծանրության կամ միջին ծանրության հանցանք կատարած անձը կարող է ազատվել քրեական պատասխանատվությունից, եթե նա հանցանք կատարելուց հետո կամովին ներկայացել է մեղադրանքով, աջակցել է հանցագործությունը բացահայտելուն, հատուցել կամ այլ կերպ հարթել է հանցագործությամբ պատճառված վնասը:*
2. *Այլ տեսակի հանցանք կատարած անձը քրեական պատասխանատվությունից ազատվում է միայն սույն օրենսգրքի Հատուկ մասի հոդվածով հատկապես նախատեսված դեպքերում»:*

¹⁶ Տե՛ս Михайлов В., Признаки деятельного раскаяния // Российская юстиция. 1998. № 4., էջ 5:

¹⁷ Տե՛ս Савкин А., Деятельное раскаяние — свобода от ответственности // Российская юстиция. 1997. № 12. Էջեր 35, 37:

¹⁸ Տե՛ս Энциклопедия уголовного права. СПб. : изд. проф. Малинина, 2008. Т. 10. էջ 301:

Վերը նշված իրավանորմի տեքստային մեկնաբանման դեպքում հնարավոր է եզրահանգել, որ այս ձևակերպումը ևս համապատասխանում է կուտակային տեսության մոտեցմանը և նախկինում անձը գործուն գղջալու հիմքով կարող էր ազատվել քրեական պատասխանատվությունից հողվածում նշված բոլոր գործողությունների կատարման արդյունքում:

Այնուամենայնիվ, հարկ է նշել, որ օրենսդրական նման ձևակերպման պայմաններում թե՛ քրեական իրավունքի տեսությունում¹⁹ և թե՛ պրակտիկայում տվյալ նորմի մեկնաբանությունը համապատասխանել է ողջամիտ կուտակային տեսությունում առկա մոտեցումներին, այն է՝ անձը կարող էր գործուն գղջալու հիմքով ազատվել քրեական պատասխանատվությունից Նախկին քրեական օրենսգրքի 72-րդ հոդվածով նախատեսված այն գործողությունների (գործողության) կատարման արդյունքում, որը տվյալ իրադրությունում իրագործելի էր:

Գործող քրեական օրենսգրքի 81-րդ հոդվածով նախատեսված իրավակարգավորման կիրառման դատավարական հիմքը նախատեսված է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի (այսուհետ նաև՝ Գործող քրեական դատավարության օրենսգրք) 197-րդ հոդվածով, որը իրավասություն է տալիս հսկող դատախազին՝ չհարուցելու քրեական հետապնդում կամ դադարեցնելու քրեական հետապնդումը, եթե առկա են Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքի 81-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված պայմանները: Նշված հիմքով քրեական հետապնդում չհարուցելու կամ քրեական հետապնդումը դադարեցնելու մասին որոշումը հսկող դատախազը կայացնում է ինչպես իր նախաձեռնությամբ՝ վարույթի նյութերի հիման վրա, այնպես էլ քննիչի միջնորդությամբ:

Եթե Գործող քրեական օրենսգրքով սահմանված քրեական հետապնդումը բացառող անհրաժեշտ նախապայմանների առկայության պարագայում անձը պարտադիր ազատվում է քրեական պատասխանատվությունից, և դա չի թողնվում վարույթն իրականացնող մարմնի հայեցողությանը (օրինակ՝ քրեական պատասխանատվությունից ազատելը տուժողի և հանցանք կատարած անձի հաշտության հիմքով), ապա տվյալ դեպքում քրեական օրենսգրքով նախատեսված որոշ պայմաններ նրան թույլ են տալիս այդ հարցում դրսևորել հայեցողություն, և դրա իրացման համար անհրաժեշտ է նաև իրավասու դատախազի կամարտահայտությունը:

Այդուհանդերձ, այս հարցում դատախազի հայեցողությունը բացարձակ չէ. նա կարող է օգտվել իր հատուկ լիազորությունից, եթե դրա համար կան անհրաժեշտ պայմաններ, սակայն զրկված է այդ հնարավորությունից, եթե բացակայում է դրանցից թեկուզ մեկը, կամ առկա է այդ լիազորության իրականացմանը խոչընդոտող հատուկ հանգամանք²⁰:

¹⁹ Տե՛ս Ս. Առաքելյան, Ա. Գաբրուզյան, Հ. Խաչիկյան և ուրիշ., ՀՀ քրեական իրավունք (ընդհանուր մաս), Երևան 2012, էջեր 466-469:

²⁰ Տե՛ս Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության նոր օրենսգրքի հայեցակարգային լուծումների, նորարարական մոտեցումների և հիմնական ինստիտուտների մեկնաբանման գործնական ուղեցույց, էջ 300:

Գործուն զղջալու հիմքով քրեական պատասխանատվությունից ազատելը որպես դատախազի բացառիկ լիազորություն

Անդրադառնալով քննարկվող հիմքով քրեական պատասխանատվությունից ազատելու իրավասություն ունեցող մարմինների (անձանց) շրջանակին՝ հարկ է նկատել, որ այս հարցի վերաբերյալ մոտեցումը << քրեական և քրեադատավարական նոր օրենսդրության կիրառման պրակտիկայում միասնական չէ: Չնայած այն ամենին, որ քրեաիրավական և քրեադատավարական վերաբերելի իրավանորմների վերլուծությունից հստակ բխում է, որ գործուն զղջալու հիմքով անձին քրեական պատասխանատվությունից ազատելու լիազորությունը վերապահված է բացառապես հսկող դատախազին՝ պրակտիկայում քննարկվող ինստիտուտի կիրառմամբ անձին քրեական պատասխանատվությունից ազատելու մասին որոշումներ են կայացվում նաև դատարանների կողմից քրեական վարույթը ըստ էության քննելու նպատակով դատարանում ստացվելուց հետո:

Ուշագրավ է այն հանգամանքը, որ << դատական պրակտիկայում առկա է դեպք, երբ դատարանը գործուն զղջալու հիմքով անձին ազատել է քրեական պատասխանատվությունից նաև նախնական դատախոսման փուլում²¹:

Վերաքննիչ դատարանը, դուրս չգալով ներկայացված բողոքի շրջանակներից, քննարկման առարկա է դարձրել դատարանի կողմից քննարկվող գործիքակազմի կիրառման միայն փուլային հարցը:

Մասնավորապես, քննարկելով վերը նշված դատական ակտի դեմ դատախազի բողոքը՝ բեկանել է այն և վարույթը փոխանցել առաջին աստիճանի դատարան՝ նոր քննության՝ արձանագրելով հետևյալը.

«Հարկ է նշել, որ նախնական դատախոսման փուլում << քրեական դատավարության օրենսգրքի 12-րդ հոդվածով սահմանված քրեական հետապնդումը բացառող հանգամանքները կարող են քրեական հետապնդումը դադարեցնելու և վարույթը կարճելու հիմք հանդիսանալ միայն այն դեպքում, երբ դա թույլ է տալիս տվյալ կոնկրետ հիմքի բնույթը և հիմնավորման պարզությունը: Միևնույն ժամանակ, երբ քրեական հետապնդումը դադարեցնելու հիմքերի առկայության հավաստումը պահանջում է ապացուցման ավելի բարձր մակարդակ, քան միայն մեկ որոշակի փաստաթղթի ուսումնասիրումը, դատարանի կողմից նախնական դատախոսման փուլում քրեական հետապնդումը դադարեցնելու մասին որոշման կայացումը չի կարող ճանաչվել իրավաչափ, քանի որ դատավարության տվյալ փուլում նման որոշման կայացումը կարող է հանգեցնել քրեական դատավարության հիմնարար սկզբունքների խաթարման»²²:

Այսպիսով, վերաքննիչ դատարանն արձանագրել է, որ գործուն զղջալու հիմքով առանց հիմնական դատախոսման իրականացնելու քրեական հետապնդու-

²¹ Տե՛ս Կոտայքի մարզի ընդհանուր իրավասության դատարանի թիվ ԿԴ/0219/01/22 որոշումը, <http://www.datalex.am/?app=AppCaseSearch&page=default&tab=criminal> (վերջին մուտք՝ 10.09.2023):

²² Տե՛ս նույն տեղում:

մը դադարեցնելն իրավաչափ չէ, քանի որ տվյալ դեպքում առկա է հիմնական դատախոսներ անցկացնելու և գործում առկա ապացույցների վերլուծություն իրականացնելու օբյեկտիվ անհրաժեշտություն և նախնական դատախոսների փուլում ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 12-րդ հոդվածով սահմանված քրեական հետապնդումը բացառող հանգամանքները կարող են քրեական հետապնդումը դադարեցնելու և վարույթը կարճելու հիմք հանդիսանալ միայն այն դեպքում, երբ դա թույլ է տալիս տվյալ կոնկրետ հիմքի բնույթը և հիմնավորման պարզությունը:

Մեկ այլ քրեական գործով Երևան քաղաքի առաջին ստյանի ընդհանուր իրավասության քրեական դատարանը, մեղադրյալի նկատմամբ գործուն գոջալու հիմքով քրեական հետապնդումը դադարեցնելով և քրեական գործի վարույթը կարճելով, արձանագրել է. « (...) Միաժամանակ պետք է արձանագրել, որ ՀՀ քրեական օրենսգրքի 81-րդ հոդվածով նախատեսված քրեական պատասխանատվությունից ազատելու հիմքը հայեցողական բնույթ ունի, որի կիրառմամբ անձի նկատմամբ քրեական հետապնդում չհարուցելու կամ այն դադարեցնելու քրեադատավարական հիմքը նախատեսված է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 197-րդ հոդվածով, որը հսկող դատախազին օժտում է հայեցողական քրեական հետապնդում իրականացնելու լիազորությամբ: Օրենսդրական նման հատուկ կարգավորումը պայմանավորված է այն հանգամանքով, որ ի տարբերություն ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 12-րդ հոդվածով նախատեսված քրեական պատասխանատվությունից ազատելու մնացած հիմքերի՝ ՀՀ քրեական օրենսգրքի 81-րդ հոդվածով նախատեսված պայմանների առկայությունն ինքնին չի առաջացնում անձին քրեական պատասխանատվությունից ազատելու իրավասու մարմինների պարտականություն, այլ այդ հարցի լուծումը թողնվում է այդ մարմինների գնահատմանը, որը յուրաքանչյուր դեպքում պետք է իրականացվի գործի կոնկրետ հանգամանքների հաշվառմամբ: Ընդ որում՝ դատավարական հատուկ նորմի բացակայության դեպքում հսկող դատախազը զրկված կլինեք քննարկվող հիմքով քրեական հետապնդում չիրականացնելու կամ այն դադարեցնելու լիազորությունից, քանի որ այն ներառված չէ քրեական հետապնդումը բացառող հանգամանքների մեջ: Միևնույն ժամանակ հիշյալ հատուկ նորմի առկայությունը չի կարող մեկնաբանվել որպես դատարանի կողմից տվյալ ընթացակարգով քրեական հետապնդումը դադարեցնելու կիրառումը սահմանափակող նորմ: Վերջին դիրքորոշման համար Դատարանը հիմք է ընդունում այն, որ ինչպես ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 197-րդ հոդվածը, այնպես էլ 26-րդ գլուխը, որում այն գետեղված է, միտված են մինչդատական վարույթում հանրային քրեական հետապնդման հետ կապված իրավահարաբերությունների կարգավորմանը և որևէ հղում չեն պարունակում դատական վարույթի իրավահարաբերություններին: Ավելին, նման դիրքորոշում արտահայտելիս հարկ է հաշվի է առնել այն, որ դատարանը ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 12-րդ հոդվածով սահմանված հիմքերի առկայության դեպքում քննարկում է անձի նկատմամբ քրեա-

կան հետապնդումը դադարեցնելու հարցը և այդ հարցի լուծումն արդարադատության վերջնարդյունքն է, հետևաբար քրեադատավարական որևէ սուբյեկտ չի կարող այդ հարցում ավելի լայն լիազորություններ ունենալ, քան դատարանը, և չի կարող նախատեսվել քրեական պատասխանատվությունից ազատելու որևէ հիմք, որը կիրառելու լիազորությամբ դատարանն օժտված չլինի (...)»²³:

Կարծում ենք՝ գործուն գղջալու հիմքով քրեական պատասխանատվությունից ազատելը հանդիսանում է որպես հսկող դատախազի բացառիկ լիազորություն, և հսկող դատախազի կողմից մինչդատական վարույթում այդ հիմքով անձին քրեական պատասխանատվությունից չազատելու և քրեական վարույթը մեղադրական եզրակացությամբ դատարան ուղարկելուց հետո, դատարանը, որպես քրեական վարույթն իրականացնող մարմին, իրավասու չէ քննարկվող հիմքով անձին ազատել քրեական պատասխանատվությունից:

Ասվածի տրամաբանական հիմնավորումն է հանդիսանում նախևառաջ այն, որ սույն հիմքով քրեական պատասխանատվությունից ազատելու հայցողական լիազորությունը հսկող դատախազին վերապահվել է Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի մասնագիտացված (հատուկ) նորմով:

Կարծում ենք՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքում առանձին նորմի նախատեսումը, որով հստակեցվում է նաև գործուն գղջալու հիմքով քրեական պատասխանատվությունից ազատելու համար իրավասու սուբյեկտին՝ դատախազին, ինքնանպատակ չէ: Համեմատության համար հարկ է նշել, որ ՀՀ գործող քրեական օրենսգրքով նախատեսված այլ հիմքերով (օրինակ՝ տուժողի և հանցանք կատարած անձի հաշտության հիմքով) անձին քրեական պատասխանատվությունից ազատելու համար առանձին նորմ, որով հստակեցված կլինի նաև այն կիրառելու համար իրավասու մարմինը, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքում առկա չէ:

Առաջին հայացքից կարող է այնպիսի տպավորություն ստեղծվել, որ ասվածը վերաբերում է բացառապես նախաքննության փուլին, և մասնագիտացված նորմով նման իրավակարգավորում սահմանելը նպատակ է հետապնդում այդ փուլում հստակեցնել գործուն գղջալու հիմքով քրեական պատասխանատվությունից ազատելու համար իրավասու սուբյեկտին՝ հսկող դատախազին՝ բացառելով նախաքննության փուլում վարույթն իրականացնող այլ մարմնի կողմից նման հայեցողություն դրսևորելու հնարավորությունը:

Սակայն քրեադատավարական նոր օրենսդրության պայմաններում, երբ բացառապես հսկող դատախազին են պատկանում քրեական հետապնդում հարուցելու, ինչպես նաև դրանից ձեռնպահ մնալու բացառիկ լիազորությունները, վերը նշված փաստարկը կենսունակ չէ:

²³ Տե՛ս Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարանի թիվ ԵԴ1/0148/01/23 որոշումը:

Անդրադառնալով դատարանների կողմից դատական ակտի հիմքում դրված վերոնշյալ պատճառաբանություններին՝ հարկ է նշել, որ դրանք չեն բխում ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի տրամաբանությունից և խախտում են դրա համակարգային բնույթը: Մասնավորապես, վերոնշյալ մեկնաբանությամբ ստացվում է, որ դատարանը մեղադրյալի նկատմամբ քրեական հետապնդումը դադարեցնելիս չի կարող առաջնորդվել Գործող քրեական դատավարության օրենսգրքի 197-րդ հոդվածով, սակայն Գործող քրեական դատավարության օրենսգրքով նախատեսված չէ այլ կարգավորում դատարանի կողմից ՀՀ քրեական օրենսգրքի 81-րդ հոդվածը գործողության մեջ դնելու համար: Դատարանը վկայակոչել է միայն Գործող քրեական դատավարության օրենսգրքի դատարանի լիազորությունները սահմանող հոդվածը, քանի որ չկա այլ կարգավորում, որը թույլ կտա դատարանին կիրառել ՀՀ քրեական օրենսգրքի 81-րդ հոդվածը: Միաժամանակ, ըստ դատարանի պատճառաբանության՝ ստացվում է, որ միայն հսկող դատախազն է պարտավոր նշված դեպքում դրսևորելու հայեցողություն, քանի որ այդ դրույթը վերաբերելի է մինչդատական վարույթին, և դատական վարույթում գործուն գոչալու հիմքով քրեական հետապնդումը դադարեցնելու բոլոր պայմանների առկայության դեպքում դատարանը պարտավոր է անհապաղ դադարեցնել քրեական հետապնդումը և չի կարող դրսևորել հայեցողություն: Ստացվում է այնպիսի իրավիճակ, երբ գործուն գոչալու հիմքով քրեական հետապնդումը չհարուցելու կամ դադարեցնելու բոլոր պայմանների առկայությամբ հսկող դատախազը հարուցել է հետապնդում՝ հիմնավորելով իր որոշումը այլ հանգամանքներով, սակայն այդ որոշման բողոքարկման դեպքում դատարանը անհապաղ պետք է դադարեցնի քրեական հետապնդումը, քանի որ առկա են բոլոր պայմանները: Նման մեկնաբանությունը իմաստագրկում է օրենսդրի կողմից հայեցողական քրեական հետապնդման հիմքում դրված նպատակը: Դատարանի կողմից Գործող քրեական դատավարության օրենսգրքի միայն 33-րդ հոդվածում նշված ընդհանուր բնույթի լիազորությունների վկայակոչումը բավական չէ, քանի որ այդ լիազորությունները գործողության մեջ են դնում այլ նորմեր, իսկ հետևյալ դեպքում քրեական հետապնդումը գործուն գոչալու հիմքով դադարեցնելիս անհրաժեշտ է առաջնորդվել այդ դրույթը գործողության մեջ դնող Գործող քրեական դատավարության օրենսգրքի 197-րդ հոդվածով և եթե չկա կարգավորումը գործողության մեջ դնող այլ նորմ, ապա դատարանը պետք է ձեռնպահ մնա որևէ գործողություն կատարելուց, քանի որ դատարանը իրավասու է կատարելու միայն այնպիսի գործողություններ, որոնց համար լիազորված է Սահմանադրությամբ կամ օրենքներով, հակառակը կդիտվի ՀՀ Սահմանադրությամբ նախատեսված օրինականության սկզբունքի խախտում: Ինչ վերաբերում է քրեադատավարական ոչ մի սուբյեկտի կողմից քրեական հետապնդումը դադարեցնելու հարցում ավելի լայն լիազորություն չունենալուն, ապա հարկ է նշել, որ նման պնդումը դուրս է քննարկվող հարցի տրամաբանությունից, քրեադատա-

վարական այլ սուբյեկտներ ևս օժտված են եզրափակիչ դատավարական ակտ կայացնելու հնարավորությամբ և անհրաժեշտ է գնահատել, թե որ սուբյեկտն ինչ լիազորությամբ է օժտված, և օրենսդիրը ինչ նպատակ է հետապնդել այդ նորմը սահմանելիս: Քրեական հետապնդում հարուցելը դատախազի բացառիկ լիազորությունն է և հենց այս տրամաբանությունից ելնելով էլ՝ օրենսդիրը նման հայեցողություն վերապահել է միայն հսկող դատախազին՝ կարևորելով վերջինի կամահայտնությունը սույն քրեաիրավական ինստիտուտի կիրառման հարցում:

Հարկ է նշել, որ գործուն զոջալու հիմքով քրեական պատասխանատվությունից ազատելու համար իրավասու սուբյեկտային կազմն առանձին նորմով ամրագրելը նորույթ չէ ՀՀ քրեադատավարական օրենսդրությունում:

Այսպես, Նախկին քրեական օրենսգրքի 72-րդ հոդվածով գործուն զոջալը նախատեսված էր որպես հանցանք կատարած անձին քրեական պատասխանատվությունից ազատելու ինքնուրույն հիմք, և միևնույն ժամանակ օրենսդիրը նախատեսել էր քրեական պատասխանատվությունից ազատելու քննարկվող հիմքի կիրառման համար անհրաժեշտ պահանջները:

Ընդ որում, Նախկին քրեական օրենսգրքի 72-րդ հոդվածով նախատեսված պահանջների առկայությունը դեռևս չէր հանգեցնում անձին քրեական պատասխանատվությունից ազատելուն. այդ պահանջների առկայության դեպքում վարույթն իրականացնող մարմինը քննարկում էր անձին քրեական պատասխանատվությունից ազատելու հարցը և օժտված էր հայեցողական լիազորությամբ:

Քննարկվող հիմքով քրեական պատասխանատվությունից ազատելու դիսպոզիտիվությունն իր դատավարական արտահայտությունն էր գտել նաև 1998 թվականի հուլիսի 01-ին ընդունված ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի (այսուհետ նաև՝ Նախկին քրեական դատավարության օրենսգրք) 37-րդ հոդվածում, որն ուղղակիորեն նախատեսում էր Նախկին քրեական օրենսգրքի 72-րդ հոդվածով նախատեսված դեպքում քրեական գործի վարույթը կարճելու և քրեական հետապնդումը դադարեցնելու՝ վարույթն իրականացնող մարմնի հայեցողությունը՝ հստակորեն սահմանելով նաև գործուն զոջալու հիմքով քրեական պատասխանատվությունից ազատելու իրավասություն ունեցող սուբյեկտային կազմը, այն է՝ դատարանը, դատախազը, ինչպես նաև դատախազի համաձայնությամբ՝ քննիչը:

Այսպիսով, Նախկին քրեական դատավարության օրենսգրքը, ի տարբերություն Գործող քրեական դատավարության օրենսգրքի, գործուն զոջալու հիմքով քրեական պատասխանատվությունից ազատելու համար իրավասու մարմինների թվում ներառում էր նաև դատարանին՝ ապահովելով անհրաժեշտ դատավարական հիմք՝ վերջինի կողմից այդ լիազորությունից օգտվելու համար:

Համեմատության համար նշենք, որ մի շարք երկրների, օրինակ՝ ՌԴ քրեական դատավարության օրենսգրքով (աղբյուրը՝ https://www.consultant.ru/document/cons_doc) և Ղազախստանի Հանրապետության քրեական օրենսգրքով

և սահմանված է գործուն զղջալու հիմքով քրեական պատասխանատվությունից ազատելու համար իրավասու սուբյեկտային կազմը, որում ներառված է նաև դատարանը: Ընդ որում, Ղազախստանի Հանրապետության քրեական օրենսգրքի 65-րդ հոդվածով հստակ ամրագրված է, որ առաջին անգամ կոռուպցիոն բնույթի հանցանք կատարած անձին գործուն զղջալու հիմքով քրեական պատասխանատվությունից կարող է ազատել բացառապես դատարանը (աղբյուրը՝ <https://online.zakon.kz/Document/>):

Խորվաթիայի, Շվեյցարիայի և Գերմանիայի քրեական օրենսգրքերով սահմանված է, որ դատարանը գործուն զղջալու հիմքով որոշ հանցանքներ կատարած անձի նկատմամբ կարող է նշանակել ավելի մեղմ պատիժ, իսկ Մակեդոնիայում՝ կայացնել արդարացման դատավճիռ (աղբյուրը՝ <http://www.legislationline.org/documents/section/criminal-codes/>):

Կարծում ենք՝ գործուն զղջալու հիմքով քրեական պատասխանատվությունից ազատելը որպես դատախազի բացառիկ իրավասություն հանդիսանալու մասին է հուշում նաև ՀՀ գործող քրեական օրենսգրքի 81-րդ հոդվածում առկա՝ «համագործակցում է քրեական հետապնդման մարմինների հետ» ձևակերպումը: Ըստ էության, օրենսդիրն օգտագործում է «համագործակցում է», այլ ոչ թե «համագործակցել է» ձևակերպումը՝ հսկող դատախազին վերապահելով նախաքննության փուլում գնահատել այդ հանգամանքը, և հնարավորություն չի տալիս հետագայում՝ քրեական վարույթը մեղադրական եզրակացությամբ դատարան ուղարկելուց հետո, դատարանի կողմից «post factum» այն դարձնել գնահատման առարկա:

Եզրակացություն

- Գործուն զղջալու հիմքով անձին քրեական պատասխանատվությունից ազատելը հանդիսանում է դատախազի բացառիկ լիազորությունը:
- Դատարանի կողմից սեփական նախաձեռնությամբ կամ կողմի միջնորդությամբ գործուն զղջալու հիմքով անձին քրեական պատասխանատվությունից ազատելու վերաբերյալ հարց քննարկելիս դատախազը պետք է առարկի այն հիմքով, որ դա հանդիսանում է դատախազի բացառիկ լիազորությունը և դատախազի կողմից մինչդատական վարույթում այդ հիմքով անձին քրեական պատասխանատվությունից չազատելու և քրեական վարույթը մեղադրական եզրակացությամբ դատարան ուղարկելուց հետո դատարանը, որպես քրեական վարույթն իրականացնող մարմին, իրավասու չէ քննարկվող հիմքով անձին ազատել քրեական պատասխանատվությունից:

Գրականության ցանկ (reference list, список литературы)

1. Ս. Առաքելյան, Ա. Գաբուզյան, Հ. Խաչիկյան և ուրիշ., ՀՀ քրեական իրավունք (ընդհանուր մաս), Երևան, 2012:
S.Arakelyan, A.Gabuzyan, H.Khachikyan and others: Criminal Law Of The Republic Of Armenia /General part/. Erevan 2012.
2. Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության նոր օրենսգրքի հայեցակարգային լուծումների, նորարարական մոտեցումների և հիմնական ինստիտուտների մեկնարանման գործնական ուղեցույց, հուլիս, 2022 թ.:
“Practical guide to the interpretation of conceptual solutions, innovative approaches and basic institutions of the new Criminal Procedure Code of the Republic of Armenia”, July 2022.
3. Կոտայքի մարզի ընդհանուր իրավասության դատարանի թիվ ԿԳ/0219/01/22 որոշումը,
<http://www.datalex.am/?app=AppCaseSearch&page=default&tab=criminal> (վերջին մուտք՝ 10.09.2023):
4. Decision No. KD/0219/01/22 of the Court of General Jurisdiction of Kotayk region,
<http://www.datalex.am/?app=AppCaseSearch&page=default&tab=criminal> (access 10.09.2023).
5. Gold GJ., Weiner B: Remorse, confession, group identity, and expectancies about repeating a transgression. *Basic Appl Soc Psychol* 22(291), 2000.
6. Patrick Bashizi BashigeMurhula, AdenDejeneTolla: The Effectiveness of Restorative Justice Practices on Victims of Crime, Vol. 10 No. 1 (2021).
7. Proeve MJ, Howells K: Effects of remorse and shame and criminal justice experience on judgements about a sex offender. *Psychol Crime Law*, 12(145), 2006.
8. Rocksheng Zhong, Madelon Baranoski, Neal Feigenson, Larry Davidson, Alec Buchanan, Howard V. Zonana. So You’re Sorry? The Role of Remorse in Criminal Law. *The Journal of the American Academy of Psychiatry and the Law* Volume 42 (1).
9. Soyer Richard, Pollak Sergio (2017). Active Repentance. Basic questions regarding the timeliness and voluntary nature of damage compensation SIAK-Journal – Journal for Police Science and Practice (International Edition Vol. 7).
10. Алюшкин П.В. Фактический состав освобождения от уголовной ответственности в связи с деятельным раскаянием. Дис, канд, юрид, наук. - Волгоград 2001.
Alyushkin P.V. The actual composition of exemption from criminal liability in connection with active repentance. Dissertation of the Candidate of Legal Sciences. - Volgograd 2001.
11. Головки Л.В. Прекращение уголовного дела в связи с деятельным раскаянием. Законодательство. - 1999.
Golovko L.V. Termination of the criminal case in connection with active repentance. Legislation. - 1999.

12. Григорьев Н.В. Процессуальные аспекты освобождения от уголовной ответственности по специальным основаниям, предусмотренным Особенной частью УК РСФСР. Автореф дис. канд юрид наук - М., 1992.
³ Սույն հետազոտության շրջանակներում ժամանակի ընթացքում քրեական օրենքի գործողության, այդ թվում՝ հետադարձ ուժի վերաբերյալ կարգավորումները քննարկվում են այնքանով, որքանով դա անհրաժեշտ է տարբեր ժամանակահատվածներում գործած քրեաիրավական նորմերի մրցակցության հարցերը համակողմանի ներկայացնելու համար:

⁴ Տե՛ս Иногамова-Хегай Л. В., Концептуальные основы конкуренции уголовно-правовых норм: монография. М.: НОРМА, ИНФРА-М, 2019, էջ 70:

խատեսում ատոմային էներգիայի օգտագործման օբյեկտների տեղաբաշխման, նախագծման, կառուցման, վերանորոգման, վերակառուցման, շահագործման կամ շահագործումից հանելու, վերագործարկման, միջուկային կամ ռադիոակտիվ նյութերի տեղափոխման, պահպանման կամ օգտագործման ընթացքում անվտանգության կանոն կամ պահանջ խախտելու համար այն անձի կողմից, որը, ըստ պայմանագրի կամ ծառայողական դիրքի, պարտավոր էր պահպանել այդ կանոնը կամ պահանջը, որն անզուշույթամբ առաջացրել է մարդու մահ, շրջակա միջավայրի ռադիոակտիվ վարակում կամ այլ ծանր հետևանք: Մույն հոդվածով, ի տարբերություն նախկին քրեական օրենսգրքի 227-րդ հոդվածի 2-րդ մասի, ավելի մեղմ պատիժ է նախատեսված: Մինևույն ժամանակ նոր օրենսգրքի 351-րդ հոդվածի 2-րդ մասը, Օրենսգրքի 17-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն, ծանր հանցանք է համարվում, մինչդեռ նախկին քրեական օրենսգրքի 227-րդ հոդվածի 2-րդ մասը, նախկին քրեական օրենսգրքի 19-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն, միջին ծանրության հանցանք էր, հետևաբար այս տեսանկյունից քրեական նոր օրենքը անձի վիճակը վատթարացնող է: Անձի արարքը Օրենսգրքի 351-րդ հոդվածի 2-րդ մասով որակելու դեպքում նա չի կարող ազատվել քրեական պատասխանատվությունից գործուն գոջալու հիմքով, քանի որ, ի թիվս այլնի, գործուն գոջալու հիմքով քրեական պատասխանատվությունից ազատվելու իրավաչափության պայմաններից է ոչ մեծ կամ միջին ծանրության հանցանք կատարած լինելը: Սակայն անձի արարքը նախկին քրեական օրենսգրքի 227-րդ հոդվածի 2-րդ մասով որակելու պարագայում հնարավոր կլիներ անձին ազատել քրեական պատասխանատվությունից գործուն գոջալու հիմքով, քանի որ կատարվածը համարվելու էր միջին ծանրության հանցանք: Շարադրվածը ևս մեկ անգամ վկայում է այն մասին, որ քրեական նոր օրենքը անձի պատիժը մեղմացնող է և միաժամանակ անձի վիճակը վատթարացնող: Ընդ որում, այսպիսի պատկեր հանդիպում է Օրենսգրքի՝ աշխատանքների և գործունեության իրականացման անվտանգության հատուկ կանոններով կամ պահանջներով սահմանված կարգի դեմ ուղղված հանցագործությունները նկարագրող գրեթե բոլոր հանցակազմերի պարագայում:

Քննարկվող և նմանատիպ դեպքերում հարց է առաջանում՝ արդյո՞ք օրենքին պետք է տալ հետադարձ ուժ, եթե այո, ապա ո՞ր մասով: Այսպիսի իրավիճակները Օրենսգրքով կարգավորված չեն: Օրենսգրքի 9-րդ հոդվածը կարգավորում է միայն այն դեպքերը, երբ քրեական նոր օրենքը պատասխանատվությունը մասնակիորեն մեղմացնող է և միաժամանակ մասնակիորեն խստացնող՝ ամրագրելով, որ նման օրենքը, քրեական օրենքի հետադարձ ուժի կիրառման չափանիշների համապատասխան, հետադարձ ուժ ունի միայն այն մասով, որը մեղմացնում է պատասխանատվությունը (հոդված 9-րդ, մաս 6): Սակայն քննարկվող դեպքում քրեական նոր օրենքը պատասխանատվությունը մեղմացնող է և միաժամանակ անձի վիճակը վատթարացնող: Անձի վիճակի վատթարա-

ցումը, բնականաբար, տարբերվում է պատասխանատվության խստացումից: Հնարավոր են դեպքեր, երբ վատթարացումը չդրսևորվի պատասխանատվության խստացման տեսքով, այլ արտահայտվի հանցագործությունների դասակարգման մեջ փոփոխությամբ կամ պատժի նշանակման կանոնների փոփոխությամբ:

Քննարկվող և նմանատիպ դեպքերը քրեական իրավունքի սկզբունքներին և քրեական օրենքի հետադարձ ուժի նորմերին համահունչ կարգավորելու անհրաժեշտությամբ պայմանավորված՝ առաջարկում ենք Օրենսգրքի՝ քրեական օրենքի հետադարձ ուժը վերտառությամբ 9-րդ հոդվածի 6-րդ մասում կատարել համապատասխան լրացում՝ այն շարադրելով հետևյալ խմբագրությամբ. «Պատասխանատվությունը մասնակիորեն մեղմացնող և միաժամանակ մասնակիորեն խստացնող կամ անձի վիճակն այլ կերպ վատթարացնող օրենքը սույն հոդվածով նախատեսված չափանիշներին համապատասխան հետադարձ ուժ ունի միայն այն մասով, որը մեղմացնում է պատասխանատվությունը»:

Քրեաիրավական նորմերի ժամանակային մրցակցության առավել խնդրահարույց հարցերից է արարքի կատարման պահի որոշումը եզակի բարդ (տևող, շարունակվող, երկընտրելի արարքներով նկարագրված) հանցագործությունների, ինչպես նաև հանցակցությամբ կատարված հանցանքների պարագայում: Սակայն արարքի որակման տեսանկյունից՝ որոշ բարդություններ առաջանում են նաև պարզ ձևական հանցակազմերի միջոցով նկարագրված այն հանցագործությունների պարագայում, որոնց օբյեկտիվ կողմը ժամանակի մեջ երկարաձգված է, իրականացվում է տևող գործողության միջոցով. օրինակ՝ փոստի միջոցով կամ էլեկտրոնային եղանակով սուտ մատնություն կատարելը:

Վերը շարադրվածի կապակցությամբ քննարկենք հետևյալ օրինակը: Ա-ն նախկին քրեական օրենսգրքի գործողության ընթացքում Բ-ի կողմից հանցանք կատարելու մասին սուտ տեղեկություն է պատրաստել և փոստով ուղարկել իրավասու մարմնին, սակայն հաղորդումը իրավասու մարմնին է հասել քրեական նոր օրենսգրքի ուժի մեջ մտնելուց հետո: Այս դեպքում հարց է առաջանում, թե ո՞ր օրենքով պետք է որակել Ա-ի արարքը՝ նախկին, թե՞ գործող: Այս հարցի պատասխանը պայմանավորված է ժամանակի մեջ քրեական օրենքի գործողության և սուտ մատնության վերաբերյալ քրեաիրավական նորմերի բովանդակության համադրված վերլուծությամբ: Արարքի որակման համար էական է սուտ մատնության կատարման պահի որոշումը: Օրենսգրքի 476-րդ հոդվածում ամրագրված հանցակազմի դիսպոզիցիայից հետևում է, որ արարքն ավարտված է համարվում իրավասու մարմնին հանցագործության դեպքի կամ անձի կողմից հանցանք կատարելու մասին սուտ տեղեկություն տալու պահից: Մեր կարծիքով իրավասու մարմնին տեղեկություն տալու պահ է համարվում համապատասխան տեղեկության՝ իրավասու մարմնի մուտք լինելու՝ իրավասու մարմնում ստացվելու պահը, ինչից սկսած իրավասու մարմնի աշխատակիցը օբյեկտիվ հնարավորություն ունի

ծանոթանալու տեղեկությանը: Այսպիսով, քննարկվող դեպքում, կարծում ենք, անձի արարքը պիտի որակվի իրավասու մարմնում անձի ներկայացրած տեղեկության ստացման պահին գործող քրեական օրենքով, տվյալ պարագայում՝ քրեական նոր օրենսգրքով:

Հետաքրքրական է նաև այն իրավիճակը, երբ անձը էլեկտրոնային եղանակով կամ փոստով սուտ տեղեկություն է ուղարկել, որը իրավասու մարմնում ստացվել է նախկին քրեական օրենսգրքի գործողության ժամանակ, սակայն իրավասու մարմնի աշխատակիցը տեղեկությանը ծանոթացել է քրեական նոր օրենսգրքի ուժի մեջ մտնելուց հետո միայն: Մեր կարծիքով՝ իրավասու մարմնի աշխատակցի կողմից տեղեկությանը ծանոթանալու հանգամանքը դուրս է սուտ մատնության վերաբերյալ նորմի դիսպոզիցիայից, հետևաբար անձի արարքը պետք է որակվի իրավասու մարմնում անձի ներկայացրած տեղեկության ստացման պահին գործող քրեական օրենքով, տվյալ դեպքում՝ նախկին քրեական օրենսգրքով:

Տևող են համարվում այն հանցագործությունները, որոնց դեպքում հանրորեն վտանգավոր գործողությունը կամ անգործությունը իրականացվում է տևականորեն: Այդպիսի հանցագործությունները բնութագրվում են որոշակի հանցակազմի անընդհատ իրականացմամբ⁵: Տևող հանցագործությունը փաստացի ավարտվում է՝ 1. հանցավորի արարքներով (մեղայականով ներկայանալ, պարտականությունները կատարել), 2. իրավապահ մարմինների գործողություններով (հանցավորին բռնել), 3. այլ հանգամանքների ուժով (հանցավորի մահով, ապաքրեականացմամբ)⁶:

Շարունակվող է համարվում այն հանցագործությունը, որը բաղկացած է մեկից ավելի նույնական արարքներից, որոնք առանձին վերցրած թեկուզև ինքնուրույն հանցակազմ են ներկայացնում, բայց ընդգրկված են միասնական դիտավորության մեջ և ունեն մեկ ընդհանուր նպատակ, ուստի միասին վերցրած՝ դիտվում են իբրև մեկ հանցագործություն⁷:

Տևող և շարունակվող հանցագործությունների էության, կատարման պահի վերաբերյալ 2003 թվականի քրեական օրենսգրքում կարգավորումներ առկա չէին: Այդպիսի կարգավորումներ ամրագրվեցին ՀՀ քրեական նոր օրենսգրքում: Այսպես, Օրենսգրքի 3-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի համաձայն՝ տևող հանցագործությունը տևական ժամանակահատվածում միևնույն հանցանքի անընդհատ իրականացումն է, իսկ հիշյալ հոդվածի 1-ին մասի 25-րդ կետի հա-

⁵ Տե՛ս Հայաստանի Հանրապետության քրեական իրավունք: Ընդհանուր մաս (վեցերորդ հրատարակություն՝ փոփոխություններով և լրացումներով), Ս. Առաքելյան, Ա. Գարբուզյան, Հ. Խաչիկյան և ուրիշ., Երևան, ԵՊՀ հրատարակչություն, 2012, էջ 50:

⁶ Տե՛ս Иногорова-Хегай Л.В., Концептуальные основы конкуренции уголовно-правовых норм: монография. М.: НОРМА, ИНФРА-М, 2019, էջ 72:

⁷ Տե՛ս Հայաստանի Հանրապետության քրեական իրավունք: Ընդհանուր մաս (վեցերորդ հրատարակություն՝ փոփոխություններով և լրացումներով), Ս. Առաքելյան, Ա. Գարբուզյան, Հ. Խաչիկյան և ուրիշ., Երևան, ԵՊՀ հրատարակչություն, 2012, էջ 50:

մաճայն՝ շարունակվող հանցագործությունը մեկ միասնական դիտավորությամբ միևնույն օբյեկտի դեմ ուղղված նույնական արարքներով հանցանքի կատարումն է: Օրենսգրքի 8-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ տևող հանցագործության դեպքում անձը ենթակա է քրեական պատասխանատվության բռնվելու, մեղայականով ներկայանալու կամ այլ հանգամանքների ուժով արարքն ավարտվելու պահին գործող քրեական օրենքով: Շարունակվող հանցագործության դեպքում անձը ենթակա է քրեական պատասխանատվության իր միասնական դիտավորության մեջ ընդգրկված արարքներից վերջինը կատարելու պահին գործող քրեական օրենքով:

Տևող և շարունակվող հանցագործությունների իրավաբանական և փաստական ավարտի պահը առավել հաճախ չի համընկնում: Հեղինակների մի մասի կարծիքով՝ տևող հանցագործությունն անհրաժեշտ է որակել քրեական այն օրենքով, որի գործողության ժամանակ արարքը կատարվել է (իրավաբանական ավարտ)՝ անկախ հանցավոր արարքի փաստացի ավարտի պահից⁸: Այլ գիտնականներ կարծում են, որ տևող հանցագործությունն անհրաժեշտ է որակել քրեական այն օրենքով, որի գործողության ընթացքում արարքը փաստացի ավարտվել է (փաստական ավարտ):

Տևող հանցագործությունը արարքի իրավաբանական ավարտի պահին գործած օրենքով որակելու տեսակետի կողմնակիցների հիմնական փաստարկները պայմանավորված են իրավական որոշակիության և կանխատեսելիության սկզբունքով և օբյեկտիվ մեղսայնացման արգելքով: Սակայն այս դեպքում խնդիրներ են առաջանում՝ կապված հանցանքի իրավաբանական ավարտի պահի որոշման հետ: Հնարավոր են դեպքեր, երբ անհնար լինի որոշել հանցանքի իրավաբանական ավարտի պահը: Այսպիսի մոտեցումը խնդրահարույց է նաև վաղեմության ժամկետների հաշվարկման տեսանկյունից: Ասվածը վերաբերում է նաև շարունակվող հանցագործություններին:

Վերը շարադրվածի հաշվառմամբ, կարծում ենք, առավել արդարացված և հիմնավոր է դիտվում տևող և շարունակվող հանցագործությունների պարագայում հանցանքի կատարման ժամանակ համարել արարքի փաստական ավարտի պահը, հետևաբար, տևող հանցագործության դեպքում անձը ենթակա է քրեական պատասխանատվության բռնվելու, մեղայականով ներկայանալու կամ այլ հանգամանքների ուժով արարքն ավարտվելու պահին գործող քրեական օրենքով, իսկ շարունակվող հանցագործության դեպքում անձը ենթակա է քրեական պատասխանատվության իր միասնական դիտավորության մեջ ընդգրկված արարքներից վերջինը կատարելու պահին գործող քրեական օրենքով:

Հարկ է նաև արձանագրել, որ շարունակվող հանցագործության օբյեկտիվ կողմը կազմող այն արարքները, որոնք մինչև քրեական նոր օրենքի ուժի մեջ

⁸ Ст'у Иногамова-Хегай Л. В., Концептуальные основы конкуренции уголовно-правовых норм: монография. М.: НОРМА, ИНФРА-М, 2019, էջեր 72-74:

մտնելը չեն համարվել հանցագործություն, չեն կարող մեղսագրվել անձին: Այլ կերպ ասած՝ հանցավորին կարող են մեղսագրվել միայն շարունակվող հանցագործության մաս կազմող այն արարքները, որոնք կատարվել են դրանք քրեականացնող նոր օրենքի ուժի մեջ մտնելուց հետո միայն, իսկ միաբնույթ արարքներից նրանք, որոնք կատարվել են մինչև այդ արարքները քրեականացնող օրենքի ուժի մեջ մտնելը, չեն կարող մեղսագրվել վերջինիս⁹:

Տեսագործական առումով հետաքրքրական են այն դեպքերը, երբ տևող հանցագործության իրավաբանական ավարտը չի հանգեցնում դրա փաստացի ընդհատմանը, իսկ այդ ընթացքում փոխվում է քրեական օրենքը: Ասվածը գործնականում պատկերացնելու համար քննարկենք հետևյալ օրինակը: Ա-ն 2022 թվականի մայիսին ենթարկվել է քրեական պատասխանատվության ֆինանսական բուրգ ղեկավարելու համար, սակայն դրանից հետո, ներառյալ 2022 թվականի հուլիսի 1-ից ուժի մեջ մտած ՀՀ քրեական նոր օրենսգրքի գործողության պայմաններում, ըստ էության, չի դադարեցրել և շարունակել է այդ ֆինանսական բուրգի ղեկավարումը: Նկարագրված և նմանատիպ իրավիճակներում անձին քրեական պատասխանատվության ենթարկելը չի գրկում տևող հանցագործության հետագա իրականացումը ինքնուրույն հանցավոր բնույթից, ինչը պահանջում է համապատասխան քրեաիրավական արձագանք՝ լրացուցիչ որակում: Մեր կարծիքով՝ դիտարկվող իրավիճակներում պետք է ղեկավարվել այն կանոնով, ըստ որի՝ տևող հանցագործության համար ուժի մեջ մտած մեղադրական դատավճիռը՝ որպես իրավական ֆիկցիա, ավարտում է այդ հանցագործության ընթացքը, իսկ դրանից հետո անձի՝ այդ հանցանքը շարունակելուն ուղղված փաստացի արարքները պետք է դիտարկվեն որպես ինքնուրույն հանցագործություն՝ ստանալով առանձին որակում: Փոքր-ինչ հեռվանալով սույն հետազոտության բուն առարկայից՝ հարկ ենք համարում ընդգծել, որ որակման այս կանոնը ունիվերսալ է և կարող է կիրառվել նաև քրեական նույն օրենքի գործողության պայմաններում, երբ անձին քրեական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ մեղադրական դատավճիռը չի ընդհատում տևող հանցագործության իրականացումը:

Երկրնտրելի արարքներով նկարագրված հանցագործությունների կատարման ժամանակի որոշումը կախված է այն հանգամանքից, թե քրեական օրենսգրքի Հատուկ մասի հոդվածով նկարագրված երկրնտրելի արարքներից քանի՞սն է կատարել հանցավորը: Այս հանցանքների կատարման ժամանակի որոշումը դժվարություն չի ներկայացնում, երբ անձը կատարում է երկրնտրելի արարքներից մեկը. տվյալ դեպքում հանցանքի կատարման ժամանակ է համարվում այդ արարքը իրականացնելու պահը: Մինչդեռ, եթե անձը միասնական դիտավորու-

⁹ Տե՛ս Ալվարո Ստեփանյանի վերաբերյալ ՀՀ Վճռաբեկ դատարանի՝ 20.10.2011 թ. թիվ ԼԴ/0327/01/10 գործով որոշումը, http://www.datalex.am/?app=AppCaseSearch&case_id=13229323905400977, (հասանելի է 24.10.2022 թ. դրությամբ):

թյամբ իրականացնում է հողվածի դիսպոզիցիայում նկարագրված երկրնտրելի արարքներից մի քանիսը, որոնց միջև առկա է ժամանակային խզում, ապա հանցանքի կատարման ժամանակ պետք է համարել դրանցից վերջինը կատարելու պահը: Օրինակ՝ եթե անձը իրացնելու նպատակով կեղծ դրամ (արժույթ) է պատրաստել և պահել 2003 թվականի օրենսգրքի գործողության ժամանակ և նոր քրեական օրենսգրքի ուժի մեջ մտնելուց հետո միայն իրացրել դրանք, ապա հանցավորի արարքը կատարելու ժամանակ պետք է համարել քրեական նոր օրենքի գործողության ժամանակը, և կատարվածը որակել նոր օրենքով, տվյալ դեպքում՝ Օրենսգրքի 267-րդ հոդվածով: Նշված կանոնը կիրառվում է նաև երկրնտրելի առարկաներով (տուժողներով) հանցագործությունների կատարման ժամանակը որոշելիս: Երկրնտրելի հանրորեն վտանգավոր հետևանքով հանցանքների պարագայում դրանց կատարման ժամանակը որոշվում է՝ հիմք ընդունելով Օրենսգրքի 8-րդ հոդվածի 2-րդ մասի կարգավորումները:

Հանցանքը հանցակցությամբ կատարելու դեպքում կազմակերպչի, դրոշխի և օժանդակողի արարքներն անհրաժեշտ է որակել նրանցից յուրաքանչյուրի արարքի կատարման պահին գործող օրենքով: Այսպիսի մոտեցում որդեգրել է նաև Օրենսգիրքը, որի 8-րդ հոդվածի 5-րդ մասն ամրագրում է. «Հանցանքը հանցակցությամբ կատարելու դեպքում հանցակիցներից յուրաքանչյուրը ենթակա է քրեական պատասխանատվության իրեն վերապահված արարքը կատարելու պահին գործող քրեական օրենքով»: Միայն այն դեպքում, երբ կատարողը հանցակիցների դիտավորությունն իրականացնում է նոր ավելի մեղմ օրենքի գործողության ընթացքում, հանցակիցների արարքները ևս, քրեական օրենքի հետադարձ ուժի կարգավորումներին համապատասխան, անհրաժեշտ է որակել նոր՝ ավելի մեղմ օրենքով¹⁰:

Տարբեր ժամանակահատվածներում գործած քրեաիրավական նորմերի մրցակցությունը հաղթահարելու տեսանկյունից ևս մեկ կարևոր դրույթ է ամրագրված Օրենսգրքի 8-րդ հոդվածի 6-րդ մասում, ըստ որի՝ եթե քրեական օրենքը փոփոխվել է քրեական օրենքով նախատեսված արարքը կատարելու ընթացքում, ապա կիրառվում է արարքն ավարտվելու, դադարեցնելու կամ խափանելու պահին գործող օրենքը:

Հարկ է նաև արձանագրել, որ քրեական օրենքի հետադարձ ուժի և ընդհանուր ու հատուկ նորմերի մրցակցության կանոնների միաժամանակյա կիրառման դեպքում նախապատվությունն անհրաժեշտ է տալ քրեական օրենքի հետադարձ ուժի կանոններին¹¹:

¹⁰ Տե՛ս Иногамова-Хегай Л. В., Концептуальные основы конкуренции уголовно-правовых норм: монография. М.: НОРМА, ИНФРА-М, 2019, էջ 78:

¹¹ Տե՛ս Иногамова-Хегай Л. В., Концептуальные основы конкуренции уголовно-правовых норм: монография. М.: НОРМА, ИНФРА-М, 2019, էջ 77:

2. Հայաստանի Հանրապետության քրեաիրավական նորմերի մրցակցությունը այլ պետությունների և միջազգային-իրավական նորմերի հետ

Պետական սահմանների «տարրալուծվածության» ժամանակակից պայմաններում ՀՀ և այլ պետությունների քրեաիրավական նորմերի մրցակցությունը (տարածական մրցակցություն) բավականին արդիական է:

Մրցակցության այս տեսակի հիմնական դրույթները ամրագրված են Օրենսգրքում՝ տարածության մեջ քրեական օրենքի գործողության տարածքային, դիվանագիտական անձեռնմխելիության, քաղաքացիության, ունիվերսալ և ռեալ սկզբունքներում:

Քրեական օրենքի՝ տարածության մեջ գործողության տարածքային սկզբունք

Քրեական օրենքի՝ գործողության տարածքային սկզբունքի պայմաններում օտարերկրյա քաղաքացու կողմից ՀՀ տարածքում հանցանք կատարելու դեպքում առաջանում է մրցակցություն քրեական երկու օրենքների միջև՝ ՀՀ-ի, որի տարածքում կատարվել է հանցանքը, և այն պետության, որի քաղաքացին է հանցանք կատարած անձը: Այս մրցակցությունը, միջազգային-իրավական հանրաճանաչ սկզբունքներին և Օրենսգրքի 10-րդ հոդվածի 1-ին մասին համապատասխան, լուծվում է հօգուտ հանցանքի կատարման վայրի օրենքի:

Պետական սահմանի մասին ՀՀ օրենքի¹² 1-ին հոդվածի համաձայն՝ ՀՀ պետական սահմանը այն գիծն է և այդ գծով անցնող այն ուղղահայաց մակերևույթը, որոնք որոշում են ՀՀ տարածքի՝ ցամաքի, ջրերի, ընդերքի, օդային տարածության շրջանակները: Պետությունների ազգային տարածք համարվող օդային սյան բարձրությունը միջազգային իրավունքի նորմերով դեռ հստակեցված չէ: Միջազգային տիեզերական իրավունքի հիմնական աղբյուրը՝ Տիեզերական տարածության, ներառյալ Լուսնի և երկնային այլ մարմինների հետազոտման և օգտագործման՝ պետությունների գործունեության սկզբունքների մասին 1967 թ. պայմանագիրը¹³, չի որոշել ազգային օդային տարածության և տիեզերական տարածության միջև եղած սահմանը: Պետության օդային տարածքի վերին սահմանը, միջազգային սովորության իրավունքին համապատասխան, գտնվում է օվկիանոսի մակերևույթից 100 մղոն բարձրության վրա: Այդ սահմաններից դուրս գտնվող օդային տարածքը համարվում է տիեզերական տարածություն, որն ունի միջազգային-իրավական ռեժիմ:

Տիեզերքի մասին պայմանագրի համաձայն՝ տիեզերական տարածությունը

¹² Տե՛ս Պետական սահմանի մասին ՀՀ օրենք, 2001 նոյեմբերի 20, ՀՕ-265: Գործում է:

¹³ Տե՛ս Քոչարյան Վ., Միջազգային իրավունք: Ուսումնական ձեռնարկ, Երևան, ԵՊՀ իրատարակություն, 2002, էջ 333: Броунли Я. Международное право (в двух книгах). Книга первая. М., 1977, էջեր 385–390:

բաց է բոլոր պետությունների կողմից հետազոտման համար, տիեզերական տարածության հետազոտումն ու օգտագործումն իրականացվում է ի շահ բոլոր երկրների՝ անկախ նրանց տնտեսական կամ գիտական զարգացման աստիճանից, և ամբողջ մարդկության սեփականությունն է (հոդված 1): Տիեզերական տարածությունը օդային տարածության սահմաններից դուրս գտնվող տարածությունն է: Տիեզերական տարածության նկատմամբ չի տարածվում որևէ պետության ինքնիշխանությունը: Տիեզերական տարածությունը ենթական չէ ազգային յուրացման ո՛չ դրա նկատմամբ ազգային ինքնիշխանության հռչակմամբ, ո՛չ օգտագործմամբ կամ զբաղեցմամբ, ո՛չ էլ ցանկացած այլ միջոցներով (հոդված 2):

Հարկ է ընդգծել, որ կան նաև այլ օբյեկտներ, որոնք քրեական իրավագործության տեսանկյունից հավասարեցվում են պետության տարածքին: Դրանք պետության նավերն ու օդանավերն են: Այս օբյեկտների վրա հանցանք կատարելու դեպքում քրեական պատասխանատվության առանձնահատկությունները կարգավորված են Օրենսգրքի՝ «Քրեական օրենքի գործողությունը Հայաստանի Հանրապետության նավերի կամ օդային սարքերի վրա քրեական օրենքով նախատեսված արարքը կատարելու դեպքում» վերտառությամբ 11-րդ հոդվածում: Հարկ է ընդգծել, որ քաղաքացիական նավերի և օդանավերի իրավական ռեժիմը տարբերվում է ռազմական նավերի և օդանավերի իրավական ռեժիմից:

Օրենսգրքի 11-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ Հայաստանի Հանրապետության դրոշի ներքո գտնվող կամ տարբերանշանը կրող քաղաքացիական նավի կամ թռիչքի մեջ գտնվող քաղաքացիական օդանավի կամ այլ թռչող սարքի վրա քրեական օրենքով նախատեսված արարք կատարած անձի քրեական պատասխանատվության հարցը, անկախ դրա գտնվելու վայրից, լուծվում է Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքով, եթե այլ բան նախատեսված չէ Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերով: Նույն հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ Հայաստանի Հանրապետության ռազմական կամ կառավարական նավի կամ պետական օդանավի կամ այլ թռչող սարքի (ռազմական, ոստիկանական, մաքսային) վրա քրեական օրենքով նախատեսված արարք կատարած անձի քրեական պատասխանատվության հարցը, անկախ դրա գտնվելու վայրից, լուծվում է Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքով:

Օրենսգրքի՝ 11-րդ հոդվածի վերլուծությունից հետևում է, որ ռազմական կամ կառավարական նավերն ու պետական օդանավերը՝ անկախ դրանց գտնվելու վայրից, համարվում են այն պետության տարածք, որին պատկանում են: Դրանց նկատմամբ տարածվում է տվյալ պետության իրավագործությունը, այդ թվում՝ քրեական:

Իրավիճակն այլ է քաղաքացիական նավերի, օդանավերի, կամ այլ թռչող սարքերի պարագայում: Քաղաքացիական նավերի նկատմամբ, որպես կանոն, որտեղ էլ որ դրանք գտնվեն, տարածվում է այն պետության քրեական իրավա-

սուբյեկտներ, որի դրոշը կրում են: Նույնը վերաբերում է նաև թռիչքի մեջ գտնվող քաղաքացիական օդանավերին կամ այլ թռչող սարքերին (եթե օդանավը կամ այլ թռչող սարքը թռիչքի մեջ չէ, ապա դրա վրա տարածվում է այն պետության քրեական իրավասությունը, որի տարածքում գտնվում են): Սակայն քաղաքացիական նավերի, օդանավերի կամ այլ թռչող սարքերի կապակցությամբ միջազգային պայմանագրերով նախատեսված են բացառություններ:

Այսպես, Ճոնսոնի իրավունքի մասին ՄԱԿ-ի 1982 թ. Կոնվենցիան սահմանում է այն դեպքերը, երբ տարածքային և ներքին ջրերում գտնվող օտարերկրյա պետության քաղաքացիական նավի վրա կատարված հանցանքի կապակցությամբ տարածվում է առափնյա պետության քրեական իրավասությունը: Այդ բացառություններն են. 1. եթե կատարված հանցանքի հետևանքները տարածվում են առափնյա պետության վրա, 2. եթե հանցագործությունը խախտում է առափնյա պետության անդորրը, հասարակական կարգը, 3. եթե նավապետը կամ նավի դրոշը ներկայացնող դիվանագիտական գործակալը կամ հյուպատոսարանի պաշտոնատար անձը դիմում է տեղական իշխանություններին օգնության խնդրանքով, 4. եթե առափնյա պետության միջամտությունն անհրաժեշտ է թմրանյութերի կամ հոգեներգործող նյութերի ապօրինի առևտուրը կանխելու համար:

Օդանավերի մեջ կատարվող հանցանքների և որոշ այլ գործողությունների մասին Տոկիոյի 1963 թ. կոնվենցիայի համաձայն՝ թռիչքի մեջ գտնվող օդանավի վրա կատարված հանցանքների կապակցությամբ գործում է այն պետության իրավագործությունը, որտեղ գրանցված է օդանավը: Ընդ որում, այս կանոնը գործում է անկախ նրանից, թե որտեղ է ընթանում թռիչքը՝ չեզոք տարածքում, թե՞ օտարերկրյա պետության օդային տարածքում: Օդանավը համարվում է թռիչքի մեջ գտնվող թռիչքի համար շարժիչը միացնելու պահից մինչև վայրէջքի ժամանակ վազքը դադարեցնելու պահը: Միևնույն ժամանակ կոնվենցիան նախատեսում է բացառություններ, որոնց դեպքում օդանավի վրա կատարվող հանցանքի կապակցությամբ կարող է տարածվել այն պետության քրեական իրավասությունը, որի տարածքում թռիչքի մեջ է գտնվում օտարերկրյա օդանավը: Այդ բացառությունները գործում են հետևյալ դեպքերում. 1. եթե հանցագործության հետևանքները տարածվում են այդ պետության տարածքի վրա, 2. եթե հանցանքը կատարվել է այդ պետության քաղաքացու կողմից կամ նրա դեմ, կամ տվյալ պետությունում մշտապես բնակվող անձի կողմից, կամ նրա դեմ, 3. եթե հանցագործությունն ուղղված է այդ պետության անվտանգության դեմ, 4. եթե հանցագործությունը կապված է տվյալ պետությունում թռիչքների համար սահմանված կարգի խախտումների հետ, 5. եթե այդ պետության միջամտությունն անհրաժեշտ է իր միջազգային բազմակողմ համաձայնագրերից բխող պարտականությունները կատարելու համար:

Այսպիսով, քաղաքացիական նավերի և օդանավերի կամ այլ թռչող սարքե-

րի վրա կատարվող հանցանքների կապակցությամբ, որտեղ էլ որ դրանք գտնվեն, տարածվում է այն պետության քրեական իրավասությունը, որին դրանք պատկանում են, բացառությամբ միջազգային հիշյալ ակտերով նախատեսված դեպքերի:

ՀՀ քրեական օրենսգիրքը կարգավորել է նաև ՀՀ դրոշի ներքո չգտնվող կամ տարբերանշանը չկրող քաղաքացիական օդանավի վրա քրեական օրենքով նախատեսված արարք կատարած անձի քրեական պատասխանատվության հարցը՝ սահմանվելով, որ Հայաստանի Հանրապետության դրոշի ներքո չգտնվող կամ տարբերանշանը չկրող քաղաքացիական օդանավի վրա քրեական օրենքով նախատեսված արարք կատարած անձի քրեական պատասխանատվության հարցը լուծվում է Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքով, եթե դա նախատեսված է Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերով (Օրենսգիրք, հոդված 11-րդ, 2-րդ մաս):

Քրեական օրենքի՝ տարածության մեջ գործողության սկզբունքի էությունն այն է, որ կիրառվում է հանցանքը կատարելու վայրի քրեական օրենքը: Ճարտդրվածով պայմանավորված՝ անհրաժեշտություն է առաջանում՝ պարզելու հանցանքի կատարման վայր հասկացությունը, ինչն իրավաբանական գրականության մեջ միանշանակ չի ընկալվում: Մինչդեռ հանցանքի կատարման վայրի ճիշտ որոշումն ունի ինչպես տեսական, այնպես էլ գործնական կարևոր նշանակություն, քանի որ դրանից է կախված, թե որ պետության քրեական օրենքը պետք է կիրառվի այս կամ այն դեպքում:

Օրենսգրքի 10-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ քրեական օրենքով նախատեսված արարքը համարվում է ՀՀ տարածքում կատարված, եթե դրա բաղկացուցիչ մասերից որևէ մեկն իրականացվել է ՀՀ տարածքում: Քրեական օրենքով նախատեսված արարքը համարվում է ՀՀ տարածքում կատարված նաև այն դեպքում, երբ ՀՀ-ում գտնվելու ժամանակ անձը հանցակցել է ՀՀ տարածքից դուրս հանցանք կատարելուն:

Այս դրոյթները բավականաչափ ընդհանրական բնույթ են կրում, ուստի կարիք ունեն մեկնաբանման և օրենսդրական մակարդակով հստակեցման: Հանցագործությունների տարբեր տեսակների պարագայում հանցանքի կատարման վայրի որոշումը որոշ առանձնահատկություններ ունի:

Ձևական հանցակազմի միջոցով նկարագրված հանցագործությունների դեպքում հանցանքի կատարման վայր է համարվում այն տարածքը, որտեղ կատարվել է օրենքով նկարագրված գործողությունը կամ անգործությունը:

Ձևական հանցակազմի միջոցով նկարագրված հանցագործությունների դրսևորում համարվող հատված հանցակազմով նկարագրված հանցագործությունների կատարման վայր է համարվում այն տարածքը, որտեղ կատարվել է օրենքով նկարագրված արարքը:

Նյութական հանցակազմի միջոցով նկարագրված այն հանցագործությունների պարագայում, երբ հանրորեն վտանգավոր արարքը (գործողությունը կամ ան-

գործությունը) կատարվում և դրա հետևանքները վրա են հասնում միևնույն տարածքում, հանցանքի կատարման վայրի որոշման հետ կապված բարդություններ չեն առաջանում: Սակայն այլ է վիճակն այն դեպքերում, երբ գործողությունը (անգործությունը) կատարվում է մի պետության տարածքում, իսկ հետևանքները վրա են հասնում մեկ այլ պետության տարածքում: Նման դեպքերում հանցանքը կատարելու վայրի որոշումը կապված է որոշ բարդությունների հետ: Քրեագետների մեծ մասը գտնում է, որ այդպիսի դեպքերում հանցանքի կատարման վայր պետք է համարել այն տարածքը, որտեղ վրա են հասել հանրորեն վտանգավոր հետևանքները: Մյուսները գտնում են, որ նման դեպքերում հանցանքի կատարման վայր պետք է համարել այն տարածքը, որտեղ կատարվել է հանրորեն վտանգավոր արարքը՝ անկախ նրանից, թե որտեղ են վրա հասել վտանգավոր հետևանքները¹⁴:

Հիմք ընդունելով տարածության և ժամանակի անխզելիության գաղափարը՝ առավել հիմնավոր է թվում հանցանքի կատարման վայրը որոշել դրա կատարման ժամանակի հաշվառմամբ: Այս համատեքստում մենք կհսում ենք այն հեղինակների կարծիքը, որոնք նյութական հանցակազմի միջոցով նկարագրված հանցագործությունների կատարման վայր են համարում այն տարածքը, որտեղ կատարվել է հանրորեն վտանգավոր արարքը՝ անկախ նրանից, թե որտեղ են վրա հասել վտանգավոր հետևանքները: Այս առումով, սակայն, կարող են լինել որոշ բացառություններ՝ պայմանավորված քրեական օրենքի՝ տարածության մեջ գործողության ռեալ սկզբունքի կիրառման առանձնահատկություններով, որոնք կքննարկվեն ռեալ սկզբունքին անդրադառնալիս:

Տևող հանցագործությունների պարագայում հանցանքի կատարման վայր անհրաժեշտ է համարել այն վայրը, որտեղ փաստացի ավարտվել է տևող հանցագործությունը: Այսինքն՝ այն վայրը, որտեղ բռնվել կամ մեղայականով ներկայացել է հանցանք կատարած անձը, կամ այլ հանգամանքների ուժով արարքն ավարտվել է: Այս պարագայում ևս առկա են որոշ բացառություններ՝ պայմանավորված քրեական օրենքի՝ տարածության մեջ գործողության ռեալ սկզբունքի կիրառման առանձնահատկություններով, որոնց ևս անդրադարձ կկատարվի ռեալ սկզբունքին անդրադառնալիս:

Շարունակվող հանցագործությունների պարագայում հանցանքի կատարման վայր պետք է համարել այն տարածքը, որտեղ կատարվել է շարունակվող հանցագործության մեջ ընդգրկված արարքներից վերջինը:

Չավարտված հանցագործությունների դեպքում հանցանքի կատարման վայր է համարվում այն տարածքը, որտեղ դադարել կամ ընդհատվել է հանցա-

¹⁴ Այս մասին առավել մանրամասն տե՛ս Հայաստանի Հանրապետության քրեական իրավունք: Ընդհանուր մաս (վեցերորդ հրատարակություն՝ փոփոխություններով և լրացումներով), Ս. Առաքելյան, Ա. Գաբրուզյան, Հ. Խաչիկյան և ուրիշ., Երևան, ԵՊՀ հրատարակչություն, 2012, էջեր 61, 62:

Տե՛ս նաև. Актуальные проблемы Общей части уголовного права: учебник / отв. ред. И.А. Подройкина, И.А. Фаргиев. Москва, Проспект, 2020, էջ 32:

վոր արարքը: Իսկ եթե հանցագործությունը (նախապատրաստությունը, հանցափորձը) սկսվել է մի պետության տարածքում, սակայն ավարտվել է մեկ այլ պետության տարածքում, ապա հանցանքի կատարման վայր պետք է համարել այն պետության տարածքը, որտեղ ավարտվել է հանցագործությունը:

Օրենսգրքում ամրագրված են նաև կարգավորումներ՝ կապված հանցակցությամբ իրականացվող հանցանքների կատարման վայրի որոշման հետ: Այսպես, քրեական օրենքով նախատեսված արարքը համարվում է ՀՀ տարածքում կատարված նաև այն դեպքում, երբ ՀՀ-ում գտնվելու ժամանակ անձը հանցակցել է ՀՀ տարածքից դուրս հանցանք կատարելուն: Այսպիսի կարգավորումը ընդգրկում է արարքների բավականին լայն շրջանակ՝ ի տարբերություն 2003 թվականի քրեական օրենսգրքի, որի 14-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ հանցանքը համարվում էր ՀՀ տարածքում կատարված, եթե հանցակցությամբ կատարվել էր այնպիսի անձանց հետ, որոնք հանցավոր գործունեություն էին իրականացրել այլ պետության տարածքում. այս կարգավորման պարագայում խոսքը կատարողի մասին էր, հակառակ դեպքում, եթե կազմակերպիչը, որդիչը կամ օժանդակողը գործում էին ՀՀ-ում, իսկ կատարողը՝ այլ պետության տարածքում, հանցանքը չէր կարող համարվել ՀՀ-ում կատարված: Սակայն այս տեսանկյունից Օրենսգիրքը որդեգրել է այլ մոտեցում՝ արարքը համարելով ՀՀ-ում կատարված նաև այն դեպքում, երբ ՀՀ-ում գտնվելու ժամանակ անձը, օրինակ՝ օժանդակողը, հանցակցել է ՀՀ-ից դուրս հանցանք կատարելուն:

Տարածքային սկզբունքը գերծ չէ նաև «տարանցիկ հանցագործությունների» հետ կապված խնդիրներից, որոնք միաժամանակ իրականացվում են մի քանի պետությունների տարածքում¹⁵: Հարկ է նաև նշել, որ բարձրացված խնդրի կապակցությամբ Օրենսգիրքը կարգավորումներ չի պարունակում:

Քրեական օրենքի գործողության տարածքային սկզբունքի հիմնական դրույթների շրջանակներում ձևակերպված տրամաբանական էությանը համապատասխան՝ դրա համատարած և անշեղ գործողության համար պահանջվում է ստեղծել, առանց բացառության, հանցանք կատարած բոլոր անձանց՝ ըստ նրանց կողմից հանցանքի կատարման վայրի՝ պետությանը հանձնելու ճկուն համակարգ: Սակայն նման իրավիճակն ընդունելի չէ նույնիսկ այս սկզբունքի ամենաակտիվ կողմնակիցների համար: Օրինակ՝ ըստ Ռ. Զեսթլինի՝ ավելի ճիշտ է օժտել ներկայացուցչական իրավասության իրավունքով (հանցագործության կատարման վայրում պետության անունից պատասխանատվության ենթարկելու հնարավորություն), քան մեղավորներին հանձնել Գերմանիայի սահմաններից դուրս¹⁶:

¹⁵ Տե՛ս ֆրոլովա Ա. Ի., Действие российского уголовного закона в пространстве: законодательная регламентация и перспективы совершенствования с учетом опыта уголовного законодательства зарубежных стран: автореф. дис. ... канд. юрид. наук. Екатеринбург, 2013թ., էջ 14:

¹⁶ Տե՛ս Кӧстлин R. Neue Revision der Grundbegriffe des Kriminalrechts // Allgemeine Literatur-Zeitung. 1845. № 92, էջ 747:

Հանցանքի կատարման վայրի որոշման տեսանկյունից բավականին խնդրահարույց են վիրտուալ տարածությունում (համացանցում) կատարվող հանցանքները: Այս հանցանքների կատարման վայրի հստակեցումն առանձին հետազոտության թեմա է: Մույն աշխատանքի շրջանակներում իրականացված հետազոտության արդյունքում մենք համակարծիք ենք այն հետազոտողների հետ, որոնք առաջարկում են նման դեպքերում հանցանքի կատարման վայր համարել համացանցը՝ որպես միասնական իրավական տարածք¹⁷: Նման իրավիճակում միանգամայն հնարավոր է քրեական հետապնդում իրականացնել այն պետության կողմից, որտեղ բնակվում է (գտնվում է) տուժողը, քանի որ տվյալ դեպքում ավելի հեշտ կլինի պարզել պատճառված վնասի չափն ու բնույթը, իսկ գործի քննությունը պետք է կատարվի ոչ թե «հանցագործության կատարման վայրում», այլ տուժողի բնակության (գտնվելու) վայրում: Այսպիսով, համացանցը հանցանքի կատարման վայր ճանաչելու դեպքում պետք է կիրառվի այն պետության իրավագործությունը, որտեղ բնակվում է (գտնվում է) տուժողը:

Քրեական օրենքի՝ տարածության մեջ գործողության տարածքային սկզբունքն ունի նաև բացառություն, որն ամրագրված է Օրենսգրքի 10-րդ հոդվածի 3-րդ մասում: Հիշատակված դրույթի համաձայն՝ ՀՀ տարածքում քրեական օրենքով նախատեսված արարքը կատարած օտարերկրյա դիվանագիտական, հյուպատոսական կամ միջազգային կազմակերպության համար սահմանված անձեռնմխելիությունից օգտվող անձի քրեական պատասխանատվության հարցը լուծվում է ՀՀ միջազգային պայմանագրերին համապատասխան:

Դիվանագիտական անձեռնմխելիությունից օգտվող անձանց շրջանակը որոշվում է միջազգային իրավական ակտերով: Նշված անձինք ՀՀ տարածքում հանցանք կատարելու դեպքում ենթակա չեն քրեական պատասխանատվության ՀՀ քրեական օրենսգրքով: Որպես կանոն՝ այդպիսի անձինք հայտարարվում են

¹⁷ Այս մասին առավել մանրամասն տե՛ս հետևյալ հետազոտությունները՝
 Thornton S. State Criminal Laws in Cyberspace: Reconciling Freedom for Users with Effective Law Enforcement. *Richmond Journal of Law & Technology*, 1997, vol. IV, iss. 2. <http://jolt.richmond.edu/v4i2/thornton.html> (հասանելի է՝ 16.07.2022 թ. դրությամբ):
 Miller S. Prescriptive Jurisdiction over Internet Activity: The Need to Define and Establish the Boundaries of Cyberliberty. *Indiana Journal of Global Legal Studies*, vol. 10, iss. 2, art. 8. <https://www.repository.law.indiana.edu/cgi/viewcontent.cgi?article=1270&context=ijgls> (հասանելի է 16.07.2022 թ. դրությամբ):
 Hilgendorf E. Überlegungen zur strafrechtlichen Interpretation des Ubiquitatzsprinzips im Zeitalter des Internet. *Neue juristische Wochenschrift*, 1997, no. 29:
 Heintschel von Heinegg W. Legal Implications of Territorial Sovereignty in Cyberspace // 4th International Conference on Cyber Conflict. Tallinn, 2012. URL: https://ccdcoe.org/uploads/2012/01/1_1_von_Heinegg_LegalImplicationsOfTerritorialSovereignty-InCyberspace.pdf (հասանելի է՝ 16.07.2022 թ. դրությամբ):
 Комаров А.А. Об особенностях территориального принципа действия уголовного закона в сети Интернет, *Вестник Омской юридической академии*. 2016. № 4 (33), էջեր 57-63: <https://cyberleninka.ru/article/n/ob-osobennostyah-territorialnogo-printsipa-deystviya-ugolovnogo-zakonav-seti-internet/viewer> (հասանելի է 16.07.2022 թ. դրությամբ):

persona non grata (անցանկալի անձ) և վտարվում են երկրից: Պետք է նշել, սակայն, որ ՀՀ-ում հանցանք կատարած դիվանագետը կարող է քրեական պատասխանատվության ենթարկվել ՀՀ-ում, բայց այն պետության քրեական օրենքով, որն ինքը ներկայացնում է: Բայի այդ, «Դիվանագիտական հարաբերությունների մասին» Վիեննայի կոնվենցիայի 32-րդ հոդվածի համաձայն՝ պետությունը կարող է հրաժարվել իր դիվանագիտական ներկայացուցիչների անձեռնմխելիությունից: Այդ դեպքում նշված անձինք կարող են քրեական պատասխանատվության ենթարկվել այն պետության քրեական օրենքներով, որտեղ նրանք կատարել են հանցանքը¹⁸:

ՀՀ քրեական օրենսգրքով կարգավորվել են նաև անձանց քրեական պատասխանատվության հարցերը, որոնք հանցանք են կատարել ՀՀ տարածքում գտնվող այն վայրում, որտեղ գործում է օտարերկրյա պետության դիվանագիտական, հյուպատոսական կամ միջազգային կազմակերպության համար սահմանված անձեռնմխելիությունը: Այսպես, Օրենսգրքի 10-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ եթե անձը քրեական օրենքով նախատեսված արարքը կատարել է Հայաստանի Հանրապետության տարածքում գտնվող այն վայրում, որտեղ գործում է օտարերկրյա պետության դիվանագիտական, հյուպատոսական կամ միջազգային կազմակերպության համար սահմանված անձեռնմխելիությունը, սակայն նրա քրեական պատասխանատվության հարցը լուծվում է Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքով, բացառությամբ Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերով նախատեսված դեպքերի:

Քրեական օրենքի՝ տարածության մեջ գործողության քաղաքացիության սկզբունք

Քրեական օրենքի՝ տարածության մեջ գործողության հաջորդ սկզբունքը քաղաքացիության սկզբունքն է, որն իր ամրագրումն է ստացել Օրենսգրքի 12-րդ հոդվածի 1-ին մասում, համաձայն որի՝ քրեական օրենքով նախատեսված արարքը ՀՀ տարածքից դուրս կատարած ՀՀ քաղաքացիների, այդ թվում՝ երկքաղաքացիություն ունեցող անձանց, ինչպես նաև ՀՀ-ում մշտապես բնակվող, քաղաքացիություն չունեցող անձանց, ՀՀ-ում փախստականի կարգավիճակով բնակվող, սպաստան հայցող կամ սպաստան ստացած անձանց քրեական պատասխանատվության հարցը լուծվում է ՀՀ քրեական օրենսգրքով, եթե նրանց կատարած արարքը հանցանք է համարվում դրա կատարման վայրի պետության օրենսդրությամբ, և եթե նրանք այդ արարքի համար քրեական պատասխանատվության չեն ենթարկվել: Եթե քրեական օրենքով նախատեսված արարքը նշված անձանց կողմից կատարվել է որևէ պետության չպատկանող տարածքում, սակայն

¹⁸ Տե՛ս Հայաստանի Հանրապետության քրեական իրավունք: Ընդհանուր մաս (վեցերորդ հրատարակություն՝ փոփոխություններով և լրացումներով), Ս. Առաքելյան, Ա. Գաբրուզյան, Հ. Խաչիկյան և ուրիշ., Երևան, ԵՊՀ հրատարակչություն, 2012, էջ 64:

այդ արարքը կատարած անձինք ենթակա են քրեական պատասխանատվության ՀՀ քրեական օրենսգրքով, եթե կատարված արարքի համար որպես պատիժ նախատեսված է ազատազրկում: Քրեական օրենքով նախատեսված արարքը ՀՀ տարածքից դուրս կատարած՝ ՀՀ-ում փախստականի կարգավիճակով բնակվող, ապաստան հայցող կամ ապաստան ստացած անձը ենթակա չէ քրեական պատասխանատվության, եթե առկա են ՀՀ միջազգային պայմանագրերով նախատեսված պայմանները:

Այս սկզբունքի էությունն այն է, որ ՀՀ քաղաքացիները, այդ թվում՝ երկրադաքացիություն ունեցող անձինք, ինչպես նաև ՀՀ-ում մշտապես բնակվող, քաղաքացիություն չունեցող անձինք, ՀՀ-ում փախստականի կարգավիճակով բնակվող, ապաստան հայցող կամ ապաստան ստացած անձինք օտարերկրյա պետությունում կատարված հանցանքի համար ենթակա են քրեական պատասխանատվության ՀՀ քրեական օրենսգրքով, եթե կատարված արարքը հանցագործություն է ճանաչված ինչպես այդ պետության, այնպես էլ ՀՀ քրեական օրենսգրքով: Սակայն այս սկզբունքն ունի բացառություն, ըստ որի՝ ՀՀ միջազգային պայմանագրերով սահմանված դեպքերում հիշատակված անձանց կողմից քրեական օրենքով նախատեսված արարքը ՀՀ տարածքից դուրս կատարելու դեպքում նրանց քրեական պատասխանատվության հարցը լուծվում է ՀՀ քրեական օրենսգրքով՝ անկախ արարքը կատարելու վայրի պետության տարածքում այն հանցանք համարվելուց (12-րդ հոդված, 2-րդ մաս):

Հնարավոր են իրավիճակներ, որ հանցանքը կատարվի չճանաչված պետության կամ ընդհանրապես որևէ պետության չպատկանող տարածքում: Նման պարագայում խնդիրներ կարող են ծագել քաղաքացիության սկզբունքի կիրառման առումով: Կարծում ենք՝ ՀՀ քրեական օրենսդրությունը ևս պետք է արձագանքի այդ հարցին:

Օրենսգրքի 12-րդ հոդվածի 1-ին մասում այս կապակցությամբ կարգավորում առկա է, սակայն այն վերաբերում է միայն որևէ պետության չպատկանող տարածքին: Հիշատակված նորմը նաև ամրագրել է, որ նշված անձինք որևէ պետության չպատկանող տարածքում հանցանք կատարելու դեպքում ենթակա են քրեական պատասխանատվության ՀՀ քրեական օրենսգրքով, եթե կատարված արարքի համար որպես պատիժ նախատեսված է ազատազրկում: Կարծում ենք, որ նման ձևակերպումը թեև արդարացված է, սակայն անհարկի ընդլայնում է այն արարքների շրջանակը, որոնց պարագայում պետությունը պետք է արձագանքի, քանի որ քրեական օրենսդրությամբ նախատեսված հանցանքների ճնշող մեծամասնության համար սանկցիայում նախատեսված է ազատազրկում: Թերևս ավելի ճիշտ կլիներ որոշակիորեն սահմանափակել ազատազրկման ժամկետը և օրենսդրորեն ամրագրել, որ այդ դրույթը կիրառելի է այն դեպքերում, երբ կատարվել է ծանր կամ առանձնապես ծանր հանցանք: Միևնույն ժամանակ կարծում ենք, որ օրենսդրորեն պետք է ամրագրվի, որ եթե հանցանքը կատարվել է չճանաչված

պետության տարածքում և քաղաքացիության սկզբունքին բավարարող սուբյեկտը հայտնվել է ՀՀ տարածքում, ապա նա ենթակա է պատասխանատվության ՀՀ քրեական օրենսգրքով ՀՀ-ում այդ արարքը հանցանք համարվելու պարագայում:

Հիշատակված կարգավորումը նաև վերացրել է ՀՀ 2003 թվականի քրեական օրենսգրքում տեղ գտած անճշտությունը՝ « ... եթե նրանք չեն դատասպարտվել այլ պետության տարածքում» արտահայտության վերաբերյալ: Դրա փոխարեն գործածված է «եթե նրանք այդ արարքի համար քրեական պատասխանատվության չեն ենթարկվել» արտահայտությունը, ինչը միանգամայն արդարացված է, քանի որ քրեական պատասխանատվությունն ավելի լայն հասկացություն է և միշտ չէ, որ կապված է դատասպարտման հետ. հանցանք կատարած անձը կարող է օրինական հիմքերով ազատվել պատժից կամ պատասխանատվությունից:

Այսպիսով, ՀՀ քաղաքացիության սկզբունքը մրցակցում է այլ պետության տարածքային սկզբունքի հետ, որի տարածքում հանցանքը կատարվել է: Օրինակ, եթե ՀՀ քաղաքացին հանցանք է կատարել Իտալիայում և այնտեղ պատասխանատվության չի ենթարկվել, ապա ՀՀ-ում նրա նկատմամբ քրեական հետապնդում սկսվելու պարագայում նա ենթակա է պատասխանատվության ՀՀ քրեական օրենսգրքով. տվյալ դեպքում ՀՀ քաղաքացիության սկզբունքն առավելություն ունի Իտալիայի՝ քրեական օրենքի՝ տարածության մեջ գործողության տարածքային սկզբունքի նկատմամբ:

Հատկանշական և կարևոր է նաև Օրենսգրքի 12-րդ հոդվածի 2-րդ մասի կարգավորումը առ այն, որ Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերով սահմանված դեպքերում քրեական օրենքով նախատեսված արարքը Հայաստանի Հանրապետության տարածքից դուրս կատարած Հայաստանի Հանրապետության քաղաքացիների, այդ թվում՝ երկքաղաքացիություն ունեցող անձանց, ինչպես նաև Հայաստանի Հանրապետությունում մշտապես բնակվող, քաղաքացիություն չունեցող անձանց, Հայաստանի Հանրապետությունում փախստականի կարգավիճակով բնակվող, ապաստան հայցող կամ ապաստան ստացած անձանց քրեական պատասխանատվության հարցը լուծվում է Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքով՝ անկախ արարքը կատարելու վայրի պետության տարածքում այն հանցանք համարվելուց:

Քրեական օրենքի՝ տարածության մեջ գործողության ունիվերսալ սկզբունք

Քրեական օրենքի՝ տարածության մեջ գործողության հաջորդ սկզբունքը ունիվերսալ սկզբունքն է, որն ամրագրված է Օրենսգրքի 12-րդ հոդվածի 3-րդ մասում. «Քրեական օրենքով նախատեսված արարքը Հայաստանի Հանրապետության տարածքից դուրս կատարած և Հայաստանի Հանրապետության տարածքում գտնվող օտարերկրյա քաղաքացիների և Հայաստանի Հանրապետությունում մշտապես չբնակվող, քաղաքացիություն չունեցող անձանց քրեա-

կան պատասխանատվության հարցը լուծվում է Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքով, եթե նրանց կողմից կատարված արարքը Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերով նախատեսված հանցանք է, և եթե նրանք այդ արարքի համար քրեական պատասխանատվության չեն ենթարկվել՝ անկախ հանցանքը կատարելու վայրի պետության տարածքում այն հանցանք համարվելուց»:

Ունիվերսալ սկզբունքը բացառություն է ինչպես տարածքային, այնպես էլ քաղաքացիության սկզբունքներից: Այս սկզբունքի էությունն այն է, որ հանցանք կատարած անձը քրեական պատասխանատվության է ենթարկվում յուրաքանչյուր պետության կողմից իր ազգային օրենսդրությամբ՝ անկախ նրանից, թե որտեղ է կատարվել հանցանքը, և որ պետության քաղաքացի է տվյալ անձը: Այս սկզբունքի կիրառումը պայմանավորված է միջազգային և միջազգային բնույթի որոշ հանցագործությունների դեմ պայքարի անհրաժեշտությամբ:

Այսպիսով, հանցանքի կատարման վայրի պետության տարածքային սկզբունքի, ինչպես նաև իր պետության տարածքից դուրս հանցանք կատարելու պարագայում հանցանք կատարած անձի պետության քաղաքացիության սկզբունքի և ունիվերսալ սկզբունքի մրցակցության պարագայում առավելությունը պետք է տրվի ունիվերսալ սկզբունքին: Ասվածը նշանակում է, որ եթե անձի նկատմամբ քրեական հետապնդումը կարող է իրականացվել երեք պետությունների քրեական օրենսդրության համապատասխան (հանցանքի կատարման վայրի պետության, այն պետության, որի քաղաքացին է անձը, այն պետության, որտեղ քրեական պատասխանատվության է ենթարկվում), ապա առավելությունը պետք է տրվի այն պետության օրենսդրությանը, որտեղ անձը ենթարկվում է քրեական պատասխանատվության (ունիվերսալ սկզբունք): Սակայն ունիվերսալ սկզբունքի կիրառումն ունի որոշ առանձնահատկություններ՝ պայմանավորված էքստրադիցիայի ինստիտուտով (այս մասին՝ հաջորդիվ):

Քրեական օրենքի՝ տարածության մեջ գործողության ռեալ սկզբունք

Քրեական օրենքի՝ տարածության մեջ գործողության մյուս սկզբունքը ռեալ սկզբունքն է, որն ամրագրված է Օրենսգրքի 12-րդ հոդվածի 4-րդ մասում. «Քրեական օրենքով նախատեսված արարքը Հայաստանի Հանրապետության տարածքից դուրս կատարած անձի քրեական պատասխանատվության հարցը լուծվում է Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքով, եթե կատարված արարքն ուղղված է Հայաստանի Հանրապետության շահերի, Հայաստանի Հանրապետության քաղաքացու, այդ թվում՝ երկքաղաքացիություն ունեցող անձի, ինչպես նաև Հայաստանի Հանրապետությունում մշտապես բնակվող, քաղաքացիություն չունեցող անձի, Հայաստանի Հանրապետությունում փախստականի կարգավիճակով բնակվող, ապաստան հայցող կամ ապաստան ստացած անձի կամ իրավաբանական անձի իրավունքների և ազատությունների դեմ»:

Այսպիսով, մի կողմից ռեալ սկզբունքի, իսկ մյուս կողմից հանցանքի կատարման վայրի պետության տարածքային սկզբունքի, ինչպես նաև իր պետության տարածքից դուրս հանցանք կատարելու պարագայում հանցանք կատարած անձի պետության քաղաքացիության սկզբունքի մրցակցության դեպքում նախապատվությունը, ըստ Օրենսգրքի, պետք է տրվի ռեալ սկզբունքին:

Քրեական օրենքի՝ տարածության մեջ գործողության ռեալ և տարածքային սկզբունքների միջև մրցակցություն կարող է առաջանալ տևող հանցագործությունների պարագայում: Այսպես, ՀՀ տարածքում դասալքություն կատարած անձը, որի արարքը խափանվել է, օրինակ, Բելառուսում, քրեական օրենքի՝ տարածության մեջ գործողության ռեալ սկզբունքի ուժով, քրեական պատասխանատվության պետք է ենթարկվի ՀՀ քրեական օրենքով՝ անկախ նրանից, որ արարքն ավարտվել է Բելառուսի տարածքում: Այսինքն՝ նմանատիպ դեպքերում մրցակցությունը պետք է լուծվի հօգուտ քրեական օրենքի՝ տարածության մեջ գործողության ռեալ սկզբունքի:

Քրեական օրենքի՝ տարածության մեջ գործողության ռեալ և տարածքային սկզբունքների միջև մրցակցություն կարող է առաջանալ նաև նյութական հանցակազմի միջոցով նկարագրված հանցանքների դեպքում, երբ արարքը կատարվի մի պետության տարածքում, իսկ հետևանքները վրա հասնեն այլ պետության տարածքում և ուղղված լինեն այդ պետության շահերի դեմ: Օրինակ՝ եթե ՀՀ տարածքում պայթյուն իրականացնելու նպատակով մեկ այլ պետության տարածքում Հայաստան ուղևորվող գնացքի մեջ տեղադրվում է հեռակառավարվող ռումբ, որը գործողության մեջ է դրվում ՀՀ տարածքում և վնաս է պատճառում ՀՀ շահերին, ապա հանցանք կատարած անձը պետք է քրեական պատասխանատվության ենթարկվի ՀՀ քրեական օրենքով¹⁹: Այսինքն՝ այս դեպքում մրցակցություն է առաջանում ՀՀ քրեական օրենքի տարածության մեջ գործողության ռեալ սկզբունքի և այլ պետության քրեական օրենքի՝ տարածության մեջ գործողության տարածքային սկզբունքի միջև, որը տվյալ դեպքում պետք է լուծվի հօգուտ ՀՀ քրեական օրենքի՝ տարածության մեջ գործողության ռեալ սկզբունքի: Իսկ հակառակ իրավիճակում, երբ, օրինակ, այլ պետության տարածքում պայթյուն իրականացնելու նպատակով ՀՀ տարածքում տվյալ պետություն ուղևորվող գնացքի մեջ տեղադրվում է հեռակառավարվող ռումբ, որը գործողության մեջ է դրվում այդ պետության տարածքում և վնաս է պատճառում նրա շահերին, ապա հանցանք կատարած անձը պետք է քրեական պատասխանատվության ենթարկվի այդ պետության քրեական օրենքով: Նկարագրված իրավիճակում մրցակցություն է առաջանում ՀՀ քրեական օրենքի՝ տարածության մեջ գործողության տարածքային սկզբունքի և այլ պետության քրեական օրենքի՝ տարա-

¹⁹ Տե՛ս Հայաստանի Հանրապետության քրեական իրավունք: Ընդհանուր մաս (վեցերորդ հրատարակություն՝ փոփոխություններով և լրացումներով), Ս. Առաքելյան, Ա. Գաբրուզյան, Հ. Խաչիկյան և ուրիշ., Երևան, ԵՊՀ հրատարակչություն, 2012, էջ 61:

ծուրյան մեջ գործողության ռեալ սկզբունքի միջև, որը տվյալ դեպքում պետք է լուծվի հոգուտ այլ պետության քրեական օրենքի՝ տարածության մեջ գործողության ռեալ սկզբունքի:

